ՊՈՒՇԿԻՆ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
указанного здесь срока

Колич. пред. выдач ______

1799

1949

А. С. ПУШКИН

СТИХОТВОРЕНИЯ

ПОЭМЫ

КАПИТАНСКАЯ ДОЧКА

АРМГИЗ

ЕРЕВАН • 1949

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

891-71
Պ-90

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՈԵՄՆԵՐ

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ • 1949

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ռուս հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի ստեղծագործությունները դեռ բանաստեղծի կենդանության օրոք առանձին թարգմանություններով ծանոթ են եղել մեր ժողովրդին, իսկ նախաոևոլուցիոն շրջանում նրա մի շարք երկեր լույս են տեսել թե՛ պարբերական մամուլում և թե՛ առանձին գրքերով։

Սակայն Ա. Ս. Պուշկինի երկերի մեծ մասը հայերեն լույս տեսան Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո։

Ներկա ժողովածուի մեջ զետեղված երկերը, բացառությամբ «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմի, որ առաջին անգամ է հրատարակվում, վերցրել ենք Պետհրատի լույս ընծայած Ա. Ս. Պուշկինի երկերի առաջին և երկրորդ հատորներից։ «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմը թարգմանել է երիտասարդ թարգմանիչ Գ. Միխայելյանը, որը հեղինակի վաղ շրջանի այդ պոեմի թարգմանությանը մոտեցել է յուրովի և տեղ-տեղ թարգմանել է ազատ։ Այդ թարգմանությունը նույնպես նպատակահարմար գտնվեց զետեղել հոբելյանի առթիվ հրատարակվող սույն միհատորյակի մեջ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Ահա՛ աղմուկ—դաշտում սրինգը սուլելով
Իմ մենավոր, խաղաղ ժամը վրդովեց,
Եվ սիրավառ ցնորքներս վանելով,
Վերջին գողտրիկ երազիս էլ վերջ տվեց։
Փախավ արդեն մութ ըստվերը գիշերի,
Լույսը բացվեց. փայլփլում է գունատ օր.
Էլ նա չկա՜... Համրը, անշարժ, տաղտկալի
Դատարկություն տիրել է իմ չորս բոլոր...
Գետափ ելա, ուր հաճախ էր նա սիրում
Դուրս գալ զբոսանք գիշերներին լուսնկա,
Սակայն այնտեղ, մարգագետնի դալարում
Նորա սիրուն ոտքի հետքն էլ չըգտա։
Եվ մըտախոհ ընկած թավուտ անտառներ,
Սկսեցի ձայն տալ հոգուս հատորին,
Անունն հիշել, բայց ո՜հ, դատարկ հովիտներ
Միայն հեռվից լուկ արձագանք ինձ տվին...
Եվ հմայված՝ ես առվակին մոտեցա—
Նա յուր սահուն կոհակներն էր թավալում.
Բայց անմոռաց այն պատկերը չըտեսա
Եվ առվակի պարզ ու վըտիտ ջըրերում։
Էլ նա չկա՜... Մինչ քաղցրաշունչ, նոր գարուն
Անջատված եմ ես սիրասուն իմ յարից.
Անկյանք ձեռքով ահա արդեն ցուրտ աշուն

Ծառեր, թփեր զըրկել է թավ դալարից.
Եվ ժանտ աշունն աղմըկում է անտառում,
Օդում պտտում տերևն անկյանք ու անուժ.
Աշնան քամին մերթ սուլում է, մերթ լըռում,
Ձորս բոլորը ծով են կապել մեգ-մըշուշ,
Օ՜, դա՛շտ, բլո՛ւր, օ՜, դուք ծանոթ հովիտնե՛ր,
Որ պահում եք անդորրության սըրբազան,
Դուք իմ վըշտի և խընդության վըկանե՛ր,
Մնա՜ք բարև... մինչ գալուստը նոր գարնան։

1816

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԲՈՂ

Փախի՛ր, թաքնըվի՛ր աչքերիցըս դու,
Թմրած թագուհիդ մեղկ Վեններայի։
Ո՞ւր ես, գահերի ամպրոպդ ահազդու,
Դու, ազատության վըսեմ երգչուհի։
Ե՛կ, պատռի՛ր պըսակն իմ այս ոսկեթել
Եվ զարկ, խորտակիր քնարս քնքշած —
Ես Ազատությունն եմ ուզում երգել,
Խոցել արատը գահերին նստած։

Եվ բա՛ց ինձ ուղին ազնիվ, սեպուհ,
Այն խանդավառված ու վըսեմ գալլի,
Որին փառապանծ այն աղետներում
Դու ներշնչեցիր հիմներ սխրալի։
Դուք, հողմահալած Բախտի զավակներ,
Տիրանննե՛ր երկրի, սարսեք, դողացե՛ք.
Իսկ դուք ինձ լսեք և արիացեք,
Եվ ըմբոստացե՛ք, ընկա՛ծ ստրուկներ։

Ավաղ, որ կողմ ես հայացք եմ նետում,
Ամեն տեղ երկաթ, ամեն տեղ մտրակ,
Եվ օրենքների խայտառակ նեխում,
Եվ ստրկության արցունք անճարակ.

Իշխանությունն է չորս կողմն անարդար
Նախապաշարման խավար ոլորտում —
Ճակատագրական՝ փառքի մոլություն,
Օհ, բարկության ահավոր Հանճար։

Լոկ այն արքայի գլխին չի հանգչում
Ժողովուրդների տառապանքը մեծ,
Ուր կա անսասան համերաշխություն
Սուրբ Ազատության և օրենքի մեջ,
Ուր նա ամենքինն է, որպես վահան,
Ուր հավատարիմ ձեռքերում սեղմած
Գլուխների վրա հավասար մարդկանց՝
Կինը նրբա սուրն առանց խտրության

Իր բարձրությունից և կհարվածի
Հանցագործությունն արժանի թափով,
Ուր նրբա բազուկը չի կաշառվի
Ոչ ագահությամբ, ոչ էլ սարսափով։
Իշխանավորնե՛ր, Օրենքն է տալիս,
Եվ ոչ Բնությունը ձեզ թագ ու գահ —
Վերև եք կանգնած դուք ժողովրդից,
Բայց ձեզանից վեր Օրենքն է անմահ։

Եվ վա՜յ այն ցեղին, այն ժողովրդին,
Ուր ննջում է նա անզգուշավոր,
Ուր իշխանություն ունեն ձեռքներին
Կամ լոկ ժողովուրդ, կամ լոկ թագավոր։
Եվ ես ահա քեզ վկա եմ բերում,
Վեհ սխալների մարտիրոսըդ այն,
Որ նախորդներիդ սեգ փառքի սիրուն
Մոտիկ անցյալի փոթորիկներում
Վայր բերիր գլուխդ արքայական։

Լուդվիկոսն է ելնում դեպի մահ
Ի տես անմռունչ իր հետնորդներին.

Թագազերծ գլխով կռանում է նա
Ունկնդրության կառափնակոճղին։
Լուռ է Օրենքը — ժողովուրդը՝ լուռ,
Հանցավոր կացինն իջնում է ահա...
Ու ոճրագործի ծիրանին պուրպուր՝
Ընկավ շղթայված գալլերի վրա։

Ինքնակալըդ ժանտ ու եղեռնագործ,
Ասում եմ ես քեզ, քո գահը դժխեմ,
Կործանումը քո, մահը քո որդոց
Ես չար խնդությամբ մի օր կտեսնեմ։
Ահեղ անեծքի կընիքն են կարդում
Ժողովուրդները քո գոռ ճակատին,
Դու բնության ամոթ, աշխարհի սոսկում,
Երկրում աստծուն ուղղված նախատինք։

Երբ մռայլահոս Նևայի վրա
Կեսգիշերային աստղն է շողում,
Եվ հոգսից ազատ գլուխն ակամա
Ծանրը և հանգիստ քնով ողողվում,
Տեսնում է այնժամ երգիչը խոհուն
Վաղուց մոռացման տրված մի դղյակ,
Մի՝ բռնապետի կոթող անբընակ,
Որ նիրհում է գոռ խիտ մառախուղում։

Ու ծեր Կլիոսի ձայնը սոսկագին
Լըսում է ահեղ պատերի հետև,
Կալիգուլայի ժամերը վերջին
Կանգնում են նըրա աչքերի առջև,
Տեսնում է—գինով, չարությամբ հարբած,
Ջուգված աստղերով, ժապավեններով,
Մարդասպաններն են գալիս գիշերով,
Դեմքները լկտի, հոգով սարսափած։

Անհավատարիմ պահակն է լռում,
Զգված է լուռ-մունջ կամուրջը վերհան,
Բացված են դռներն ահեղ գիշերում
Վարձու ձեռքերով դավաճանության...
Օհ մեր օրերի սոսկո՜ւմ, օհ ամո՜թ,
Յանիչարներն են խուժում ղերթ գազան...
Եվ նրանց անարգ հարվածներն իջան—
Ընկավ թագակիրը չար և արնոտ։

Եվ այսօր լսեք, օ թագավորնե՜ր.
Ոչ արյուն, ոչ բանտ, ոչ սրբի տաճար,
Ոչ դաժան պատիժ, ոչ առատ նվեր
Չեն պաշտպանության պարիսպ ձեզ համար։
Օրենքի անխաբ տաղավարի տակ
Առաջինը դուք խոնարհեք ճակատ,
Եվ գահին՝ հավետ կդառնան պահակ
Ժողովուրդները խաղաղ և ազատ։

1817

ՉԱԱԴԱԵՎԻՆ

Երկար չշոյեց մեզ սուտը քնքույշ՝
Սիրո, հույսերի ու խաղաղ փառքի։
Ինչպես նուրբ երազ, վաղորդյան մշուշ՝
Անցան պատանի օրերն հրճվանքի։
Բայց վառվում են դեռ տենչերը մեր մեջ,
Ճակատագրական իշխանության տակ
Ճնշված ու հոգով անհամբեր, անշեջ
Մենք ձայնն ենք լըսում երկրի բովանդակ։
Մենք սպասում ենք հույսի տանջանքով
Սուրբ ազատության վսեմ վայրկյանին,
Ինչպես կըսպասի սիրող պատանին
Անխաբ տեսության պահին հոգեթով։
Քանի որ այրվում ենք ազատությամբ
Ու մեր սիրտն ապրում է պատվի համար,
Մեր հայրենիքին, բարեկամըս, տանք
Ամենաազնիվ հույզերը մեր վառ։
Ընկե՛ր, հավատա՛, կծագի՛ նա դեռ,
Դյութիչ արշալույսը երջանկության,
Ռուսաստանը՝ խոր քընից կելնի վեր
Ու բեկորներին ինքնակալության
Կգրի անջինջ անունները մեր։

1818

ՋՐԱՀԱՐՍԸ

Լճի եզերքին, մի խուլ կաղնուտում,
Ճգնում էր հնում մենակյաց մի ծեր,
Նա ծոմ էր պահում, անվերջ աղոթում,
Եվ ուներ միայն միշտ մռայլ գործեր։
Եվ արդեն վաղուց հնազանդ բահով
Շիրիմ էր փորել ծերուկն իր համար
Ու մահ էր հայցում արդեն ապահով
Բոլոր սուրբերից հաճոյակատար։

Աղոթք էր անում ամռանը մի օր
Իրեն խրճիթի շեմի մոտ կանգնած՝
Գլխահակ ու լուռ ծերը ճգնավոր։
Մթագնում էին թավուտները թաց,
Լճի երեսին մշուշն էր ծխում,
Եվ կարմիր լուսինն՝ ամպերի միջին
Շրջում էր հանգիստ խաղաղ երկնքում։
Ծերն իր հայացքը դարձրեց լճին։

Նայում ակամա ահով բռնված,
Իրեն հասկանալ նա չի կարենում...
Տեսնում է ջրերն եռում են հուզված
Եվ հետո հանկարծ նորից խաղաղվում...
Եվ հանկարծ... թեթև—ստվերի նման,

Ճերմակ, ինչպես վաղ ձյունը լեռներին,
Ելնում է ջրից մի կին մերկիրան
Ու լճի ափին նստում է լռին։

Նայում է կույսը ծեր ճգնավորին
Եվ հետո էլ սանրում իր մազերը թաց։
Ու աչքը կույսի հոլանի մարմնին՝
Դողում է ահից ծերը մենակյաց։
Ձեռքով է անում այն կույսը նրան,
Կանչում է գլխի շարժումով արագ...
Եվ, ինչպես ընկնող աստղը հուրհուրան
Թաղվում է նիրհող ալիքների տակ։

Գիշերն անքուն էր ծերը մեկուսի
Եվ ամբողջ օրն էլ անաղոթք մնաց.
Մտքումն ակամա այն չքնաղ կույսի
Կերպարանքն էր նա տեսնում իր դիմաց։
Մութով պարուրվեց կաղնուտը կրկին,
Լուսինն ամպերից անցավ համրընթաց,
Եվ ահա նորից լճի եզերքին՝
Չքնաղ ու գունատ՝ այն կույսն է նստած։

Նայում է ծերին, գլխով է անում,
Հեռվից կատակով համբույր է տալիս,
Խաղում է, հետո, ջրերը ճողփում
Ու մանկան նման ծիծաղում, լալիս,
Կանչում է նրան, քնքույշ հառաչում...
«Ինձ մոտ եկ, ինձ մոտ, ծերուկ ճգնավոր»...
Թաքչում է հանկարծ, ջրի մեջ կորչում,
Ու չորս կողմ կրկին լռություն է խոր։

Երրորդ օրն արդեն ծերուկը մոլի
Լճի հմայիչ եզերքին նստել

Զքնաղ կույսին էր սպասում էլի,
Իսկ թավուտները սկսեցին մթնել…
Այգը հալածեց մութը գիշերվա.
Էլ չգտնվեց ծերը սրբազան,
Միայն մանուկներն այն լճի վրա
Սպիտակին տվող մի միրուք տեսան։

1819

Գ Յ Ո Ւ Ղ

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, ով հանգրվան խաղաղավետ ու անճառ,
Ապաստան դու աշխատանքի, ոգեշնչման, հանգստի,
Ուր հեղվում են իմ օրերի կոհակները աննշմար
Լույս եզերքում մոռացության ու բախտի։
Ես քոնն եմ լոկ. ես փոխել եմ ցիրցեյների ախտավոր
Արքունիքը, քեֆերն արբշիռ, մոլությունները խռով—
Մեղմ շրշյունով կաղնուտների, դաշտերով լայն, անժխոր,
Ընկերներով իմ խոհերի,—ազատության ժամերով։
Ես քոնն եմ լոկ, սիրում եմ այս այգին մութ,
Հովի շնչով ու ծաղկունքով իր պայծառ,
Այս մարգերը՝ բարդոցներով անուշաբույր, շարիշար,
Ուր թփերում կարկաչում են առվակները հոսանուտ։
Իմ դեմ ահա հոգեպարար տեսարաններ ամենուր,
Այստեղ երկու լճակների հարթությունները լազուր,
Ուր երբեմն ձկնորսական առագաստն է ճերմակում։
Այնտեղ—արտեր շերտածավալ, բլուրների շարաններ,
Հեռու-հեռվում ցրիվ փռված խրճիթներ,
Խայտաճամուկ երամակներ խոնավ, տամուկ ափերում,
Թևատարած աղորիքներ, խրձանոցներ մշուշած,
Աշխատանքի առատ հետքեր ամենուրեք տարածված։
Եվ այստեղ ես, ունայնության շղթաներից զե՛րծ իսպառ,
Ուսանում եմ ճշմարտի մեջ երանություն վայելել,
Ազատ հոգով աստվածացնել այստեղ օրենքն անկաշառ,
Անլուսավոր ամբոխների տրտունջները լսել,

Կարեկցանքով պատասխանել աղերսանքին ամոթխած
Եվ նայել միշտ անտարբեր ու աննախանձ
Չարագործի կամ հիմարի մեծությանը անարդար։
Ձեզ եմ կանչում, ո՛վ դարերի պատգամախոս ոգիներ։

Մենաստանում իմ հիասքանչ ու պայծառ
Է՛լ ավելի բարձր է հնչում ձայնը ձեր։
Նա վանում է մռայլ նիրհը ծուլության,
Աշխատանքի հուր է իմ մեջ բորբոքում,
Եվ ձեր խոհերն ստեղծարար, դյութական
Բողբոջում են, հասունանում իմ հոգում։

Սակայն մի միտք ահասարսուռ մթագնում է իմ հոգին
Այս արտերում ու լեռներում ծաղկառատ,
Ուր մարդկության բարեկամը նկատում է տխրագին
Ամենուրեք տգիտության կործանարար մի արատ։
Արցունքների, հառաչանքի խուլ վկա,
Բախտի խաղով եղերական դարձած մարդոց կործանիչ,
Աղայությունն այստեղ վայրի, անօրեն ու անզգա,
Բիրտ բռնության գավազանով յուրացրել է ամեն ինչ,—
Ե՛վ ժամանակն երկրագործի, և՛ վաստակն ու գույքը ողջ։
Մեջքը ծռած օտար մաճին ու մտրակին միշտ խոնարհ,
Այստեղ անճար ճորտությունը քարշ է գալիս անարդար
Ակոսներում անագորույն իր տիրոջ։
Ամենքն այստեղ ծանր լուծը մինչև շիրիմ են տանում,
Առանց անգամ հանդգնելու փայփայել հույս ու փափագ.
Այստեղ մատաղ աղջիկներն են վառ ծաղկում,
Զոհ լինելու չարագործին քմահաճ ու անառակ։
Հալից ընկնող, ծեր հայրերի սիրած միակ ապավեն
Մատաղահաս որդիները—աշխատանքի օգնական,
Թողած հյուղը հայրենական, գնում են, որ բազմացնեն
Աղայատան բազմաչարչար ամբոխները ճորտական։
Օ՛, թե ձայնս կարողանար ցնցել սրտերը մարդկան.

Իմ կրծքի մեջ բորբոքվում է հուրն ապարդյուն ու անզոր,
Եվ չի՛ տված ինձ պերճ խոսքի ճարտարությունն ահավոր։
Բարեկամներ, պիտի տեսնե՞մ ես ժողովուրդն չճնշված
Եվ արքայի հրամանով ճորտությունը տապալված.
Եվ արդյոք իմ հայրենիքում պիտի բացվի՞ վերջապես
Լուսապայծառ ազատության արշալույսը ոսկեդես։

1819

Դ Ա Շ Ո Ւ Յ Ն

Աստվածն էր Լեմնոսյան, որ քեզ կոփեց
Բազկի համար անմահ Նեմեզիդի,
Ազատության թաքուն պահակ, դաշույն, պատժողդ մեծ,
Վերջին դու դատավոր անպատվության ու զրկանքի։
Երբ շանթն է գոռ լռում Զևսի, սուրն օրենքի՝ նիրհում,
Դու անեծքի և հույսերի կատարածող միակ,
Դու, թաքնըված գահի տաղավարում
Ու տոնական փայլուն զգեստի տակ։
Ինչպես դըժոխքի շող, ինչպես մի շանթ աստվածային՝
Չարագործի աչքին քո համըր ծայրն է պաղ շողում,
Նայում է նա և դողդողում
Իր խնջույքի պահին։
Որսում է նրան ամե՛ն տեղ քո հարվածն հանկարծական.
Ծովում ու ցամաքում, վըրանի տակ ու տաճարում,
Պարսպապատ գաղտնի դղյակներում,
Քընում ու հարազատ ընտանիքում անգամ։
Խշշում է Ռուբիկոնը սըրբազան՝ Կեսարի տակ,
Կայսերական Հըռոմն ընկավ՝ օրենքն է գլխահակ,
Սակայն ըմբոստ Բըրուտն ապստամբեց.
Դաշույն, արյուն դու թափեցիր, և նա գրկեց անկյանք՝
Պոմպեոսի մարմարը բարձրաբերձ։
Խըռովության որդին բարձրացրեց մոլեգին ճիչ։
Եվ արհամարհելի, արնոտ, մըռայլ՝

Գլխատ ազատության դիակի վրա
Ծագեց անեղ, հրեշավոր դահիճ։
Ժանտ առաքյալ կործանումի՝ նա Աիդին անհույս՝
Ջոհեր էր պատրաստել ցուցամատով,
Ուստի նըրան առաքվեցիք վերին դատով
Եվ դու և Եվմենի՛դան կույս։
Ազատության դու մարտիրոս, ընտրյալըդ օրհասի,
Օ Զանդ, հանգար դու կառափնակոճղին,
Սակայն մընաց աճյունիդ մեջ պատըժվածի՝
Առաքինության ձայնը սրբագին։
Դու քո Գերմանիայում դարձար ստվեր հավերժագույն,
Սանձում ես դու ուժերը հանցավոր—
Ու շիրիմիդ վըրա հանդիսավոր՝
Անմակագիր շողում է մի դաշույն։

1921

ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

Ելնում է ահա հզոր Օլեգը
Խենթ խազարներից վրեժ առնելու,
Նըրանց համարձակ հարձակման համար
Գյուղերը սըրի-հըրի մատնելու։
Եվ իր համհարզով, հագած կուռ զրահ
Գընում է նա սեգ նըժույգի վըրա։

Մըթին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վըհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հըման,
Կյանքում հնազանդ միայն Պերունին,
Աղոթք ու հմայքով իր դարն անցկացրած,
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գընաց։

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների,
Կյանքիս մեջ ինձ հետ ի՞նչ է լինելու,
Եվ, ի խընդություն չար ոսոխների,
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու։
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշվես,
Վարձըդ՝ քու սիրած ձին կըտամ ես քեզ։

— Չեն վախում դետերն երկրի մեծերից,
Եվ պետք չի նըրանց պարգևն իշխանի,

Նրանց իմաստուն չեղում՝ վերևից
Ազդված՝ խոսում է կամքը երկընքի, —
Անհայտ են գալոց տարիքն ու մըթին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու ճակատին։
Դե՛ միտքըդ պահիր իմ խոսքն այսօրից։
Փառքն է կյանքի մեջ խընդրում հերոսին,
Հաղթության փառքով հըռչակված ես դու,
Վահանդ Բյուզանդիո բարձըր դարբասին.
Հընազանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է ոսոխըդ բախտիդ նախանձով։

Ե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,
Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշույն,
Խընայում են միշտ կյանքը հաղթողի։
Վերք չես առնիլ դու քո կուռ զըրահում,
Հըզորին անտես ոգի է պահում։

Ոչ մի վըտանգից չի վախում քո ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.
Մերթ կանգնում է հեզ նետերի տակին,
Մերթ թըռչում ռազմի դաշտերի վրա.
Ե՛վ ցուրտ, և՛ կըռիվ ոչինչ են դըրան,
Բայց... դա կլինի պատճառ քո մահվան։

Օլեգը խնդաց. և սակայն մըթնեց,
Մըռայլեց հանկարծ չարագույժ մըտքից,
Լուռ ու մտախոհ թամբիցը բըռնեց,
Ներքև է իջնում սիրած նըժույգից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վըզին։

— Դե՛հ, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկավ մեր բաժանվելու,
Հանգիստ կաց հիմա, էլ ոտըս բնավ
Քո ասպանդակի մեջ չեմ դընելու։
Դե՛հ, գընա՛, բայց միշտ հիշիր Օլեգին։
Է՜յ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին։

Ծածկեցե՛ք սըրան թավարածի գորգով,
Սանձից բըռնած մարգերըս տարեք,
Լողացրեք, պահեք ընտրած հատիկով,
Աղբյուրի վըճիտ ջըրով ջըրեցեք։
Եվ մանկլավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան։

Ցընծում է խմբով անմահ Սլեգը
Զըվարթ ձայներով լիք բաժակների.
Ճերմակ է նըրանց գըլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների…
Հիշում են նըրանք օրերն անցկացրած,
Եվ կըռիվները միասին վարած։

— Բայց իմ ընկե՛րը,—գոչեց Օլեգը,
Ո՞ւր է, ինձ ասեք, սիգապանծ իմ ձին.
Առո՞ղջ է արդյոք, այնպես սըրնթաց,
Այնպես կըրակոտ, աշխույժ տակավին…
Եվ լըսում է, որ սեպ բըլրի վըրա
Մահու սև քընով վաղ է քնել նա։

Խոնարհեց գըլուխն Օլեգը հըզոր,
Եվ միտք է անում.—Ի՞նչ եղավ հըման.
Սըտախոս կախա՛րդ, անխե՛լք ալևոր,
Թե չէի լսել ես քո սըտության,
Կարելի մինչ օրս իմ ձին ես հեծնել։
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել։

Գնում է Օլեգն ահա պալատից,
Նըրա հետ Իգորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը թափված.
Բըլուրի վըրա, Դնեպրի ափին։
Փոշին ծածկում է, անձրևն ողողում,
Ու սեզը վըրեն քամին օրորում։

Ոտն զգույշ դըրավ իշխանը գանգին
Ու կանչեց. — Քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերն ալևոր,
Թարմ շիրմիս վըրա դու չես մահաբեր
Տապարի տակին սեզը ներկելու,
Քու տաք արյունով աճյունս հարգելու...

— Ահա՜ թե ուր էր օրհասըս պահված,
Այս չոր ոսկո՞րն էր ինձ մահ սպառնում,
Այն ինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ
Ցըշշալով սողաց մի օձ չարաթույն,
Սև թոկի նըման փաթաթվեց ոտքին,
Իշխանին օձահար գոռաց ցավագին։

———

Փըրփրուն թասերը շըրջան են առնում
Օլեգի մահվան տըխուր հարգինքին,
Իգորն ու Օլգան բըլուրի վըրա,
Նըստած է խումբը Դընեպրի ափին —
Հիշում են քաջերն օրերն անցկացրած
Եվ կըռիվները միասին վարած։

1822

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

Նստած ճաղերից ներս, բանտի մեջ իմ թաց,
Տեսնում եմ արծիվ մի գերի մեծացած,
Տխուր իմ ընկերը թևերը ցնցում,
Ցածում արյունոտ նա իր կերն է կտցում։

Կտցում է, գցում նա, նայում դեպի վեր,
Կարծես թե նա ինձ հետ նույն բանը խորհեր.
Կանչում հայացքով իր, կանչով արծվային,
Ասել է ուզում նա—«Թռչենք միասին.

«Ազատ թռչուններ ենք, արդ ժամ է, ընկեր,
«Այնտեղ, ուր ամպերից դեն ճերմակ են սարեր,
«Այնտեղ, ուր կապտում են ծովերը այնպես,
«Այնտեղ, ուր շրջում է լոկ հողմը... և ես...»։

1822

ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մերթ մանկան պես լաց է լինում,
Մերթ ոռնում է զերթ գազան.
Մերթ վայրենի սուլում պես-պես,
Աղմըկում է տանիքում,
Մերթ՝ ուշացած ճամփորդ ասես՝
Լուսամուտն է նա թակում։

Մեր խըրճիթը, աղքատ ու հին,
Ե՛վ մըթին է, և՛ տըխուր.
— Ի՞նչ ես նստել պատի տակին,
Իմ պառավըս, էդպես լուռ։
Հոգնե՞լ ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թե՞ նիրհում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար։

Արի խըմե՛նք, բարի ընկեր
Իմ սև, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սրտներըս բաց կըլինի։
Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ
Հավքը ծովի էն ափին,

Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին։

Հողմը մեգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերթ գազան։

— Արի, խմե՛նք, բարի՛ ընկեր
Իմ սև՜, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի։

1825

ՄԱՐԳԱՐԵ

Հոգնա՜ծ ու տանջվա՜ծ, հոգով ծարավի՜
Մութ անապատում թափառում էի.
Եվ ահա այնտեղ տեսա վեցթևյան
Ելավ Սերովբեն իմ դեմ-հանդիման.
Եվ նուրբ մատներով թեթև ու քնքույշ
Շըփեց իմ աչերն, կարծես նինջ անույշ,
Եվ զարհուրանքով նոքա բացվեցան,
Ահարեկ արծվի աչերի նըման.
Եվ նա ականջիս դիպավ կամացուկ,
Եվ իմ լըսելիքն հուզեց ձայն, աղմուկ,
Անսացի երկնի սասանումն ու դող,
Հըրեշտակների թըռիչքն երկնքում,
Ծովի հատակին զեռունների լող,
Ողկույզի աճումն ճոխ հովիտներում։
Եվ նա հըպվեցավ իմ սառ շըրթունքին,
Եվ պոկեց, հանեց լեզուս մեղսալի՝
Սովոր նենգության և նանիր խոսքին.
Եվ այնտեղ դըրեց իմաստուն օձի
Թունավոր խայթոցն յուր արնոտ ձեռով.
Եվ նա պատառեց իմ կուրծքը սըրով
Եվ հանեց սիրտըս դողդոջ, բաբախուն
Եվ նորա փոխան՝ իմ բացված կրծքում
Նա դըրեց բոցոտ ածուխ վառվռուն.

Ու ընկած էի ես անապատում
Որպես մի դիակ։ Ու ահա բարձրից
Անսացի տիրոջ կոչը դեպի ինձ.
«Ե՛լ, ո՛վ մարգարե, և լո՛ւր, և հայի՛ր,
Ու հըզոր կամքիս հըլու, անձնվեր,
Շըրջի՛ր դու ծովեր, շրջի՛ր դու երկիր,
Ու խոսքով այրի՛ր մարդկային սըրտեր»։

1826

ՁՄՌԱՆ ՃԱՄՓԱ

Ալեծածան, շարժուն միգում
Լուսինն անցնում է կամաց
Եվ տրտմաշուք բացատներում
Լույս է սփռում տխրամած։

Ձմեռային տաղտուկ ճամփով
Սլանում է սահնակը,
Միահնչյուն հոգնած կանչով
Զրնգում է զանգակը։

Ինձ հարազատ ինչ-որ բան կա
Կառապանի ձիգ երգում՝
Մեկ՝ համարձակ անրջանքը,
Մեկ՝ սրտի վիշտ-մորմոքում։

Ոչ կրակ կա, ոչ սև տնակ,
Ամայություն, ձյուն է խոր.
Հանդիպում են ինձ շարունակ
Վերստերը լոկ շերտավոր։

Ձանձրալի է ու տխրագին...
Վաղը, Նինա, դառնամ տուն,
Բուխարու մոտ իմ սիրածին
Պիտի նայեմ անկշտում։

Հնչում սլաքն այդ ժամերին
Իր շրջանը կավարտի,
Եվ, ցրելով ուշ հյուրերին,
Գիշերը մեզ չի զատի։

Տխուր է, Նինա... Ճամփին թախծոտ
Զրնգում է զանգակը,
Կառապանը լռեց քնկոտ,
Միգապատ է լուսնյակը։

1826

ԱՔՍՈՐՅԱԼ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻՆ

Հպարտ ապրեցեք, ո՜վ աքսորյալներ,
Խավար հանքերում հեռու Սիբիրի.
Չի կորչի իզուր աշխատանքը ձեր
Ու ձգտումները ձեր վեհ մտքերի։

Հույսը — վշտերի քույրն հավատարիմ
Մութ անկյուններում գետնախորշերի՝
Ձեզ կպահպանի առույգ ու զվարթ,
Եվ անշուշտ կգա օրը բաղձալի։

Մեր անկեղծ սերը կգա դեպի ձեզ,
Կհասնի մռայլ փականքի միջով՝
Ինչպես աքսորի ձեր խշտիներին
Հասնում է ձայնս երգիս ղողանջով։

Եվ կընկնեն մի օր շղթաները ձեր,
Բանտը կդառնա խղճուկ ավերակ,
Ազատությունը դեմ կվազի ձեզ,
Ու ընկերներից սրեր կստանաք։

1827

ՊՈԵՏ

Քանի Ապոլլոն չի կոչել երգչին
Դեպի սրբազան ողջակիզում,
Ունայն աշխարհի հոգսերի միջին
Թաղված է երգիչն անխանդ, անավյուն.
Չէ՛ հնչում նորա քնարն ոգելից,
Ցուրտ թմրություն է հոգին ճաշակում,
Եվ, գուցե, չընչին շա՜տ էակներից՝
Ամենից չընչին նա՛ է աշխարհում։

Բայց հենց հասնում է բարբառն երկնային
Երգչի ականջին արթուն, դյուրազգաց,
Ցնցվում է խոկուն պոետի հոգին,
Որպես մի արծիվ քնից սթափված,
Եվ նա անհաղորդ ծափին ու գովքին,
Տխրում է կյանքի խրախճանքներում,
Ամբոխի պաշտած և ո՛չ մի կուռքին
Երգիչը երբե՛ք գլուխ չէ ծռում։

Եվ, կարծես, կյանքի խորթ, մռայլ զավակ,
Երգով, հույզերով կուրծքը ալեկոծ,
Փախչում է նա միշտ դեպի լայնարձակ
Դաշտեր, անապատ, թավ անտառի ծոց։

1827

ԱՆՉԱՐ*)

Անապատում ժըլատ, հրկեզ,
Տոթից մրկած հողի գրկում,
Անչարն ահեղ պահակի պես
Կանգնած է ողջ տիեզերքում։

Արգանդը չոր տափաստանի՝
Ցասման պահին նըրան ծընեց,
Մեռյալ կանաչը ոստերի՝
Արմատը խոր թույնով սընեց։

Ցորեկ շոգից հալչում է այն
Ու կեղևից կաթում է թույն,
Եվ թափանցիկ խեժի նման՝
Երեկոյան էլի սառչում։

Նրան թռչուն մոտ չի գալիս,
Եվ ոչ էլ վագրը, հողմն է տոթ
Դիպչում մեկ-մեկ մահվան ծառին
Ու հեռանում՝ արդեն թունոտ։

Եվ եթե ամպը մոլորված՝
Նըրա սաղարթը թաց ցողի,

*) Ուպասինի թույնի ծառ։

Նրա ճյուղքից՝ թունավորված
Անձրև կիջնի ծարավ հողին։

Հղեց, սակայն, բռնի կամքով
Դեպի անշար մարդը մարդուն,
Նա ճանապարհ ընկավ ահով
Ու ետ եկավ՝ բերելով թույն։

Բերավ նա խեժը մահախառն
Ու ճյուղն անկյանք տերևներով,
Եվ ճակատից իջնում էր վար
Քրտինքը սառն առվակներով։

Բերավ և ուժասպառ պառկեց
Վրանի տակ ցուրտ, քրծենոտ,
Եվ մահացավ ստրուկն այն խեղճ
Անհաղթ տիրոջ ոտների մոտ։

Իսկ տերը թույնը ներարկեց
Հլու և սուր իր նետերին,
Եվ նրանց հետ մահ ուղարկեց
Իր հարևան երկրներին։

1828

* * *

Գեղեցկուհի՛, դու մի՛ երգիր
Տխուր երգը Վրաստանի․
Երգդ ուրիշ կյանք ու երկիր,
Ուրիշ ափեր ինձ կտանի։

Ավա՜ղ, տեսնում եմ, անխափան,
Երգած տխուր քո երգի մեջ
Գիշեր, լուսին ու տափաստան,
Հեռու երկրի աղջիկներ խեղճ։

Մոռանում եմ քեզ տեսնելով
Ճակատագիրն իմ դաժանագին․
Բայց իմ առաջ դու երգելով՝
Հիշեցնում ես նրան կրկին։

Գեղեցկուհի՛, դու մի՛ երգիր
Տխուր երգը Վրաստանի,
Երգդ ուրիշ կյանք ու երկիր,
Ուրիշ ափեր ինձ կտանի։

1828

ԾԱՂԻԿ

Ծաղի՛կ, ես քեզ տեսա թոշնած,
Պահված էիր դու գրքում
Եվ անսովոր մի ջերմ պատրանք
Իսկույն եռաց իմ կրծքում։

Ո՞ւր ես ծաղկել, ե՞րբ, ո՞ր գարնան,
Ո՞վ է արդյոք քեզ քաղել.
Օտա՞ր... ծանո՞թ... Եվ ինչո՞ւ է,
Ծաղի՛կ, այստեղ քեզ պահել...

Արդյո՞ք անխոս մի վըկա ես
Դու զույգ մատաղ սրտերի
Ջերմ, սիրային տեսակցության,
Եվ սիրավառ զրույցների...

Թե՞ մի տխուր հիշատակ ես
Դառն անջատման, տանջանքի.
Կամ դաշտերում լուռ կատարած
Անհույս, մենակ զբոսանքի...

Եվ ո՞ւր են այն սիրող սրտերն,
Կա՞ն, ապրո՞ւմ են երջանիկ.
Թե՞ երկուսն էլ, քեզ պես անհայտ,
Թառամել են, ա՜յ ծաղիկ։

1828

ԿՈՎԿԱՍ

Ահա՛ Կովկասն իմ ոտքի տակ։ Ես մեն-մենակ վերևում
Սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պես բարձր, արծիվն հեռվում, դեպի եթեր վերացած՝
Օդում հանդիստ սավառնում է՝ թևերն հըզո՞ր տարածած.
Եվ տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փըրփրալից
Ինչպե՞ս ծընվում, ինչպե՞ս ձյունի հյուսեր փըլչում սարերից։

Այստեղ ահա շա՛ր-շա՛ր ամպեր մեղմ սահում են իմ դիմաց,
Գոռ ջըրվեժներ նոցա ճեղքում ու սըլանում դեպի ցած.
Եվ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կույտերին.
Իսկ քիչ ներքև—չոր մացառ է, մամուռ՝ կըպած քարերին.
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կանաչ, թավուտ անտառներ,
Ուր վըխտում են եղջերուներ և ծըլվլում թըռչուններ։

Այնտեղ արդեն և՛ մարդիկը բույն են դըրած սարերում,
Եվ խաշները մեղմ մայում են դալարախիտ վայրերում.
Եվ խաշնարածն իջնում է ցած—դեպի ուրախ հովիտներ,
Դեպի խաղուն Արագվայի կանաչազեղ, զով ափեր.
Եվ չքավոր ասպատակն է դարան մտնում կիրճի մեջ,
Ուր Թերեքի կատաղալից, զվարճ խաղին չըկա վերջ։

Խաղում է նա ու մըռնչում, որպես վայրագ մի կորյուն,
Որ վանդակից որս է տեսել, աչքը կոխել սև արյուն.
Ե՛վ խըփվում է նա ափերին, և՛ ապարդյուն կռիվ տալիս,

Ե՛վ իր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու լալիս…
Սակայն ի զո՜ւր։ Նորա համար չկա ուրախ ո՛չ մի օր.
Նորան ճընշում ու խեղդում են լուռ քարափներն ահավոր։)*

1829

*) Պուշկինի ձեռագրերի մեջ գտնվել է այս քառատողը, որով և վերջանում է «Կովկաս» բանաստեղծությունը։

Այնպես, ինչպես բիրտ օրենքը ազատությունն է ճնշում,
Այնպես, ինչպես լծի ներքո թախծում ցեղերը վայրի,
Այնպես, ինչպես որ Կովկասն է վրդովվում այդ անձռունչ,
Այնպես, ինչպես նրա վրա ուժն է չոքել օտարի…

ԴՈՆ

Լայն դաշտերի մեջ շողալով՝
Հոսո՛ւմ է... Դո՛ն, բարև՛ քեզ։
Զավակներից քո հեռավոր՝
Քեզ ողջույն եմ բերել ես։

Որպես եղբայր հուշակավոր,
Գետերն ամեն գիտեն քեզ.
Արաքսից ու Եփրատից խոր՝
Քեզ ողջույն եմ բերել ես։

Շունչ քաշելով ոսոխից չար,
Ըզգալով հողն հայրենի,
Արփաչայի ջուրը վարար՝
Ձիերն խմո՛ւմ են Դոնի։

Դու պատրաստի՛ր, սրբազան Դոն,
Հեծյալներիդ համար քաջ՝
Հյութը կիզող ու կայծկլտուն —
Քո խաղողի արևաճ։

1829

ԹԵ ՇՐՋՈՒՄ ԵՄ...

Թե շրջում եմ աղմկալից փողոցում,
Թե մտնում եմ ես մարդաշատ սուրբ տաճար,
Թե նստած եմ ջահիլների շրջանում,—
Միշտ նույն մտքերն ինձ հուզում են անդադար։

Ես ասում եմ—տարիք կանցնեն ու կըգան,
Եվ ամենքըս, որ կանք այստեղ խըմբովին,
Պետք է ննջենք երկրի խորքում հավիտյան,
Եվ, գուցե, մեկն արդեն մոտ է յուր մահին։

Թե նայում եմ մենակ կանգնած լուռ կաղնուն,
Ես խորհում եմ—այդ նահապետն անտառի,
Որ վըկա է իմ պապերիս մեռնելուն,
Ե՛վ ինձ թաղած՝ էլի կապրի շա՜տ տարի։

Թե սիրասուն մանուկին եմ փայփայում,
Մտքումս արդեն ես ասում եմ՝ մնա՜ս բարև.
Քե՛զ եմ տալիս իմ տեղն այս աշխարհում,
Ինձ—մահ, իսկ քեզ—դեռ կըժպտի նոր արև։

Եվ այսպես միշտ—ամեն մի օրն ու տարին
Սովորել եմ մըտածմունքիս հետ կապել.
Եվ նոցա մեջ ըսպասելով օրհասին,
Աշխատել եմ գալիք մահըս գուշակել։

Եվ, ո՞վ գիտե, ի՞նչ տեղ է մահ պատրաստում
Ինձ օրհասը—ծովո՞ւմ, մարտո՞ւմ, թե ճամփին.
Գուցե, հանգչեմ հենց մոտակա այս հովտում—
Նա ընդունե իմ ցրտացած, անշունչ դին։

Թեպետ մե՜կ է, ո՛ւր էլ հանգչիմ հավիտյան,
Ուր էլ փտի սառն-անզգա իմ դիակ.
Բայց, ա՜խ քաղցր էր, թե գտնեի գերեզման
Սիրած երկրում—ինձ հարազատ հողի տակ։

1829

ՊՈԵՏԻՆ

Պոե՛տ, սիրույն դու ամբոխի մի՛ տար գին—
Շո՜ւտ կըլռեն աղմկալից գովասանքներ.
Ծաղր ու լուտա՛նք թող որ թափեն քո գլխին,
Այլ դու մնա՛ միշտ անխռով, աներեր։

Արքա ես դու. ապրի՛ր մենակ։ Քո ուղին
Գնա՛ վստահ, ուր որ տանե միտքդ ազատ.
Հասունացրո՛ւ դու պտուղներն հարազատ
Վեհ խոհերիդ, վարձ մի՛ ուզիր քո գործին։

Վարձահատույց և դատավոր դու ինքդ ես.
Քո գործը դո՛ւ ամենից խիստ կը դատես։
Ինքդ գո՞հ ես, արվեստավո՛ր անաչառ։
Գո՞հ ես. ամբոխն հայհոյե՜ թող քո վաստակ,
Ծաղրե բագինդ, ուր վառվում է քո կրակ,
Եռոտանիդ դրդվեցնե տղայաբար։

1830

Exegi monumentum *)

Բարձրացրի անձեռակերտ ես հուշարձանն իմ վեհ,
Չի մամռոտի դեպ այն տանող՝ ժողովրդի ճամփան,
Անհընազանդ գլխով նա բարձրացավ ավելի վեր
Հուշասյունից Ալեքսանդրյան։

Ո՛չ, անվախճան եմ ես—հոգիս նվիրական երգով
Իմ աճյունից երկար կապրի և կը մընա անեղծ—
Եվ իմ հռչակը չի հանգչի, որքան լուսնի ներքո
Կապրի թեկուզ մի բանաստեղծ։
Համբավն իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,
Ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող,
Սլավոնի թոռը սեգ ու ֆինն ու դեռ այսօր վայրի
Տունգուզը և կալմիկն ստեպ սիրող։

Եվ ես երկար կապրեմ սիրով ժողովրդի սրտում,
Քանի որ քնարն իմ արթնացրել է զգացմունքներ բարի․
Եվ իմ դաժան դարում երգել եմ ես ազատություն
Եվ գութ հանուն ընկածների։
Դու երկնքի հրամանին լըսի՛ր օ, իմ մուսա,
Եվ մի՛ սարսի հալածանքից ու մի՛ ձգտիր փառքի,
Դու անտարբեր լըսիր զըրպարտություն ու գովասանք
Եվ հիմարին մի՛ առարկի։

1836

---

*) Ես հուշարձան բարձրացրի։

ՊՈԵՄՆԵՐ

ՌՈՒՍԼԱՆ ԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ

ՁՈՆ

Ձեզ համա՛ր, հոգո՛ւս թագուհիներ,
Գեղեցկուհինե՛ր իմ աննման,
Զրույցներ հին-հին ու հեքիաթներ
Ոսկե ժամերին սուրբ ներշնչման
Գրեցի ձեռքով իմ անվարան՝
Հնոց շաղակրատ մրմունջի տակ:
Ընդունեցե՛ք իմ համեստ ընծան...
Ես չեմ երազում անուն ու փառք,
Բայց այն հույսով եմ ես բախտավոր,
Որ սիրո դողով ու գաղտնաբար
Գուցե՛ գեղանի կույսը մի օր
Կարդա երգերը այս մեղապարտ...

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ծովեզերքին՝ կանաչ կաղնի,
Կաղնու վրա՝ շղթա ոսկի.
Գիշեր ու զոր ուսյալ կատուն
Շղթան վզին շրջում անքուն,
Քայլում է աջ՝ երգ է հյուսում,
Քայլում է ձախ՝ հեքիաթ ասում։

Ի՞նչ հրաշքներ ասես չկան
Այն անտառում կախարդական...

Խուլ ու վայրի թավուտներում
Ջար ոգիներն են դեգերում.
Ջրահարսն է ծառից դալար
Երգում անո՜ւշ ու միալար.
Այնտեղ անդուռ, անլուսամուտ
Մի խրճիթ կա խարխուլ ու մութ,
Եվ խոտերին կածանների՝
Հետքեր անհայտ գազանների...
Տեսիլքով է անտառը լի.
Լուսաբացին աղմկալի
Ալիքներն են փարվում ափին,
Եվ գեղեցիկ, ինչպես արփին,
Ծովաբեռու հետ հաղթալանջ
Ափ են ելնում երեսուն քաջ...

Արքայորդին այնտեղ գյուրին
Գերում է գոռ Թագավորին,
Իսկ կախարդը սար ու ձորով,
Կանաչ դաշտով, կապույտ ծովով
Եվ անտառով խուլ ու մթին
Ահա տանում է հսկային։
Նստած է մութ բանտում անել
Թագավորի դուստրը ջահել,
Ու թուխ գայլն է այնտեղ միայն
Հավատարիմ նրա ծառան։
Այնտեղ պառավ ջադուի հետ
Սանդն է քայլում առաջ ու ետ,
Չար Կաշչեյն է փչում հոգին,
Ոսկու դեզի վրա փռված,
Այնտեղ Ռուսիո բո՜ւյրն է անգին,
Ու ոգի՜ն է այնտեղ ռուսաց։
Ես էլ եղա այնտեղ մի օր,
Այն անտառում խորհրդավոր,
Անուշ արի մեղրադինի,
Տեսա կաղնին ծովեզերքի,
Տեսա նստած ուսյալ կատվին,
Նա ինձ պատմեց հեքիաթներ հին։
Մեկն եմ հիշում, պատմեմ հիմա,
Արար աշխարհ թող իմանա։
Հին օրերի զրույց է այս,
Ավանդություն հուզիչ ու պարզ։

Զավակներով իր բազմաթիվ,
Ընկերներով մեծապատիվ
Քեֆ էր անում, ցնծում, խնդում
Վլադիմիրն իր պալատում։
Փոքր դստերն իր գեղանի
Տվել էր նա քաջ Ռուսլանին,
Եվ խմում էր մեծ բաժակով

Նրանց կենացն ախորժակով։
Շտապ չէին ուտում հնում.
Դանդաղ էին գալիս-գնում
Գավաթները արծաթագույն՝
Գարեջրով, գինով լեցուն։
Եվ գինու հետ խինդն էր եռում
Գավաթներում ու սրտերում։
Մատռվակը գավը ձեռին՝
Լուռ խոնարհվում էր հյուրերին։
Շուրջը ժխոր, երգ ու ծիծաղ,
Ցնծում էին հյուրերն ուրախ։
Անուշ մի ձայն լսվեց հանկարծ,
Գուսլին[1] հնչեց, զվարթ զնգաց։
Բայանին են ականջ դնում,
Նա երգում է, փառաբանում
Ռուսլանին ու Լյուդմիլային,
Նրանց պսակն արևային։

Բայց Ռուսլանը նստել տրտում,
Ո՛չ խմում է, ո՛չ էլ ուտում,
Սիրածին է նայում տարված,
Հառաչում է սիրուց վառված
Ու անհամբեր՝ բեղն է քաշում։
Ամեն րոպեն սիրտն է մաշում։
Սեղանի մոտ հարսանեկան,
Տխուր-տրտում, մռայլ այնքան՝
Երեք ջահել կտրիճ նստել,
Ու չեն ուզում խմել, ուտել։
Ո՛չ ասում են, ո՛չ էլ խոսում,
Ո՛չ Բայանի երգն են լսում։
Կտրիճները այդ անվանի
Մրցակիցներն են Ռուսլանի։
Նրանց սրտում հուր կա վառման,
Թո՛ւյն կա սիրո, ատելության։

Մեկը Ռոզդայն է անվանի՝
Իր քաջությամբ ռազմիկ հայտնի,
Ուր սահմաններն իր դաշտերի
Ընդարձակեց ուժով սրի։
Մյուս փեսացուն ինքնահավան
Ցառլաֆն է՝ նենգ, ամբարտավան,
Թեև անհաղթ՝ խնջույքներում,
Բայց աննշան՝ կռիվներում։
Քաջ Ռաթմիրն է այն երրորդն էլ՝
Խազարական խանը ջահել։
Երեքն էլ մունջ ու վշտահար.
Ի՜նչ սև խնջույք նրանց համար։

Վերջն է քեֆի։ Վեր են կենում,
Պար են գալիս, ուրախանում,
Մտիկ տալիս ջահելներին։
Հարսն աչքերն է գցել գետին.
Սրտում ասես վիշտ ունի խոր։
Փեսան շողո՜ւմ է բախտավոր։
Մութը պատեց աշխարհն արար,
Կես գիշերվա ժամն է խավար։
Բոյարները՝ թույլ, կիսարթուն՝
Գլուխ տվին, քաշվեցին տուն։
Նորափեսան արդեն մտքով՝
Հիացմունքով, զմայլանքով՝
Վայելում է իր սիրածի
Գեղեցկությունը կանացի։
Բայց իշխանը՝ հայրն աղջկա՝
Տխրությամբ է նրանց օրհնում.
Ինչ-որ թախիծ, թաքուն վիշտ կա,
Ինչ-որ հուզմունք նրա ձայնում։

Ահա տանում են աղջկան
Անկողնու մոտ հարսանեկան։

Կրակն հանգավ... Լեռը՜ ահա
Վառեց ճրագը գիշերվա։
Ժամն է հասել վառ հույսերի,
Սիրո շռայլ շնորհների։
Խանդոտ հագուստն ընկավ ահա
Ցարգըրադյան գորգի վրա։
Սիրո մրմունջն հասնո՞ւմ է ձեզ,
Համբույրի ձայնը սրտակեզ
Ու կուսական երկչոտության
Վերջին տրտունջը խլաձայն...
Ամուսինը երջանկացած
Նախազգում է վայելք վերին...
Սակայն որոտ լսվեց հանկարծ,
Եվ լույս փայլեց հեռվում մթին։
Ճրագն հանգավ, ծուխ բարձրացավ.
Եվ ամեն ինչ մթնում կորավ,
Քաջ Ռուսլանի սիրտը դողաց...
Շուրջը ամեն ինչ լռեց հանկարծ.
Երկու անգամ հեռվում խավար
Հնչեց ինչ-որ մի ձայն օտար,
Ու ձայնի հետ տարօրինակ
Ինչ-որ մեկը՝ սև, ահռելի՝
Երկինք թռավ, կորավ արագ...
Սենյակը լուռ, համր է էլի։
Վեր է կենում փեսան ահով,
Ծով քրտինքն է սառել դեմքին,
Խարխափում է, դողդողալով,
Հույսը կորցրած՝ կանգնում շեմքին։
Ա՜խ, ինչպիսի՜ դժբախտություն...
Չկա սիրած իր հարսնացուն.
Հափշտակե՞ց Լյուդմիլային
Մի սև, անհայտ ուժ դիվային։

Ավա՜ղ, եթե սիրահարին
Անհույս սերն է տանջում լռին.

Բարեկամնե՛ր, դժվար է շատ,
Մակայն դարձյալ կտանի մարդ։
Բայց տանջանքից հետո երկար
Քո սիրածին եթե գրկես,
Այն աղջկան, որի համար
Լացել ես դու լուռ, սիրակեզ,
Եվ կորցնե՞ս հանկարծ նրան
Անկողնու մոտ հարսանեկան...
Բարեկամնե՛ր իմ սիրելի,
Մեռնելը լավ չէ՞ ավելի...
Բայց ապրում է Ռուսլանն անբախտ։
Ծեր իշխանը երբ լսեց այդ,
Սիրտը ասես դաշույն խրվեց։
Նա բոլորին հրավիրեց
Ու վշտաբեկ իր փեսային
Դիմեց դժգոհ և զայրագին.
— Ո՞ւր է, ասա, տո՛ւր պատասխան,
Ո՞ւր է կորել իմ Լյուդմիլան։
Բայց Ռուսլանը կանգնել անձայն
Ու չէր լսում ասես նրան։
Հետո գոչեց իշխանը ծեր.
— Ի՛մ զավակներ, բարեկամնե՛ր,
Շա՜տ բաներ եք դուք ինձ համար
Արել սրտանց, կամքով հոժար։
Գթացե՛ք ինձ, խեղճ ծերունուս,
Ասացե՛ք ինձ, տվեք մի հույս.
Ո՞վ կարող է արդյոք ձեզնից
Վերադարձնել դստերս ինձ,
Ով որ նրան գնա գտնի,
Նա իմ փեսան է արժանի,
Սրտով-սիրով կտամ նրան
Նաև կեսն իմ իշխանության։
Իսկ դու տանջվի՛ր, լա՛ց, չարագո՛րծ,
Երբ չունեցար ուժ, քաջություն

Պաշտպանելու քո ամուսնուն...
Դե՛, ասացե՛ք, ո՞վ կանի փորձ։
— Ե՛ս,—մոտ եկավ անբախտ փեսան։
— Մե՛նք,—գոչեցին միաբերան
Գոռոզ Ֆառլաֆն ու Ռոգդայը,
Խազարական Ռաթմիր խանը։
— Ձի կթամբենք,—ասին նրանք,—
Աշխարհն արար կանցնենք արագ,
Շուտ կգտնանք, մեր հա՛յր անգին,
Ու կբերենք քո դստրիկին։
Ծեր իշխանը բազկատարած
Մոտենում է նրանց հուզված,
Ձեռքն է մեկնում երախտագին
Ու օրհնում է՝ արցունքն աչքին։

Չորսն էլ ահա դուրս են գալիս։
Վիշտն է մաշում խեղճ Ռուսլանին,
Սիրտն արյուն է ասես լալիս,
Երբ հիշում է հարսնացուին։
Նստած իրենց ձիերն աշխետ,
Դնեպրի ափով կանաչավետ
Սլանում են քաջերը մեր,
Երկինք հանում փոշու ամպեր։
Նրանք արդեն կորան հեռվում,
Սակայն կանգնել, նայում է դեռ,
Մտքով նրանց է հետևում
Որդեկորույս իշխանը ծեր։

Մորմոքում է Ռուսլանն անխոս,
Սիրտն է մաշում սիրո ցավը,
Նրա կողքից փքված, գոռոզ
Սուրում, թռչում է Ֆառլաֆը։
Նա ասում է.

— Հազի՜վ պրծա,
Տղե՛րք, հազի՜վ տանից ելա,
Ե՞րբ կտեսնեմ այն հսկային,
Որ վերջ դնեմ նրա կյանքին։
Ա՜յ թե արյուն կթափվի դեռ,
Ջահե՜ր կընկնեն... հե՜յ գիտի, սե՛ր...
Ցնծա՛, իմ սո՛ւր հավատարիմ,
Ցնծա՛, նժո՛ւյգ իմ մտերիմ...

Խազար խանը մտքով ճամփին
Կյուղմիլային է գուրգուրում,
Քիչ է մնում՝ պարի թամբին.
Հե՜յ ջահելի կրակ արյուն...
Աչքերի մեջ հույսի կրակ՝
Մեկ թռչում է թափով արագ,
Մեկ շոյում է, մեկ խթանում,
Խենթ նժույգին ծառս է հանում,
Եվ արշավում է համարձակ
Կեռներն ի վեր, դաշտով արձակ։
Իսկ Ռոգդայը տխուր-տրտում,
Ճակատագրի ահը սրտում,
Տանջվում է լուռ անզոր խանդից,
Սիրտն են մաշում ցավերն անթիվ։
Ահով-դողով, հաճախ գաղտնի,
Հետևում է նա Ռուսլանին։

Ախոյանները միասին
Արշավում են ամբողջ օրը։
Գիշերն իջավ Դնեպրի ափին,
Մութը պատեց չորս բոլորը։
Մշուշ իջավ խոր Դնեպրին։
Ժամ է արդեն տալու դադար
Հոգնած, քրտնած նժույգներին։
Այստեղ բացվեց այլ ճանապարհ։
— Դե՛հ, բաժանվենք,—իրար ասին,—

Ապավինենք ճակատագրին։
Եվ ամեն ձի իրեն համար
Մի ճանապարհ ընտրեց հարմար։

Ի՞նչ ես անում, անբա՛խտ Ռուսլան.
Մենակ—մոլոր, լուռ դաշտերում...
Հիշո՞ւմ է քեզ քո Լյուդմիլան...
Հարսանի՞քդ ես միտքդ բերում...
Սաղավարտը քո պղնձյա
Իջեցրել ես, քաշել աչքիդ,
Թափառում ես դաշտում ահա,
Բաց թողած սանձը նժույգիդ։
Հոգուդ խորքում՝ արդեն վհատ
Մարում են լուռ հույս ու հավատ։

Բացվեց հանկարծ մի քարանձավ.
Լույս երևաց։ Իշխանն անձայն
Առաջ գնաց ու ներս մտավ
Կամարներից հնադարյան։
Ի՞նչ է տեսնում նա իր դիմաց.
Ճերմակմորուք բարի մի մարդ
Ինչ-որ գիրք է կարդում նստած,
Ու ճրագն է վառվում հանդարտ։
— Գալդ բարի՜, որդյա՛կ անգին,—
Դիմեց ուրախ նա Ռուսլանին,—
Քանի տարի այս խավարում
Տանջվում եմ ես, կյանքս է մարում։
Բայց վերջապես այս բախտավոր,
Այս ցանկալի օրին հասա.
Ինձ մոտ բերեց քեզ բա՛խտն այսօր.
Հիմա նստի՛ր, ակա՛նջ արա։
Չկա, Ռուսլա՛ն, քո Լյուդմիլան,
Բայց իմացիր, ի՛մ իշխանիկ,
Կարճ է օրը դժբախտության,

Ու վերջ ունի ամեն չարիք։
Վառ հավատով, հույսով, սիրով
Առա՛ջ գնա, մի՛ վհատվիր,
Խիզախ կրծքով, կտրուկ սրով,
Սրո՛վ միայն ուղիղ հարթիր։

Գիտցի՛ր, Ռուսլա՛ն, քո թշնամին
Չեռնոմորն է, կախարդը հին,
Առևանգողն աղջիկների,
Տիրակալը վեհ լեռների։
Չի հաջողվել դեռ ոչ ոքի
Մտնել նրա օթևանը,
Բայց, ո՛վ պատժողդ չարիքի,
Կհաջողվի քեզ այդ բանը.
Կսպանես դու չարագործին...
Չեմ ասի քեզ էլ ոչ մի բան.
Քո հետագա ճակատագրին
Ինքդ ես արդեն տեր-տիրական։
Իշխանն այստեղ իջավ ծունկի
Ու ծերունու ձեռքն համբուրեց,
Լուսավորվեց աշխարհն աչքին
Ու մոռացավ իր վիշտը մեծ։
Աշխուժացավ, սակայն կրկին
Թախիծ իջավ նրա դեմքին։
— Հայտնի է ինձ քո ցավն անել,
Բայց դժվար չէ վիշտը վանել,—
Ծերուկն ասաց,—քեզ տմարդի
Սերն է տանջում չար կախարդի,
Բայց վհուկը զառամ, տկար,
Ի՞նչ է ջահել կույսի համար։
Ճիշտ է, որ նա ցած է բերում
Աստղերն երկնից, և ամպերում
Դողդողում է լուսինն անգամ,
Երբ սուլում է նա ներքևում,

Սակայն անզոր է նա, գիտեմ,
Ժամանակի օրենքի դեմ։
Նա դղյակներ ունի շքեղ,
Հարուստ է նա, դաժան, ահեղ,
Բայց չունի ուժ ու զորություն
Տիրանալու իր գերուհուն։
Շուրջն աղջկա պտույտ գործում,
Իր սև բախտն է նա անիծում...
Բայց օրն անցավ, բարի՛ կտրիճ,
Հանգստացի՛ր, քնի՛ր մի քիչ։

Եվ քարայրում, մամռի վրա
Դանդաղ հանգչող լույսի դիմաց
Ռուսլանն ահա
Պառկեց հոգնած.
Ուզեց քնի,
Վիշտը անցնի,
Սակայն տանջվում,
Ախ է քաշում...
Եվ վերջապես խոսեց նորից.
— Փախել է քունն իմ աչքերից.
Է՜, ի՞նչ սև քուն, հա՛յր իմ անգին,
Երբ հիվանդ են սիրտն ու հոգին։
Թույլ տուր սիրտս քիչ թարմացնեմ
Զրույցներով քո իմաստուն,
Եվ ների՛ր ինձ, եթե հարցնեմ,
Ո՞վ բարի մարդ, թե ո՞վ ես դու.
Առաքյա՞լն ես ճակատագրի.
Ո՞վ քեզ գցեց խորքն այս այրի։

Տխուր ժպտաց մարդը բարի.
— Մոռացել եմ, որդյա՛կ անգին,
Արդեն տեղը իմ աշխարհի.
Ես ազգությամբ ծնված եմ ֆինն։
Մեծացել եմ կաղնուտներում,

Հովիվ եղել հովիտներում,
Տեսել միայն մամռոտ ժայռեր,
Գիժ առուներ, մռայլ այրեր։
Մանկությունս էր հրաշալի,
Թեև ցավով ու վշտով լի.
Բայց բնության գրկում խաղաղ
Շատ կարճ տևեց կյանքս ուրախ։

Մեր հարևան գյուղում մոտիկ
Կար մի հրաշք ծաղիկ-աղջիկ։
Չկար աղջիկ նրա նման,
Չնաշխարհիկ էր Նախնան։
Ես մի անգամ, վաղ առավոտ
Պարկապզուկ էի փչում,
Հոտը տանում էի արոտ։
Դեմս գետակն էր կարկաչում,
Եվ մի աղջիկ այնտեղ մենակ
Երգ էր ասում, հյուսում պսակ։
Ինձ կախարդեց... Իմ բախտն էր նա,
Նախնա՜ն էր... Ա՜խ, Նախնա՜...
Սիրտս այրեց բոցն աչքերի,
Եվ հրդեհվեց սերն իմ հոգում,
Ճաշակեցի ես խինդ վերին,
Տանջանքներ խոր ու մորմոքուն։

Շատ ամիսներ եկան-անցան,
Ես հայտնեցի սերս նրան,
Ասի. «Սիրո՜ւմ եմ, Նախնա՛...»։
Բայց իմ երկչոտ խոսքերը նա
Լսեց դաժան գոռոզությամբ,
Տարված լոկ իր գեղեցկությամբ.
Եվ նա անհոգ ասաց այսպես.
—Հովի՛վ տղա, չեմ սիրում քեզ։

Ա՜խ, սևացավ աշխարհն աչքիս,
Չէր սփոփում ոչինչ հոգիս,
Ո՛չ անտառը զով ու խաղաղ,
Ո՛չ հովվական խաղերն ուրախ։
Թառամում էր սիրտս մաշվը։
Որոշեցի ես հեռանալ,
Լքել դաշտերն իմ ֆիննական,
Անցնել խարդախ ծովն անսահման,
Մղել սրով կռիվ դաժան,
Փառքով գոնե լինել արժան
Նախնայի մեն-մի ժպտին։
Կանչեցի ես ձկնորսներին,
Եվ գնացինք սիրով-սրտանց
Որոնելու փառք, բախտ ու գանձ։
Եվ առաջին անգամ թնդաց
Ռազմը՝ խաղաղ հողում նախնյաց։
Ճամփա ընկա ես հուսավառ
Քաջերի հետ իմ զինավառ։
Տասը տարի մենք ներկեցինք
Բոսոր արյամբ ձյուն ու ալիք։
Սոսկում էին մեզնից բոլոր
Արքաները հզորազոր.
Նրանց զորքերը մեր սրից
Փախչում էին ինչպես մահից։
Կռվում էինք մոլի, դաժան
Ու բաժանում հարկն ու ընծան,
Հետո քեֆի նստում երկար
Պարտվածի հետ եղբայրաբար։
Սակայն սիրտը իմ սիրատենչ
Կռվի, քեֆի աղմուկի մեջ
Մորմոքում էր, լալիս գաղտնի,
Երազում էր հողն հայրենի։
— Դառնա՜նք,—ասի,—ազնի՛վ քաջեր,
Կախենք զենքն ու զրահը մեր

Խաղաղ հարկի տակ հայրենի,
Տեսնենք մեր գյուղն հնամենի...
Աղմկեցին թևերն էլի։
Թողած հեռվում սարսափ ու սուր,
Թռանք դեպի մեր սիրելի
Հայրենիքի ափերը սուրբ։

Ջանցան իզուր տենչանք ու հույս
Ու երազներ նվիրական.
Ժպտացի՛ր դու տանջված հոգուս,
Ո՛վ քաղցր ժամ տեսակցության։
Գոռոզ կույսի ոտքերի տակ
Արնոտ սուրս նետեցի ես
Եվ շաղ տվի լալ ու սուտակ,
Ոսկի, արծաթ, զարդեր պես-պես։
Սիրով արբած
Ու վերացած,
Եվ գերու պես
Խոնարհ ու հեզ
Կանգնել էի՝ շրջապատված
Ընկերներով նրա նախանձ։
Բայց աղջիկը անհո՜գ այնպես
Ասաց. «Հերո՛ս, չե՛մ սիրում քեզ»։
Ինչո՞ւ իզուր, ինչո՞ւ, որդի՛ս,
Պատմեմ անբուժ ցավը սրտիս...
Մենակ եմ ես, մենակ հիմա,
Մահվան դուռն եմ հասել ահա։
Բայց երբ մեկ-մեկ հիշում եմ ես
Օրերն անցած, սերն իմ հրկեզ,
Հոսում են միշտ մորուքս ի վար
Արցունքներս դառն ու վարար։

Սակայն լսի՛ր։ Հրաշքներ կան
Իմ աշխարհում հեքիաթական։
Հավերժության հարկի տակ լուռ,

Անտառներում թավշագանգուր
Բնակվում են հին կախարդներ,
Ծերունազարդ իմաստուններ։
Ամե՛ն ինչ է նրանց հայտնի՝
Ի՞նչ է եղել, ի՞նչ կլինի.
Նրանց կամքին են ենթակա
Թե սե՛ր, թե մա՛հ։

Ես՝ տարաբախտ մի սիրահար՝
Տխրության մեջ անմխիթար
Կախարդությամբ որոշեցի
Գերել սիրտը Նաինայի։
Եվ դարավոր անտառներում,
Ազատության խաղաղ գրկում
Ուսանեցի երկար տարի
Գիտությունը կախարդների։
Արժանացա բախտիս օրին,
Գաղտնիքների հասա խորին,
Ուժն զգացի կախարդանքի...
Եվ մոտ էր օրն հաղթանակի...
Բայց աշխարհում ի՞նչ կհաղթի
Ամենազոր ու չար բախտին։

Վառ հույսերով ջահել սրտիս
Դիմեցի ես կախարդանքիս
Եվ կանչեցի ոգիներին։
Թավ անտառի մթնում խորին
Շաչեց նետը որոտաձայն,
Ոռնաց քամին կախարդական,
Ու դողդողաց աշխարհն համայն։
Եվ ի՜նչ... նստած էր իմ առաջ
Մի զառամյալ կուզիկ պառավ՝
Իր փոս ընկած չար աչքերով,
Իր երերուն ճերմակ գլխով։

Ա՜խ, այդ նա՜ էր, իմ Նաինա՜ն...
Սև, ահռելի մի ուրվական...
Թարթում էր նա աչքերը չար,
Ես քար կտրած, սարսափահար,
Անխոս ու լուռ նայում էի,
Ինչպե՜ս աչքիս հավատայի։
— Մի՞թե դու ես, ա՜խ, Նաինա՜...—
Ճչացի ես ու լաց եղա,—
Նաինա՛, տո՛ւր ինձ պատասխան.
Մի՞թե, մի՞թե երկինքն այդքան
Փոխել է քեզ՝ կույսիդ չքնաղ,
Խոսի՛ր, ավա՜ղ...
Շա՞տ է անցել այն սև օրից,
Երբ քեզանից ու բոլորից
Ես հեռացա լալահառաչ...
— Ճիշտ քառասուն տարի, ո՛վ քաջ...
Լրանում է, ի՛մ ալևոր,
Յոթանասուն տարիս այսօր։
Անցան անդարձ, անհետ կորան
Տարիները ջահելության,
Մեր գարունը անց է կացել,
Ծերության սև դուռն ենք հասել։
Սակայն լսի՛ր, ի՛մ թանկագին,
Դա կորուստ չէ մի առանձին,
Ճի՛շտ է, մի քիչ պառավել եմ,
Մի քիչ գուցե կռացել եմ,
Էլ գեղեցիկ չեմ թվում քեզ
Ու գրավիչ առաջվա պես,
Բայց իմացի՛ր, ի՛մ սիրելի,
Ես կախարդ եմ զարմանալի։
Ճիշտ որ կախարդ էր իսկական.
Իմաստությամբ իմ անսահման
Կանգնել էի անզոր, անուժ
Նրա առաջ՝ ինչպես ապուշ։

Ծվ, տե՛ս, քավթառ կախարդուհին,
Իմ պառաված աստվածուհին՝
Աչքերի մեջ վայրի կիրքը,
Բաց է անում ինձ իր գիրկը։
Լայն բերանը ծամածռած,
Չար աչքերը վրաս չռած,
Անդրաշխարհի ձայնով կանչում,
Սիրո խոսքեր է մրմնջում.
— Անո՛ւշ ընկեր, ի՛մ սիրասուն,
Հասկացել եմ սրտի լեզուն.
Մարդ ծնվում է, գալիս աշխարհ
Միայն քնքուշ սիրո համար։
Սրտիս խորքում, անո՛ւշ ընկեր,
Արթնացել են կարոտ ու սեր,
Գի՜րկս արի, ես վառվո՜ւմ եմ,
Գի՜րկս արի, ես մեռնո՜ւմ եմ...

Զիգ էր տալիս նա իմ փեշից,
Կախ էր ընկնում չոր մատներով,
Ես քար էի կտրել ահից,
Կանգնել էի փակ աչքերով։
Սակայն երկար չդիմացա,
Ես ճչացի ու սլացա,
Հեռու փախա պառավ դևից։
Նա գոչում էր իմ հետևից.
— Վա՛յ, անարժա՛ն, մարե՜ց լույսս...
Կորած եմ ես, անմեղ կույսս...
Նախնայի՜ն արժանացար,
Իսկ հիմա էլ թողիր, փախար։
Ա՜խ, դավաճան են տմարդի
Ոտքից—գլուխ տղամարդիկ...
Գայթակղե՜ց, խաբե՜ց, ճիվա՛ղ,
Խոցեց սիրով սիրտս, ավա՜ղ...

Աղջկա գո՛ղ, թուք ու մո՜ւր քեզ,
Բայց չե՛ս մարսի, կփոշմանե՛ս...

Բաժանվեցինք։ Եվ այդ օրից
Հեռու կյանքից ու աշխարհից,
Ապրում եմ ես այս քարայրում։
Իմաստություն ու բնություն—
Սրանք են իմ լքված հոգուն
Բերում հանգիստ, մխիթարում։
Մահվան դուռն եմ արդեն հասել,
Բայց պառավն ինձ չի մոռացել,
Եվ ուշացած սերը նրա
Չարության է փոխվել հիմա։
Խարդախ է նա, մաղձոտ այնպես,
Չարությունից կատի և քեզ,
Բայց, զավա՛կ իմ, ոչ մի աղետ
Աշխարհում չի մնա հավետ։

Մեր կտրիճը անքուն, արթուն
Լսում էր լուռ բարի մարդուն։
Չվում էր մութ գիշերն անտես,
Օրն էր բացվում՝ լույսի հանդես։
Գրկեց տղան ծեր կախարդին,
Հառաչելով սեղմեց սրտին,
Ու դուրս ելավ։ Ձին վրնջաց,
Ուրախ փնչաց։
—Հիշի՛ր ինձ, հա՛յր,—Ռուսլանն ասաց,
Սուրաց առաջ
Դաշտով կանաչ։
Ծեր կախարդը մութ քարայրի
Գոչեց հուզված.
— Ճամփադ բարի՜,
Ների՛ր, սիրի՛ր քո ամուսնուն,
Հիշի՛ր խրատն այս իմաստուն։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Ախոյաննե՛ր, կռվում համառ
Անհա՛շտ եղեք դուք իրար հետ,
Արյուն թափեք փառքի համար
Ու արբեցեք ոխով ձեր խենթ։
Աշխարհն ահից թող քար կտրի,
Ձեր քաջությամբ թող հիանա...
Ձեզ ոչ մի մարդ չի խանգարի,
Եվ ոչ մեկը չի ափսոսա։
Ախոյաննե՛ր վեհ երազի,
Դուք ասպետնե՛ր հին Պառնասի,
Քիչ զայրացրեք ժողովրդին
Ձեր վեճերով խոր ու խրթին.
Զարկե՛ք, զարկվե՛ք, զգո՜ւյշ միայն։
Բայց դո՛ւք, սիրո՛ ախոյաններ,
Ապրեցեք հաշտ, առանց արյան։
Հավատացե՛ք, բարեկամնե՛ր,
Ում ճակատին որ կա գրված,
Թե պետք է նա լինի սիրված,
Նա հակառակ ողջ աշխարհին,
Կարժանանա իր սիրածին։

Ռոգդայն անզուսպ՝ սրտի խորքում
Մի սև, ծանր նախազգացում՝
Թողեց երեք կտրիճներին,
Ապավինեց անհայտ երկրին։
Անցավ մթին անտառներով,
Տարված տանջող իր մտքերով։
Չար ոգին էր նստած սրտում,
Նրան մահի, արյան դրդում։
Նա ասում էր.— Ես կսպանե՜մ,
Ամեն արգելք կկործանեմ.
Դեռ կչափվես, Ռուսլա՛ն, ինձ հետ,

Սիրածդ սուգ կանի շուտով…
Եվ դարձնելով իր ձին աշխետ,
Նա ետ սուրաց ամբողջ թափով։

Այդ ժամանակ Ֆառլաֆը «քաջ»
Քաղցր քնից նոր արթնացած,
Ջուլալ առվի ափին կանաչ
Հաց էր ուտում, ծառին թիկնած։
Տեսավ հանկարծ. փոթորկի պես
Մի հեծվոր էր գալիս հեռվից։
Դողաց աշնան տերևի պես
Ու վեր թռավ իսկույն տեղից։
Թողած գետնին սփռոցն հացի,
Թողած զրահ, ձեռնոց, նիզակ
Եվ սաղավարտն իր պղնձի,
Հեծավ իր ձին, փախավ արագ։
Նույնիսկ շուռ գալ սիրտ չէր անում,
Ետքից հեծվորն էր սլանում։
— Կա՛նգ առ, ստո՛ր փախստական,
Կանգ առ, թշվառ, կանգ առ հասնեմ,
Փուչ գլուխդ. ցած գլորեմ։
Նա ճանաչեց ձայնից իսկույն,
Նենգ Ռոգդային, իր թշնամուն,
Եվ կուչ եկավ սիրտը ահից,
Փախավ արագ ինչպես մահից։
Թռչում էր նա անտառներով,
Սլանում էր լայն դաշտերով,
Ինչպես վախկոտ մի նապաստակ,
Որ փախչում է շնից վայրագ։
Այդ փախուստի վայրում արդեն
Ձյունը հալվել առատորեն
Եվ կարկաչով զվարթագին
Փորել էր փոս մի ահագին։
Հասավ փոսին ձին հողմաթև,

Ցնցեց պոչը, բաշն սպիտակ,
Կրծեց սանձը իր պողպատե,
Թռավ փոսից թափով արագ։
Սակայն վախկոտ ձիավորը
Գլուխն ի վայր ընկավ փոսը,
Երկիր-երկինք մթնեց աչքին,
Քիչ էր մնում՝ փչի հոգին։
Ռոգդայն իսկույն հասավ նրան
Ու բարձրացրեց սուրը վրան։
— Մեռի՛ր, վախկո՛տ,— նա մռնչաց։
Բայց Ֆառլաֆին տեսավ ընկած։
Նայեց, ձեռքը ցած իջեցրեց,
Ու զարմացած
Ու զայրացած,
Ատամները կրճտացրեց,
Հետո ցասկոտ ու գլխիկոր
Թողեց փոսը, գնաց մոլոր։
Քիչ էր մնում խնդար քահ-քահ
Ինքն իր վրա։։

Ճամփին տեսավ հերոսը մեր
Մի պառավի՝ կուզ, կիսամեռ։
Գավազանը հյուսիս պարզած,
— Այնտեղ է նա,— պառավն ասաց։
Ռոգդայն արագ, ինչպես քամին,
Թռավ դեպի իր թշնամին։

Իսկ Ֆառլա՞ֆը, ի՞նչ էր անում.
Պառկել փոսում, շունչ չէր հանում։
— Մի՞թե ողջ եմ,— նա զարմացավ,—
Այն փրփրածը ո՞ւր չքացավ։
Հանկարծ վերից մի ձայն լսեց,
Ասես մեկը շիրմից խոսեց.
— Վե՛ր կաց, վե՛ր կաց, երիտասա՛րդ,
Չկա շուրջդ և ոչ մի մարդ,

Բերել եմ ես ահա քո ձին,
Ականջ արա իմ ասածին։

Ելավ փոսից ողորմելին,
Շուրջը նայեց վախվխելով,
Հետո խոսեց հառաչելով.
— Փա՜ռք քեզ, աստվա՛ծ, ողջ եմ էլի։

— Լսի՛ր,—ասաց կախարդուհին,—
Հեշտ չէ գտնել Լյուդմիլային,
Շատ հեռու են նրան տարել.
Ո՞վ կարող է գտնել, բերել։
Աշխարհ շրջել դժվար բան է,
Լա՛վ իմացիր, կփոշմանես,
Քեզ վտանգի իզուր մի՛ տա,
Ճիշտ եմ ասում, ինձ հավատա։
Դու Կիևի շրջակայքում,
Պապենական ագարակում
Կապրես անհոգ, կապրես անվիշտ,
Իսկ Լյուդմիլան... նա մերն է միշտ։

Ասաց, կորավ։ Հերոսը մեր
Թռավ արագ ու անհամբեր։
Նա մոռացած փառք ու անուն,
Նույնիսկ ջահել իշխանուհուն,
Արշավեց տուն։ Ու երբ չնչին
Մի ձայն հասնում էր ականջին,
Տաքություն էր գալիս վրան,
Քրտինքն հոսում առվի նման։

Ռուսլանը մեր հողմի նման
Սլանում է դաշտերով լայն։
Նույն միտքն է միշտ նրան հուզում,
Լյուդմիլային է երազում։
Շշնջում է.—Ո՞ւր ես, ո՞ւր ես,
Հոգո՛ւս հատոր, ո՞ւր գտնեմ քեզ։

Կտեսնե՞մ ես դեմքդ քնքուշ,
Կլսե՞մ ես ձայնդ անուշ,
Թե՞ գրված է քո ճակատին—
Գերի մնալ չար կախարդին
Ու պառավել անհույս, տրտում,
Թոշնել անսեր խավար բանտում։
Թե՞ թշնամիս քաջարազուկ
Կգա... Ո՛չ, ո՛չ, անգի՛ն ընկեր...
Ձեռքի՛ս է դեռ սուրս կտրուկ,
Եվ գլուխս ուսի՛ս է դեռ...

Մի օր այսպես մթնշաղին,
Գետի ափով, նստած իր ձին,
Անց էր կենում նա մտազբաղ։
Շուրջն ամեն ինչ լուռ էր, խաղաղ։
Սակայն մի նետ հանկարծ շաչեց,
Անցավ կողքովն ինչպես կայծակ։
Զրահի ձայն, խրխինջ լսվեց,
Լսվեց դոփյուն ու աղաղակ։
— Կա՛ց,—որոտաց մի ձայն հեռվից։
Նա շուռ եկավ։ Իր հետևից
Նիզակն առած, փոթորկալի
Մի հեծվոր էր թռած գալիս։
Ինչպես ամպրոպ վայրաշառաչ,
Թռավ Ռուսլանը ընդառաջ։
— Կա՛նգ առ, հասա,—գոչեց ուժգին
Անծանոթը մեր իշխանին,—
Դե՛, բարեկամ, հիմա կռվի՛ր,
Այս լայն դաշտում հանգիստ փռվի՛ր,
Մյուս աշխարհը հենց որ մտնես,
Հարսնացուներ շա՜տ կգտնես։
Նրան Ռուսլանը ճանաչեց,
Եվ զայրույթից դողաց, փրփրեց։

Իսկ մեր կո՞ւյսը, բարեկամնե՛ր,

Թողնենք սրանց մի ժամով մենք։
Նրանց մասին կպատմեմ դեռ.
Չերնոմորից, կույսից խոսենք։

Ես՝ մուսայիս հլու ծառան,
Մերթ անհամեստ, անսիրտ այնքան,
Պատմել եմ ձեզ, որ մի գիշեր,
Երբ անկողին չէր մտել դեռ
Զնաշխարհիկ իմ Լյուդմիլան,
Ինչ-որ մեկը տարավ նրան...
Խե՜ղճ Լյուդմիլա... կախարդը քեզ՝
Երբ քո մահճից դաժան ձեռքով
Հափշտակեց ու հողմի պես
Երկինք սուրաց ահեղ թափով,
Դու սարսափից նվաղեցիր
Եվ դալկահար ու անզգա՝
Մի վայրկյանում հայտնվեցիր
Ապարանքում կախարդական։

Տնակիս մոտ ամռան մի օր
Նստած էի մտամոլոր։
Հավանոցի սուլթանիկը,
Փքված, գոռոզ աքլորիկը
Բակովը մեկ պտույտ գործում,
Մի գեր հավի էր հալածում։
Հասավ արդեն ու թևերով
Ուզեց գրկել նրան սիրով...
Պտտվում էր նրանց գլխին
Հավի գողը՝ ագահ մի ցին։
Կողաց օդում, պտույտ տվեց,
Կայծակի պես բակը նետվեց
Ու վեր թռավ՝ ճանկերի մեջ
Թփրտացող այն հավը խեղճ։
Էլ իզուր էր աքլորն ապշած
Կանչում թշվառ իր սիրուհուն,

Լոկ մի փետուր օդում մնաց,
Որ խաղալիք դարձավ քամուն։

Իշխանուհին մինչ լույս պառկած,
Ասես լիներ մղձավանջում,
Իսկ երբ զարթնեց, մի մութ կասկած,
Մի երկյուղ էր սիրտը տանջում։
Մաքուր սիրո կարոտ հոգին
Սիրածին էր տենչում կրկին։
— Ո՞ւր ես, ո՞ւր ես, իմ քա՛ջ իշխան,—
Բացագանչեց նա տխրաձայն։
Շուրջը նայեց սարսափով նա։

... Ո՞ւր է սենյակդ, Լյուդմիլա՞...
Ընկած էր նա ճոխ բարձերին,
Գլխին՝ հպարտ ամպհովանին,
Վարագույրներ, փետրաբարձեր՝
Ծաղկանկար նախշեր վրան,
Ու դիպակե նուրբ գործվածքներ,
Ու մանյակներ վառ, հուրհրան։
Խնկամանները ոսկեվառ
Սփռում էին հոգեթով բույր...
Բա՛վ է, ինչո՞ւ պատմեմ երկար
Կախարդի տան մասին իզուր.
Ինձնից առաջ Շեհերզադեն [3]
Պատմել է այդ մասին արդեն։
Բայց պալատը, մարդի՛կ բարի,
Ի՞նչ է առանց սիրահարի։

Զնաշխարհիկ
Երեք աղջիկ
Զգեստներով նուրբ ու բարակ
Եկան արագ,
Գլուխ տվին
Մինչև գետին։
Ժիր քայլերով անլսելի

Մեկը քնքուշ ու նազելի
Լուռ մոտեցավ Լյուդմիլային
Եվ մատներով եթերային
Մազերն հյուսեց վարպետորեն,
(Մեր աղջիկներն այդ լավ գիտեն),
Եվ ճակատին դժգույն, մռայլ
Դրեց պսակ մարգարտափայլ։
Երկրորդն եկավ՝ համեստ այնպես,
Վար խոնարհած աչքերը հեզ,
Ու հագցրեց իշխանուհուն
Ճոխ սարաֆան մի երկնագույն։
Լայն շղարշը թեթև, քնքուշ
Ծփաց, գրկեց, ինչպես մշուշ,
Գանգուրները ոսկեծածան,
Ուսերն ու կուրծքը կուսական։
Համբուրում է քողը թաքուն
Իմ երկնարժան գեղեցկուհուն,
Եվ սեղմում են մույկերը նեղ
Զույգ ոտքերը հրաշագեղ։
Մոտենում է կույսը վերջին,
Մի զմրուխտյա գոտի ձեռքին։
Երգ է ասում հրաշալի
Անհայտ, անտես մի երգչուհի։
Սակայն ոչի՛նչ, ոչի՛նչ, ավա՜ղ,
Չի սփոփում նրա հոգին.
Ո՛չ կեղծ գովքը, ո՛չ երգն ուրախ,
Ո՛չ էլ զարդերը թանկագին։
Հայելին զո՜ւր է նկարում
Նրա չքնաղ դեմքը տրտում.
Նստած անխոս ու գլխիկոր,
Նա մտորում, թախծում է խոր։

Ում հայտնի է, ծանոթ արդեն
Կանանց հոգու գաղտնիքն անանց,

Ի՞նչ խոսք, նրանք փորձից գիտեն,
Որ թե տխրի սիրտը կանանց,
Եվ հայելուն
Թե մոռանան նայել թաքուն,
Շտկել, սարքել ծուռն ու ճիշտը,—
Ուրեմն՝ շա՜տ լուրջ է վիշտը։

Նորից մենակ է Լյուդմիլան։
Նա մոտենում պատուհանին,
Ու թափառում է մտովին
Հեռվում անշունչ ու անսահման։
Շուրջը միայն ձյուն է խաղաղ,
Ճերմակություն միապաղաղ,
Ու ննջում են լեռներն անձայն
Լռության մեջ հավերժական։
Չկա ձյան մեջ գեթ մի ճամփորդ,
Չկա մի ծուխ կյանք ավետող,
Ցուրտ լեռներում ոչ մի որսորդ,
Ոչ մի ուրախ եղջերափող։
Վայրի բուքն է միայն ոռնում,
Չարագուշակ սուլում մեկ-մեկ,
Երկիր-երկինք իրար խառնում
Եվ օրորում անտառը մերկ։

Ահից դողաց իշխանուհին,
Ծածկեց դեմքը՝ արցունքն աչքին,
Ի՞նչ կլինի հիմա, ավա՜ղ...
Վազեց դեպի դուռը արծաթ։
Դուռը բացվեց երգով ուրախ,
Փռվեց այգին կանաչազարդ,
Որ գեղեցիկ էր ավելի,
Քան ճոխ պարտեզը Արմիդի [4],
Չուներ պարտեզ այդքան շքեղ,
Չուներ պարտեզ այդքան սիրուն
Ոչ Դրիմի իշխանն [5] ահեղ,

Ո՛չ Սողոմոնը իմաստուն:
Ամենուրեք բարձր, սիրուն
Կաղնիներն են շրջում խոհուն:
Վճիտ ջրի հայելու մեջ
Նկարվել են պարզ ու պայծառ
Մրտիների շարքերն անվերջ,
Կանաչ դափնու անտառն անծայր
Եվ նարինջները ոսկեվառ,
Ահա պուրակը եղևնու,
Լայն ծառուղին արմավենու:
Հովիտ ու ձոր, այգի ու սար
Զուգել է ճոխ գարունը վառ:
Մայիսյան հովն է շնկշնկում,
Դաշտերն անուշ բույր են խնկում,
Գեղգեղում է սոխակն անտես,
Սրտի հետ է խոսում ասես:
Մինչև երկինք թռչում են վեր
Ադամանդյա շատրվաններ,
Պճնում ցողով կուռքերը վես,
Որ կենդանի լինեն ասես:
Ֆիդիասը[6] եթե դիտեր,
Պալլասի[7] ու Ֆեբի[8] որդին,
Իր բրիչը վայր կնետեր՝
Հիացմունքից սրտի խորին:
Փշրվում են քարին մարմար
Ջրվեժները թափով ահեղ,
Կապում պայծա՛ռ, պայծա՛ռ կամար,
Մարգարտաշող հրե աղեղ:
Զով անտառում առուն արծաթ
Ոլորվում է ծույլ ու քնատ:
Երևում են տաղավարներ,
Խաղաղության հանգրվաններ:
Կածաններում ու ամենուր
Վառման վարդեր կան քնքշաբույր:

Բայց Լյուդմիլան՝ անհույս, խոցված՝
Չի էլ նայում նույնիսկ նրանց։
Գարշում, խորշում է վայելքից,
Պերճությունից այդ անսահման,
Թափառում է դառնակսկիծ
Կանաչ այգում կախարդական։
Ազատություն է տալիս նա
Հառաչանքին ու արցունքին,
Եվ դարձնում է աչքերն ահա
Անկարեկից, խուլ երկնքին։
Հանկարծ դեմքը պայծառանում,
Մատն է դեպի շուրթը տանում.
Ինչ-որ բան է խորհում լռին...
Գետի վրա կամուրջն էր հին՝
Երկու ժայռի միջև կախված։
Նա մոտեցավ ու սարսափած
Նայեց գետի խենթ հորձանքին։
Դառն հեկեկաց, խփեց կրծքին,
Ուզեց նետվել,
Ուզեց խեղդվել,
Բայց ետ քաշվեց,
Առաջ շարժվեց։

Չնաշխարհիկ իմ Լյուդմիլան
Արևի տակ վառ, հուրհրան,
Դառն արցունքներ շա՜տ հեղեղեց,
Շա՜տ վազվզեց ու շա՜տ հոգնեց։
Նստեց տխուր։ Հանկարծ վրան
Բացվեց մի մեծ, սիրուն վրան,
Ամաններով բյուրեղակուռ.
Ճաշն հայտնվեց անուշաբույր։
Լռության մեջ կախարդական
Գուսլին հնչեց քա՜ղցր այնքան։
Խիստ զարմացավ Թշվառ գերին,

Բայց ինքն իրեն խորհեց լռին.
— Ի՞նչ են առանց սիրահարի
Կյանք ու արև, գանձն աշխարհի։
Ո՛վ դու, որի ձեռքը անտես
Տանջում է ինձ ու գուրգուրում,
Դու ինձ համար ահավոր չե՞ս,
Ես մեռնելուց չեմ վախենում։
Ի՞նչ եմ անում քո երգերը,
Խնջույքներն ու վրանները...
Ո՛չ կլսեմ,
Ո՛չ հաց կուտեմ,
Եվ կտեսնես՝
Կմեռնեմ ես։
Վճռեց այսպես իշխանուհին,
Ապա անցավ համեղ ճաշին։

Վեր է կենում։
Մի վայրկյանում
Անհետ կորան
Երգ ու վրան։
Ո՛չ մի շշուկ ու ո՛չ մի ձայն։
Նորից մենակ է Լյուդմիլան։
Թափառում է այգիներում,
Մի պուրակից մյուսն է անցնում։
Ջինջ լուսինն է լողում երկնում՝
Զով գիշերվա մունջ թագուհին,
Ամեն կողմից մշուշն ելնում
Եվ փռվում է բլուրներին։
Իշխանուհու քունը եկավ։
Մեկը քնքո՛ւշ, քնքո՛ւշ ձեռքով
Նուրբ ավելի, քան գարնան հով,
Բարձրացրեց, զգույշ տարավ
Բույրի միջով ալ վարդերի՝
Դեպի շքեղ պալատը մեծ

Ա. Ս. Պուշկին—6

Եվ իջեցրեց
Մահճի վրա արցունքներին։
Երեք աղջիկ եկան կրկին,
Շորերն հանել սկսեցին։
Սակայն նրանց դեմքը տրտում,
Լռությունը սարկական
Ե՛վ կարեկցանք էին շարժում,
Ե՛վ նախատինք՝ բախտին դաժան։
Բայց շտապենք։ Զգույշ ձեռքով
Իշխանուհու զգեստն հանվեց։
Ձյունափրփուր մի նուրբ շապկով
Նա գլուխը բարձին դրեց։
Աղջիկները գլուխ տվին,
Հառաչելով դուրս գնացին։
Խե՜ղճ Լյուդմիլա, անբա՜խտ գերի…
Փախավ իսկույն քունն աչքերի,
Դողում է նա տերևի պես,
Եվ սառչում է արյունն ասես։
Ինչպե՞ս քուն գա էլ աչքերին։
Անթարթ նայում է խավարին։
Լռություն է շուրջը տիրում,
Սրտի ձայնն է միայն լսում,
Ու թվում է՝
Լռությունն էլ շշնջում է…
Ասես մարդ է գալիս արագ…
Թաքնվում է նա բարձի տակ…
Եվ, ո՛վ սարսափ, աղմուկ լսվեց,
Մութ սենյակը լուսավորվեց,
Բացվեց արագ դուռը դեմի,
Հայտնվեցին իսկույն շեմին
Հսկա նեգրերն ահա խմբով,
Մերկ թրերը շողացնելով։
Առաջ եկան նրանք անխոս,
Այնպես փքված, այնպես գոռոզ,

Ու մոտեցան, բարձի վրա
Ինչ-որ երկար մորուք փռած.
Խմբից հետո մտավ հպարտ
Բոյը մի մատ
Կուզիկ մի մարդ՝
Ճաղատ գլխին թասակ երկար.
(Նա մորուքի տերն էր որ կար)։
Նա մոտ եկավ։ Հենց այդ պահին
Թռավ, իջավ իշխանուհին,
Ճաղատ գլխին ձեռքը գցեց,
Կուզ գաճաճին այնպես խփեց,
Հետո գոռաց այնպես ուժգին,
Որ խլացրեց խեղճ նեգրերին։
Դողաց թզուկն ու կուչ եկավ,
Ցավից, ահից գույնը թռավ։
Ծլկել ուզեց,
Բայց ցած փռվեց,
Իր մորուքի մեջ խճճվեց,
Ելավ տեղից,
Ընկավ նորից,
Խառնվեցին նեգրերն իրար,
Գոռգոռացին սարսափահար,
Գրկած տարան կուզ կախարդին,
Իսկ թասակը մնաց գետնին։

Հիմա դառնանք մեր հերոսին։
Հիշո՞ւմ եք դուք այն երկուսին։
Շո՛ւտ, Օղովակի[9], վրձինդ բեր
Ու նկարիր կռիվ, գիշեր...
Լուսնի դողդոջ լույսով երկար
Զարկում էին նրանք իրար,
Խենթ ցասումից վառված արդեն՝
Նիզակները նետեցին դեն,
Սրերն արդեն փշրվեցին,

Զրահները արնոտվեցին,
Վահանները էլ ահա ջարդված՝
Կտոր-կտոր թափվեցին ցած։
Բռնվեցին նրանք կռիվ։
Նժույգները խենթ, կատաղի
Հա բախվում են ահեղ թափով,
Չորս դին ծածկում փոշու ամպով։
Ըմբիշները անշարժ նստած,
Հա սեղմում են իրար՝ գրկված.
Ասես մեխված լինեն թամբին,
Ձուլված իրար ինչ մի մարմին։
Հյուսվել իրար, քար են կտրել,
Երակներում հուր է վառվել։
Մեկի կուրծքն է դողում ահա
Մյուս թշնամու կրծքի վրա։
Սակայն արդեն թուլանում են,
Կընկնի մեկը հիմա արդեն... –
Իմ հերոսը կրակ կտրած,
Ձիավորին բերում է ցած,
Ով գլխից վեր է բարձրացնում,
Ուղիղ գետի մեջն է նետում,
Մռնչալով որոտաձայն.
— Գնա՛, մեռի՛ր, նախա՛նձ անբան։

Ի՛մ ընթերցող, գլխի ընկար,
Թե ում հաղթեց Ռուստամն անահ.
Կռվի, արյան խենթ սիրահար
Կիևի հույս Ռոգդայն էր նա։
Լյուդմիլայի երկրպագուն
Շատ թափառեց Դնեպրի ափին,
Փնտրեց, գտավ իր թշնամուն,
Սակայն նրա ուժը նախկին
Դավաճանեց հին ռազմիկին.
Ռուս կտրիճը պարտված ընկավ,

Անապատում շիրիմ գտավ։
Բայց ասում են, քաջ Ռոգդային
Մի ջրահարս գետում տեսավ,
Գրկեց նրան, սեղմեց սրտին,
Համբույր տալով, հատակ տարավ։
Եվ ասում են, մութ գիշերին
Թափառում է ափին Դոնի,
Վախեցնում է ձկնորսներին
Ուրվականը այն դյուցազնի…

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Իզուր եք դուք մտել ստվեր
Խաղաղ, ուրախ մարդկանց համար,
Ո՛վ իմ երգեր,
Անկարող եք դուք թաքնվել
Սև նախանձի աչքերից չար։
Քննադատը մաղձոտ, անբան,
Իր նախանձի խոնարհ ծառան,
Ինձ այսպիսի հարց է տալիս.
Թե ինչո՞ւ է հերոսուհիս,
Ամուսինը իմ Ռուսլանի,
Կոչվում օրիորդ, իշխանուհի.
Ասես ծաղր լինի խայթող։
Տեսա՞ր, բարի՛ իմ ընթերցող,
Դու կնիքը և չարության։
Ասա՛, Ջո՛ւլ,[10] նե՛նգ դավաճան,
Ինչպե՞ս, ի՞նչ քեզ պատասխանեմ,
Կարմրի՛ր, կարմրի՛ր, հոգի՛ նանմ,
Բայց տերն ընդ քեզ, ես վիճող չեմ։
Գոհ այն բանից, որ ես եմ ճիշտ,
Համեստորեն լռում եմ միշտ։
Կհասկանաս, սակայն, դու ինձ,

Կխոնարհես աչքերդ վառ,
Կլիմենա[11], ի՛մ սրտակից,
Հիմենի[12] դու զոհ թշվառ։
Տեսնում եմ պարզ. արցունքդ ահա
Ընկնում է իմ երգի վրա.
Օ՜, դու գիտե՜ս երգիս լեզուն...
Դու շիկնեցիր,
Դժգունեցիր,
Սիրտդ լացեց
Ու հառաչեց.
Օ՜, ես գիտե՜մ վերքիդ լեզուն...
Խանդո՛տ, կգա և հատուցում.
Ամուրի[13] հետ Զայրույթն արդար
Փշե սլաք է պատրաստում
Անփառունակ գլխիդ համար։

Սեգ լեռներում,
Կապույտ հեռվում
Արշալույսն է արդեն վառվում։
Բայց պալատը դեռ չի զարթնել։
Զերնամորը բարձին կռթնել,
Խալաթն հագին ու գլխաբաց,
Հորանջում է խիստ զայրացած։
Նրա ճերմակ մորուքի շուրջ
Խռնվել են նեգրերը լուրջ,
Ու սանրում են ծա՜նր-ծա՜նր,
Առած մի-մի ոսկրե սանր։
Մինչ բեղերին չար վհուկի
Բույրն է կաթում արևելքի,
Ստրուկները տեղին-տեղին
Գանգուրներ են սարքում բեղին։
Աստված գիտե, ո՛ր դժոխքից
Ներս է թռչում դռան ճեղքից
Մի թևավոր երկաթե օձ,

Տունը գցում ալմուկ, ղնդոց։
Խփվում է նա գետնին արագ,
Օղակներ է դառնում բարակ...
Նարինան է կանգնում հանկարծ
Մարդկանց առաջ ալշած, սառած։
Գոչում է նա ձայնով դաժան.
— Ողջո՜ւյն, եղբա՜յր իմ պատվարժան։
Ջերնամորիդ չէի տեսել,
Համբավդ էր ինձ միայն հասել,
Բայց բախտը մեզ նույն վրեժով
Միացնում է անխախտ ուժով։
Փորձանքների մեջ ես թաղվել,
Սև ամպեր են գլխիդ կախվել։
Իմ պատիվն էլ ոտնահարված
Պահանջում է անհեղ հարված։

Ու հայացքով՝
Լի քծնանքով,
Կուզ դաճաճը
Մեկնում աջը
Եվ ասում է.
— Օ՜, Նարինա՛,
Քո դաշինքը թանկ է, անգին...
Կպատժենք մենք խարդախ ֆինին։
Չեմ սարսափում խարդավանքից,
Չեմ վախենում ես ոչ ոքից,
Այս է գիրը իմ ճակատի,
Գրված ձեռքով հզոր բախտի.
Ճոխ մորուքը այս խնկաբույր
Ջերնամորին չի տրված զուր։
Նրա ճերմակ մազին քանի
Չի դիպել սուրը թշնամու,
Ոչ մի էակ մահկանացու
Իմ բաղձանքը չի խափանի։

Իմն է դուստրը ծեր իշխանի,
Ռուսլանը թող դագաղ մտնի։
— Նա թող մեռնի՜, նա թող մեռնի՜,—
Կրկնեց ջադուն ձայնով դժնի,
Երեք անգամ ոտքով դոփեց,
Սև օձ դարձավ, կորավ, չքվեց։

Քաջալերված,
Թևավորված,
Վրան շուրջառ՝ փայլուն դիպակ,
Վճռեց նորից կախարդը ծեր
Գնել կույսի ոտքերի տակ
Խոնարհություն, բեղեր ու սեր։
Մեր թզուկը մորուքավոր
Զարդարվել է, զուգվել կրկին,
Սենյակներն է մտնում բոլոր,
Բայց չի գտնում Լյուդմիլային։
Մտնում է նա անտառ, այգի,
Ափն է իջնում ջինջ լճակի,
Տաղավարն է մտնում արագ,
Որոնում է կամրջի տակ։
Սակայն չկա իշխանուհին։
Կատաղել է կուզ ծերունին։
Գոռում, գոչում է զայրագին,
Սևացել է աշխարհն աչքին։
Հեկեկում է վհուկը ծեր.
— Այստե՛ղ եկեք, ի՛մ ստրուկներ,
Ձեզ վրա է հույսս...թե՜ք,
Լյուդմիլային գտեք, բերեք։
Դե, շո՛ւտ, թե չէ կփոշմանե՜ք...
Եթե ինձ հետ կատակ անեք,
Մեկ-մեկ հերթով կբռնեմ ձեզ,
Մորուքովս կխեղդեմ ես...

Ի՛մ ընթերցող, կուզե՞ս պատմեմ,
Ուր էր կույսը ամբողջ գիշեր։
Նա իր բախտի վրա դժխեմ
Ծիծաղում էր՝ արցունքն աչքին։
Մորուքն էլ չէր թվում ահեղ.
Տերն հայտնի էր, ծիծաղելի.
Իսկ պարզ բան է, որ համատեղ
Ահն ու ծիծաղը չեն լինի։
Իշխանուհին
Լուսադեմին,
Երբ արթնացավ,
Տեղից իջավ
Ու ակամա պայծառ, մաքուր
Հայելու մեջ նայեց տխուր։
Նուրբ ուսերից՝ ճերմակ շուշան՝
Գանգուրները ոսկեծածան
Բարձրացրեց,
Հետո սանրեց
Մազերն առատ՝
Անփույթ, վհատ։
Նա երեկվա զգեստն հանկարծ
Մի անկյունում տեսավ ընկած,
Հառաչելով շորերն հագավ.
Բարկությունից լացը եկավ։
«Ախ» էր քաշում նա դառնագին,
Մեկ էլ փչեց նրա խելքին
Դնել գլխին
Ջերնամորի գլխարկը հին։
(Իսկ ի՞նչ գլխարկ չի խենթացնում
Տասնյոթամյա ջահել աղջկան...
Զուգվել երբեք չի ծուլանում...)։
Գլխարկն առնում է Լյուդմիլան,
Քաշում աչքին, դնում է թեք,
Դնում է թարս և ի՞նչ, գիտե՞ք...

Ո՞վ հրաշքներ հին աշխարքի...
Ջքանում է հանկարծակի...
Գլխարկը նա շուռ է բերում,
Նույն կյուզմիլյան է հայնելում։
Դնում է թարս, չկա դարձյալ...
Այստեղ ինչպե՞ս չզարմանալ...
Նա գոչում է.—Ինչ լա՜վ եղավ,
Իմ աչքի՛ լույս, կախա՛րդ իմ լավ,
Էլ չեն լինի ահ ու վտանգ
Ու ավելորդ գլխացավանք։
Հրճվում է նա, շիկնում իսկույն,
Վարդ է դառնում դեմքը դժգույն։
Դնում է թարս նորից գլխին
Զարագործի գլխարկը հին։

Սակա՞յն դառնանք մեր դյուցազնին։
Ամոթ չէ՞ մեզ, որ Ռուսլանին
Ճակատագրի կամքին թողնում
Ու գլխարկով ենք զբաղվում։
Վերջացնելով Ռոգդայի հետ
Գոտեմարտը օրհասական,
Նա անտառը խաղաղավետ
Անցավ, ընկավ հովիտ մի լայն։
Դող է անցնում նրա մարմնով.
Դեմը դաշտն է հնոց կռվի,
Ծածկված մարդկանց ոսկորներով,
Որ դեղնին են տալիս հեռվից։
Թափթփված են դես-դեն անկարգ
Ժանգոտ վահան և ձիասարք,
Լայն կապարճներ և զրահներ,
Ահա մի սուր՝ ոսկրոտ ձեռքին,
Մի սաղավարտ՝ գանգը միջին...
Ահա մի մեծ հսկա կմախք,
Նժույգի հետ անշարժ փռված,

Գետնին խրված նետ ու նիզակ։
Բաղեղն է լուռ փարվում նրանց։
Եվ ոչ մի բան չի վրդովում
Լռությունը այդ ամայի,
Լոկ արևն է լուսավորում
Մունջ հովիտը մռայլ մահի։

Դյուցազնը մեր նայում է լուռ,
Հառաչում է, խոսում տխուր.
— Ո՛վ դաշտ, ո՛վ դաշտ, ասա՛, քեզ ո՞վ
Ծածկեց մարդկանց ոսկորներով։
Արյունահեղ կռվի ժամին
Հողդ է դոփել արդյոք ո՞ւմ ձին,
Ո՞վ է ընկել այստեղ փառքով,
Փչել հոգին մեղմ աղոթքով։
Ո՛վ դաշտ, ինչո՞ւ ես դու լռել
Ու մոռացման խոտով ծածկվել։
Ե՛ս էլ մթնում հավերժության
Չունեմ գուցե ելք փրկության,
Գուցե մի մունջ բլրի լանջին
Դրվի դագաղն իմ՝ Ռուսլանի,
Ու չպատմեն նրա մասին
Հնչեղ լարերը Բայանի։

Բայց հերոսն իմ հիշեց արդեն,
Որ սուր է պետք միշտ էլ քաջին,
Նաև զրահ։ Իսկ ինքն անզեն
Թափառում է դաշտի միջին։
Եվ թփերում ու լռակյաց
Ոսկորների մեջ մոռացված,
Ուր ընկած են ժանգոտ սրեր,
Սաղավարտներ,—
Նա իր համար
Զենք-զրահ է փնտրում հարմար։
Ճախինչ, զնգոց... Զարթնեց ահա

Լայն ստեպը՝ քնած հանդարտ։
Նա բարձրացրեց մի հին վահան,
Եղջերափող ու սաղավարտ։
Բայց հարմար սուր նա չգտավ.
Ռազմի ամբողջ հովիտն անցավ,
Տեսավ սրեր բյուր ու բազում,
Բայց իմ քաջին չէին սազում.
Խիստ փոքր էին, թեթև ու կարճ,
Իսկ իշխանը հսկայալանջ,
Մեր օրերի քաջերից չէր...
Հե՜յ գիտի, հե՜յ, հի՜ն կտրիճներ....
Ուշեց վերջ տալ նա ձանձրույթին,
Պողպատ մի տեգ ձեռքը առավ,
Հագավ կրծքի զրահը հին,
Հետո կրկին ճամփա ընկավ։

Վերջալույսը գունատվեց լուռ,
Նինջ ու երազ իջավ նորից,
Ծփում է ծույլ մշուշը լուրթ,
Ու լուսինն է ժպտում սարից։
Կորավ մթնում դաշտը խաղաղ։
Նեղ կածանով անց է կենում
Ռուսլանը մունջ ու մտազբաղ։
Մի բլուր է դեմը տեսնում,
Ուր խռմփում է բարձրաձայն
Սև, ահավոր ինչ-որ մի բան։
Առանց դողի
Ու երկյուղի
Լսում է նա, նայում, ապշում.
Բլուրն ասես շունչ է քաշում,
Ու ձին փնչում,
Ետ է թռչում,
Ծառս է լինում բաշը վախից,
Ու չի շարժվում կանգնած տեղից։

Հանկարծ աղոտ լույսով լուսնի
Տեսավ տղան… բայց ի՜նչ տեսնի…
Ինչպե՞ս գտնեմ համար բառեր.
Դա կենդանի մի գլուխ էր։
Փակած աչքերն հսկայական,
Խռմփում էր որոտաձայն,
Օրորելով քնի մեջ խոր
Սաղավարտը իր փետրավոր։
Փետուրները ինչպես սավեր՝
Ցցված էին երկինքն ի վեր
Գեղեցկությամբ մի ահավոր։
Լուռ էր շուրջը և անժխոր։
Եվ Ռուսլանին՝ տափաստանի
Այդ անանուն պահապանի
Զարհուրելի գլուխն հսկա
Թվում էր ժայռ մի աժդահա։
Չիմանալով, թե ինչ անի,
Ուզեց գլխի քունը վանի,
Գլխի շուրջը պտույտ գործեց,
Ու քթի տակ եկավ կանգնեց։
Հետո ձեռքի սուր նիզակը
Տարավ դեպի լայն քթանցքը,
Խառնեց կամաց, խուտուտ տվեց։
Գլուխն իսկույն կնճռոտվեց,
Աչքերն հսկա բացեց կամաց,
Զիլ հորանջեց ու… փռշտաց։
Դաշտը ցնցվեց, ոռնաց քամին,
Ելավ փոշին,
Եվ ունքերից,
Թերթունքներից ու բեղերից
Բվեր թռան,
Անհետ կորան։
Արձագանքը զիլ փռշտաց.
Դղրդացին հովիտները,

Ձին թռավ նա ու վրնջաց,
Տղան հավլիլ մնաց թամբին,
Ներքից մի ձայն գոռաց ուժգին.
— Ա՜յ խելագար,
Այս ո՞ւր եկար,
Դարձի՛ր, գնա՛,
Թե չէ հիմա
Կուլ կտամ քեզ,
Խե՛նթ աներես։
Քմծիծաղով հանգիստ, հանդարտ
Ձիու սանձը քաշեց տղան
Ու խոժոռեց դեմքը հպարտ։
Չար գլուխը գոռաց վրան.
— Ի՞նչ ես ուզում ինձնից, մժե՛ղ,
Ո՞ր դեր քեզ բերեց այստեղ...
Դե շո՛ւտ, չքվի՛ր, գնա՛ կորիր,
Քունս խզուր մի՛ խանգարիր։
Ճամփադ բարի՜...
Բայց կտրիճը իմ անվեհեր
Հենց որ լսեց կոպիտ խոսքեր,
Գոչեց անահ ու աներկյուղ.
— Լսի՛ր, դատա՛րկ, հիմա՛ր գլուխ...
Մեծ գլուխներ շա՜տ եմ տեսել,
Բայց մի բան էլ շատ եմ լսել.
Գլուխը՝ մեծ, ճակատը՝ լայն,
Բայց դարման է մեջը միայն։
Կգամ կամաց, չեմ սուլի ես,
Բայց որ հասա, վերջ կտամ քեզ։

Փքվեց գլուխն ահեղ, ցասկոտ,
Կայծկլտացին աչքերն արնոտ,
Բարկությունից լեզուն կապվեց,
Ու բերանից կրակ թափվեց։
Շրթունքները դողդողացին,

Փրփրեցին,
Գոլորշու տաք ամպեր ելան
Ականջներից հսկայական։
Եվ ինչքան որ ուժն էր պատում՝
Փչեց դեմքին իմ իշխանի։
Իզուր էր ձին փախչել փորձում
Ու ազատվել բուք-բորանից։
Սարսափահար ու կուրացած,
Արդեն հոգնած ու թուլացած,
Գլխից փախչում է նա հեռու՝
Ջարդված մարմնին հանգիստ տալու։
Դառնում է քաջ իշխանն էլի,
Սակայն նա է մղվում նորից,
Իսկ հետևից ոնց խելագար,
Հռհռում է գլուխը չար.
—Հայ-հա՜յ, հերո՜ս, հայ-հա՜յ, կորի՛ձ,
Այդ ո՞ւր այդպես, կամա՜ց մի քիչ,
Տակով կանես վիզդ հիմա,
Աստված սիրես, մի վախենա,
Ջա՛րկ մի անգամ,
Ուրախանամ,
Քանի ուժ կա
Ձիուդ վրա։
Եվ իր հսկա լեզուն հանում,
Հռհռում է, տնազ անում։
Ռուսլանը լուռ վրդովմունքով
Սպառնում է սուր նիզակով
Ու մխրճում պողպատը սառ
Այդ լեզվի մեջ հանդուգն ու չար։
Վայրկենաբար,
Հանց գետ վարար
Ժայթքեց լեզվից արյունը վառ։
Գլուխն զգաց սաստիկ մի ցավ,
Քաջությունը միջից թռավ.

Իշխանին էր անթարթ նայում,
Կրծում պողպատն ու գունատվում։
Այսպես մեկ-մեկ, երբ մեր բեմում
Բորբոքվում է, չափը կորցնում,
Մելպոմենի[14] որդին անձիրք,
Խլացնում են նրան հանկարծ
Սուլոցները երկար ու ձիգ։
Նա կուրացած, ապշած, սառած
Ամբոխի դեմ կանգնում դժգույն,
Մոռանում է դերը իսկույն։
Հասավ հարմար վայրկյանն ահեղ,
Բազեի պես կարիճն անահ
Մոտ է թռչում, ձեռքը զորեղ
Իջեցնում է գլխին ահա։
Հատ գլուխը փռվեց ասես։
Տափաստանը թնդաց զարկից,
Խոտը կարմրեց տաք արյունից։
Գլուխն անզոր շրջվեց, ընկավ,
Սաղավարտը տխուր զնգաց։
Հանկարծ օդում փայլով դաժան
Շողաց մի սուր դյուցազնական,
Մեր կարիճը ուրախացած,
Վազեց դեպի սուրը կախված,
Ուզեց գլուխն իսկույն գտնել,
Ականջներն ու քիթը կտրել։
Տարավ, բերեց սուրը թափով,
Սակայն լսեց նա զարմանքով,
Որ գլուխը լալիս, հեծում,
Գութ է հայցում։
Իջեցնում է սուրը փայլուն,
Ու անցնում է զայրույթն իսկույն,
Հանդարտվում է սիրտն ամեհի,
Երբ աղերսն է լսում զոհի։
Այսպես հովտում ձյունը ճերմակ

Հալչում է վառ արևի տակ։

— Խելքի բերիր դու ինձ, ո՛վ քաջ,—
Ասաց գլուխն հառաչանքով,—
Հանցավոր եմ ես քո առաջ.
Ապացուցվեց այդ քո ձեռքով։
Ներողամի՛տ եղիր սակայն,
Կլինեմ ես քո հեզ ծառան,
Ողբալի է իմ վիճակը...
Անցել է իմ ժամանակը...
Ես էլ կտրիճ էի կայտառ...
Ո՞վ կար կռվում ինձ հավասար...
Բախտ ունեի, բայց նախանձից
Դավաճանեց եղբայրս ինձ։
Ա՜խ, Չեռնոմո՜ր արնածարավ,
Դո՛ւ, դո՛ւ տվիր ինձ այսքան ցավ։
Ամոթանքն էր նա մեր ողջ տան։
Մորուց գաճաճ, մորուքավոր.
Առանց ոխի ու բարկության
Նա չի նայել գոնե մի օր
Իմ հասակին վայելչագեղ։
Նա ինձ ատեց,
Իմ դեմ լարվեց
Ատելությամբ խոր ու ահեղ։
Ես պարզ էի ու հասարակ։
Բայց ճիվաղն այն
Մի մատ հալով խիստ խորամանկ
Ու խելքով էր՝ դևի նման։
Այն էլ ասեմ, իմ չար բախտից
Մորուքի մեջ նրա երկար
Հրաշագործ ինչ-որ բան կար։
Եվ աշխարհում ոչ մի բանից
Դավաճանը չի վախենա,
Քանի դեռ այդ մորուքը կա։
Մի օր երբ մտերմաբար

Ասաց.—Կանե՞ս դու մի լավ բան
Եվ ի՛նձ համար, և քե՛զ համար։
Հայտնի է ինձ
Կախարդ գրքից,
Որ լեռներում արևելքի,
Եզերքներին խաղաղ ծովի,
Փականքի տակ, մութ նկուղում
Մի զորավոր սուր է պահվում։
Կարդացել եմ նաև մի բան.
Ճակատագրի կամքով դաժան
Սուրն այդ պիտի դառնա հայտնի
Ու երկուսիս էլ կործանի։
Իմ մորուքը նա կկտրի,
Քո գլուխն էլ ցած կբերի։
Արի խորհենք, մի բան անենք
Ու զնդանից սուրը հանենք։
— Շատ լավ, ի՞նչ կա այդտեղ դժվար։
Խնդրեմ,— ասի,—առանց վեճի
Կանցնեմ թեկուզ աշխարհն արար։
Եվ մի ուսիս՝ մի մեծ սաճի,
Մյուսին՝ կուժը խորհրդատու՝
Ես ճանապարհ ընկա հեռու։
Շատ գնացի, քիչ գնացի,
Այդ էլ արդեն գիտե ասված,
Բայց հակառակ գուշակածիս,
Ամեն բան էլ հաջող գնաց։
Սարերից դեն՝ հեռու, անհայտ,
Գտանք մի օր զնդանը այդ,
Դուռը ձեռքով ես փշրեցի
Եվ սուրն իսկույն դուրս հանեցի։
Բայց դա բախտի սրտովը չէր,
Ու ծագեցին մեր մեջ վեճեր։
Եվ այդ, ի՛նչ խոսք, պատճառ ուներ.
Սուրը որի՞ս պիտի հասներ։

Վիճում էի ես շատ համառ,
Բորբոքվում էր Թզուկը չար։
Շատ կռվեցինք։ Նա հանդարտվեց,
Բայց հասկացա, դիտմամբ լռեց։
— Վերջ տանք, թողնենք վեճերը զուր,—
Ջերմոմորը ասաց տխուր,—
Խաղաղ ապրենք մի հարկի տակ,
Թե չէ կանենք մեզ խայտառակ։
Թողնենք բախտին, որ նա վճռի,
Թե ո՛վ դառնա տերը սրի։
Ականջներս դնենք գետնին,
Եվ ով լսի ձայնն առաջին՝
Սուրը նրա՛նն է հավիտյան…
(Հե՜յ հնարքներ սև չարություն)։
Ասաց, իսկույն պառկեց գետնին,
Ես՝ անխելքս էլ՝ նրա կողքին։
Չէի լսում ես ոչ մի բան,
Ու վճռեցի խաբել նրան։
Բայց խաբվեցի։ Թզուկն իսկույն
Գող կատվի պես թաքուն-թաքուն
Մոտեցավ ինձ վռազ-վռազ,
Ձեռքը թափով բերեց վրաս։
Սուրը շաչեց փոթորկի պես,
Ու մինչև շուռ կգայի ես՝
Գլուխս արդեն թռավ գետին,
Բայց չմեռա կամքով վերին։
Փշով ծածկվեց մարմինս, ավա՜ղ,
Օտար հողում փտեց անթաղ։
Իսկ գլուխս դաժանը չար
Բերեց աշխարհը այս օտար,
Որ պահպանեմ հար-հավիտյան
Ձեռքիդ սուրը դյուցազնական։
Կտրի՛ճ, բա՛խտն է քեզ հովանի,
Տա՛ր, թող աստված քեզ հետ լինի։

Իսկ թե հանկարծ ճանապարհին
Տեսնես գաճաճ անզգամին,
Ա՜խ, զա՛րկ նրան անգթաբար,
Դո՛ւ խարդախից վրեժս առ։
Այն ժամանակ ես անկսկիծ
Այս աշխարհից կհեռանամ,
Գոհությունից ու հրճվանքից
Քո ապտակն էլ կմոռանամ։

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Ես ամեն օր քնից զարթնում
Գոհություն եմ աստծուն հայտնում,
Նրա համար, որ էլ հիմա
Այնքան շատ չեն չարք ու հմա։
Փա՜ռք աստծո, անվտանգ է
Ամուսնությունն հիմա դառել,
Նրանց լարած խարդավանքը
Ջահելին չի վախեցնում էլ։
Բայց կան, ավա՜ղ, այլ կախարդներ,
Որոնց այնպես ատում եմ ես.
Կապույտ աչքեր ու ժպիտներ,
Սիրածի ձայն՝
Քա՜ղցր այնքան։
Օ՜, նրանցից զգուշացե՛ք.
Խաբեբա են, խարդախ ու նենգ։
Դուք էլ ինձ պես սարսափեցեք
Նրանց տված քաղցր թույնից,
Սրտերը ձեր խաղաղ պահեք,
Հեռո՜ւ մաշող վիշտ ու ցավից։

Պոեզիայի համճա՛ր հզոր,
Երգի՛չ հրաշք տեսիլքների,

Սիրո, հույզի ու չարքերի,
Ո՞վ բնակիչ արժանավոր
Դրախտի ու գերեզմանի
Ո՞վ զորավիգ ու հովանի
Իմ մուսայի՝ խենթ ու անկարգ,
Ո՞վ Օրփեոս հյուսսաբնակ [15],
Ների՛ր դու ինձ, որ իմ վեպով
Քայլում եմ քո անցած ճամփով
Եվ մատնում եմ իմ քնարի
Ողջ կեղծիքը հրաշալի։

Բարեկամնե՛ր, պատմել են ձեզ,
Թե չարագործն հնում ինչպես
Վշտից հանձնեց սատանային
Իր դուստրերի և իր հոգին։
Հետո ինչպես աղոթքներով
Եվ հավատով, ծոմ ու պասով,
Ողորմությամբ,
Անկեղծ զղջմամբ
Գութ էր հայցում նա երկնքից
Եվ մի պաշտպան, մի կարեկից։
Թե ոնց մեռավ, ոնց քնեցին
Նրա դուստրերը տասներկու,
Թե մեզ համար ինչքա՞ն էին
Գիշերներն այն՝ ժանտ, ահարկու։
Եվ թե ինչքա՞ն էին ազդու
Տեսիլքներն այն օտարոտի,
Դևը մռայլ, զայրույթն աստծու,
Տանջանքները մեղսապարտի,
Եվ հրապույրը անթերի
Կույս—անարատ աղջիկների։
Թափառել ենք նրանց հետ մենք,
Ամրոցի մոտ ատամնավոր,
Հուզվել, լացել ու սիրել ենք,

Գերվել նրանց նինջով անդորր։
Սրտանց կանչել ենք Վաղիմին[16],
Տեսել զարթոնքը կույսերի,
Եվ նրանց հոր մամռոտ շիրմին
Եկել հաճախ մեկտեղ այցի։
Անհնա՞ր է... խաբե՞լ են մեզ...
Բայց մի՞թե ճիշտ կասեմ ես ձեզ...

Ռաթմիրն հարավ քշեց իր ձին՝
Սրտում կայծը այն վառ հույսի,
Թե կգտնի Լյուդմիլային
Ու կգրկի վերջալույսին։
Երեկո էր արդեն անդորր։
Եվ խղուր էր խանը արի
Դիտում մշուշը հեռավոր։
Չորս դին լուռ էր ու ամայի։
Վերջին շողերն արդեն հանգան,
Հովիտ ու լեռ մշուշ հագան։
Սև ժայռերի մոտով անցնում,
Խանն օթևան է որոնում։
Քերծի վրա բերդ է տեսնում՝
Հաստ պատերով ատամնավոր,
Սև բուրգերն են վեր խոյանում։
Եվ մի ջահել կույս մենավոր
Ահա հանգիստ ու համարձակ,
Ինչպես ծովում կարապ ճերմակ,
Հաստ պատերի երկայնքով մեկ
Քայլում անհոգ, երգում է երգ։
Արշալույսն է շողում գլխին,
Երգը ծորում մեղմ, քնքշագին։

«Իջավ դաշտին
Գիշեր մթին,
Ոռնաց քամին
Սառն ու տրտում,

Ո՞ւր, այդպես ուշ,
Մութն է, մշուշ,
Քնի՛ր անուշ
Մեր պալատում։

Գիշերը՝ քուն,
Վայելչություն,
Ջորը՝ փրփրուն
Գինի կա հորդ,
Արի՛, արի՛,
Գալդ բարի,
Դաշտ ու սարի
Հոգնա՛ծ ճամփորդ։

Այստեղ այնքա՞ն
Ծղեմական
Փերիներ կան
Սիրուդ վայել,
Արի՛, արի՛,
Գալդ բարի,
Դաշտ ու սարի,
Ճամփո՛րդ ջահել։

Լուսաբացին
Խմի՛ր, անգի՛ն,
Թասդ վերջին,
Ընկիր ճամփա,
Արի՛, արի՛,
Գալդ բարի,
Դաշտ ու սարի
Քա՞ղցր տղա։

Իջավ դաշտին
Գիշեր մթին,
Փշեց քամին
Սառն ու տրտում,

Ո՞ւր այդպես ուշ,
Մութն է, մշուշ,
Քնի՛ր անուշ
Մեր պալատում»։

Երգում է նա, կանչում կրկին։
Մոտ է գալիս խանը բերդին,
Դարբասի մոտ նրան ուրախ
Ընդունում են կույսեր չքնաղ։
Ջահել խանին շրջապատում,
Բոյ-բուսաթն են ապշած դիտում,
Նայում սիրուն աչք ու ունքին։
Երկու աղջիկ տանում են ձին։
Սրահներն է խանը մտնում,
Կույսերի հետ այն մենակյաց.
Սաղավարտն է մեկը հանում,
Մյուսն էլ սուրը կողքից կախված։
Հետո փոշոտ վահանն առնում,
Զենք-զրահը դուրս են տանում,
Ռազմի զգեստն հանում հագից,
Բերում են շոր նուրբ դիպակից։
Ու տանում են ապա նրան
Հրաշք բաղնիք մի ռուսական։
Ջուրն է ծփում փրփո՛ւր-փրփո՛ւր,
Լցվում հսկա արծաթ մի գուռ,
Ցայտում են սառ շատրվաններ,
Գորգն է փռված՝ վրան նախշեր։
Պառկում է խանը հոգնաբեկ՝
Գլխին ամպեր գոլորշու տաք,
Հրապուրիչ ու կիսամերկ,
Ծով-աչքերում հույզ ու հեշտանք,
Խռնվում են շուրջը խանի
Մատաղ կույսերը գեղանի։
Մեկը կեչու շյուղը ձեռքին,

Հով է անում դեմքին քրտնած,
Մեկը անուշ վարդաջրով
Թարմացնում է մարմինն հոգնած,
Մյուսն էլ օծում է բույրերով
Թխագանգուր մազերը թաց։
Նրանությամբ ասպետն արբած,
Մոռացել է Լյուդմիլային,
Իր պաշտելի կույսին գերված։
Ու մաշում է, տանջում հոգին
Վայելքի խենթ
Անզուսպ մի տենդ։
Նա աչքերն է դես-դեն հառում,
Սպասումն է նրան վառում,
Սիրտն հալվո՞ւմ է,
Սիրտն այրվո՞ւմ է...

Դուրս է գալիս նա բաղնիքից,
Հագին զգեստ ընտիր թավշից,
Ու նստում է ուրախ սեղան
Կույսերի հետ այն երկնարժան։
Ես Հոմեր չեմ։ Խոսքով գերող
Նա՛ կարող է գովել միայն
Հույն զորքերի ճաշերը ճոխ,
Գինու փրփուր, գավաթի ձայն։
Ես ուզում եմ Պարնիի[17] պես
Գովել անփույթ իմ քնարով
Լոկ համբույրներ ջերմ, սիրակեզ,
Լոկ մերկություն բորբ, հոգեթով։
Ես տեսնում եմ բերդն հեռավոր,
Լուսնի լույսով լուսավորված,
Ուր հոգնատանջ ու մենավոր
Սիրատոչոր խանն է քնած։
Բոցավառ է ճակատը լայն,
Եվ այտերն են հրով բռնված,

Համբույրի են կանչում անձայն
Նրա շուրթերը կիսաբաց։
Հառաչում է կրքոտ, դանդաղ,
Տենչում հրաշք այն կույսերին,
Եվ քնի մեջ գրկում ուրախ,
Վերմակն է նա սեղմում սրտին։
Սակայն ահա դուռն է բացվում,
Մատաղ մի կույս է հայտնվում։
Ոտքերի տակ նրա փութկոտ
Հատակն է խուլ տնքում խանդոտ։
Ո՜վ թևավոր երազներ վառ,
Հեռացե՛ք դուք, թռե՛ք արագ,
Զարթնի՛ր, քո՛նն է գիշերն երկար,
Զարթնի՛ր, ո՜վ խան, վայրկյանն է թանկ։
Մոտ է գալիս կույսը խանին,
Քնած է նա լուռ, հեշտավառ,
Վերմակն ընկնում է հատակին,
Գանգուրն այրվում է ճակատին։
Կանգնած է նա անշարժ, անձայն,
Շունչը պահած, հուզված, սառած,
Հանց կեղծավոր, նենգ Դիանան[18]
Ջահել հովվի մոտ իր սիրած։
Նա անկողնին ծնկով հենվում,
Խոնարհվում է ահա դեմքին,
Ու արբեցմամբ ջերմ համբույրում,
Արթնացնում է քնից խանին։

Բայց քնարը իմ կուսական
Ահա լռում է իմ ձեռքին,
Ու դողում են և՛ սիրտ, և՛ ձայն։
Թողնենք այստեղ ջահել խանին,
Երգս ինչպե՞ս շարունակեմ,
Թե չդառնանք մենք Ռուսլանին,
Այս դյուցազնին պարկեշտ, խոհեմ,

Հավատարիմ սիրո ուխտին։
Կովից հետո գիշեր էր ուշ։
Նա գլխի մոտ հսկայական
Պառկեց հոգնած, քնեց մուշ-մուշ,
Քունը անուշ, քա՜ղցր էր այնքան։
Բացվեց ահա օրը բարի,
Արդար լույսով արեգական,
Խաղաղ ժպտում է աշխարհին
Երկինքն անհուն ու անսահման։
Չարաճճի մի շող ահա
Ոսկեզօծեց գլուխն հսկա։
Հեծավ իր ձին Ռուսլանը քաջ
Ու նետի պես թռավ առաջ։

Օրերն անցնում,
Արտն է դեղնում,
Չոր տերևն է ծառից ընկնում,
Սուլոցներով քամին վայրի
Խլացնում է երգն հավքերի։
Վերջն է աշնան։ Մեգը լռին
Փռվում է մերկ բլուրներին։
Բայց դեռ համառ ու անկոտրում
Ռուսլանն հյուսիս է սլանում։
Ինչե՜ր ասես չեն հանդիպում.
Մեկ հսկայի հետ է կռվում,
Մեկ հանդիպում է կախարդին,
Մեկ լուսնկա գիշերներին
Երևում են հանկարծ նրան,
Հանց երազում կախարդական,
Ջրահարսեր՝ ծառին նստած,
Մառախուղով շրջապատված։
Օրորվում են անխոս, անձայն
Ու ժպտալով կանչում նրան։
Սակայն ասածո կամքով անհաս
Մնում է նա միշտ անվնաս։

Նրա հոգում
Կիրքն է մեռնում,
Նա չի տեսնում,
Նա չի լսում.
Լյուդմիլային է երազում։

Հիմա տեսնենք, թե այդ պահին
Ի՞նչ է անում իմ Լյուդմիլան։
Դրած գլխարկ կախարդական,
Դարձած անտես մարդկանց աչքին,
Կանաչ այգում տխուր շրջում
Ու սիրածին է անրջում,
Սլանում է հոգու թևով
Իր հայրենի դաշտերը ծով,
Եվ գերությունը մոռացած,
Գրկում է իր եղբայրներին,
Գրկում է իր ընկերներին
Ու տատիկին իր զառամած։
Սթափվում է սակայն շուտով,
Ու լցվում է սիրտը վշտով։
Սիրահարված չարագործի
Ստրուկները հենց այդ պահին
Վազում դես-դեն, կանչում էին,
Փնտրում հետքերը կորածի։
Զո՜ւր։ Հրճվում էր, ուրախանում
Իշխանուհին իմ աչաղեղ,
Կանգնում մեկ-մեկ, գլխարկն հանում
Ու կանչում էր.—Եկեք այստե՜ղ։
Վազում էին մոտը խմբով,
Չքանում էր դարձյալ աչքից,
Փախչում, կորչում էր ծիծաղով,
Ազատվելով նրանց ճանկից։
Ամենուրեք տեսնում էին
Թարմ հետքերը նրա ոտքի։

Մեկ՝ ճյուղերում կորչում էին
Պտուղները—դեղին ոսկի,
Մեկ՝ տրորված կանաչ խոտին
Ջուրն էր ցողվում սառն աղբյուրի։
Իսկ պալատում կարծում էին,
Թե հենց նա է՝ իշխանուհին։
Միրգ էր ուտում,
Սառն ու մաքուր ջուրն էր խմում,
Իսկ գիշերը նստում էր նա
Եղևնու կամ բարդու վրա։
Խեղճն ուզում էր քնել մի քիչ,
Բայց փախչում էր քունը աչքից։
Լաց էր լինում ու հառաչում,
Ամուսնուն էր հիշում, կանչում։
Քնում էր նա լուսաբացին՝
Գլուխն հենած ծառի ճյուղին.
Գիշերն հենց որ չքանում էր,
Իշխանուհին արթնանում էր,
Ու ջրվեժի ջրով փրփրուն
Լվանում էր դեմքը սիրուն։
Գաճաճն ինքը իր իսկ աչքով
Տեսավ, ինչպես անհայտ ձեռքով
Մի առավոտ
Ջրվեժի մոտ
Ջուրն ինքն իրեն մի կողմ թռչում
Ու մոտերքի խոտն է թրջում։
Արշալույսից մինչ վերջալույս
Թափառում էր աղջիկն անհույս,
Այգիներում,
Պուրակներում։
Մարդիկ հաճախ երեկոյան
Լսում էին անուշ մի ձայն։
Շատ անգամ էլ գտնում էին
Կամ մի սիրուն ծաղկեպսակ,

Կամ շալի մի կտոր չնչին,
Կամ արցունքոտ մի թաշկինակ։
Դաժան կրքից արդեն խոցված,
Ե՛վ կատաղած, և՛ մռայլված,
Վճռեց գաճաճը ծերունի.
Բռնել նրան ինչ էլ լինի։
Այսպես դարբինը Լեմնոսյան[19],
Որն ընդունեց Ցիտերեից[20]
Սուրբ պսակը ամուսնական,
Տեսավ արարքը մեղսալից
Ջքնաղագեղ իր ամուսնու
Եվ ցանց նետեց նրա գլխին,
Ու ցույց տվեց աստվածներին
Ողջ խարդավանքը կիպրուհու...

Մարմարաշեն տաղավարում
Նստած էր մունջ իշխանուհին
Եվ նայում էր տխուր, տրտում
Կանաչագեղ մարգագետնին։
Հանկարծ լսեց.—Ո՞ւր ես, անգի՛ն...
Դեմը տեսավ նա Ռուսլանին.
Ինքն էր որ կար՝ սեգ, սլացիկ,
Բայց գունատ էր դեմքը սաստիկ
Եվ արյուն էր հոսում կողքից։
Դողաց կույսի սիրտը ցավից,
Մոտ սլացավ նետի նման
Ու հեծկլտաց.— Ռուսլա՜ն, Ռուսլա՜ն...
Այստե՞ղ ես դու...
Դու վե՞րք ունես...
Ասա՛, ի՞նչ է պատահել քեզ...
Հասավ, գրկեց,
Սրտին սեղմեց...
Ուրվականը կորավ, չքվեց։
Ցանցն է փռվում կույսի գլխին,

Եվ գլխարկն է ընկնում գետնին։
— Ի՛մն ես արդեն,— ահից սառած
Լսում է նա, և իր առաջ
Տեսնում է կուզ, գաճաճ դևին։
Ճչում է նա, փռվում գետնին։
Աչքին մթնում է ամեն ինչ,
Ու գալիս է վրան խոր նինջ։

Իշխանուհի՛, գերի՛ թշվառ...
Կուզիկ, սմքած գաճաճը չար
Լյուդմիլային ահա գրկել
Ու գուրգուրում է անարգել։
Սակայն մի՞թե, մի՞թե պիտ նա
Այսպես դյուրին երջանկանա։
Ո՛չ... փողն հանկարծ ահեղ հնչում։
Կախարդին է պալատ կանչում։
Վեր է թռչում գլխապատառ,
Թողած գլխարկն ու աղջկան,
Որոտում է տագնապահար,
Կանչում նորից փողը գուժկան։
Ծեր վհուկը հուզված, գունատ
Ահա թռչում է ընդառաջ
Հանդիպումին ահեղ, անհայտ,
Երկար մորուքն ուսին առած։

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հոգի՛ է իմ իշխանուհին,
Ի՞նչ կհասնի նրա բարքին.
Նա համեստ է ու զգայուն,
Հավատարիմ՝ իր ամուսնուն։
Թեթև է նա խելքից մի քիչ,
Բայց այդպես էլ է գրավիչ։

Նա կարող է հրապուրել,
Գերել սրտերը ամենքի,
Ո՞նց նրա հետ համեմատել
Դելֆիրային[21] խատահոգի։
Մեկին բախտը տվել է ձիրք՝
Գերել սրտեր ու հայացքներ
(Մեն մի ժպտով իր անուշիկ
Նա իմ սրտում վառում է սեր...),
Մեկն էլ հուսար՝ հագած յուբկա,
Միայն խթան ու բեղ չկա։
Հազա՜ր երնեկ այն ջահելին,
Որին քնքուշ իմ Լյուդմիլան
Սպասում է կարոտագին
Մութ անկյունում երեկոյան։
Հազա՜ր երնեկ, օ՜, նրան էլ
Ով չի տեսել Դելֆիրային,
Եվ կամ... օձիքն է թափ տվել,
Ազատել է իր խեղճ հոգին։
Բայց դե դա էլ փորձանք չէ մեծ,
Այս բոլորն էլ ի միջայլոց...
Զարագործին ո՞վ տուն կանչեց,
Ի՞նչ տագնապ էր և ի՞նչ գոռոց...
Ո՞վ էր կանչում ահեղ մարտի
Զարագործին լեղապատառ.
Ռուսլանն էր այդ վրիժառու՝
Ամրոցի մոտ ժանտ կախարդի։
Կանգած էր նա պատի տակին,
Փողն էր փչում որոտագին։
Ձին եփվում էր կանգնած տեղում,
Սմբակներով հողն էր փորում։
Սպասում էր նա վհուկին։
Հանկարծ նրա սաղավարտին
Հարվածն իջավ ինչպես կայծակ,
Ռուսլանը շուռ եկավ արագ,

Տեսավ կախարդ Չեռնոմորին՝
Սարսափելի գուրզը ձեռքին։
Վահանի տակ պատսպարված՝
Նա շողացրեց սուրն ահռելի,
Բայց թզուկը երկինք սուրաց,
Հետո թափով իջավ էլի։
Տղան ճարպիկ մի կողմ գնաց,
Կախարդն ընկավ, ընկած մնաց։
Ռուսլանն իջավ իր նժույգից,
Գնաց, բռնեց երկար միրքից։
Տեր կախարդը փնչաց, տնքաց,
Մեկ էլ երկինք թռավ հանկարծ
Ու Ռուսլանին տարավ հետը։
Մենակ մնաց խեղճ աշխետը։
Թռան անցան մութ անտառներ,
Թռան անցան ճերմակ լեռներ,
Թռան անցան ծովեր անծայր,
Իսկ Ռուսլանը մորուքն երկար
Բռնել էր պինդ երկու ձեռքով,
Կախ էր ընկել ամբողջ ուժով։
Կախարդն արդեն թուլանում էր,
Նա չափազանց զարմանում էր
Ռուս կտրիճի ուժի վրա։
Հոգնեց սաստիկ, դիմեց նրան.
— Իշխա՛ն, լսի՛ր և հավատա՛.
Ես քեզ ոչ մի վնաս չեմ տա,
Կներեմ քեզ,
Քաջ տղա ես.
Կիջնեմ, սակայն
Կա մի պայման։
— Լռի՛ր, խարդա՛խ,—գոչեց տղան,—
Քեզ պեսի հետ էլ ի՞նչ պայման.
Դու տանջողն ես իմ ամուսնու,
Ստոր գողն ես իմ ամուսնու։

Բայց կպատժի սուրս գողին,
Հասնես թեկուզ գիշերաստղին,
Միևնույն է, խարդա՛խ· վհուկ,
Ես կթողնեմ քեզ անմորուք,
Չեռնոմորը դողում է լուռ.
Ու ցնցում է մորուքն իլուր,
Ռուսլանը պինդ կախ է ընկել,
Ու մեկ-մեկ էլ
Ամուր քաշում
Խեղճ կախարդի սիրտն է մաշում։
Երրորդ օրը կախարդն հոգնած՝
Դիմեց նրան, այսպես ասաց.
— Խղճա՛, ասպե՛տ, էլ ուժ չկա,
Կտրվում է շունչս ահա,
Բաշխի՛ր կյանքս, գերի՜դ եմ ես,
Ասա՝ կանեմ, ինչ որ ուզես։
— Հը՛, դողո՞ւմ ես, քեռի՛ կախարդ.
Էլ չես պրծնի, ընկար թակարդ…
Ռուսի ուժը դեռ կիմանա՜ս…
Իմ կնոջ մոտ ինձ տա՛ր, վա՜ղ…

Չեռնոմորը լսեց իսկույն,
Ռուսլանի հետ սլացավ տուն,
Մի ակնթարթ նույնիսկ չանցավ,
Նա իր լեռներն արդեն հասավ։
Այստեղ արդեն Ռուսլանը քաջ
Աջով փայլուն սուրը հանեց,
Ձախով երկար միրուքից բռնեց,
Կտրեց, ինչպես մի բուռ կանաչ։
— Ճանաչի՜ր մեզ,—գոռաց հուժկու,—
Դե՜, գիշատի՛չ, տուր պատասխան,
Ո՞ւր կորավ քո ուժն ահարկու,
Զորությունը կախարդական։
Եվ կապում է սաղավարտին

Մորուքն երկար ու սպիտակ։
Սուլում, կանչում է նժույգին,
Մոտ է թռչում նժույգն արագ։
Ծեր կախարդին կիսակենդան
Պայուսակի մեջ է դնում,
Չկորցնելով ոչ մի վայրկյան,
Լեռան գագաթն է բարձրանում։
Հասավ։ Ուրախ ու խնդաձայն
Դեպի պալատն է սլանում,
Գերիներն ու նեգրերն ահից,
Հենց որ տեսան մորուքն երկար՝
Հաղթանակի առհավատչյան,
Լեղապատառ թողին փախան,
Կանչում է նա Լյուդմիլային՝
Ճոխ պալատում մենակ կանգնած,
Արձագանքն է մունջ կամարի
Նրան միայն պատասխանում։
Եվ անհամբեր, տագնապահար
Այգու դուռն է նա բաց անում,
Որոնում է երկա՜ր, երկա՜ր,
Նայում դես-դեն, բայց չի գտնում։
Լուռ են, դատարկ ու ամայի
Ափերն առվի կանաչավառ,
Այգի, հովիտ ու տաղավար.
Չկա՜ հետքը Լյուդմիլայի։
Իշխանն հանկարծ փշաքաղվում,
Եվ աչքերն են հանկարծ շաղվում։
Սև կասկածն է տանջում նրան.
— Իսկ եթե վիշտ ու դառնությո՜ւն,
Սև գերության լո՜ւծը դաժան...
Րոպեական վհատությո՜ւն...
Այսպես տխուր նա մտորում
Ու գլուխն է լուռ խոնարհում։
Սարսափում է նա ակամա,

Կանգնում անշարժ՝ քարի նման։
Ու արյան հետ երակներում
Բոցկլտում է մի հուր վառման,
Եվ խենթ սիրո թույնն է եռում։
Շուրթերին է հպվում ասես
Ուրվականը իշխանուհու։
Ու խելագար առյուծի պես
Նետվում է նա խորքը այգու։
Լյուդմիլային բարձր կանչում,
Պոկում է նա հսկա ժայռեր,
Եվ ամեն ինչ ջարդում, ջնջում,
Խորտակում է, դարձնում ավեր,
Քանդում պուրակ ու տաղավար,
Գետն է նետում կամուրջ ու ծառ,
Մերկացնում է ստեպը նա։
Խառնվել են իրար ահա
Ծափինչ ու ճիչ, աղմուկ, որոտ։
Սուրն աջ ու ձախ զնգում, շաչում,
Ամայացնում հողը ծաղկած,
Ասպետն անհագ զոհ է փնտրում,
Նույնիսկ օդն է խոցում սրով։
Եվ ի՞նչ. իշխանը կատաղած
Լյուդմիլայի գլխից հանկարծ
Մի հարվածով պատահական
Վայր է գցում գլխարկը այն։
Կախարդանքը չքանում է,
Եվ իշխանը պարզ տեսնում է
Իր սիրելի Լյուդմիլային,
Անշարժ փռված ցանցի միջին։
Չի հավատում նա աչքերին,
Երջանկացած
Ու վերացած,
Վազում, փարվում է ոտքերին,
Գուրգուրում է իշխանուհուն,

Հավատարիմ իր ամուսնուն,
Ցանցն է պատռում,
Ձեռքն համբուրում,
Ծիլ բերկրանքից լաց է լինում։
Ձայն է տալիս, բայց Լյուդմիլան
Փակ աչքերով,
Փակ շուրթերով
Քնա՞ծ է լուռ քնով մանկան։
Մատաղ կուրծքն է ելնում, իջնում.
Ի՞նչ երազ է արդյոք տեսնում։
Չի հեռացնում աչքը տղան,
Մի նոր ցավ է տանջում նրան...
Հանկարծ ծանոթ ձայն է լսում,
Այդ բարեսիրտ Ֆինն է խոսում։

—Արիացի՛ր, կտրի՛ճ իշխան,
Տո՛ւն տար քնած Լյուդմիլային,
Խիզախ սիրտդ միշտ լայն պահիր,
Հավատարիմ՝ սիրուդ, պատվիդ։
Սև չարության դաժան գլխին
Կպայթի խոլ որոտն երկնի,
Ու Կիևում, իր հոր կողքին
Իշխանուհին քնից կելնի։

Ռուսլանը սիրտ առած ձայնից,
Գրկեց քնած Լյուդմիլային,
Հովիտ իջավ լեռան գլխից,
Սրտին սեղմած
Բեռը անգին։

Ճամփա ընկավ։
Թամբի վրա
Սուսիկ-փուսիկ
Դեմ է կուզիկ։
Իշխանուհին քնած է լուռ՝

Նման գարնան արշալույսի,
Հեզ գլուխը ոսկեզանգուր
Դրած ուսին իր հերոսի։
Հյուսքերի հետ հովն է խաղում,
Հառաչներ են թռչում սրտից,
Մերթ էլ խաղաղ դեմքն է վառվում
Նման բացվող կարմիր վարդի։
Վառ երազի թևով քնքուշ
Սիրած տղան է հայտնվում,
Եվ շուրթերը մեղր ու մեղուշ
Նրա անունն են մրմնջում։
Տղան շնչում է վերացած
Կախարդական շունչը կույսի,
Տեսնում ժպիտ, արցունք ու լաց
Զգում թրթիռն անբիծ սրտի...

Մեր կտրիճը գիշեր ու զօր
Կտրում անցնում է սար ու ձոր,
Անծայր դաշտեր ու հովտներ...
Հողն հայրենի հեռու է դեռ։
Ու դեռ քնած է Լյուդմիլան։
Բայց տառապած ասպետն արդյոք՝
Սրտում սիրո բոցն հուրհրան,
Զսպած տենչանքն հրաբորբոք՝
Երջանի՞կ է սոսկ երազով,
Իր ամուսնուն պահպանելով։
Ծեր աբեղան, որ ասքն այս հին
Իմ փառապանծ քաջի մասին
Շա՜տ է պատմել հուզվող սրտի,
Նա այս բանը կհաստատի։
Հավատում եմ, քանզի մարդիկ
Միայն զույգ-զույգ են երջանիկ։
Վայելքները տխուր են, բիրտ,
Երբ հրճվում է միայն մի սիրտ։

Հովվուհինե՛ր, նինջը կույսի
Բնավ նման չէր ձեր նինջին՝
Զով գիշերին մայիս ամսի,
Ծառերի տակ, սարի լանջին։
Մարգագետինն եմ ես հիշում
Կեչիների հովանու տակ,
Եվ երեկոն մով մշուշում,
Եվ կեղծ քունը իմ Լիդայի...
Ա՜խ, առաջի՛ն համբույր սիրո՝
Ե՛վ թռուցիկ, և՛ դողահար...
Զգարթնեց իմ չարաճճին
Խորամանկ ու համբերատար...
Բայց հերի՛ք է շաղակրատեմ,
Ինչո՞ւ իզուր սերս հիշեմ՝
Սփոփանքը, տանջանքն անել,
Որ վաղուց եմ ես մոռացել...
Ինձ հուզում են հիմա միայն
Իմ Ռուսլանը և Լյուդմիլան։

Հարթավայրն է նրանց դիմաց,
Եղեվնիներ գարնանաբույր,
Գլուխն հպարտ երկինք պարզած՝
Կանգնած է լուռ մի սև բլուր։
Ռուսլանն իսկույն վայրը հիշեց,
Այնտեղ գլուխն էր վիթխարի,
Ձին խթանեց, հասավ, կանգնեց,
Ահա հրաշքն հրաշքների։
Նայում է նա անթարթ, լռին.
Սև անտառ են մազերն ասես,
Փռված հսկա լայն ճակատին,
Դեմքն է դժգույն՝ կապարի պես։
Բաց են շուրթերն հսկայական.
Ատամները՝ սեղմված իրար...
Հասել է ժամն օրհասական,

Շուրջը մահվան քրքիջն է սառ։
Մոտ սլացավ քաջ Ռուսլանը՝
Կուզ կախարդին մեջքին գցած։
— Ողջո՞ւյն, գլո՞ւխ,— ուրախ ասաց,—
Պատժված է դավաճանը։
Այստեղ է նա, գերված է, տե՛ս...
Եվ իշխանի ձայնը հանկարծ
Կյանքի գոչեց նրան ասես,
Զարթնեց գլուխն ու հեկեկաց։
Ճանաչեց նա և իշխանին,
Եվ եղբորը՝ իրեն տանջող,
Զայրույթի հուր վառվեց դեմքին,
Եվ աչքերում՝ արդեն մարող։
Նա շփոթված ու կատաղած
Ատամները կրճտացրեց
Ու չոր լեզվով՝ արդեն սառած
Նախատինքի խոսք թոթովեց...
Ու վերջ տրվեց հենց նույն պահին
Նրա երկար տառապանքին,
Լայն ճակատի կրակն հանգավ,
Շնչառությունը թուլացավ,
Եվ իշխանն ու Չեռնոմորը
Տեսան մահվան ցնցումները...
Քնեց գլուխն հավերժ քնով։
Իշխանն անխոնջ ճամփա ընկավ։
Թամբի վրա ահ ու դողով,
Սիրտ չանելով շնչել անգամ,
Մոգի լեզվով եռանդագին
Կուզն աղոթում էր դևերին։

Զով անտառի հովանու տակ,
Ինչ-որ անհայտ գետի ափին,
Կանգնած էր մի ցածրիկ տնակ,
Սոճիների պսակ գլխին։

Հովն էր երգում,
Գետն էր ծփում,
Ու պաղպաջուն ջուրը նրա
Ափերին էր քնքուշ փարվում
Ցանկապատի մոտ եղեգնյա։
Ու թվում էր, թե այս հովտում՝
Բուրումնավետ ու ծաղկալից՝
Լռություն էր թագավորում
Հենց աշխարհի ծագման օրից։
Ձին կանգնեցրեց իշխանը մեր։
Անվրդով էր շուրջն ամեն ինչ։
Հովիտ, պուրակ, անտառ ու լեռ,
Ողողել էր արևը ջինջ։
Ռուսլանն հոգնած վայր է իջնում,
Լյուդմիլային դնում խոտին
Ու նստում է տխուր-տրտում,
Ու հառաչում է դառնագին։
Մի նավակ է հանկարծ տեսնում,
Մի առագաստ ճերմա՛կ, ճերմա՛կ,
Ձկնորսի երգն է տարածվում
Գետի վրա պարզ ու հստակ։
Ձկնորսն ուրախ շարժում է թին,
Մոտենում է արդեն ափին,
Ուր տնակն է կանգնած խաղաղ։
Ուր անտառն է թավ ու մթին։
Ու տեսնում է իշխանն ապշած.
Դուրս է վազում մի գեղեցիկ,
Ջահել աղջիկ բաղկատարած,
Մազերն արձակ ու սլացիկ։
Այնքան դյութիչ ու գերող են
Ժպիտը՝ վարդ, աչքերը՝ նուշ,
Կուրծքը թրթռուն ու լուսեղեն,
Եվ ուսերը՝ մերկ ու քնքուշ։
Նստում է նա տղայի հետ՝

Շուրթը շրթին, սիրտը սրտին,
Սկսվում է երանավետ
Քաղցր սիրո ժամն երկնային։
Մեր իշխանի զարմանքն է խոր.
Ճանաչում է հանկարծ նրան,
Ձկնորս տղան այն բախտավոր
Ջահել խանն էր խաղարական։
Ռաթմիրն էր նա, ռազմիկն ընտիր,
Ախոյանն էր սիրո, կռվի,
Մոռացել էր փառքն ու սերն իր,
Ընքուշ գրկում մի այլ կույսի։

Մոտ է գնում այդ ձկնորսին։
Նա Ռուսլանին իսկույն հիշում,
Ճչում, թռչում է ցնծագին...
Եվ իշխանն է նրան գրկում։
— Այս ի՞նչ բան է,—հարց է տալիս,—
Ինչո՞ւ ես դու ընկել այստեղ,
Լքե՞լ ես դու տագնապալի
Զինվորի կյանքն ու սուրն ահեղ։
— Անգի՛ն ընկեր,—խանն է ասում,—
Հոգնել էին սիրտ ու հոգի,
Ինձ այլևս չէր գրավում
Ուրվականը դատարկ փառքի։
Եվ հավատա՛, սերն երջանիկ,
Հրճվանքն անմեղ, թավուտն անդորր
Թա՞նկ են, քա՞ղցր բյուրապատիկ,
Քան կռիվներն աղետավոր։
Էլ չեմ զգում ռազմի ծարավ,
Ձեռք եմ քաշել խենթությունից,
Բախտն ինձ համար գանձ է անբավ,
Սիրով հարուստ եմ զգում ինձ։
Մոռացել եմ, ընկե՛ր անգին,
Նույնիսկ չքնաղ Լյուդմիլային։

— Սիրելի խան, ուրախ եմ ես,
Ինձ հետ է նա,—Ռուսլանն ասաց։
— Ի՞նչ ես ասում, մի՞թե... ինչպե՞ս...
Իշխանուհին այստե՞ղ հանկարծ...
Քեզ հե՞տ է նա...
Ո՞ւր է հապա...
Ախր... բայց ո՛չ... վախենում եմ՝
Նրան նույնպես գավաճանեմ.
Մենք սրտանց ենք սիրում իրար.
Նա՛ այս բախտիս դարձավ պատճառ,
Ինձ տվեց բախտ, ինձ տվեց կյանք,
Վերադարձրեց նա ինձ նորից
Ջահելություն, ավյուն, կրակ,
Հոգու հանգիստ ու սեր անբիծ։
Զուր էին ինձ բախտ խոստանում
Դեռափթիթ կախարդուհիք,
Ինձ տասներկուսն էին սիրում,
Բայց այս մեկո՛վ եմ երջանիկ։
Թողի պալատն ուրախ, զվարթ,
Ծառ ու ծաղկի ծովում անծայր,
Վայր դրի սուր ու սաղավարտ,
Թողի և՛ փառք, և՛ թշնամի։
Հիմա այնքա՜ն եմ բախտավոր
Այս խուլ վայրում խաղաղավետ՝
Իմ աչքի՛ լույս, հոգո՛ւս հատոր,
Իմ սե՛ր, իմ բա՛խտ, քեզ հե՜տ,
քեզ հե՜տ...

Խոնարհ կանգնել էր հովվուհին,
Զրույցին էր ականջ դնում,
Ու նայելով ջահել խանին,
Ե՛վ ժպտում էր, և՛ հառաչում։

Մինչ ուշ գիշեր գետի ափին
Նստած էին այսպես նրանք՝

Շրթունքներին սիրտն ու հոգին...
Եվ ժամերը թռան արագ։
Մռայլվում էր անտառը թավ,
Շուրջն ամեն ինչ խաղաղ էր, լուռ,
Սարի վրա մշուշ իջավ։
Ժամ է արդեն բաժանվելու։
Քող ձգելով կույսի դեմքին,
Հեծնում է ձին Ռուսլանն ահա,
Հրաժեշտ է տալիս խանին,
Ու ընկնում է նորից ճամփա։
Նրա հետ է մտքով թռչում,
Խանը՝ մտքի ծովը ընկած,
Ռուսլանին բախտ է ցանկանում,
Փառք, հաղթանակ ու սեր անլաց։
Ու հիշում է ցավով սրտի
Հպարտ հասակն իր պատանի։

Ինչո՞ւ ինձ բախտ չի վիճակվել—
Մտերմությունն ու սերը հին,
Քաջությունը միայն երգել,
Որ օտար են մեր աշխարհին։
Ես՝ պոետը ճշմարտության,
Սերունդներին նոր ու գալիք,
Ինչո՞ւ պետք է պատմեմ միայն
Ոճիր, արյուն, դավ ու չարիք...

Կույսին փնտրողը անարժան՝
Նենգ Ֆառլաֆը՝ վախկոտ, անարգ
Արդեն թողած և՛ սեր, և՛ փառք,
Անապատում մութ անսահման
Սպասում էր Նաինային։
Եվ եկավ նա՝ կախարդուհին։
— Ճանաչո՞ւմ ես դու ինձ,—խոսեց,—
Դե՛հ, ձիդ հեծի՛ր, հետևի՛ր ինձ։
Եվ կուզ ջադուն կատվի փոխվեց,

Տարավ նրան իր հետևից՝
Մթին, մռայլ անտառներով,
Նեղ, քարքարոտ կածաններով։

Վրան ճերմակ
Մշուշ—վերմակ
Լայն հովիտն էր խաղաղ ննջում,
Եվ լուսինը թափառական
Ամպից-ամպ էր ահով փախչում։
Տրտում ու հին
Շիրմաթմբին
Իշխան Ռուսլանն էր մոտրում,
Սրտին սեղմած
Կույսին քնած,
Կասկած ու վիշտ հոգու խորքում։
Լողում էր նա մտքի ծովում,
Լի էր հոգին երազներով,
Նրա գլխին քունն էր ճախրում
Սառն ու անտես իր թևերով։
Նա աչքերով աղոտ, հոգնած
Վերջին անգամ կույսին նայեց
Ու ծնկներին գլուխն հենած՝
Խոր քնով աչքը փակեց։

Ու տեսնում է իշխանն ահա
Մի խմաստուն երազ ահեղ.
Կանգնած է մունջ ու գլխահակ
Անդունդի մոտ կույսը ջահել...
Հանկարծ կորչում է Լյուդմիլան,
Ինքն է մենակ անդունդի մոտ,
Ու անդունդից մութ, անսահման
Կսում է ճիչ, մի ձայն ծանոթ...
Նա գլխիվայր նետվում է ցած,
Խոր անդունդի գիրկը մթին...
Հանկարծ տեսնում է իր դիմաց

Ծեր իշխանի պալատը հին։
Վլադիմիրն է նստած խմբով՝
Կորիճներով ծերունազարդ,
Իր տասներկու զավակներով
Եվ հյուրերով իր բազմամարդ.
Դեմը սեղանն է դամաստի,
Սեգ ճակատին ամպն է մշտի։
Հրաժեշտի օրվա նման
Զայրացած է իշխանն էլի,
Բոլորն անշարժ, անխոս, անձայն,
Լռություն է սարսափելի։
Չեն աղմկում հյուրերն ուրախ,
Կլոր թասը չի շրջում էլ,
Եվ Ռոգդայն է արնաշաղախ
Հյուրերի հետ ահա բազմել։
Մեծ բաժակով փրփուր գինին
Խմում է նա անհոգ, զվարթ,
Չի էլ տեսնում նա Ռուսլանին,
Որ իրեն է նայում անթարթ։
Ահա նաև ջահել խանը,
Բոլորն ահա՝ ընկեր, ոսոխ...
Հանկարծ հնչեց երգչի ձայնը,
Հնչեց գուսլին անո՜ւշ, գերո՜ղ...
Ներս է մտնում Ֆառլաֆն հպարտ
Լյուդմիլայի ձեռքից բռնած,
Բայց իշխանը ծերունազարդ
Մնում է լուռ, մռայլ նստած։
Ու բոլորն էլ մռայլ, տրտում,
Հայացքներից վիշտ է կաթում...
Չքանում է բոլորն հանկարծ։
Մահվան դողն է իսկույն պատում
Մեր հերոսին՝ դաշտում քնած։
Եվ արտասվում է երազում,
Խորհում է նա.

Երա՞զ է սա…
Բայց սթափվել անկարող է,
Քունը երկար ու մաշող է…

Լուսինն աղոտ լույս է սփռում
Հովտի վրա լուռ ու մթին,
Երևում է հանկարծ հեռվում
Դավաճանը՝ նստած իր ձին։
Նրա դիմաց բացատն է լայն,
Շիրմաթումբն է տեսնում ահա,
Ռուսլանն ահա և Լյուդմիլան…
Շրջանցում է բացատը նա։
Ու նայում է Ֆառլաֆն ահով,
Զննում է ջադուն մթնում,
Սիրտն է զարկում մահվան դողով.
Սանձը ձեռքից բաց է թողնում։
Մերկացնում է սուրը փայլուն,
Մոտենում է քնած քաջին,
Եվ ուզում է վերջ տալ իսկույն
Մի հարվածով նրա կյանքին։
Վտանգն զգաց Ռուսլանի ձին,
Դոփեց գետինն ու վրնջաց,
Սակայն իզո՜ւր. խորն է քնած,
Չի լսում նա իր նժույգին։
Դավաճանը սառը ու չար
Իր պիղծ ձեռքով, առանց խղճի
Երեք անգամ պողպատը սառ
Մխրճում է կուրծքը քաջի…
Ու առաջ է թռչում կրկին՝
Իր թանկագին որսը գրկին։

Ռուսլանն անուժ, կիսակենդան
Ողջ գիշերը մնաց ընկած,
Եվ հոսում էր գետի նման
Վառ արյունը կրծքից խոցված։

Լուսադեմին աչքը բացեց
Ու հառաչեց ծանր ու խոր,
Կարոտանքով շուրջը նայեց
Ու վայր ընկավ անշունչ, անզոր։

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Դու ուզում ես, ո՛վ իմ անգին,
Որ թրթռուն քնար առած՝
Պատմեմ նորից քեզ վեպքը հին,
Մուսայիս հեզ ծառան դառած։
Բայց չէ՞ որ քեզ հայտնի է լավ,
Որ վայելքից արբած հոգուս
Խորթ են արդեն և՛ սին համբավ,
Ե՛վ քնարի ձայնը քնքուշ։
Երանությամբ արբած միայն,
Թողի երգեր, խաղեր հնչուն.
Ինձ չի գերում փառքը ունայն,
Քո սիրով եմ միայն շնչում։
Լքել է ինձ հանճարն արդեն
Քաղցր մտքի, հնարքների,
Սիրտս հիմա լոկ հրեղեն
Ու թևավոր սիրով է լի...
Բայց ուզում ես, որ քո սիրած
Հեքիաթները պատմեմ կրկին,
Զրույցները վաղուց լսած՝
Վսեմ սիրո, փառքի մասին։
Միշտ իմ հերոսն, հերոսուհին,
Չերնոմորն ու պառավ ջադուն
Եվ մենակյաց Ֆինն ծերունին
Հուզել են քո սիրտն զգայուն։
Ինձ լսելիս շատ ես ննջել՝
Դեմքիդ ժպիտը անխռով,

Բայց հայացքդ շատ անգամ էլ
Երգչին ես դու հառել սիրով...
Լա՛վ... շաղակրատ սիրահարս
Ոտքերիդ մոտ նստած կրկին՝
Կզնգացնեմ ծույլ քնարս,
Կպատմեմ քեզ նրանց մասին։
Սակայն ո՞ւր է Ռուսլանը քաջ։
Ընկած է նա դաշտում կանաչ,
Արյան վերջին շիթն է քամվում,
Գլխին ագռավն է պտտվում։
Էլ չի հնչում փողը նրա,
Էլ չեն շաշում զենք ու զրահ։

Ձին է շուրջը պտույտ գործում
Գլուխն հպարտ խոնարհած վար,
Ոսկե բաշը էլ չի ցնցում,
Հանգել է հուրն աչքերի վառ։
Չի թռչկոտում, տխուր է նա,
Սպասում է տիրոջը լուռ։
Բայց շա՜տ է խոր քունը նրա,
Չի զրնգում վահանը կուռ։

Իսկ վհո՞ւկը։ Կուզ գաճաճին
Չէր նկատել կախարդուհին.
Պայուսակում, թամբի վրա՝
Ոչ մի բանից տեղյակ չէր նա։
Քնատ, հոգնած
Ու բարկացած՝
Նա ձանձրույթից
Հայհոյում էր Լյուդմիլային
Ու Ռուսլանին։
Իսկ երբ տեսավ չկա ձայն-ձուն,
Գլուխն հանեց կախարդն իսկույն.
Եվ ի՞նչ. իշխանն էր իր դիմաց,
Արնաթաթավ, անշարժ ընկած։

Լուռ էր շուրջը, կույսը չկար,
Ցնծաց գաճաճ կախարդը չար.
— Ազա՛տ եմ ես... բախտս բերե՛ց,—
Խորհեց այսպես։ Բայց սխալվեց։

Գրկած քնած Լյուդմիլային,
Ապավինած Նախնային,
Ցառլաֆն անքուն ու անդադար
Տագնապահար ու հուսավառ,
Հեծած նժույգն իր հողմաթև՝
Սլանում էր դեպի Կիև։
Ահա Դնեպրի ջրերն արծաթ
Թավալվում են դաշտում կանաչ,
Քաղաքն ահա ոսկեգագաթ,
Թռչում է նա թափով առաջ։
Իսկ Կիևի փողոցներում
Խռնվել են արդեն մարդիկ,
Աղմկում են, ուրախանում,
Հորն են տանում լուրն երջանիկ։
Եվ դավաճանն հասավ պալատ։

Վշտի ծանր բեռը սրտում,
Վլադիմիրն այդ ժամանակ
Նստած էր իր ճոխ պալատում
Մտամոլոր ու գլխահակ.
Շուրջը՝ մռայլ, հանդիսավոր
Պայազատներ ու բոյարներ։
Հանկարծ լսեց ինչ-որ ժխոր,
Ինչ-որ ճիչեր, աղաղակներ։
Դուռը բացվեց, ու ներս մտավ
Ջահել ռազմիկ մի զինավառ,
Ողջ գահլիճով շշունջ անցավ,
Խառնվեցին բոլորն իրար։
— Լյուդմիլա՛ն է... Ցառլա՛ֆն է մեր...
Վեր է կենում իշխանը ծեր

Ու մոտենում է ծանրաքայլ՝
Հուզված, մռայլ,
Եվ հայրական գթոտ ձեռքով
Դստերն ուզում է գուրգուրել,
Բայց քնած է նա խոր քնով
Ու չի կարող հորը լսել։
Հայրը մնում է զարմացած,
Եվ նայում են բոլորն ապշած,
Հայրն աչքերը տագնապահար
Ասպետին է գամել ահա։
Իսկ դավաճանը արնախում
Լռությո՜ւն է ահա խնդրում
Ու շշնջում է մեղմաձայն.
— Իշխան, քնած է Լյուդմիլան,
Նրան բերել եմ անտառից,
Խլել եմ չար ոգու ձեռից։
Շատ կռվեցինք. երեք անգամ
Ջինջ լուսինը ծագեց, հանգավ.
Ես խլեցի քո աղջկան,
Իսկ չար ոգին խոցված ընկավ։
Իսկ թե կույսին ո՞վ կարթնացնի,
Ե՞րբ կարթնանա իշխանուհին,
Արարչին է միայն հայտնի։
Ապավինենք հիմա հույսին։

Շուտով լուրը սրտակեղեք
Տարածվում է քաղաքով մեկ,
Եվ ամբոխը խայտաճամուկ
Խռնվում է հրապարակում։
Նրանց առջև պալատն է բաց,
Ներս է հոսում ամբոխն հուզված
Ուր դիպակե բարձր մահճում
Լյուդմիլան է խորունկ ննջում։
Շուրջն իշխաններ, պայազատներ,

Ու հնչում են զի՛լ, միալար,
Համերգում են անթիվ փողեր,
Գուսլի, բամբիռ, վին ու քնար։
Մեր իշխանը՝ արցունքն աչքին
Խոնարհվում է դստեր վրա,
Նենգ Ֆառլաֆն է կանգնած կողքին,
Ջղջման դողն է պատել նրան։
Գիշերն իջավ, բայց քաղաքում
Այդ օր ո՛չ ոք աչք չփակեց։
Վիճում էին ու աղմկում,
Այդ հրաշքից խոսում անվերջ։
Նույնիսկ տղան նորապսակ
Մոռացել էր իր սիրածին։
Բայց երբ լուսինը բոլորակ
Մայր էր մտնում լուսաբացին,
Նրանց հուզեց մի նոր տագնապ.
Գոռոց, աղմուկ, ճիչ ու որոտ...
Հավաքվեցին բոլորն շտապ,
Քաղաքային պարսպի մոտ։
Տեսան հեռվում, գետի ափին
Վրաններն են փռված անթիվ,
Վահաններն են տալիս պեծին,
Չորս դին զորքեր ցաք ու ցրիվ...
Ռազմակառքեր հսկա, փայլուն,
Վառ խարույկներ, փոշու սև ամպ...։
Նորի՛ց, նորի՛ց դժբախտություն.
Պեչենեգներն են ապստամբ։

Այդ ժամանակ Ֆիննը բարի,
Տիրակալը ոգիների
Անապատում իր լռանիստ
Սպասում էր սրտով հանգիստ,
Որ Ռուսլանին հարություն տար,
Երբ ահավոր աղետը գար։

Տափաստանում խուլ ու վայրի,
Ուր լեռների շարքն է հսկա,
Ուր օթևանն է հողմերի,
Ուր ջաղուն էլ կվախենա
Նայել մթնով,—կա մի հովիտ՝
Մաղկածիծաղ ու ծառախիտ։
Կա այդ հովտում երկու աղբյուր՝
Լուսակոհակ, արծաթաջուր։
Մեկն հոսում է, մեղմ կարկաչում,
Քարերի հետ խոսում, վիճում,
Այդ աղբյուրն է անմահական։
Մյուսն հոսում է համր ու լուռ.
Քուն են մտել նրա ափին
Հովերն անուշ ու զովասուն,
Լուռ են ծառերը հաստաբուն։
Չեն գեղգեղում հավքերն օդում,
Վիթը ծարավ սիրտ չի անում
Ամռան տոթին խմել մի քիչ
Այդ աղբյուրի զուլալ ջրից։
Դա աղբյուրն է մահվան քնի։
Հնուց ի վեր,
Երկար դարեր,
Ոգիներն են անդուլ, անքուն
Հսկում խաղաղ ափն այդ նիրհուն։
Ու մի օր էլ մի ճգնավոր
Եկավ՝ ձեռքին երկու սափոր։
Ոգիները ելան քնից
Ու հեռացան, փախան ահից։
Ճգնավորը գավը սուզեց
Ալիքների մեջ կուսական,
Լցրեց, չքվեց ու հայտնվեց
Ռուսլանի մոտ արյունաքամ։
Ցողեց մեռյալ ջուրը մաքուր,
Ու փակվեցին վերքերն ահա,

Կենդանացավ դիակը լուռ։
Ցողեց հոսող ջուրը ալար։
Սթափվում է Ռուսլանն ահա
Ու նոր ուժով ելնում է վեր,
Ագահությամբ նայում է նա
Շուրջն, արևին վառ, ոսկեհեր։
Եվ թվում է ողջը նրան
Մի մղձավանջ չար ու դաժան։
Սակայն ո՞ւր է իր Լյուդմիլան։
Բռնկվում է սիրտն ու մարում։
Բայց գրկում է հանկարծ նրան
Բարի Ֆինը ու մրմնջում.
— Որդի՛ս, օրն է քո խնդության,
Կկատարվի կամքը բախտի.
Քեզ կանչում է հանդեսն արյան,
Քո թշնամին կընկնի խոցված,
Եվ Կիևում հաղթանակած
Կտեսնես դու կույսին քնած։
Այս մատանին նվիրական
Դիր ճակատին Լյուդմիլայի,
Չարը կանցնի, կգա բարին,
Կանցնի ուժը կախարդանքի։
Արժանացեք դուք ձեր բախտին,
Գնա՜ս բարով, կտրի՛ճ անգին։
Ձեռքդ ի՛նձ տուր վերջին անգամ...
Այսուհետև, ի՛մ բարեկամ,
Չենք հանդիպի էլ իրար մենք,
Միայն շիրմում կտեսնվենք։
Ասաց, կորավ։ Երախտագին
Վերածնված Ռուսլանը քաջ
Ուզեց փարվել ծեր վհուկին,
Բայց ինքն էր լոկ դաշտում կանաչ։
Խաղաց տեղում անհամբեր ձին
(Կուզ գաճաճն էր թամբին էլի),

Տափաստանում խուլ ու վայրի,
Ուր լեռների շարքն է հսկա,
Ուր օթևանն է հողմերի,
Ուր ջադուն էլ կվախենա
Նայել մթնով,—կա մի հովիտ՝
Ծաղկածիծաղ ու ծառախիտ։
Կա այդ հովտում երկու աղբյուր՝
Լուսակոհակ, արծաթաջուր։
Մեկն հոսում է, մեղմ կարկաչում,
Քարերի հետ խոսում, վիճում,
Այդ աղբյուրն է անմահական։
Մյուսն հոսում է համր ու լռին.
Քուն են մտել նրա ափին
Հովերն անուշ ու զովասուն,
Լուռ են ծառերը հաստաբուն։
Չեն գեղգեղում հավքերն օդում,
Վիթը ծարավ սիրտ չի անում
Ամռան տոթին խմել մի քիչ
Այդ աղբյուրի զուլալ ջրից։
Դա աղբյուրն է մահվան քնի։
Հնուց ի վեր,
Երկար դարեր,
Ոգիներն են անդուլ, անքուն
Հսկում խաղաղ ափն այդ նիրհուն։
Ու մի օր էլ մի ճգնավոր
Եկավ՝ ձեռքին երկու սափոր։
Ոգիները ելան քնից
Ու հեռացան, փախան ահից։
Ճգնավորը գավը սուզեց
Ալիքների մեջ կուսական,
Լցրեց, չքվեց ու հայտնվեց
Ռուսլանի մոտ արյունաքամ։
Ցողեց մեռյալ ջուրը մաքուր,
Ու փակվեցին վերքերն ահա,

Շարքերն անթիվ առաջ մղվում,
Տապալվում են, կրկին բախվում։
Ջարդում, ջարդվում են կատաղած
Թե՛ հետևակ, թե՛ ձիավոր։
Մի տեղ ձին է փախչում խրտնած,
Մի տեղ ընկնում են վիրավոր
Եվ ուժաբեկ—
Ռուս, պեչենեգ։
Մի տեղ ցնցում կանչ, աղաղակ,
Մի ուրիշ տեղ՝ փախուստ անկարգ։
Մեկին գուրզն է փռել մեջքին,
Նետն է դիպել մյուսի կրծքին,
Մեկին էլ ձին խենթ ու վայրագ
Ճզմել, արել է ոտնատակ...
Կռիվ էր թեժ մինչ ուշ գիշեր։
Ո՞վ կհաղթի՝ հայտնի չէր դեռ։
Դիակների կույտին թիկնած,
Խոր քուն մտան զորքերն հոգնած։
Լռեց դաշտը, միայն մեկ-մեկ
Լսվում էին թույլ ու բեկ-բեկ
Հառաչանքը ընկածների
Եվ աղոթքը ռուս քաջերի։

Արդեն գիշերն է գունատվում,
Արծաթվում են գետ ու առու,
Աղետաբեր օրն է ծնվում
Արևելքի գրկում հեռու։
Ու պարզվում են անտառ ու լեռ,
Մով երկինքն է քնից զարթնում,
Սակայն խաղաղ նիրհում է դեռ
Ռազմադաշտը՝ արյան ծովում։
Հանկարծ զորքը թշնամական
Տագնապահար ելավ քնից,
Մարտն սկսվեց որոտաձայն,

Եվ սարսաց Կիևն ահից։
Խուճապում են մարդիկ անկարգ
Ու տեսնում են դաշտի միջին,
Հագին զրահ՝ ինչպես կրակ՝
Մի ձիավոր՝ սուրը ձեռքին,
Փոթորկի պես նետվում դես-դեն,
Կտրում, խոցում, փող է փչում...
Ռուսլանն էր դա։ Աստվածային
Ամպրոպի պես պայթեց հանկարծ
Այն արնախում զորքի գլխին։
Նա մոլեգնած
Ջափչփում է դաշտը անծայր,
Ջարդում, ջնջում անգթաբար։
Որտեղ նրա սուրն է շաչում,
Որտեղ նրա ձին է փնչում,
Գլուխները թռչում են ցած,
Եվ շարքերն են փռվում խոցված։
Մի վայրկյանում դաշտը կալի
Արնաշաղախ դիակներից,
Վահաններից, նիզակներից
Փոխվեց հսկա բլուրների։
Ու հետևից սեգ դյուցազնի
Ելան ահեղ գոտեմարտի
Սլավոնական գնդերն հեծյալ...
Մեռի՛ր, անհավատ, անիծյալ...
Հաղթանակի, արյան սովոր
Պեչենեգները դողացին։
Գոռոցներով խենթ, ահավոր
Կանչում խրտնած նժույգներին,
Հեռանում են փոշոտ դաշտից,
Փախչում ռուսաց հզոր սրից,
Որ շառաչում է մոլեգնած
Ու դժոխք է ճամփում նրանց։
Ցնծությո՜ւն է ողջ Կիևում...

Կորիճն անցնում է հաղթական.
Ձեռքին կարմիր սուրն է փայլում,
Տեղն է շողում․ աստղի նման։
Պղնձակուռ զենք-զրահից
Վառ արյուն է ահա թափվում,
Սաղավարտի վրա հովից
Ճերմակ մորուքն է ծածանվում։
Պայծառ հույսով թևավորված,
Թռչում է տունը իշխանի,
Ժողովուրդը սքանչացած
Հավաքվում է շուրջը քաջի։
Մտնում է նա պալատը լուռ,
Ուր ննջում է իշխանուհին.
Թշվառ հայրը մունջ ու տխուր
Ահա կանգնած է սնարին։
Միայնակ է. ռազմը ահեղ
Արյան դաշտն է տարել մարդկանց,
Սակայն Ֆառլաֆն էլ է այստեղ,
Դռների մոտ պահակ կանգնած՝
Հեռու փառքից, մահից, սրից,
Եվ ատելի տագնապներից։
Նա Ռուսլանին հենց որ տեսավ,
Ահից սառեց արյունն իսկույն,
Լեզուն լալկվեց ու կապ ընկավ,
Ծունկի եկավ թույլ ու դժգույն...
Պատժել է պետք դավաճանին,
Բայց Ռուսլանը իր մատանին
Հանկարծ հիշեց,
Եվ մոտ վազեց,
Կարոտավառ ու քնքշագին
Ձեռքը քսեց կույսի դեմքին։
Եվ ի՜նչ հրաշք. կույսը քնած
Խոր հառաչեց, զարթնեց հանկարծ,
Ու զարմացած ասես խորհեց.—

Գիշերն ինչո՞ւ երկար ձգվեց։
Ծանրացել է սրտին ասես
Մի մղձավանջ՝ կապարի պես։
Հանկարծ տեսավ նա Ռուսլանին,
Սրտին սեղմեց քաջ իշխանին։
Թև է առել տղան ասես,
Վերածնվել հոգով հրկեզ,
Հայրն հեկեկում է բերկրանքից,
Գրկում նրանց գորովալից։

Կռահո՞ւմ ես, հոգո՛ւս հատոր,
Վերջն հեքիաթի իմ այս երկար։
Չքացել էր հոր վիշտը խոր,
Նրա զայրույթը անարդար։
Իսկ Ֆառլաֆը ծունկի եկած՝
Ռուսլանին ու Լյուդմիլային
Խոստովանեց, պատմեց նրանց
Արարքները իր դիվային։
Ամուսինները լսեցին
Ու ներեցին չարագործին,
Իսկ վհուկին չար ու դաժան՝
Զրկված ուժից կախարդական՝
Նրանք պալատ ընդունեցին։
Հետո իշխանը ցնծագին
Տոնեց վերջը աղետների
Իր պալատում հնամենի։

Հին օրերի զրույց է այս,
Ավանդություն հուզիչ ու պարզ։

ՎԵՐՋԵՐԳ

Ես՝ սառնասիրտ ադամորդիս,
Մին լռության գրկում անհոգ,
Նուրբ լարերով հեզ քնարիս

Գովերգեցի վեպքը հնոց։
Եվ մոռացա վերքն իմ սրտի,
Որ ինձ տվին բախտ ու ոսոխ,
Խարդավանքը Դորիդայի[22],
Բամբասանքներն աղաղակող։
Ես սլացա թևով մտքիս
Ու վերացա այս աշխարհից,
Մինչդեռ կիտվում էին գլխիս
Սև ամպերը աղետալից։
Ո՜վ պահապան սրբազնագույն
Պատանեկան խենթ օրերիս,
Ո՜վ անմոռաց մտերմություն,
Ո՜վ սփոփանք ցաված սրտիս,
Դո՛ւ ես վանել մրրիկ ու շանթ,
Բերել անդորր հոգուս հիվանդ,
Շնորհել ինձ ազատություն,
Որը կուռքն է իմ վեհագույն։
Լքված փառքից ու աշխարհից,
Հեռու սիրած իմ Նևայից,
Հիմա կանգնած եմ վշտագեմ
Ծեր Կովկասի լեռների դեմ։
Բարձունքներում անառ ու սեգ,
Հպարտ կրծքին ժայռերի լերկ,
Ապրում եմ ես լուռ հույսերով
Ու բնության հրաշքներով։
Տանջում են իմ սիրտն ու հոգին
Խոհերը խոր ու անմեկին,
Բայց իզուր եմ ճգնում հուզվել.
Պոեզիայիս հուրն է մարել։
Անցա՜ն օրերն երազների,
Քաղցր սիրո ու երգերի,
Եվ սրտահույզ, վեհ ներշնչման,
Եվ բերկրանքի ու ցնծության...
Արդեն լքե՞լ է պոետին
Երգի չքնաղ աստվածուհին։

1820

ՊՈԼՏԱՎԱ

ՆՎԻՐՈՒՄ

Քեզ — բայց իմ մութ մուսայի երգը
Արդյոք հասնո՞ւմ է ականջիդ,
Արդյոք սրտիս ձգտումը, տենչը
Կհասկանա՞ համեստ հոգիդ:
Թե՛ պոետի այս նվիրումը,
Ինչպես երբեմն իր սերն էր այն,
Չես ընդունի կրկին, և զուր
Կանցնի դեմիցդ անպատասխան:
  Լսիր, սակայն, այն հնչյունները,
Երբեմն այնքան մոտ քո հոգուն,
Խորհիր, որ բաժանման օրերը,
Իմ հեղհեղուկ բախտի գրկում,
Անապատի տրտում քո տունը,
Վերջին հնչուն խոսքերը քո,
Իմ միակ գանձն ու սրբությունն է
Ու միակ սերն է իմ հոգու:

ՆՐԳ ԱՌԱՋԻՆ

Հարուստ ու մեծ է կոչուբեյն[1]։
Ունի մարգեր նա անսահման,
Եվ արածում են նրա գեր
Նըժույգների երամակներն
Այնտեղ, ազատ անպահապան։
Պոլտավի շուրջն ագարակներ[2]
Այգիներով շրջապատված,
Ունի անչափ նա բարիքներ,
Ատլաս, արծաթ ու մորթիներ
Ամբարներում իր փակ ու բաց։
Բայց Կոչուբեյը հպարտ է, լի՛,
Ոչ փըրփրաբաշ նըժույգներով,
Ոչ իր ոսկով-տուրքով Ղրիմի,
Ոչ էլ տոհմիկ իր գյուղերով,
Իր աղջկանով է գեղադեմ
Հըպարտանում ծեր Կոչուբեյն[3]։

Այն էլ ասենք՝ Պոլտավայում
Մարիին չի հավասարվում
Իր թովչանքով ոչ մի աղջիկ։
Նա թարմ է քանց գարնան ծաղիկ,
Բացված հսկա կաղնու ստվերում։
Կիևում աճող բարդու նըման
Սլացիկ է նա։ Տարժուձևերն—

Ասես կարապն է սահում այն
Ջրերում ջինջ ու կուսական,
Կամ երկչոտ վիթն է սուրում վեր։
Ճերմակ է կուրծքը զերթ փրփուր։
Ու բարձր, վեհ ճակատի շուրջ
Խոպոպը թուխպ է թուխ՝ ամռան,
Աչքերում շող կա աստղերից.
Շուրթը կարմիր վարդի նման։
Բայց ոչ միայն գեղն է գերիչ
(Խամրո՜ղ ծաղիկ) մեծ համբավով
Հարգվում ջահել Մարիի մեջ.
Հայտնի է նա ամենուր՝ մեծ
Համեստությամբ ու իր խելքով։
Գալիս են պերճ փեսացուներ
Ուկրաինայից ու Ռուսիայից.
Սակայն փախչում է նա վեհեր՝
Պսակից, ինչպես կապանքներից,
Մերժում-բոլոր ուզողներին.
Բայց հետմանն ինքն է ուղարկում
Իր հարսնախոսը նըրա տուն[4]։

Ծեր է, կըքած է տարիքով,
Ռազմով, հոգսով, աշխատանքով.
Բայց սիրտը ջերմ է և կրկին
Տիրում է սերը Մազեպին։

Պատանի սիրտն ակնթարթում
Այրվում, հանգչում է։ Սերը խոր
Անցնում գալիս է նորից նոր,
Նոր կիրք է միշտ նըրան լափում.
Բայց չէ այնքան հլու-գյուրին,
Վայրկենական կրքի հըրով
Չի բռնկվում ծերի հոգին՝
Արդեն սառած տարիներով։
Բյուր կրքերի բովում ագահ՝

Համառ, դանդաղ թրծված է նա.
Բայց ուշ կըրակն էլ չի հանգչի.
Մինչև վերջին կայծը կյանքի։

Այն միթը չէ փախչում քարայր՝
Լըսելով ճախրը ծանր արծվի.
Հարսն է սրահում մենակ, մոլար,
Դողում մինչև հարցը լուծվի։

Եվ վըրդովված ամբողջ հոգով՝
Գալիս է մայրն ու հուզմունքով
Ձեռքը բռնում, խոսում դողդոջ.
«Անխիղճը, ծերը պատվուրաց։
Այս կա՞րգ է... Ոչ, դեռ չենք մեռած։
Չի գործի նա ոճիրը. ոչ։
Նա, որ անմեղ իր սանիկին
Պիտի լիներ ընկեր ու հայր...
Կյանքի վերջում, օ, խելագար,
Նրան ուզում է առնել կին»։
Ցնցվեց Մարին։ Դագաղային
Դալուկ տիրեց դեմքին նրա
Ու սառն, ինչպես մեռելի դին,
Աղջիկն ընկավ շեմքի վրա։
Ուշքի եկավ նա, բայց կրկին
Փակեց աչքերն ու տրտմագին
Լըռում է դեռ։ Տեր հայրն ու մայր
Փորձում են սիրտը ամոքել,
Վանել երկյուղն ու միշտը դառն
Ու մութ խոհերը փարատել...
Իզուր։ Ամբողջ այդ երկու օր
Մերթ լուռ լալով, մերթ հեծելով,
Մերժում էր ջուր ու կերակուր,
Սավերի պես գունատ, մոլոր,
Եվ չէր քնում։ Իսկ երրորդ օր
Նրա սենյակը մնաց թափուր։

Ոչ ոք գիտեր, ինչպես և երբ
Փախավ։ Ջրկնորսը այն գիշեր
Ձիու դոփյուն լսեց միայն,
Կանացի շունչ, կազակի ձայն,
Իսկ առավոտ մարգի մեջ թաց,
Ութ սմբակի հետք երևաց։
Ոչ միայն ալվամազն այտի
Ու գանգուրներն երիտասարդ,
Երբեմն ծերն էլ ճակատի
Խիստ կնճիռով, մազով արծաթ,
Գեղեցկուհու մեջ սիրաչեր
Վառում է կրքահույզ տենչեր։

Շուտով հասավ Կոչուբեյին
Օրհասական այդ լուրն արնոտ.
Նա մոռացա՜վ պատիվ, ամոթ,
Նետվեց նա գի՜րկը դիվային։
Ի՜նչ նախատինք։ Եվ հայր ու մայր
Չեն հասկանում այդ լուրը չար։
Այն ժամ միայն ճշմարտության
Երևաց դեմքը սոսկալին։
Այն ժամանակ պարզվեց միայն
Ջահել մեղսակցուհու հոգին։
Այնժամ պարզվեց, ինչո՛ւ այնքան
Կապանքներից ընտանեկան
Նա խուսափում էր քըմահաճ,
Գաղտնի տանջվում, հոգոց հանում.
Ուզողներին էլ՝ աննըված
Լռությունով պատասխանում,
Ինչո՛ւ էր նա լուռ, մըտազբաղ,
Լըսում միայն ծեր հետմանին,
Երբ որ հնչում էր երգ, ծիծաղ,
Ու փըրփըրում թասում գինին,
Ինչո՛ւ նա լոկ երգում էր այն,

Ինչ Մաղեպան էր հորինել[5],
Երբ նա աղքատ էր, փոքր ու դեռ
Հըռչակը չէր ծանոթ նրան,
Ինչո՛ւ հոգով ոչ կանացի
Այնքան սիրում էր այրուձի,
Դափերի հունչը գոռ և կանչ
Ի փառըս մալորոսական
Բուլավայի ու բունչուկի[6]։

Հարուստ, հզոր է Կոչուբեյն։
Ունի նա շա՜տ բարեկամներ։
Պատիվն իր դեռ կըլըվանա։
Ոտի կհանի Պոլտավան նա.
Նըրա տան մեջ հանկարծակի,
Նա, հայրական վըրեժով լի,
Չարագործին կըհանդիպե.
Եվ նա կարող է անայլայլ
Բազկով շամփրել նըրան... Բայց այլ
Խոհեր ունի ծեր Կոչուբեյն։

Ժամանակներն էին այն խառն,
Երբ Ռուսիան էր հասակ առնում,
Մաքառումի մեջ առնանում,
Ինչպես Պետրոս Մեծի հանճարն,
Փառքի ուսման մեջ նա ուներ
Դաժան վարպետ, նըրան ինչքան
Հանկարծակի արնոտ դասեր
Տըվեց շվեդն ասպետական։
Բայց փորձության բովերում բա՜րկ,
Ճակատագրի զարկերի տակ
Ռուսիան կոփվեց։ Այդպես ահա
Մուրճն ապակին փշրում է, բայց
Կոփում պողպատը շիկացած։

Պսակված ունայն փառքով՝ անահ

Կարլը սահում էր դեպի մահ.
Գընում էր Մոսկվայի դեմ հին՝
Ռուս ջոկատները սըրբելով,
Ինչպես մըրրիկն է քշում հողն
Ու խոտն ավլում ճանապարհին։
Այն ուղիով, ուր հետք թողեց
Ռաոխը նոր և առնացի,
Երբ անկումով իր տարփողեց
Նահանջն իր՝ այլը օրհասի[7]։

Կար խուլ հուզմունք Ուկրաինայում,
Վաղուց էր կայծը հուրհուրում։
Բարեկամներին արնոտ հնի
Պատրաստ էին պատերազմի,
Անհաշտ, գոռոզ ձգտում էին
Քանդել կապերն արգելառիթ,
Եվ սպասում էին Կարլին
Հիացմունքով թեթևամիտ։
Հընչում էր հետմանի չորս կողմ
Ապստամբ կոչը. ժամ է, ժամ։
Բայց դեռ մնում էր ծերն զգոն՝
Պյոտրին հլու և անսասան։
Առաջվա պես խոժոռ ու խիստ
Ուկրաինան էր վարում հանգիստ,
Կարծես անման ու անխռով,
Տարված անհոգ խնջույքներով։

«Հետմա՞նը— ծեր է նա, տըկար,—
Պընդում էին պատանիները.—
Հանգըցրել են տարիքն երկար
Նըրա նախկին կըրակը ջեռ։
Ինչո՞ւ դողդոջ ու թույլ բազկով
Կըրում է նա դեռ բուլավա՞ն։
Պետք է հիմա ռազմով, ազգով
Թնդալ դեմ ատելի Մոսկվան։

Եթե ծերուկ Դորոշենկոն[8],
Սամոյլովիչն[9] երիտասարդ,
Կամ Պալեյը[10], Գորդեյենկոն[11]
Մեզ տանեին ճակատամարտ,
Այնժամ օտար ձեռքում այն
Կազակները չէին կորչի,
Կազատվեին գնդերն համայն
Մալորոսյան մեր հեգ երկրի»[12]։

Այսպես էր քաջ պատանությունն
Այրվում անդուսպ ու բորբոքվում՝
Տարավ վտանգավոր փորձի,
Մոռանալով հայրենիքի
Գերյալ վիճակը վաղեմի,
Բոգդանի բախտավոր վեճերն
Ու սուրբ ռազմերը, դաշնագրերն
Ու փառքն իրենց քաջ պապերի։
Բայց ծերությունն զգույշ քայլում
Ու միշտ նայում է կասկածով։
Անկարելին ու կարելին
Նա չի լուծում մի հարվածով։
Ո՞վ կըսուզվի խորքերն անտակ
Սառցով պատած օվկիանոսի։
Ո՞վ սուր մտքով կթափանցի
Նենգոտ հոգու մինչև հատակն
Օրհասական։ Այնտեղ մտքեր,
Այրվող կրքի արգասիքներ,
Մընում են դեռ խոր ընկղմած
Ու վաղեմի, գուցե, տենչեր
Հասունանում են մենակյաց։
Գուցե։ Սակայն հետմանն ինչքան
Խարդախ է, չար է, թունալից,
Այնքան անհոգ է նա դրսից
Ու վարմունքով պարզ է այնքան։

Ինչպե՜ս գիտե նա տիրաբար
Ինչքան անհոգ՝ խնջույքներում
Կարդալ սըրտերն ու գըրավել,
Վարել մտքերը՝ անվթար,
Մարդկանց գաղտնիքը կռահել։
Ինչպիսի կեղծ վստահությամբ
Ինչքան անհոգ՝ խնջույքներում
Ծերերի մոտ, ծեր շաղակրատ,
Անցած օրերն է միտ բերում,
Նորերի հետ՝ ազատասեր,
Դժգոհի հետ՝ ընդդեմ կայսեր,
Զրկվածների հետ արտասվում
Ու հիմարի գտնում լեզուն։
Գուցե քչերը լոկ գիտեն,
Որ անսասան է այդ հոգին
Եվ անխտիր զենքերի մեջ,
Երբ հարկ է վնաս տալ ոսոխին.
Որ ոչ մի հին վիրավորանք
Չի մոռացել նա իր օրում,
Որ հանցավոր իր երազանքն
Արդեն հասնում է շատ հեռուն.
Չունի նա ոչ մի սրբություն,
Չի կատարել նա բարություն,
Նա չի սիրում ոչինչ, ագահ
Տենչում է, որպես ջուր, արյուն,
Ազատությունն արհամարհում,
Որ հայրենիք էլ չունի նա։

Վաղուց, գաղտնի, իր չար հոգում
Ծերն ահեղ դավ էր փայփայում։
Բայց մի հայացք վտանգավոր
Թշնամական հայացք մի խոր
Նրան շատ լավ էր հասկանում։

«Ո՛չ, գիշատի՛չ, հանդո՛ւգն գող,—

Կոչուբեյը կրճտում է չար,—
Ես խընայում եմ տունը քո,
Իմ աղջկա բանտը խավար.
Դու չես խանձվի հրդեհում տապ,
Դու չես սատկի մոլեգնաթափ
Կազակի թրով։ Ո՛չ, արնախում.
Մոսկովյան դահիճների ձեռքում,
Արյան մեջ, փուշ չքմեղանքով,
Ցըցի վրա ջղաձգանքով,
Դու կանիծես այն օրն ու ժամ,
Երբ կնքեցիր աղջիկս իմ տանն,
Ու այն խնջույքը, երբ իզուր,
Լցրի ես քեզ պատվո գինին.
Եվ այն գիշերը, ծեր ուրուր,
Երբ դու տարար իմ աղավնին...»։

Կար ժամանակ, երբ Կոչուբեյն
Ընկեր էր հետմանին, եղբա՛յր.
Երբ նրանք, աղ ու հաց որպես,
Սըրտերն էին բացում իրար։
Նըրանց ձիերն արյան դաշտում
Թռչում էին միշտ միասին.
Նըրանք հաճախ էին խոսում
Մտերմական սիրո մասին—
Կոչուբեյին հետմանը փակ
Բաց էր անում, մասամբ, հատակն
Իր ապստամբ ագահ հոգու,
Եվ ակնարկում ապագայի
Ընդվզումներն արնով հղի
Եվ դաշինքներն իր անհարկու։
Այդպես էր Կոչուբեյն, հոգով
Մոտ էր նրան այն ժամանակ։
Բայց մոլեգնած դառն ոխով
Նա այժմ ունի սրտում պապակ՝

Միայն մի տենչ, նա միայն մի
Միտք է սնում օր ու գիշեր՝
Կըկործանվի կամ կըհանի
Ոխն անարգված իրեն դատեր։

Բայց չարությունը ձեռներեց
Նա թաքցըրել է խոր սրտում։
Անզոր մշտով գիշեր, ցերեկ
Նա դեպ շիրիմ է լոկ ձգտում։
Հետմանի դեմ նա քեն չունի.
Աղջիկն է մեղավոր միայն։
Բայց նա աղջկան էլ կըների.
Տիրոջը թող տա պատասխան—
Իր դերդաստանն անպատվելով,
Մոռանալով երկինք, օրենք։

Այն ինչ, արծվի սուր աչքերով,
Իր շրջանում գիշեր, ցերեկ,
Փընտրում է նա՝ կողմնակիցներ
Քաջ անկաշառ և աներեր։
Կընոջը ողջ խոստովանեց[13].
Վաղուց նա խոր լռության մեջ
Ահեղ նյութում է մատնություն։
Եվ կանացի վըրեժով լի,
Կինն անհամբեր, անըռելի,
Դըրդում է գազազած մարդուն։
Նա լուռ գիշեր քնի պահին,
Որպես ոգի գիշերային,
Նըրան վրեժ է փըսփըսում
Եվ պարսավում և արտասվում
Եվ պահանջում երդում անեղծ—
Եվ Կոշուբեյն ահեղ երդվեց։

Կըշըռված է հարվածը։ Արդ՝
Իսկրայի[14] հետ Կոշուբեյն։

Խորհում են երկուսով. «Արդեն
Պատրաստ է ոսոխին թակարդ։
Բայց ո՞վ, արդյոք խանդավառված
Դեպի բարիքն ընդհանրապես՝
Չարագործի մասին գրված
Այդ մատենագիրն օրհասական
Կհասցնի անվախ՝ նրան,
Պյոտրին ահեղ ու կանխակարծ»։

Կազակների մեջ պոլտավյան
Մերժված անբախտ այն աղջկանից,
Սիրում էր մեկը դեռ նրան,
Սիրով անմար և անձկալից։
Նա երեկո և առավոտ
Իր մայր գետի եզերքի մոտ,
Կեռասենու շըվաքի տակ,
Մարիին շատ է սպասել,
Տանջվել անհույս ու դառնացել։
Ու լոկ տեսքովն առել փափագ։
Անհույս սիրով է սիրել նա,
Չի ձանձրացել առաջարկով.
Նա մերժումին չէր դիմանա։
Երբ այցելում էին խմբով
Փեսացուները, նա ջոկվում
Ու հեռանում էր ոբբ, վհատ։
Իսկ երբ հանկարծ Պոլտավայում
Մարիի խաղքն եկավ ի հայտ,
Երբ բամբասանքը Մարիին
Ծաղրեց անգութ ու այպանեց,
Մարին այդտեղ էլ պահպանեց
Նրա հանդեպ իր թովքը հին։
Բայց երբ, թեկուզ պատահաբար,
Մեկը հիշում էր հետմանին,
Դեղնում էր նա վշտով անճառ՝
Հայացքն իջեցնելով գետին։

Ո՞վ է լուսնով, աստղերի տակ,
Սուրում այսքան ուշ ժամանակ,
Այն ո՞ւմ նըժույգն է անդադար
Այդպես չափում ըստեպն անծայր։

Կազակն հյուսիս է միշտ գնում,
Կազակը չի հանգստանում
Ոչ կաղնուտում, դաշտում լըռին,
Ոչ էլ դըժվար անցման պահին։

Թուրն է փայլում զերթ ապակին,
Պարկը զնգում կըռան տակին,
Սուրում է ձին անդայթ՝ հեռուն,
Բաշը կայտառ թափահարում։

Սուրհանդակին պետ կգա փող,
Կըտրիճի սուրն է հույսի շող,
Կայտառ նըժույգն էլ հույս է, կյանք,
Բայց այդ պահին գլխարկն է թանկ։

Գլխարկի տեղ պատրաստ է տալ
Ձին, փողն ու թուրն ապակեփայլ,
Բայց չի զիջիլ գլխարկը նա
Թեկուզ կռվի մեջ անխընա։

Ի՞նչ է—գլխարկ մի հասարակ։
Ո՛չ — կա այնտեղ կարված՝ նամակ —
Թուղթ հետմանի դեմ չարածին,
Կոչուբեյից Պետրոս Մեծին.

Այնինչ, ամպրոպը չզգալով,
Ոչ մի բանից չըսարսելով,
Մազեպը դավն է պատրաստում,
Եվ լիազոր ճիզվիթը[15] նրան
Տալով գահի խախուտ խոստում,
Հիմք է դնում խռովության։
Նրանք մըթան մեջ, երկու գող,

Բանակցում են՝ սրտները դող,
Դավն իրար մեջ կըշռում, կարդում,
Ունիվերսալ[16] գըրում այնքան,
Արքայի գլուխը սակարկում
Ու երդումները վասսալական։
Պալատ մտավ խորհրդավոր
Այնօրվանից ինչ որ աղքատ,
Նրան՝ Օրլիկը[17] կեղծավոր,
Հետմանների միջնորդը նենգ,
Տանում, բերում է աննկատ։
Ամեն տեղ սըրըսկում են թույն
Իր ծառաները գաղտնահած,
Բուլավինի[18] հետ՝ գազազած
Դոնի կազակներին դըրդում,
Ու զարթնեցնում այնտեղ վայրի
Կիրքը խիզախ հորդաների,
Եվ Դնեպրից այնկողմ, այժմ
Ահաբեկում են կատաղի
Ամբոխը հոծ կազակների
Ընդդեմ Պյոտրի իշխանության։
Հետմանն հսկում է անդադար,
Երկրից-երկիր գրում, արդեն
Հանել է նա խարդախաբար
Բախչիսարայն Մոսկվայի դեմ.
Նըրան լսում է Վարշավում
Տեր թագավորն, Օչակովում,
Բենդի պարիսպներում—փաշան,
Բանակում Կարլն ու ցարն։ Անքուն,
Անխոնջ է այդ հոգին դաժան.
Նա խոկալով խոկում է հար
Դիպուկ նյութել հարվածը, խո՛ր,
Չի թուլանում այդ կամքը չար,
Չի հանդչում կիրքը հանցավոր։

Բայց նա ինչպես ցնցվեց, դողաց,
Երբ որ հանկարծ գլխին շողաց
Ամպրոպն ահեղ, երբ որ նըրան,
Ռուսաստանի ոսոխին այն,
Ռուս իշխաններն[19] ուղարկեցին
Թուղթը գրված Պոլտավայում,
Եվ, փոխանակ սպանելու,
Փաղաքշանքներ շռայլեցին
Նըրան, իբրև անմեղ զոհին։
Պատերազմի հոգսով տարված,
Կեղծ սադրանքի դեմ վրդովված,
Ու չանսալով այն մատնագրին,
Ինքն արքան էր Հուդային
Մխիթարում, տալիս խոստում
Սատանի չարիքն — արմատախիլ,
Պատժով ահեղ ու շըռնդուն։

Մազեպան, կեղծ իր վշտի մեջ,
Հըլու ձայնով ցարին դիմեց.
«Պարզ է տիրոջն ու աշխարհին,
Նա, խեղճ հետման, քըսան տարի
Ցարին անկեղծ է ծառայել
Ու բարձրացել է առավել
Նըրա անճառ ողորմությամբ...
Օ՜, չարություն անմիտ և կույր...
Արդեն հասած շիրիմի դուռ՝
Նա մի՞թե դավաճանության
Ուսմունքն այսօր պիտի սկսեր
Ու փառքն անբիծ նսեմացներ։
Միթե նա չէ՞ր, որ զայրույթով
Մերժեց օգնել Ստանիսլավին[20],
Պատկառանքով հավատարիմ
Մերժեց նա թագն Ուկրաինական,
Ու դաշնագիր, գաղտնիք այնքան,

Պարտքին գիտակ՝ հըղեց ցարին։
Նա չէ՞ր, որ խուլ մընաց խանի[21],
Ստամբուլյան գոռ սուլթանի
Սադրանքներին։ Պատրաստ է նա,
Խելքով, սըրտով միշտ կըգնա
Ընդդեմ ցարի ոսոխներին,
Չի խնայում եռանդ ու կյանք,
Եվ հանդգնել է մի չարկամ
Ցե՞խ նետել նրան, ավերի՞ն։
Եվ ո՞վ է, Իսկրան, Կոչուբեյն,
Իր ընկերները հընագույն...»
Եվ արցունքով արյունախում
Հանդգնությամբ իր սառնասիրտ
Նըրանց համար դահիճն այդ բիրտ՝
Մահապատիժ է պահանջում[22]։

Ո՞մը պատժել... Ծերուկ դաժան,
Որի աղջի՞կն է քո գրկում։
Բայց նա խեղդում է սառնարյուն
Սըրտի մրմունջը Թմրաձայն։
Խոսում է նա. «Ինչո՞ւ հիմարն
Անհավասար վեճ է սկսել.
Ինքն է գոռոզ, ըմբոստասեր,
Ինքն է սրում սակր իր համար։
Ո՞ւր է վազում խուփ աչքերով։
Ի՞նչ հիմունքով ու հույսերով։
Գուցե... Բայց սերը աղջկա
Հոր կյանքը չի փըրկի։ Պիտի
Սիրողը հետմանին զիջի։
Թե չէ արյունն ինձնից կերթա»։

Մարի՜, Մարի՜, Թշվա՜ռ Մարի,
Գեղ չերկասյան աղջիկների։
Գիտե՞ս, դու քո չքնաղ ծոցում
Ինչպիսի օձ ես սնուցում։

Այդ ի՞նչ ուժով անմեկնելի
Քեզ կախարդել է, քեզ գերել
Նրա հոգին պիղծ ու մոլի։
Դու ո՞ւմն ես քեզ զոհաբերել։
Այն գանգուրները ալեոր
Եվ կնճիռները նրա խոր,
Փոս ու փայլուն նրա աչքերն
Ու նենգավոր խոսքերը ջերմ՝
Քեզ համար թանկ են ամենից.
Դու մոռացար քո մորն անգամ,
Վեր դասեցիր հոր օջախից
Առագաստը գայթակղության։
Հրաշալի իր աչքերով
Քեզ կախարդել է ծերն անշեջ,
Նա իր խաղաղ զրույցներով
Քընացրել է խիղճը քո մեջ.
Դու քո հայացքը շլացած
Նրան հառած խոնարհ ու հեզ
Փայփայում ես նրան սրտանց—
Եվ հաճելի է խաղքըդ քեզ,
Եվ խենթ, հպարտ հիացումով՝
Անմեղ ես համարում դու այն—
Դու պատկառանքը թովչական
Կորցրիր՝ անդարձ քո անկումով։

Բայց ի՞նչ է Մարիին ամոթ
Ու նախատինք, թուքն աշխարհի,
Երբ որ գլուխն է գոռ ծերի
Թեքվում նրա ծնկների մոտ,
Երբ մոռացած հետմանն այդպես
Կյանքի աղմուկն ու աշխատանք,
Խոհերն ահեղ ու գաղտնափակ
Բացում է աղջկան այդ հեզ։
Չի ափսոսում օրերին կույս,

Միայն, մեկ-մեկ, արտում մի հույզ
Հոգին ծածկում է ամպի պես.
Պատկերացնում է հորն ու մոր
Հուսալքված ու վշտակեզ,
Տեսնում է նա աչքում արցունք՝
Նրանց մենակ՝ որդիազուրկ
Ծերության մեջ, և նա ասես
Լսում է նրանց գանգատը կեզ։
Օ, եթե նա տեղյակ լիներ,
Ինչ գիտեր ողջ Ուկրաինան,
Բայց նրանից պահված է դեռ
Գաղտնիքը մութ եղեռնական։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Մազեպան մութն է։ Իր հոգին
Հուզված է ժանտ երազներով։
Մարին քնքուշ իր աչքերով
Նայում է հեզ—իր ծերունին։
Նրա ծնկները գրկելով
Զեղում է սերն իր՝ անդադար։
Իզո՞ւր։ Թեկուզ նրա սիրով
Չեն փարատվում խոհերը չար։
Նա չի լսում հեզ աղջկան,
Ցած է նայում նա սառնագին,
Նրա քնքույշ նախատինքին
Լոկ լռությամբ է պատասխան։
Մարին խոցվում է, զարմանում,
Նա շնչասպառ վեր է կենում,
Խոսում ցասկոտ ու վճռական։

«Լսիր, հետման, քեզ համար ես
Կյանքում ամեն ինչ մոռացա։
Սիրելով մի անգամ հավերժ՝
Միայն քո սերն ես ունեցա

Աչքիս առաջ։ Նըրա համար
Խորտակեցի ես բախտս վառ,
Բայց չեմ ցավում ես ոչնչի —
Հիշիր. երբ այն ահեղ գիշեր
Լռությամբ քեզ հանձնվեցի,
Դու երդվեցիր ինձ անհուն սեր։
Ինչո՞ւ, ուրեմն, չես սիրում»։

ՄԱԶԵՊԱ

Դու անարդար ես, սիրելիս,
Հեռու կաց խենթ ցընորքներից
Այդ անիմաստ կասկածներում
Դու սիրտըդ զուր կխորտակես.
Օ ո՛չ, հոգին քո բոցակեզ
Հուզում է կիրքը կույր, մոլի։
Մարի՛, գիտցի՛ր, սիրում եմ քեզ
Փառքից, գահից էլ ավելի։

ՄԱՐԻԱ

Ոչ. խորամանկ ես դու դեպի ինձ։
Վաղո՞ւց էինք մենք անբաժան։
Այսօր փախչում ես իմ սերից,
Ձանձրույթ է պատճառում քեզ այն։
Պետերի հետ ես ողջ օր դու,
Խնջույք, մեկնում—իսկ ես չկամ,
Աղքատն է միշտ քեզ հետ նստում
Ամբողջ գիշեր, ճիգլիթը կամ,
Եվ կամ մենակ ես լուսացնում։
Դիպչում է սերըս հեզ ու որբ
Դաժանությանըդ սառցապատ։
Խըմել ես դու կենացն ինչ-որ
Դուլսկայայի։ Նորույթ է այդ։
Ո՞վ է այդ Դուլսկայան։

ՄԱԶԵՊԱ.

Եվ դու
Խանդո՞տ։ Եվ ես այս տարիքում
Պիտի փնտրեմ գոռոզ ողջո՞ւյնն
Ինքնահավան գեղեցկուհու։
Կարո՞ղ եմ ես, ծերուկս խիստ,
Անգործ տղի պես հառաչել,
Ծանր կապանք առնել ոտքիս,
Ու կեղծությամբ կանանց դյութել։

ՄԱՐԻԱ.

Ո՛չ, բացատրի՛ր առանց շեղման
Եվ պարզ, ուղիղ պատասխանի՛ր։

ՄԱԶԵՊԱ.

Թանկ է հանգիստդ հոգեկան,
Մարի՛, ուրեմն այսպես, լսիր։

Մի գործ ենք մենք նյութել վաղուց,
Մեզ մոտ եռում է այսօր այն։
Ժամանակներն են բարեհույս.
Ու մոտ է ժամն ահեղ բախման։
Մենք, անազատ և առանց փառք,
Քանի ծռվենք խոնարհագին
Վարշավայի հովանու տակ
Ու Մոսկովյան ինքնակալին։
Ուկրաինային ժամ է արդեն
Անկախ մի կայսրություն դառնալ.
Պարզում եմ ես Պետրոսի դեմ
Ազատության դրոշակըն ալ։
Պատրաստ է ողջը, դաշնագիր

Ունեն ինձ հետ երկու արքա.
Շուտով շփոթ աղաղակի
Ու վեճերի մեջ մարտական
Կբարձրանամ գուցե ես գահ:
Եվ հուսալի են ընկերներս.
Իշխանուհի Դոլսկայան,
Ճիզվիթն ու այս աղքատն, ահա,
Կը տանեն գործը մինչև վերջ:
Արքաներից նամակ, պատվեր
Նրանք են ինձ բերում, տանում:
Ահա քեզ մեծ խոստովանանք:
Գո՞հ ես: Կասկածը քո անհագ՝
Ցրվե՞ց արդյոք:

МАРИЯ

МАРИЯ

ՄԱՐԻԱ

Օ, թանկագի՜ն,
Կդառնաս ցար դու աշխարհին
Քո հարազատ: Վայել է թագն
Ալիքներիդ:

ՄԱԶԵՊԱ

Կա՛ց, վաղ է դեռ,
Դեռ կճայթի մրրիկը բարկ,
Ո՞վ գիտե, ի՛նչ է պահված մեզ:

ՄԱՐԻԱ

Քեզ հետ չունեմ ես ոչ մի ահ—
Հըզոր ես դու: Գիտեմ, օ, քեզ
Գահ է սպասում:

ՄԱԶԵՊԱ

Իսկ եթե մա՞հ...

МАРИС.

Ես էլ քեզ հետ դեպ մահ այնժամ։
Մի՞թե կապրեմ ես առանց քեզ։
Ո՛չ. դու ունես գահի նշան։

МАЛСЕПА.

Սիրո՞ւմ ես ինձ

МАРИС.

Սիրո՞ւմ եմ։ Ե՛ս։

МАЛСЕПА.

Քեզ թանկ է հա՞յրդ ավելի,
Թե ամուսինդ։

МАРИС.

Սիրելի՛,
Ի՞նչ հարց է այդ։ Դա ինձ մատնեց
Ջուր տագնապի։ Ճգնում եմ հար,
Որ մոռանամ ես մայր ու հայր։
Նրանց ես խաղք արի. գուցե
(Զարհուրելի ի՜նչ զառանցանք)
Ինձ անիծել է հայրս բարկ,
Եվ ո՞ւմ համար։

МАЛСЕПА.

Ես թա՞նկ եմ քեզ
Հորից ուրեմն։ Լո՞ւռ ես...

МАРИС.

Տե՛ր։

МАЛСЕПА.

Պատասխանի՛ր։

ՄԱՐԻԱ.

Դու ի՛նքդ ասա։

ՄԱՔԵԹ.

Ասենք՝ կարիք լինի մի պահ,
Որ պիտ մեռնի կամ նա, կամ ես,
Եվ լինի դատը քո ձեռին,
Դու կզոհես մեզնից որի՞ն,
Որի՞ն հոգով կպաշտպանես։

ՄԱՐԻԱ.

Ա՜խ, բավ է, սիրտըս մի՛ հանիր։
Դու, դայթակղի՛չ։

ՄԱՔԵԹ.

Պատասխանի՛ր։

ՄԱՐԻԱ

Գունատ ես դու, խոսքդ՝ դաժան...
Մի՛ բարկանա։ Ես ամեն բան
Պատրաստ եմ քեզ զոհել։ Սակայն
Սարսափ է միտքն այդ խոսքերի։
Հերիք է։

ՄԱՔԵԹ.

Բայց հիշիր, Մարի։
Ինչ ասացի՛ր ինձ այս վայրկյան։

Լո՜ւռ է գիշերն ուկրաինական
Երկինքը ջինջ է, շողշողուն։
Չի ուզում օդն իր նինջն անգամ
Վանել։ Հազիվ է դողդողում
Բարդիների տերևն արծաթ։
Վերից լուսինը մեղմածաթ
Շողում է Բելո-Ցերկովին,
Պարտեզներին հետմանական
Ու ողողում գղյակը հին։
Եվ լուռ է, լուռ է չորս բոլոր.
Լոկ գղյակումն են շփոթված։
Զնդաններից մեկում, մոլոր,
Խոկանքներում խոր, ծանրահած
Լուսամուտի առաջ նստած,
Կոչուբեյը, շղթան ոտքին,
Մըռայլ, նայում է երկընքին։

Վաղը պատիժն է։ Բայց անահ
Դիմավորում է մահը նա,
Իր կյանքը նա չի ափսոսում։
Մահն ի՞նչ է որ, ցանկալի քուն։
Կերթա շիրիմը՝ արնոտված.
Հաղթում է նինջը։ Տե՜ր աստված.
Չարագործի ոտքերի տակ,
Ընկնես անզոր, բերանդ փակ,
Ինչպես անբան մի անասուն,
Ցարն ինքն իրեն ձեռքովը քեզ՝
Տա ոխերիմ իր թշնամուն,
Որ դու տանջվես և անարգվես,
Կորցընես կյանք, պատիվ, անուն,
Տանես քեզ հետ կառափնասյուն
Ընկերներին, դագաղի մոտ
Լըսես նրանց նըզովքն արնոտ,
Անմեղ պառկես կացինի տակ,

Ու տեսնես դեմքդ սանձարձակ,
Ծաղրող հայացքը թըշնամուդ,
Նետվես մահվան անդունդը մութ՝
Չավանդելով և ոչ ոքի
Վըրեժը խոր քո ոսոխի։

Եվ նա Պոլտա՛վան իր հիշեց,
Եվ ընտանիք, բարեկամներ,
Անցած կյանքի իր փառքը մեծ,
Հիշեց երգերն իրեն դատեր,
Եվ տունը հին, ուր նա ծնվել,
Սիրել էր ջանք ու խաղաղ քուն,
Եվ այն, ինչով հրճվել կյանքում
Եվ այժմ կամավոր թողել,
Ինչո՞ւ։—

Բայց բանալին ժանգոտ
Զնգում է կողպեքում—և նա
Խորհում է սթափվելով. ահա,
Արնաշաղախ իմ ճամփի մոտ—
Իմ ուղեցույցը խաչակիր,
Հըզոր լուծիչը մեղքերի,
Բըժիշկն հոգու վերքի, ծառան
Ի մեղ խաչված Քրիստոսի.
Նա ինձ բերում է սըրբազան
Մարմին, արյուն։ Թող ամրանամ,
Մահվան դիմեմ թող համարձակ
Ու մտնեմ այլ, անմահ մի կյանք։

Ու մորմոքով խորունկ՝ սրտի,
Պատրաստ է նա, խեղճ Կոչուբեյն
Զեղել թախիծն իր աղերսի
Ամենազոր անհունի դեմ։
Բայց միանձնի փոխարեն նա

Ուրիշ մի հյուր տեսավ հիմա.
Տեսավ նա Օրլիկին մոլի։
Եվ դառնորեն, զզվանքով լի,
Հարցնում է նահատակը ծեր.
«Այստեղ ես դու, մարդ ժանտագին,
Ինչո՞ւ գիշերն իմ այս վերջին
Հետմանն էլի խռովում է դեռ».

ՕՐԼԻԿ

Հարցաքննում է դեռ. խոսի՛ր։

ԿՈՉՈՒԲԵՅ

Արդեն խոսել եմ, հեռացիր,
Ինձ թող մենակ։

ՕՐԼԻԿ

Հետմանը դեռ
Ուզում է գաղտնիքներ։

ԿՈՉՈՒԲԵՅ

Բայց ի՞նչ։
Վաղուց ասել եմ ամեն ինչ—
Ձեր պահանջով։ Իմ ցուցմունքներն
Ամենն էլ կեղծ են։ Նենգամիտ,
Դավիչ եմ ես։ Նա՝ ճշմարիտ,
Էլ ի՞նչ։

ՕՐԼԻԿ

Վաղուց է մեզ հայտնի,
Որ դու հարո՛ւստ էիր անհուն,

Որ դու ունես Դիկանկայում[23]
Անթիվ գանձեր պահած գաղտնի։
Դու, անկասկած, կգլխատվես,
Քո ունեցվածքն ամբողջապես
Կանցնի գանձարկղը ռազմական,
Օրենքն այդպես է։ Ես այժմ
Վերջին նըշում եմ պարտքըդ. բաց—
Ո՞ւր են գանձերդ թաքցըրած։

ԿՈՉՈՒԲԵՅ

Չեք սխալված. ես այս երկրում
Երեք գանձով էի բերկրում։
Առաջին գանձը՝ պատիվս էր այն,
Որ կտտանքներն ինձնից առան,
Երկրորդ իմ գանձն՝ անդարձ կորած՝
Պատիվն էր իմ դըստեր սիրած։
Նըրա համար գիշեր, ցերեկ,
Դողում էի ես սրտացավ.
Հետմանն այդ գանձը գողացավ։
Բայց երրորդ գանձը պահեցի,
Գանձն իմ՝ վրեժը սրբազան։
Աստըծուն եմ տանում ես այն։

ՕՐԼԻԿ

Թող զառանցանքըդ, ծերունի.
Այսօր, գեթ, թողնելով երկիր,
Դու լըջամիտ եղիր և խոր,
Կատակելու ժամ չէ։ Խոսիր,
Եթե կտտանք չես ուզում նոր.
Ո՞ւր են փողերը։

ԿՈՉՈՒԲԵՅ

Չար սարուկ,
Վերջ կա՞ արդյոք այդ անհեթեթ
Հարցերին։ Կա՛ց մանեմ ղադաղ,
Այնժամ գընա հետմանի հետ
Ձեր մատներով արնաշաղախ
Իմ ունեցվածքը հաշվելու,
Նըկուղները փորփըրելու,
Այրելու տունն, այգին խաղաղ։
Տարեք ձեզ հետ իմ աղջըկան,
Նա ինքը ողջը ձեզ կասի,
Տեղն ինքը ցույց կտա գանձի.
Այժըմ աստծու սիրուն, սակայն,
Խնդրում եմ՝ ինձ թողեք հանգիստ։

ՕՐԼԻԿ

Ո՞ւր են փողերը թաքցըրած։
Չե՞ս։ Ո՞ւր են քո փողերը, բա՛ց.
Վախեցիր վատ հետևանքից։
Խորհի՛ր. սաս մեզ տեղը։ Ի՞նչ.
Լըռո՞ւմ ես։ Նու — կատանք։ Դահիճ*
Եկավ դահիճը...
                                    Օ, գիշե՛ր
Տանջանքների։ Բայց ո՞ւր է նա։
Ո՞ւր է հետմանը չարագործ։
Ո՞ւր է փախել նա անխըղճ
Խըղճի խայթից որպես սև օձ։
Թմրադեղված սիրով նենգոտ,
Անգիտությամբ դեռ երջանիկ
Աղջկա սրահում, երիտասարդ
Իր սանուհու անկողնու մոտ
Նստած է լուռ, մըռայլ ու մութ

Մազե՛պան խոնարհված գլխով։
Հոգով անցնում է հազար խոհ,
Մեկը մյուսից, դըժնի, դըժնի,
«Խենթ Կոչուբեյ—նա կըմեռնի,
Նա փրկություն չունի, որքան
Որ նըպատակը հետմանի
Մոտ է, այնքան նա անսասան
Իշխանությամբ օժտվի պիտի,
Այնքան իր դեմ ցած պիտ իջնի
Ոսոխը։ Ո՛չ մի փրկություն.
Մատնիչն ու իր ընկերն իսկույն
Պիտի մեռնեն»։ Սակայն հառած
Մազեպան դեմքը անկողնուն՝
Խոկում է ծանըր. «Տեր աստված,
Ի՞նչ կըլինի նրան, երբ նա
Կըլսի լուրն օրհասական։
Հանգիստ է նա մինչև այս ժամ—
Սակայն գաղտնիքը չի մընա
Երկար պահված։ Առավոտյան
Սակրը կիջնի, կըդըղըրդա
Ուկրաինան ողջ։ Երկիրն համայն
Կըձայնակցի շուրջը նըրա...
Տեսնում եմ, ախ. թե բախտն անհագ
Տըվել է քեզ կյանքի հույզեր,
Ամպրոպն, ուրեմըն, տար մենակ,
Մի՛ ունենա դու կին ու սեր։
Եվ չեն լծվի նույն սայլակին
Նըժույգն ու սարսըռուն այծյամ։
Ես մոռացա ինձ, դառնագին
Տալիս եմ տուրքը խենթության...
Ինչ որ թովք էր տալիս կյանքին,
Ինչ որ թանկ էր, ինչ որ անգին,
Բերավ ինձ խեղճն իբրև նվեր,
Ինձ, ծերուկիս մըռայլ,—և ի՜նչ.

Ի՞նչ միշտ եմ ես նըրան տըվել»։
Եվ նա նայում է վերստին.
Ինչ քա՜ղցր, մե՜ղմ է անկողնում
Անդորրը պատանեկության։
Եվ քունը երջանիկ՝ նրան
Ինչքան քնքո՜ւյշ է փայփայում։
Շուրթը բացվեց. խըռովք չունի
Շունչը նրա ջահել կրծքի։
Իսկ վա՜ղը, վա՜ղը… ցնցվելով
Մաղեպան դեմքը դարձընում,
Ելնում է լուռ ու դուրս գալիս՝
Ամայացած այգին իջնում։

Լուռ է գիշերն ուկրաինական։
Երկինքը ջինջ է։ Շողշողո՛ւն։
Չի ուզում օդն իր նինջն անգամ
Վանել։ Հազիվ է դողդողում
Բարդիների տերևն արծաթ։
Բայց հետմանի հոգու մեջ ժանտ
Մութ են խոհերն օտարոտի.
Փայլուն աստղերը երկնքի,
Որպես աչքեր մեղադրական
Նայում են հեգնորեն նըրան։
Եվ բարդիները խիտ շարքով,
Գլուխները մեղմ օրորելով,
Շշնջում են իրար որպես
Դատավորներ։ Խեղդուկ է, կե՛ղ
Ամառային գիշերը մութ,
Ինչպես զընդան անլուսամուտ։

Եվ… թույլ մի ճիչ… Նվազ կսկիծ
Լաց, գուցե, նա դղյակից։
Արդյոք մըտքի ցընո՞րք էր այդ,
Գազանի ձա՞յն, բուի կըռի՞նչ,

Կտտանքի ո՞ղբ, թե ա՛յլ մի հինչ—
Բայց միայն իր հուզմունքը վատ
Ծերն անկարող եղավ վանել
Եվ այլ գուշով պատասխանեց
Նա թույլ, երկար ու մահամերձ
Այդ նվոցին — այն գոշումով,
Որով երբեմն նա գինով
Ռազմաճակատն էր թնդացնում,
Երբ Ջաբելի, Համալեյի,
Նըրա՛ հետ... այդ Կոչուբեյի—
Թըռչում էր նա ռազմի բոցում։

Ծիրանի այգը շողքն ահա
Պարզեց պայծառ երկնի վըրա։
Փայլեց բլուր, հովիտ և արտ,
Եվ կատարներն անտառների,
Եվ գետն արծաթ, կոհակալից։
Հնչեց աղմուկն այգի զըվարթ
Եվ արթնացավ մարդը քնից։

Մարին անուշ է դեռ շընչում,
Ու մեղմաթև նինջի գըրկում
Լըսում է, մեկը ներս եկավ
Ու մեղմ դիպավ նրա ոտքին։
Նա արթնացավ—սակայն կրկին
Փակեց աչքերը, ժպտալով,
Առավոտյան լույսի փայլից.
Մեկնեց թևերն ու շըշընջաց
Նա նվաղուն, գորովալից.
«Մաղե՞պա...». Բայց ուրիշ մի ձայն
Պատասխանեց... օ, տեր աստված։
Ցընցվեց Մարին... և ի՞նչ։ Նըրան
Իր մայրն է մոտենում...

ՄԱՅՐԸ

Լո՛ւռ կաց.
Մեզ մի՛ սպանի, ես գիշերով
Այստեղ անցա գաղտագողի՝
Արտասվալի լուռ մի խնդրով։
Այսօր պատիժն է։ Դու էլի
Մեղմես գուցե նրանց մոլի
Կիրքը։ Փրկի՛ր քո հորը։

ԴՈՒՍՏՐԸ (Սարսափահար)

Ի՞նչ հայր
Եվ ի՞նչ պատիժ։

ՄԱՅՐԸ

Դու չըգիտե՞ս
Մինչ այժըմ... Ո՛չ, դու վանքում չե՛ս,
Այլ դղյակում. տեսնում ես բիրտ
Հետմանի ուժն. ինչպես անսիրտ
Պատժում է իր ոսոխներին,
Ինչքան մոտիկ է նա ցարին—
Բայց ես տեսնում եմ վըշտահար
Ծընողներիդ մերժում ես դու
Մազեպայի սիրո համար։
Քընած ես դու, երբ նըրանք չար
Մի դատաստան են պատրաստում,
Կարդում վըճիռը մոլեգին,
Հորըդ համար սըրում կացին —
Տեսնում եմ. խորթ ենք մենք իրար...
Մարի, որդիս, մի՛ լինի քար,
Վազի՛ր, նըրա ոտքե՛րն ընկիր,
Հրեշտա՞կ եղիր, հորըդ փրկի՛ր,
Քո հայացքով դու կըկապես

Չարագործի ձեռքը զազիր,
Կըհեռացնես սակրը։ Վազի՛ր,
Պահանջի՛ր—չի մերժի նա քեզ,
Դու նրա՛ սիրուն թողիր պատիվ,
Ծնող, աստված։

ԴՈՒՍՏՐԸ

Այս ո՞ւր եմ ես։
Հայրըս... Մազե՛պան... գլխատում—
Այստեղ, ինձ մոտ, այս դղյակում,
Մայրըս աղերսելու եկած—
Խելագարվել եմ ես հանկարծ,
Կամ զառանցում եմ։

ՄԱՅՐԸ

Տեր ընդ քեզ,—
Ո՛չ, զառացանք, ցնորք չկա.
Դու չե՞ս լըսել մինչև հիմա,
Որ հայրըդ մոլեգնած գըստեր
Անպատվությամբ, չըդիմացավ,
Եվ հետմանին մատնեց կայսեր՝
Դրդված ոխից արնածարավ.
Որ տանջանքում արյունահեղձ
Նա ամոթով խոստովանեց
Սադրանքն ու դավը խոլական,
Որ զոհն արդար խիղախության
Գլխով տրված է ոսոխին.
Որ եթե աջն ահեղ վերին
Զանի նըրան հովանու տակ,
Այսօր նըրան կգլխատեն
Զինվորական ժողովի դեմ.
Որ նա նստած է դըժնդակ
Բանտի աշտարակում։

ԴՈՒՍՏՐԸ

Աստվա՜ծ,
Աստվա՜ծ, այսօ՛ր։ — Թշվա՜ռ իմ հայր։

Եվ նա մահճին ընկավ, մընաց,
Ինչպես մեռելը գալկահար։

Խայտաբղետում են գլխարկներ։
Տեգերն արևի տակ շողում։
Թըռչում է զորքն հետմանական [25]
Հավասարվում են շարքերում
Գնդերն։ Ամբոխն է խիտ եռում։
Սըրտերն են թըպրտում։ Ճամփան
Օձի գալար պոչի նըման
Շարժվում է լի՝ ժողովրդով։
Դաշտի մեջ բեմն օրհասական։
Այնտեղ ժըպտում է անվրդով
Դահիճն և սպասում զոհին.
Կամ խաղացնում է ահագին
Սակրը ձեռքով իր սպիտակ՝
Կամ կատակում անըպատակ
Ամբոխի հետ ուրախացող։
Ողջը ձուլվեց մի շառաչող
Աղմուկի մեջ, կանացի ճիչ,
Ծիծաղ ու հեծք, հիշոց կիզիչ։
Հանկարծ հնչեց ազդու մի ձայն
Ու ողջը պապանձվեց։ Միայն
Նըժույգների դոփյունն էր գոռ
Լըսվում լըռության մեջ զարհուր։
Շըրջապատված վարձու զորքով,
Պան հետմանն իր շըքախմբով
Քշում էր ձին իր սևաթույր։
Մինչ այնտեղից, Կիևի ճամփով
Գալիս էր սայլը։ Տագնապով

Բոլորը նայեցին այնտեղ։
Խաղաղ, երկնքի հետ հաշտված,
Նստած էր Կոշուբեյն անմեղ,
Կողքին՝ անհոգ ու լուռ Իսկրան,
Բախտին հըլու գառի նըման։
Սայլը կանգնեց։ Որոտալից
Աղոթքը հոգևոր հընչեց։
Բարձրացավ խունկը բուրվառից։
Ամբոխն անձայն խաչակնքեց
Թշվառների հոգու համար,
Նահատակներն էլ՝ իրենց չար
Ոսոխների։ Ահա գնացին,
Ելան։ Ու խաչակնքելով
Կոշուբեյն է պառկում կոճղին,
Եվ լուռ է, լուռ ամբոխն ահով.
Ինչպես դագաղ։ Փայլեց կացինն
Ու դեն թռավ գլուխն ահա։
Տընքաց ողջ դաշտը։ Մյուսն իսկույն
Թռավ նույնպես ակընթարթում։
Արյամբ ներկվեց խոտը խաղաղ —
Եվ չար դահիճը հրճվանքով
Մազափնջերը ձիգ ձեռքով
Բռնեց ու կառափները զույգ
Ամբոխի վրա ցնցեց հատուկ։

Մահապատիժը կատարվեց։
Ամբոխն անհոգ ցրվում է տուն
Եվ ամեն մեկն արդեն անվերջ
Իր բանն ու գործն է մըտմըտում։
Դաշտը քիչ-քիչ ամայացավ,
Մինչդեռ ճամփով փոշեթաթավ
Երկու կանայք էին վազում,
Տանջված, փոշոտ և ուժասպառ։
Շտապում էին գլխատման վայր

Նըրանք՝ զարհուրանքով լեցուն։
«Էլ ուշ է»,—մատն այն կողմ մեկնած՝
Մեկն ամբոխից ասաց նըրանց։
Այնտեղ քանդում են բեմն արնոտ
Սևազգեստ հոր աղոթքի տակ
Ու բարձրացնում են սայլի մոտ
Կաղնյա դագաղն երկու կազակ։
Փախավ հետմանն ահեղ, մենակ,
Արյան դաշտից՝ հեծյալների,
Առաջն ընկած։ Մի ահռելի
Դատարկությամբ տանջվում էր նա։
Ոչ ոք նրան մոտ չէր գալիս,
Նա չէր խոսում բոլորովին.
Փրփրած սուրում էր նրա ձին։
«Ո՞ւր է Մարին».—Հասնելով տուն
Հարցրեց տենդոտ։ Լսում է նա
Պատասխաններ երկչոտ, տրտում...
Եվ սարսափով նա ակամա
Բացում է դուռը սենյակի.
Սենյակը լուռ է, ամայի—
Նա խռովահույզ նետվեց այգին.
Բայց ընդարձակ լըճակի շուրջ,
Ստվերներում խաղաղաշունչ,
Թափուր է, հետք իսպառ չկա—
Փախավ։—Շտապ կանչում է նա
Իրեն մարդկանց հավատարիմ,
Իր քաջարի սերդյուկներին։
Նըրանք թըռան։ Հեք ձիերի,
Հետապնդման գոչեր վայրի
Անդուլ սուրում են քաջ տղերք
Սըրաթըռիչ՝ ամենուրեք։
Թանկ վայրկյաններն են թև առնում,
Մարիան չի վերադառնում։
Ոչ ոք գիտեր, չկար մի լուր,

Ինչո՞ւ փախավ նա, և ինչպե՞ս։
Կրճատում էր ծեր Մազեպան լուռ։
Իր ծառաները տխրատես
Ու պապանձված՝ դողում էին։
Պահած սրտում իր՝ թույնը կեզ,
Մազեպան սենյակում փակվեց։
Անկողնի մոտ, մութ սենյակում
Նստած՝ նա աչքը չէր փակում
Տանջանքներով աներկրային։
Ձիավորների առավոտյան
Մեկ-մեկ վերադառնում էին։
Հոգնած էին ձիերն՝ անչափ։
Սանձ, թամբակալ, սըթար, փորկապ—
Բոլորը փրփուրով պատված
Զարդված էին արյունոտված։
Բայց ոչ ոք լուր բերեց նըրան
Աղջկա մասին թշվառական։
Եվ հետքն անգամ իր գոյության
Կորավ ինչպես դատարկ հնչյուն,
Ու տարագիր մայրն էր միայն
Զգում կարիքն ու դառնություն։

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Չի խանգարում վիշտը խորին
Ուկրաինայի ղեկավարին՝
Հեռուն ձգտել հանդգնամիտ։
Նա իր ձգտման մեջ աներեր
Շարունակում է կապը դեռ
Շվեդի հպարտ արքայի հետ։
Մինչդեռ, որ անվրեպ խաբի
Կասկածանքի աչքերը չար,
Նա կարծեցյալ տառապանքի
Անկողնի մեջ տնքում է հար,

Բժիշկներից իր անհամար
Աղերսելով առողջություն։
Վշտեր, ցավեր ու ծերություն,
Արգասիքները կռիվների,
Պատերազմի ու հոգսերի,
Մահվան դաժան կարապետներ,
Նրան վաղուց են զգետնել
Մահճին։ Եվ նա ունայն երկրից
Պատրաստ է հեռանալ կարծես,
Ու կատարել սրբազան ծես։
Հովվապետին է նա կանչում
Իր սուտ մահվան մահիճի մոտ
Եվ ալիքներն իրեն նենգոտ
Խորհրդավոր յուղով օծում։

Օրերն անցնում էին։ Մոսկվան
Ջուր է սպասում ամեն վայրկյան
Շվեդներին՝ նյութած թաքուն,
Հին թշնամի դամբաններում,
Նրանց համար հոգեհանգիստ։
Կարլոսը դարձ մի կատարեց
Ու ռազմն Ուկրաինա փոխադրեց։

Եվ օրն հասավ։ Մահճից ոտնեց
Հետմանն, այս տառապյալն անզոր,
Նա, որ երեկ դեռ՝ մահամերձ,
Շիրմի դռան, տնքում էր խոր։
Պյոտրի ոսոխն է նա այսօր։
Նա այժըմ, ժի՛ր, գնդերի դեմ
Շողում է աչքերով վըսեմ,
Եվ սուր է նա ճոճում կրկին
Ու դեպի Դե՛սնան քըշում ձին։
Այդպես այն կարդինալը կեղծ,
Ծըռված կյանքի ծերության տակ,
Երբ Հըռոմի խույրով պսակվեց,
Դարձավ ջահել, հաղթահասակ։

Թըռավ համբավը թևերով։
Ուկրաինան աղմըկեց խըռով,
«Նա անց կացավ, դավաճանե՞ց,
Կարլի ոտքերի տա՛կ դըրեց
Հըլու բունչուկը»։ Բոցափայլ
Ծագեց արնոտ ու վիթխարի
Հրդեհը ժողովրդական
Պատերազմի։

Դժվար է տալ
Զայրույթը, հուրն ահեղ՝ ցարի[26]
Թընդում է նզովքը տաճարում,
Կատը[27] պատռում է հետմանի
Դիմապատկերն։ Ու ռադայի
Աղմըկահույզ այն վեճերում
Ուրիշ մի հետման են ընտրում։
Ենիսեյի խոպան ափից
Կոչուբեյի և Իսկրայի
Ընտանիքները վշտալից
Պյոտրը կանչում է իրեն քով։
Նա նըրանց հետ արցունք հեղում,
Նըրանց շոյում է հեղեղում
Եվ նոր պատվով, և բարիքով։
Ցասկոտ ոսոխը Մազեպի
Ծերուկ Պալեյը—հեծվորն անահ,
Սուրում է աքսորից դեպի
Ցարի բանակն—Ուկրաինա։
Լըքված է բունտն արդեն անտեր,
Կոճղի վըրա քաջի նման
Մեռնում է Չե՛չելն[28] անվեհեր
Զապորոժի քաջ ատաման։
Եվ դու, ռազմիկ փառքի սիրած,
Թագդ փոխած սաղավարտով,
Արդեն հասավ օրհասըդ քեզ.

Հեռվում տեսար դու վերջապես
Պոլտավյան պատը ռազմաթավ։

Եվ ցարը զորքն այնտեղ նետեց։
Անցան գնդերն ինչպես մրրիկ—
Երկու բանակը դաշտի մեջ
Շուրջկալ արին իրար՝ ճարպիկ։
Խաղաղ մարտում հաճախ ջարդված,
Ու կանխօրոք արյամբ հարբած,
Դիպչում է, վերջապես, կըրկին
Ահեղ մարտիկը մարտիկին։
Տեսնում է Կարլը վրդովված
Ոչ թե կույտերը խեղճ, ցրված,
Նարվյան փախըստականների,
Այլ գիծը գնդերի—փայլուն,
Արագընթաց, զգաստ, հլու—
Եվ շարքն անպարտ սվինների։

Բայց նա վճռել է անսասան—
Մարտն սկսել առավոտյան։
Քընած է խոր բանակը շվեդ։
Վըրաններից մեկում միայն
Զգույշ խոսում են իրար հետ։

«Ոչ, ես տեսնում եմ, Օ՛րլիկդ իմ,
Շտապեցինք մենք անտեղի.
Հանդուգն ու վատ էր իմ հաշիվն
Ու ոչ մի շահ մեզ չի բերի։
Տեսնում եմ ես, կորած է արդ
Իմ նըպատակը։ Ի՞նչ անել։
Վրիպումը շատ է մեծ. ես այդ
Կարլի հանդեպ սըխալվեցի։
Տըղա է նա քաջ, առնացի.

Հաջողությամբ, իհարկե, նա
Երկու մարտում կհաղթանակի,
Նա անվեհեր կըլանա
Դեպի ոսոխն իր՝ ընթրիքի[29],
Կարող է նա նաև ռումբին
Լոկ ծիծաղով պատասխանել[30].
Ու գիշերով թաքուն անցնել,
Ռուս զինվորից էլ անխափան,
Բանակի մեջ թշնամական.
Ինչպես այսօր՝ փըռել գետին
Քաջ կազակին, ու խոր վերքին
Խորունկ վերքով տալ պատասխան[31],—
Բայց նա չէ, որ պիտի կռվի
Ընդդեմ հսկա ինքնակալի։
Ուզում է բախտը, զերթ վաշտեր,
Նա խաղացնել թըմբուկի տակ։
Նա կույր, համառ է անհամբեր,
Թեթևամիտ, գոռոզ ու տաք։
Աստվածն իր բախտը գիտենա.
Թշնամու նոր ուժերը նա
Չափում է իր փառքով անցած —
Նա կըփշրի եղջյուրն՝ անդարձ։
Ամոթ. այս հասակում տարվել
Այս ռազմական շըջմոլիկով,
Իր քաջությամբ խանդավառվել։
Հարբել իր վաղանցուկ փառքով
Ջերթ ամոթխած աղջիկ»։

ՕՐԼԻԿ

Կուլին

Դեռ կպասենք։ Հույս կա դույզն
Պետրոսի հետ խոսել կրկին,
Զարիքն ուղղել, քանի ուշ չէ։

Գովում մեզնից լավ չարդ. կերած՝
Կըհաշտվի ցարըն անկասկած։

ՄԱԶԵՊԱ

Ոչ, ուշ է։ Ռուս թագավորին
Հընար չկա հաշտվել ինձ հետ։
Վաղուց է վըճռված հավետ
Ճակատագիրն իմ։ Շատ է հին
Իմ ոխն այրող։ Ազովի մոտ
Ես մի անգամ մինչ առավոտ
Նստած էի խըրախճանքի
Դաժան ցարի վըրանի տակ.
Փըրփրում էին գինու թասեր
Ու նըրանց հետ զըրույցը մեր։
Խոսք նետեցի ես համարձակ։
Ջահել հյուրերը վախեցան—
Նա, մոլեգնած, թասը նետեց
Ու բըռնելով ծերունական
Բեղերըս՝ ինձ թափահարեց։
Այնժամ ըսպած իմ քենն անզոր՝
Ես ինձ տըվի վրեժի երդում
Եվ այն կըրում եմ մինչ այսօր,
Ինչպես որ մայրը արգանդում
Կըրում է իր երեխային։
Հասել է ժամն օրհասային։
Նա իմ մասին հուշեր, այսպես,
Պահպանելու է մինչև վերջ։
Նըրան պահված պատիժն եմ ես.
Փուշ եմ նըրա պսակի մեջ.
Կըտար տոհմիկ նա քաղաքներ,
Կյանքի ժամերը ցանկալի,
Որ անցյալի նըման բռներ
Մազեպայի բեղերն էլի։

Բայց կա դեռ հույս։ Մեր բախտը դեռ
Վաղն արշալույսը կը վճռի։

Լռեց։ Փակում է իր աչքերն
Այդ դավաճանը ռուս ցարի։

Վառվեց այգի հրդեհը նոր
Արդեն դաշտում, բլրի լանջին
Ոռնում է ռումբը։ Մուգ բոսոր
Փարվում է ծուխը երկնքին
Առավոտյան շողերում ջինջ։
Գնդերը շարքը սեղմեցին։
Հրաձիգներն ելան ցրիվ
Թփերի մեջ։ Արկը գոռում,
Սուլում են գնդակներն անթիվ
Ու պաղ սվինները՝ կարկառվում։
Հաղթանակի սիրած որդիք,
Շվեդներն, առաջ են նետվում ձիգ
Մարտակոցների կրակի միջով.
Ալեկոծվում է այրուձին,
Հետքում իր հետևակն շտապ,
Եվ, ծանրակուռ իր ամրությամբ,
Ուժ է տալիս նրա գրոհին։
Օրհասական դաշտը մարտի
Թնդում, վառվում է բոցակեզ,
Բայց ռազմի բախտը՝ շեշտակի
Արդեն ժպտալ է սկսում մեզ։
Գումարտակները, ետ նետված
Համազարկով ու շփոթված,
Ընկնում են անդադար, ցրվում,
Ռոզենն է նահանջում նեղված,
Ու Շլիպենբախն անձնատրվում։
Շվեդին նեղում ենք, մարտ առ մարտ;
Խամրում է դրոշն իր՝ հին փառքով,

Յուրաքանչյուր մեր քայլը, արդ,
Սրբագործում է արնաղարդ
Ռազմի աստվածն իր կընիքով։

Այնժամ վերից ոգեշընչված՝
Կանչում է Պյոտրը Թնդալից.
«Դեպ գործը, տեր ընդ մեզ»։ Վրանից,
Մտերիմներով շրջապատված,
Ելնում է նա։ Աչքերը վառ
Ցոլում են։ Դեմքն է սարսելի։
Արագ են շարժումներն անահ։
Նա գեղեցիկ է, սքանչելի,
Աստվածային ամպրոպն է նա։
Ելավ։ Նըրան նըժույգ տըվին։
Հանդարտ է նժույգը ժիր, եռուն։
Զգալով հուրն օրհասային՝
Դողաց։ Նա շեղ նայեց հեռուն
Ու թռավ ռազմի փոշում խըռով—
Հըպարտ՝ հըզոր իր հեծվորով։

Արդեն կեսօր է։ Տոթ է կեզ։
Ռազմն է հանգչում հնձվորի պես։
Այնտեղ սուրում է մի կազակ։
Գնդերն այստեղ մըտնում են շարք։
Լըռեց մուզիկը մարտական։
Բըլուրների վըրա, կարկամ,
Լըռեց մի պահ թնդանոթի
Մռունչը գոռ և անոթի։
Թնդացնելով դաշտն անսահման՝
Հեռվում ուռա որոտացին.
Տեսան գնդերը Պետրոսին։

Գնդերի դեմ սուրում է նա՝
Հըպարտ ու երջանիկ, զերթ մարտ։

Աչքով չափում է դաշտն անահ։
Իր հետևից անցան անպարտ
Պյոտրի ճուտերը քաջարի —
Բախտախաղում այս աշխարհի,
Ռազմի գործում, պետության մեջ,
Նրա որդիքն ու ընկերներ՝
Շերեմետևն ազնվական,
Եվ Բրյուսը, Բաուրը, Ռեպնի՛ն,
Նաև բախտի այն սիրելին
Իշխանավորն ու կիսարքան։

Եվ վիրավոր, գունատ, լըռին,
Պատգարակում, հավատարիմ
Ծառաների ուսին բազմած,
Իր մարտական ջոկատների
Կապույտ տողանցների դիմաց
Երևաց Կարլը։ Հերոսի
Զորավարներն իր հետ էին։
Թաղված էր նա խոհերում խոր
Շփոթ հայացքը անսովոր
Մի խռովմունք էր գծագրում։
Յանկալի մարտն ասես Կարլին
Տարակուսանք էր պատճառում...
Եվ նա ձեռքի թույլ շարժումով
Առաջ վարեց գնդերն իր,
Շարժեց առաջ ռուսների վրա։
Նրանց հետ գնդերը ցարական
Ծըխում, դաշտում, իրար եկան։
Թընդաց Պոլտավյան մարտն ահեղ։
Հրում, կիզիչ կարկըտի տակ,
Որպես շնչող մի ամբարտակ,
Նոր շարքն ընկնող շարքերի տեղ
Սեղմում է սվին։ Որպես ամպրոպ՝

Հեծյալ գընդերը քառատրոփ,
Սուսեր, սանձեր զնգացնելով,
Բախվում, հնձվում են խուլ թափով
Ռումբերը շաչումն՝ չորս կողմ
Պայթում, ցըրում, փորում են հողն
Ու կիտելով դիերն անվերջ՝
Թշշում արյան լըճերի մեջ։
Շվեդ, ռուս, խոցում է խոր, թրատում,
Թըմբուկ է, կանչ է, կըռճըտյուն,
Որոտը թնդանոթների,
Ձիու գոփյուն, խըրխինջ, տնքոց,
Ամեն կողմ մահ, գըժոխք ու բոց։

Տագնապներում այդ խուլ, խըռով,
Ներշնչումի հայացքներով,
Զորավարները սառնադին
Նայում են ճակատամարտին,
Մարտաշարժերն անդուլ դիտում,
Կռահում կորուստ ու հաղթություն
Եվ իրար հետ խոսում կամաց։
Բայց ռուսական արքայի մոտ
Ո՞վ է ռազմիկն այն տարիքոտ։
Երկու կազակներին հենված,
Բորբոքվելով սրտով կըրքոտ,
Նա հերոսի վարժ աչքերով
Դիտում է ռազմը մեծախոհով։
Այլևս չի նստի նա ձի,
Նա զառամել է աքսորում
Եվ կազակները բոցարյան
Էլ Պալեյի մարտակոչից
Չեն հավաքվի ամեն կողմից։
Բայց է՞ր աչքերը փայլեցին
Ու զայրույթի գիշեր մթին

Ծածկեց նըրա ճակատը ծեր։
Ի՞նչը նըրան, արդ, կըհուզեր։
Գուցե տեսավ ռազմի բոցում
Մազե՛պային իր թշնամի,
Եվ իր տարի՞քն է անիծում
Այդ զինազուրկը ծերունի։

Մազե՛պան խոհերում սուզված՝
Մարտն էր դիտում՝ շրջապատված
Խըռովարար կազակների,
Ավագների, սերդյուկների
Ու հարազատների խմբով։
Կրակոց պայթեց հանկարծակի,
Եվ նա դարձավ հետմանը ծեր։
Վոյնարովսկու ձեռքի մեջ դեռ
Ծըխում էր փողը մուսկետի։
Մի քիչ այնկողմ ընկած գետին
Ջահել կազակն էր արյան մեջ,
Իսկ ձին, փոշոտ ու փրփըրած,
Վայրախըրխինջ, հեռուն սուրաց
Կըրակների միջով անշեջ։
Գալիս էր հետմանի վըրա
Կազակը՝ սուրը մերկ՝ ձեռքում,
Աչքերում խենթ կատաղություն։
Ծերուկը մոտ քըշեց նըրան,
Հարցեր տըվեց։ Սակայն կազակն
Արդեն փչում էր շունչը տաք։
Մարվող տեսքով սպառնում էր դեռ
Նա Ռուսիայի նենգ թշնամուն.
Մըռայլ էր դեմքը մահամուժ
Եվ Մարիի անունն անուշ
Հազիվ էր թոթվում լեզուն։
Բայց մոտ է ժամը հաղթության,
Ռուս՛, շվեդները նեղն ընկան...

Օ, վե՛հ վայրկյան, օ, վե՛հ պատկեր
Կրկին հարված մի անվեհեր —
Արդեն փախչում է թշնամին [32]
Եվ հետևից — մեր այրուձին։
Թըրերն են ջարդելով ծռվում։
Դաշտում դիերը փռվեցին,
Ինչպես մորեխն է սև փռվում։

Նստած է Պյոտրը խնջույքի։
Հըպարտ է, պարզ է և փառքով
Լիքն է հայացքն իր անսասան։
Եվ գեղեցիկ է, հոգեթով
Նըրա խընջույքն արքայական։
Նա իր զորքի կանչերի տակ
Հյուրասիրում է մեծարար
Եվ զորավարներին իր հին,
Եվ զորավարներին օտար,
Գըգվում է վեհ գերիներին
Ու բարձրացնում թասեր փրփրած
Իր մեծ վարպետների կենաց։

Բայց ո՞ւր է հյուրը առաջին
Եվ ուսուցիչն ահեղ մեր այն,
Որի հանդգնությունը հին
Փշրեց հաղթողը Պոլտավյան։
Եվ ո՞ւր է նա, Մազեպան նենգ,
Ո՞ւր է փախել Հուդան, չկա՛։
Է՞ր չէ արքան հյուրերի մեջ
Ու դավաճանը կոճղի վրա [33]։

Սուրում է մերկ ատեպներով
Կարլոսի հետ Մազե՛պան ծեր։
Փախչում են։ Նույն ճակատագրով
Նըրանք իրար են միացել։

Մոտիկ վըտանգ, կատաղություն,
Արքային ուժ են ներշնչում։
Նա ծանըր վերքն իր մոռացավ։
Գըլուխը կախ սուրում է ձիգ
Նա՝ հալածված ռուս բանակից։
Հավատարիմ նրա մարդիկ
Հազիվ հասնում են հետևից։
Հոգնած հայացքը որպես նետ
Ստեպի անծայր հեռուներին՝
Ծերուկ Մազե՛պան նըրա հետ
Ասպանդակում է շատ իր ձին։
Դեմից մի ագարակ էր... ի՞նչ,
Մազե՛պան մի՞թե վախեցավ։
Ինչո՞ւ արագ նա սըլացավ
Ագարակի մոտից հեռու։
Գուցե այդ բակը և այդ տունն
Ու այդ այգին ամայացած
Եվ դուռը բաց խոպան դաշտում
Նըրան ինչ-որ վաղուց անցած
Մի պատմությո՞ւն են հիշեցնում։
Դահիճըդ սուրբ անմեղության,
Ճանաչեցի՞ր պատկերն այս տան,
Այս տան, երբեմըն մեծանուն,
Ուր դու սիրով, գինով հարբած,
Երջանկությամբ շրջապատված,
Ուրախ կատակ էիր անում։
Ճանաչեցի՞ր սուրբ օթևանն,
Ուր այն հրեշտակն էր անբասիր,
Այգին, երբ մութ գիշերում այն
Դու ստեպ տարար... Ճանաչեցի՛ր։

Գիշերը ստեպն ահա սավերեց։
Կապուտաջուր Դնեպրի ափին,
Խավարաշուք ժայռերի մեջ,

Սթափ հանձնըվել են մըրափին
Թշնամիները Պետրոսի։
Խաղաղ հանգիստը հերոսի
Չեն խանգարում խոհերը։ Նա
Պոլտավյան ջարդը մոռացավ։
Սակայն շըփոթ է, չարագավ
Հետմանի քունը։ Անխընա
Տանջում է նրան մըռայլ հոգին։
Հանկարծ խավար լռության մեջ
Նըրան կանչում են։ Նա զարթնեց։
Նայում է։ Մատը թափ տալով
Մեկը հակվել է իր վըրա։
Ցնցվեց, կարծես կացնիահով...
Ծերունու դեմ, մազերը բաց,
Փայլուն աչքերը ներս ընկած,
Քուրձերի մեջ, նիհար, գունատ,
Լուսնի լույսով կանգնած է նա...
«Գուցե երա՞զ է... դո՞ւ... Մարի՞»։

ՄԱՐԻԱ.

Ախ, լո՛ւռ կաց, լո՛ւռ, հոգիս, հենց նոր
Փակվեց աչքերն իմ հորն ու մոր...
Կաց... կըլսեն մեզ—մի՛ անի։

ՄԱԶԵՊԱ.

Մարի, ուշքի՛ եկ, խե՞ղճ աղջիկ,
Աստված իմ... Ո՞ւմն եմ տեսնում, ո՞ւմ։

ՄԱՐԻԱ.

Լըսի՛ր։ Ինչ խորամանկ մարդիկ.
Ծիծաղելի բան են պատմում։

Իբրև գաղտնիք, նա ինձ պատմեց.
Թե մահացել է հայրըս խեղճ.
Եվ ցույց տվավ նա ինձ կամաց
Ճերմակ գլուխը—տեր աստված,
Թամբաստանքից էլ ո՞ւր փախչել.
Այդ գլուխը, լսո՞ւմ ես ինձ,
Իսկի մարդու գլուխ էլ չէր,
Գայլի գլուխ էր, ա՛յ թե ինչ։
Ինչո՞վ էր ինձ խաբում այդպես.
Տանջում առանց ամաչելու
Եվ ինչ նըպատակով, որ ես
Չըփախչեի քեզ հետ։ Ինչո՞ւ։

Լըսում էր խոր վըշտով նըրան
Իր սիրեկանը ծեր, դաժան։
Բայց մտքերի փոթորկի մեջ
Խոսում էր նա. «Համենայն դեպս՝
Հիշում եմ դաշտը... տոնը հին...
Ամբոխ... երկու մեռած մարմին...
Եվ մայրըս ինձ տարավ հանդես...
Ո՞ւր էիր դու... Քեզնից բաժան
Ի՞նչ եմ շըրջում ես կես գիշեր։
Տուն գընանք։ Մութ է, անագան։
Տեսնում եմ, ախ, գլուխս դեռ
Դատարկ հուզումներով է լի.
Ես քեզ ուրիշի տեղ դրի,
Ծերուկ։ Ինձ թող։ Հայացքըդ նենգ
Ու ծաղրական է, ահազդիկ։
Հտպիտ ես դու։ Նա՝ գեղեցիկ.
Նրա աչքերում փայլում է սեր,
Նրա խոսքերը մեղմ են, տաք,
Բեղեր ունի ձյունից ճերմակ,
Քոնին՝ արյուն է չորացել»։
Եվ ծիծաղեց վայրի ճիչով,

Եվ դեռատի վիթից թեթև
Թռավ, փախավ թռչկոտելով
Ու չքացավ գիշերում սև։

Հալվում էր մութը։ Այգն էր ալ։
Բոցն սկսել էր թեժանալ։
Կազակն էր այդ ցորեն խաշում.
Դնեպրի ափին թիկնապահներն
Արդեն ձիերն են լողացնում։
Կարլը զարթնեց. «Ո՜հ, ժամ է, վեր։
Զարթնի՛ր, Մազե՛պա։ Լուսացավ»։
Սակայն վաղուց է նա արթուն,
Նրան ուտում են միշտ ու ցավ,
Շունչը խեղդված է կոկորդում։
Եվ նա թամբում է լուռ իր ձին,
Սուրում փախչող արքայի հետ։
Նրա աչքերը փայլեցին
Զարհուրելի բոցով, երբ նա
Տվավ հրաժեշտ իրեն վերջին
Իր հայրենի եզերքներին։

Անցավ մի դար—և ի՞նչ մնաց
Հզոր, հպարտ այդ այրերից,
Կամքով լեցուն այդ կրքերից։
Նրանց սերունդն անցավ անդարձ,
Նաև հետքերն անհետացան
Արնոտ գործի ու հաղթության։
Եվ հյուսիսի պետության մեջ,
Նրա բախտի մեջ մարտական,
Բարձրացրիր արձանդ մեծ
Լոկ դու, հերոսըդ Պոլտավայան։
Եվ այն երկրում, ուր թևավոր
Շարքերը հողմաղացների
Խաղաղ պատավ են պաշարում

Խոպան պատնեշը Բենդերի,
Ուր գոմեշներն են թափառում
Այն ռազմական թմբերի շուրջ—
Ավերակները տրտմաշունչ
Մի խորտակված տաղավարի,
Երեք մամռոտ աստիճաններ
Հողում թաղված պատմում են դեռ
Համբավը շվեդ թագավորի։
Ուր նա մղեց հերոսն այն խենթ,
Իր տնային ծառաների
Ամբոխի մեջ ինքը մենակ,
Հուժկու գրոհը թուրքերի,
Թուրը նետեց բունչուկի տակ։
Եկվորն այնտեղ զուր պիտ հիմի
Փնտրի դամբանը հետմանի —
Նա չի հիշվում վաղուց իվեր,
Միայն սրբոց հանդեսներում
Նրան նզովք են որոտում
Տաճարներից — տարին մի հեղ։
Բայց այն դամբանը կա, որտեղ
Ննջում են աճյուններ սառն
Երկու անմեղ նահատակի.
Պատսպարեց նրանց հոգին
Եկեղեցին սիրողաբար[34]
Շիրիմների շարքում արդար։
Դիկանկայում ծաղկում է հին
Կաղնիների շարքը հսկա.
Բարեկամի ձեռքով տընկած,
Նրանք պատմում են թոռներին
Նահատակված նախորդների
Մասին։ Բայց դուստրը հանցավոր...
Ավանդությունը իր մասին
Լռում է։ Իր տառապագին
Վիճակը, վերջը ահավոր

Վարագուրված են մեղանից
Թանձր մութով։ Մեկ-մեկ միայն
Աշուղը կույր ուկրաինական
Երբ գյուղական համայնքի մեջ
Հետմանի երգն է ծլնկում,
Այդ մեղապարտ աղջկա մասին
Հարևանցի խոսք է նետում
Կազակ ջահել աղջիկներին։

1829

———

ԲԱԽՉԻՍԱՐԱՅԻ ՇԱՏՐՎԱՆԸ

Շատերն, այնպես ինչպես և ես, այցելել են սույն շատրվանը, բայց ոմանք նրանցից չկան արդեն:
Ուրիշները թափառաշրջում են հեռաստաններում:
ՍԱԱԴԻ

Գիրեյն էր նստել հայացքը մոլոր,
Բերնին՝ մխացող սաթյա ծխամորճ.
Խռնվել էր ահեղ խանի չորս բոլոր
Ստրկաբարո արքունիքը ողջ:
Ամեն ինչ խաղաղ, լուռ էր պալատում.
Երկյուղածությամբ խոնարհված նրան.
Մռայլված դեմքին վշտի ու ցասման
Նշաններ էին ամենքը կարդում:
Բայց իշխանավորն ահեղագոռոզ
Ձեռքով անհամբեր նշան է անում.
Գնում են նրանք խոնարհ ու անխոս:

Մենակ է նա իր առանձնարանում.
Կուրծքը ավելի ազատ է շնչում:
Ճակատն ավելի ժիր կենդանությամբ
Մատնում է սրտի հուզումն ահագին:

Այդպես է ծովի դողդոջ ապակին
Միշտ արտացոլում երկինքը սևամպ։

Ի՞նչն է փոթորկում դու. հոգին նրա.
Ի՞նչ մտքով է նա զբաղված արդյոք.
Գնում է նորից Ռուսիայի վրա՞,
Լեհաստա՞նն է նա ենթարկել ուզում,
Վառվում է ոխո՞վ արյունածարավ,
Թե իր բանակում նկատել է դավ.
Լեռնականների՞ց է արդյոք սարսում,
Թե՞ Ջենովայի դավերից խարդախ։

Ո՛չ, ձանձրացրել է ռազմի փառքը սին,
Հոգնել է արդեն բազուկն ահարկու,
Եվ չի մտածում նա կռվի մասին։

Գուցե մի անարգ դավաճանություն
Մուտք է գործել իր հարեմը լռին.
Եվ նա՝ գերության դուստրը հեշտասուն
Իր. սիրտն է ծածուկ հանձնել գյավուրին։

Ո՛չ, Գիրեյ խանի կանայք մշտավախ,
Որ սիրտ չեն անում մտածել, ցանկալ,
Տրտում անդորրում փթթում են խաղաղ,
Հսկողության տակ՝ աչալուրջ ու պաղ,
Ձանձրույթի գրկում միշտ անմխիթար
Նրանք չգիտեն դավաճանություն։
Պահվում է նրանց հմայքն անվթար
Հարեմի զովում անձայն ու թաքուն։
Այդպես հարավի ծաղիկն է ապրում՝
Հալված ջերմայի տխուր ապակուն։
Ու նրանց համար, հերթով անընդհատ,
Օրեր, ամիսներ, տարիք են անցնում,
Իրենց հետ մեկտեղ նրանք աննկատ

Տանում են և՛ սեր, և՛ ջահելություն։
Միանման է ամեն օրը ջոկ,
Մանր են ժամերը հարեմի ծոցում,
Ուր կյանք է վարում ծուլությունն անհոգ,
Հաճույքն էլ այնտեղ քիչ է առկայծում։
Դեռահաս կիներն այն ցանկանալով
Սրտերը իրենց խաբել մի բանով,
Փոխում են անվերջ հագուստներ շքեղ,
Զրույց են անում, խաղում միատեղ,
Կամ թե ջրերի աղմուկում կայտառ՝
Նրանց թափանցիկ շիթերից վերև
Սահուն խմբերով՝ զով, խատատերև
Սոսինների տակ շրջում անդադար։
Ներքինին է միշտ այնտեղ շրջում չար։
Այնտեղ նրանից փախչելն է իզուր.
Հայացքն իր խանդոտ, լսելիքը սուր
Հետևում է միշտ ամեն մի բանի։
Նրա ջանքերով մտել է այնտեղ
Հավերժական կարգ։ Եվ կամքն է խանի
Նրա համար լոկ կանոն ու օրենք.
Նա չի կատարում նույնքան խստորեն
Պատվիրանը սուրբ անգամ Ղուրանի։
Նրա չոր հոգին սեր չի աղերսում.
Նա, ինչպես արձան, տանում է, լսում
Ծաղր, ատելություն, խոնարհ աղաչանք,
Վիրավորանքներ, չարաճճի խաղ,
Հայացքներ երկչոտ, խաղաղ հառաչանք,
Չար արհամարհանք, տրտունջներ նվաղ։
Հայտնի է նրան բարքը կանացի.
Եվ գիտե փորձով՝ նենգ է նա որքան,
Թե՛ գերության մեջ, թե՛ ազատության.
Քնքուշ հայացքը, և անխոս լացի
Կշտամբանքները չեն տիրապետում,

Չեն իշխում բնավ նրա չար հողում.
Նա նրանց արդեն էլ չի հալածում:

Երբ երիտասարդ կիները գերի,
Արձակած իրենց մազերը շքեղ,
Լողանալու են գնում շոգերին,
Եվ երբ թափվում է նրանց նրբագեղ
Մարմնին սառնորակ ջուրն աղբյուրների,
Այդտեղ է նրանց անբաժան ծառան
Ու դիտում է նա աչքով անտարբեր
Գեղանի կանանց խումբը մերկիրան:
Անձայն քայլերով գիշերը խավար
Թափառում է նա հարեմում անքուն,
Գորգերն է կոխում նա ըզգուշաբար,
Դռների հետև կանգնում է թաքուն,
Մահիճից մահիճ է անցնում անձայն
Ու միշտ հողատար հսկում խանական
Կանանց հանգիստը՝ փարթամ վեհանինջ.
Գիշերվա ամեն թոթվանք ու շունչ,
Սարսուռ կամ հառաչ, ամե՛ն-ամե՛ն ինչ
Նկատում է նա և ապահ լսում.
Եվ վայ է նրան, ով որ երազում
Ուրիշի անուն շշնջա մի օր,
Կամ թե բարեհաճ իր ընկերուհուն
Վստահի իրեն մտքերն ախտավոր:

Էլ ի՞նչ է վիշտը ճնշում Գիրեյին.
Ծխամորճն արդեն հանգել է ձեռին.
Լուռ՝ նշանի է սպասում դռան մոտ՝
Իր շունչը պահած անշարժ ներքինին:
Տերը մտազբաղ ոտքի է կանգնում.
Նրա հանդիման ահա դուռն է բաց,—
Դեպի կացարան է անխոս գնում
Ու վաղուց իրեն սիրելի կանանց:

Եվ ըսպասելով հայտնվելուն խանի,
Ճանված ափերին ժիր շատրվանի,
Գորգերի վրա մետաքսանկար
Կանայք նստոտած խմբերով կայտառ՝
Հետևում էին մանկան խնդությամբ,
Թե ինչպես վարում — ջրերում հատակ,
Մարմար հատակին ձուկն է լողում ծույլ։
Ու նետում էին ձկնիկին, դիտմամբ,
Ոմանք նրանցից գինդեր ոսկեձույլ։
Մինչ սարկուհիք չորս կողմից նրանց
Մատուցում էին անուշ օշարակ,
Ու նրանց զնգուն խմբերից հանկարծ
Թնդաց հարեմի շենքը բովանդակ։

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԵՐԳ

1

«Արցունքի, վշտի փոխարեն մարդուն
Երկինքը վերուստ հատուցում է լի.
Երջանիկ է խեղճ ֆակիրն էլ անտուն,
Թե ծերանալով Մեքքա այցելի։

2

Ով սրբագործի վեհ Դանուբ գետի
Եզերքն իր մահով, երջանիկ է նա.
Կրքոտ ժպիտով կույսը դրախտի
Նրան ընդառաջ պիտի սլանա։

3

Բայց նա է, Զարե՛մ, երջանկագույն մարդ,
Ով որ սիրելով հեշտանք ու անդորր,
Կգգվի, անո՛ւշ, քեզ ինչպես մի վարդ,
Այստեղ — հարեմի լռության մեջ խոր»։

Երգում են։ Բայց նա՝ Զարեմն ո՞ւր է, ո՞ւր
Աստղիկը սիրո, զարդը հարեմի.
Ա՜վաղ, նա նստած գունատ ու տխուր,
Գովերգը նրանց չի լսում հիմի։
Արմավենու պես նկուն, հողմահար,
Գլուխը ջահել խոնարհել է վար,
Չի գալիս աչքին ոչինչ աշխարհում,
Զարեմին Գիրեյն արդեն չի սիրում։

Նա դավաճանեց... Բայց քեզ հետ այն ո՞վ,
Չքնաղ վրացո՛ւհի, կմրցի գեղով։
Քո շուշանային ճակատի բոլոր
Ծամերդ ես հյուսել դու կրկնակոր.
Զույգ աչքերը քո՝ սև ու հմայիչ
Մութն են գիշերից, ցերեկից էլ ջինջ։
Ո՞ւմ ձայնն է մատնում ավելի ուժգին
Վառվող ցանկության պոռթկումները բոց.
Ո՞ւմ գրգվանքներն են այնքան խորախոց,
Քան քո համբույրը ջերմ ու քնքշագին։
Ի՞նչպես սիրտը այն, որ լի է քեզնով,
Կարող է տրոփել ուրիշի համար։
Բայց Գիրեյն անհոգ ու դաժանաբար
Արհամարհեց քո գեղը հոգեթով։
Ու ցուրտ ժամերին իր գիշերային
Նա միշտ էլ մենակ, մռայլ է լինում,
Այն օրից, երբ որ լեհ իշխանուհին
Փակված է անդարձ նրա հարեմում։

Շատ վաղուց չէր, ինչ մանկամարդ Մարիեն
Աչք հառեց օտար երկնակամարին,
Վաղուց չէր, նա իր գեղով դուրեկան
Ծաղկում աշխարհում իրեն հարազատ։
Հպարտ նրանով հայրը ալեզարդ՝

Իր սփոփանքն էր համարում նրան,
Եվ նրա կամքը պատանեկական
Պետք էր հոր համար միշտ օրենք լիներ։
Ու նըրա միակ հոգսն էր մշտապես,
Որ բախտը իրեն սիրելի դստեր
Պարզորոշ լիներ գարնան օրվա պես,
Որ նույնիսկ վշտերն այն վայրենական
Չըմռայլեցին աղջկա հոգին,
Եվ ամուսնացած լինելով անգամ
Խանդաղատանքով հիշեր նա կրկին
Օրերն հաճույքի, օրերն աղջկան
Անցած՝ դյութասահ երազի նման։
Դյութում էր մարդու նա ամեն ինչով,
Խաղաղ իր բարքով, նազուն շարժմունքով.
Խորունկ աչքերով կապուտակ ու ջինջ։
Բնության տված ձիրքերը թովիչ
Զարդարում էր նա նրբին արվեստով,
Կենդանացնում էր ասեղով մոգական
Խնջույքները ճոխ, ընտանեկան։
Չքնաղ Մարիի ձեռքն էին փնտրում
Անթիվ հարուստներ, իշխաններ հայտնի,
Եվ շատ ջահելներ տանջվելով գաղտնի
Մարիի համար հալ ու մաշ լինում։
Բայց նա իր հոգում խաղաղ ու անդորր
Դեռ սեր չգիտեր։ Դղյակում իր հոր,
Իրեն մտերիմ աղջիկների հետ,
Հանգիստ օրերը անկախ ու անհոգ
Զվարճության էր նըվիրում նա լոկ։

Վաղո՞ւց էր։ Եվ ի՞նչ։ Թաթարների հոծ
Ամբոխն ինչպես գետ Լեհաստան խուժեց.
Չի փռվում արտում հրդեհն հողմարոց
Նույն արագությամբ սոսկալի ու մեծ։
Որբացավ հանկարծ երկիրը ծաղկած,

Պատերազմներից դարձավ խնդանդամ։
Անցան զվարճանքն ու կյանքը հանգիստ.
Գյուղեր, անտառներ լուռ են, տրտմանիստ.
Եվ ամայացավ գյուղակը փարթամ։

Լուռ է Մարիի սենյակն առանձին...
Տան նկուղներում, ուր սառըն նիրհով
Մասունքն են հանգչում իրենց թագերով,
Արդ իշխանական զինանիշներով,
Կանգնած է մի նոր գերեզման կրկին...
Հայրը շիրիմում, դուստրը գերիվար,
Ժառանգն է ժլատ՝ իշխում գյուղակին
Ու նըսեմացնում լուծով ծանրագին
Երկիրն ամայի և անմխիթար։

Բախչիսարայի պալատը, ավա՛ղ,
Թաքցընում է լուռ՝ ջահել դշխուհուն.
Այժմ գերության գրկի մեջ խաղաղ
Թոշնելով Մարին լալիս է, տխրում։
Խանն է անբախտին սակայն խնայում.
Հուզում է խանի քունը կարճատև
Արցունքը նըրա, հառաչն անհանգիստ,
Եվ նրա համար դարձրել է թեթև
Նա իր հարեմի օրենքները խիստ։
Չի այցում կույսին, գիշեր կամ ցերեկ,
Խանական կանանց խստադեմ ծառան,
Ու իր հոգատար ձեռքերով նրան
Դեպի մահիճը չի տանում երբեք։
Չի համարձակվում երբեք աղջկան
Իր վիրավորիչ հայացքը հառել։
Ու Մարին ծածուկ իր լողարանում,
Սպասուհու հետ մենակ է մնում։
Չի համարձակվում խանն իսկ խռովել
Տխուր հանգիստը իր չքնաղ գերու,

Ու թույլ է տրված հարեմի հեռու
Մի բաժնում նրան ապրել միայնակ,
Եվ թվում է՝ այդ առանձնարանում
Թաքչում է մի ոչ երկրային էակ։
Գիշեր ու ցերեկ այնտեղ տիրամոր
Պատկերի առաջ կանթեղ է վառվում,
Լռության մեջ հույսն ու հավատը խոր,—
Վշտահար հոգու սփոփանքը այդ,—
Վաղուց ապրում են այնտեղ միասին
Եվ հիշեցնում են սրտին անընդհատ
Մերձավոր վըսեմ աշխարհի մասին...
Եվ աղջիկն այնտեղ թափում է արցունք՝
Խանդոտ կանանցից հեռու և ծածուկ։
Եվ, մինչ թաղված է չորս կողմն ամեն ինչ
Հիմա հեշտանքում այն խելացնոր,
Հրաշքով պատված անկյունն հեռավոր
Պահպանում է խիստ սրբությունը ջինջ։
Այսպես էլ սիրտը մոլության զոհի
Հափշտակության մեջ էլ ախտակիրք
Պահպանում է միշտ մի սուրբ երաշխիք,
Մաքուր զգացմունք մի աստվածային...

. . . .

Իջավ գիշերը. ծածկվեցին մութով
Տավրիկյան դաշտերն, ահա քաղցրաթով
Սոխակի երգն եմ լսում ես հեռվում,
Դափնեծառերի խաղաղ հովանում։
Լուսինն է ծագում աստղերի խմբով
Ու սփռում իր խոնջ շողերը չորս դին՝
Մութ անտառներին, լեռներին, հովտին։
Պարուրված իրենց ճերմակ քողերով,
Ստվերների պես թեթև, վետվետուն,
Անցնում են շտապ ահա տնից տուն
Բախչիսարայի փողոցներով նեղ՝
Պարզ թաթարների կանայք, որ մեկտեղ

Կիսեն իրիկվա ժամերը անքուն։
Լռեց պալատը. հեշտանքի ղրկում
Հարեմը մտավ անխռով, խոր նինջ։
Ու չի խանգարում այս ժամին ոչինչ
Գիշերն այս խաղաղ։ Ջնջել է չորս կողմ
Պահակն հուսալի, զգաստ ներքինին.
Քնած է նա այժմ, բայց ահը կրկին
Տագնապում է իր քնահար հոգին։
Դավաճանության է նա միշտ սպասում,
Որ իրեն հոգուն հանգիստ չի տալիս.
Թվում է հաճախ ինչ-որ փսփսուկ,
Ինչ-որ խշխշոց, ճիչեր է լսում
Ու իրեն խաբող ձայնը լսելիս
Արթնանում է նա, դողում ու էլի
Լսելիքը սուր սարսափած լարում.
Բայց լուռ է չորս դին, լուռ ու հեշտալի։
Միայն մարմարյա խորքից՝ քաղցրաձայն
Շատրվաններն են դեպի վեր զարկում,
Եվ իր սիրելի վարդից անբաժան
Սոխակն է մթնում իր երգը երգում։
Երկար է նրանց լսում ներքինին,
Մինչև որ նորից հանձնվի քնին։

Ի՜նչ լավ ու շքեղ է արևելքի
Մութ գիշերների հմայքը խավար.
Ի՜նչ քաղցր են նրանց ժամերը հոսում
Մարգարեապաշտ այս մարդկանց համար։
Ի՜նչպիսի հեշտանք նրանց տներում,
Այն կախարդական մութ այգիներում,
Հարեմների մեջ լուռ ու անվտանգ,
Ուր ամեն մի բան լուսնյակի ներքո
Լի է լռությամբ, խորին գաղտնիքով
Եվ ներշնչումով մի քաղցրահեշտանք։

Քնած են կանայք։ Լոկ մեկն է արթուն։
Ճնշապատ՝ տեղից ելնում է նա վեր։
Քայլում է, ահա ձեռքով անհամբեր
Բացում է դուռը։ Գիշերվա մթնում
Նա թեթևաքայլ առաջ է գնում...
Դե՛մը՝ նիրհելով վախկոտ, մտահոգ
Ծերուկ ներքինին է ահա պառկել։
Ա՜խ, սիրտն է նրա անողոք ու պաղ,
Խաբուսիկ է շատ իր քունն էլ խաղաղ։
Կինը ոգու պես անցավ անարգել։

Դուռն է նրա դեմ. տարակուսանքով՝
Ամուր փակին է անաղմուկ դիպչում՝
Մթան մեջ, նրա ձեռքը դողդոջուն։
Մտավ, իր շուրջն է դիտում զարմանքով...
Պատում է նրան ահ խորհրդավոր։
Ահա կանթեղի լույսը մենավոր,
Տապանակն ահա՝ թույլ լուսավորված,
Հեզ կերպարանքը անբիծ տիրամոր
Եվ խաչը՝ սիրո նիշը սրբազան...
Ողջը, վրացուհի՛, քո հոգում հանկարծ
Արթնացրեց ինչ որ հարազատ մի բան
Եվ խոսեց նորից վաղուց մոռացված
Օրերի բոլոր հնչյուններով հին։
Դեմը պառկած է նա՝ իշխանուհին,
Եվ խորունկ ջերմից կուսական նիրհի
Այտերն են վառվում և դեռ ցույց տալով՝
Հետքերը խոնավ արտասուքների,
Լուսավորված են հոգնաբեկ ժպտով։
Իր լույսն է տալիս լուսինն էլ այդպես
Ծաղկին՝ ծանրացած անձրևի շիթով։
Եդեմի որդին՝ հրեշտակը ասես
Երկնքից իջել, սավառնել է վար
Եվ խոր քնի մեջ արցունք է թափել

Հարեմի անբախտ գերուհու համար։
Ավա՜ղ, քեզ, Զարե՛մ, ի՞նչ է պատահել…
Կուրծքն է կծկվում նրա վշտահար,
Ծնկներն են ահա ծալվում ակամա,
Եվ աղոթում է.«Գթա՛ ինձ, գթա՛,
Եվ մի՛ մերժի իմ պաղատանքը դու…»։
Խոսքերը նրա, շարժումք ու հառաչն
Աղջկա խաղաղ քունն են ընդհատում
Եվ իշխանուհին ահով իր առաջ
Անծանոթ կնոջ դեմքն է նկատում։
Շփոթված, ձեռքով դողդոջ-վարանոտ
Նա վեր է հանում նրան ու ասում,
«Ո՞վ ես… գիշերվա պահին միայնակ
Ի՞նչ ունես այստեղ»։ «Ես եկա քեզ մոտ.
Փրկիր ինձ, փրկիր, իմ կյանքում մենակ
Հույսն է մնացել ինձ այսուհետև. .
Վայելեցի բախտն երկար ժամանակ,
Օր-օրին եղա անհոգ ու թեթև,
Եվ վայելքն անցավ ինչպես մի ըստվեր։
Կործանվում եմ ես, բայց լսիր ինձ դու.
Ես ծնունդ առա ոչ այստեղ, հեռու,
Շատ հեռու մի տեղ… բայց մինչ օրս էլ դեռ
Անցած օրերի, իրերը բոլոր
Հիշողության մեջ քանդակված են խոր.
Ես հիշում եմ մեր լեռներն երկնաբարձ,
Լեռներում հոսող հեղեղները գիժ,
Հիշում եմ մեր խիտ անտառներն անանց,
Ուրիշ օրենքներ և բարքեր ուրիշ.
Բայց ինչո՞ւ, արդյոք, և իմ ո՞ր բախտից
Թողի հայրենի եղերքներն իմ այն,
Չը գիտեմ, ես ծովն եմ հիշում միայն
Եվ մարդուն այնտեղ՝ առագաստներից
Շատ բարձր կանգնած…
Օտար էին ինձ,

Ու թույլ է տրված հարեմի հեռու
Մի բաժնում նրան ապրել միայնակ,
Եվ թվում է՝ այդ առանձնարանում
Թաքչում է մի ոչ երկրային էակ։
Գիշեր ու ցերեկ այնտեղ տիրամոր
Պատկերի առաջ կանթեղ է վառվում,
Լռության մեջ հույսն ու հավատը խոր,—
Վշտահար հոգու սփոփանքը այդ,—
Վաղուց ապրում են այնտեղ միասին
Եվ հիշեցնում են սրտին անընդհատ
Մերձավոր վըսեմ աշխարհի մասին...
Եվ աղջիկն այնտեղ թափում է արցունք՝
Խանդոտ կանանցից հեռու և ծածուկ։
Եվ, մինչ թաղված է չորս կողմն ամեն ինչ
Հիմա հեշտանքում այն խելացնոր,
Հրաշքով ազատված անկյունն հեռավոր
Պահպանում է խիստ սրբությունը ջինջ։
Այսպես էլ սիրտը մոլության զոհի
Հափշտակության մեջ էլ ախտակիրք
Պահպանում է միշտ մի սուրբ երաշխիք,
Մաքուր զգացմունք մի աստվածային...

. . . .

Իջավ գիշերը. ծածկվեցին մութով
Տավրիկյան դաշտերն, ահա քաղցրաթով
Սոխակի երգն եմ լսում ես հեռվում,
Դափնեծառերի խաղաղ հովանում։
Լուսինն է ծագում աստղերի խմբով
Ու սփռում իր խոնջ շողերը չորս դին՝
Մութ անտառներին, լեռներին, հովտին։
Պարուրված իրենց ճերմակ քողերով,
Ստվերների պես թեթև, վետվետուն,
Անցնում են շտապ ահա տնից տուն
Բախչիսարայի փողոցներով նեղ՝
Պարզ թաթարների կանայք, որ մեկտեղ

Էլ ինչո՞ւ սառն հմայքով հիմա
Նրրա թուլակամ սիրտն ես տագնապում։
Թող ինձ Գիրեյին, միայն իմն է նա,
Այրում է դեռ ինձ համբույրը նրրա.
Տվել է նա ինձ սոսկալի երդում,
Բոլոր ըղձերը, մտքերն իր բոլոր
Իմոնց հետ էր նա վաղուց զուգորդում.
Նա ինձ կսպանի դավաճանելով...
Լալիս եմ ահա և քո առաջ, տե՛ս,
Ծնրադիր ընկած, և սիրտ չանելով
Քեզ մեղադրել, աղաչում եմ ես
Ետ տուր իմ խինդն ու հանգիստը կրկին,
Նախկին Գիրեյին դարձյալ դու ինձ տուր...
Մի՛ հակաճառիր դու ինձ ոչնչով.
Նա իմն է միայն, բայց քեզնով է կույր։
Արհամարհանքով, խնդրով թե վշտով,
Զրզվեցրու նրան, ինչով որ կուզես,
Երդվիր ուրեմն (թեև թողի ես
Խանի կանանց մեջ Ղուրանի սիրուն
Անցած օրերի հավատը իմ հին,
Բայց հավատն իմ մոտ եղել է քո նույն
Հավատը), երդվիր նրրանով իմ դեմ
Գիրեյին նորից ետ տալ Զարեմին...
Բայց լսիր. եթե պարտավոր եմ քեզ...
... Ապա ես դաշույն բանեցնել գիտեմ,
Կովկասին մոտիկ ծնունդ առա ես»։

Ասաց ու հանկարծ չքացավ։ Մարիան
Չի համարձակվում հետևել նրան։
Հասկանալի չէ անմեղ աղջկան
Տանջահար անող կրքերի լեզուն,
Բայց ձայնն է նրանց անորոշ լսում՝
Եվ սարսափելի, և օտարոտի։
Ի՞նչ արցունք, աղոթք նրան այս անգամ

Անպատվությունից պիտի ազատի։
Ի՞նչ է սպասում։ Մի՞թե դառնահամ
Ջահել օրերի մնացորդը կարճ՝
Նա կապրի, որպես անարգված մի հարճ։
Օ՜ տեր իմ, եթե Գիրեյը համառ
Թողներ հեռավոր զնդանի մեջ այս
Թշվառ աղջկան, ընդմիշտ մոռանար,
Եվ կամ թե հանկարծ մահը վաղահաս
Ընդհատեր նըրա կյանքը վշտահար,
Ի՜նչ ուրախությամբ նորահաս Մարին
Հրաժեշտ պիտի տար տխուր աշխարհին։
Կյանքի թանկագին պահերն իր համար
Անցել են արդեն, վաղուց էլ չկան։
Ի՞նչ ունի կյանքում նա այս անապատ։
Ժամ է. Մարիին, թշվառ աղջկան
Ահա, կանչում են ժպտով հարազատ
Դեպի գիրկն երկնի, խաղաղ ու ազատ։

Սլացան օրեր. չկա Մարիան,
Մի ակնթարթում որբուհին մարեց,
Աշխարհն ըղձալի նա լուսավորեց
Այնտեղ՝ մի նորեկ հրեշտակի նման։
Բայց ի՞նչը դագաղ մըտցրեց նըրան.
Անհույս գերության վիշտը, թե՞ անբուժ
Մի հիվանդությո՞ւն, կամ աղե՞տ մի այլ.
Ո՞վ գիտե։ Չկա էլ Մարին քնքուշ։
Ամայի դարձավ պալատը մռայլ,
Գիրեյը դաժան այն թողեց դարձյալ
Ու առած նորից ամբոխն իր թաթար
Արշավեց չարկամ դեպի հողն օտար։
Ռազմի փոթորկում նա քառատրոփ
Եվ արյունըռուշտ թռչում է տրտում,
Բայց կա թաքընված միշտ խանի սրտում
Ուրիշ հույզերի կրակն անըսփոփ։

Հաճախ մարտերում այն օրհասական
Թուրն է քաշում նա և զարկի ժամին
Մնում է անշարժ, կանգնում է հանկարծ,
Ապա խելահեղ նայում է չորս դին,
Նետում է գույնը՝ ասես սարսափած.
Ինքն իրեն ինչ-որ բան է փսփսում,
Եվ արտասուքն է գետի պես հոսում։

Արդեն մոռացված ու արհամարհված՝
Հարեմը վաղուց չի տեսնում խանին։
Եվ կանայք այնտեղ տանջանքի տրված,
Ներքինու սառը հսկողության տակ
Պառավում են լուռ։ Չըկա վրացուհին
Վաղուց նրանց մեջ։ Ջրերի անտակ
Անդունդի խորքը նետեցին նրան
Մի օր հարեմի պահակներն անձայն։
Երբ իշխանուհին մեռավ, այն գիշեր
Ավարտվեց նրա կյանքն էլ տանջալի.
Որքան էլ հանցանքն այն խոշոր լիներ,
Պատիժը դարձյալ մեծ էր սոսկալի։

Մատնելով ռազմի հրո ճարակին
Կովկասին մոտիկ երկրներ բազում,
Ռուսիայի խաղաղ գյուղերը, կրկին
Խանը ետ դարձավ հողը Տավրիկյան
Եվ իր պալատի մի անջատ մասում՝
Մարիի տխուր, ջինջ հիշատակին
Շինեց մարմարյա մի մեծ շատրվան։
Վերևում կա խաչ, շուրջը՝ միասին
Կա մահմեդական մի կիսալուսին։
(Խորհրդանիշն այդ, համարձակ անշուշտ,
Հանցանքն է խղճուկ անիմացության)։
Կա մի մակագիր. դեռ չեն հարթել այն,
Ու դեռ չեն կրծել տարիներն անկուշտ։
Եվ այդ գրության գծերով օտար

Ջուրն է մարմարում ճողփում անդադար,
Սառն արցունք դարձած կաթում հատակին,
Եվ չի պապանձվում, չի լռում երբեք։
Այդպես է ողբում մայրը վշտաբեկ
Պատերազմի մեջ ընկած զավակին։
Այն երկրում ջահել կույսերն ու կանայք
Իմացան մի օր զրույցն այդ հին
Եվ հուշարձանի անունը նրանք
Արտասուքների շատրվան դրին:

Թողած վերջապես հյուսիսը հեռվում,
Մոռացած խնջույք, ուրախ կերուխում,
Ես այցելեցի Բախչիսարայի
Վաղուց մոռացված պալատն ամայի։
Լուռ միջանցքներով շրջեցի այնտեղ,
Ուր այն թաթարը, մտրակն ազգերի,
Խրախճանքներ էր սարքում խելահեղ,
Եվ թողած սարսափն արշավանքների
Թաղվում ծուլության գրկի մեջ շքեղ։
Հեշտանքն է շնչում մինչ այսօր էլ դեռ
Դատարկ պարտեզում և սենյակներում.
Ջրեր են ցայտում, վառվում վարդեր,
Խաղողի վազերն են վերև ոլորվում
Եվ դեռ պատերին շողում է ոսկին։
Ես տեսա խարխուլ, հին ցանկապատեր,
Որոնց հետևում, իրենց գարունքին,
Համրելով իրենց թաղբեհները սաթ
Ախ էին քաշում կիներն անազատ։
Եղա խանական գերեզմանոցում,
Տերերի վերջին այդ օթևանում։
Տապանասյուներն այստեղ՝ պսակված
Մարմարաքանդակ ճերմակ չալմայով,
Թվում էր մի պահ՝ լսելի ձայնով
Բախտի պատգամն են հաղորդում մարդկանց։

Ո՞ւր են խաները և հարեմը, ո՞ւր։
Խաղաղ է չորս դին, ամեն ինչ տխուր։
Փոխվեց ամեն ինչ... բայց այն ժամանակ
Դրանով չէր այնտեղ բնավ սիրտս լի.
Շատրվանների ձայնն ու բուրալի
Շունչը վարդերի հակում էին ինձ
Դեպի մոռացում, միտքս ակամայից
Տրվում էր հուզման մի անմեկնելի։
Եվ սավառնաթև մի ուրու դարձած
Կույսն էր հայտընվում այնտեղ իմ դիմաց։

Օ՜ բարեկամներ, ասացեք, թե ո՞ւմ
Հայացքը տեսա, թե ո՞ւմ քնքշալի
Կերպարանքն էր ինձ այնտեղ հետևում
Անխուսափելի և անվանելի։
Արդյոք Մարիի հոգի՞ն էր մաքուր,
Որ մունջ հայտնվեց այնտեղ իմ դիմաց,
Թե Զարե՞մն էր այն՝ խանդով բռնված
Շրջում հարեմում ամայի և լուռ։

Հիշում եմ հայացքն այնքան սիրելի,
Հմայքը նրա դեռևս երկրային

. . . .

. . . .

Երկրպագելով լոկ անդորր կյանքին
Եվ մուսաներին, թողած փառք ու սեր,
Օ՜ շուտով, շուտով կտեսնեմ կրկին
Ես ձեզ, Սալգիրի խնդառատ ափեր։
Լցված հուշերով իմ խորհրդավոր,
Կելնեմ լեռների լանջը կապտալուրթ,
Եվ կուրախացնեն հայացքս անհագուրդ
Տավրիկյան ջրերն այնտեղ նորից նոր·
Մոգակա՞ն երկիր, բերկրա՞նք աչքերի.
Աշխուժ են այնտեղ բլուր թե անտառ,

Սաթը խաղողի, հակինթները վառ,
Հմայքն հյուրընկալ հովտադաշտերի,
Ջուրը և՛ ջրի, և՛ բարդիների՝
Ողջն անցորդին իր մոտ է կանչում,
Երբ առավոտվա ժամին անխռով,
Լեռների վրա, առափնյա ճամփով
Նրա քաջընտել ձին է սլանում,
Եվ կանաչավուն ջրերն իր դիմաց,
Այու-Դաղ լեռան ժայռերին փարած՝
Ե՛վ շողում են վառ, և՛ աղմուկ հանում...

1823

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ

Պատիվդ ջահելուց պահպանիր
Առած

ԳԼՈՒԽ I

ԳՎԱՐԴԻԱՅԻ ՍԵՐԺԱՆՏԸ[1]

Վաղն ևեթ կդառնար գվարդիայի կապիտան։
— Հարկավոր չէ՛ թող նա բանակում ծառայի։
Հրաշալի՜ է ասված — քաշի թող մի...
. . . .
Իսկ հայրն ո՞վ է նրա։

Կնյաժնին [2]

Հայրս՝ Անդրեյ Պետրովիչ Գրինյովը երիտասարդ ժամանակ ծառայել էր կոմս Մինիխի մոտ և պրեմյեր-մայորի աստիճանում պաշտոնաթող եղել 17... թվին։ Այդ ժամանակից նա ապրում էր Սիմբիրսկի նահանգում գտնվող իր գյուղում, ուր և ամուսնացել էր այնտեղի մի աղքատ ազնվականի աղջկա՝ Ավդոտյա Վասիլևնա Յու.-ի հետ։ Մենք՝ երեխաներս ինը հոգի էինք։ Իմ բոլոր եղբայրներն ու քույրերը մանուկ հասակում են մեռել։ Գվարդիայի մայոր՝ մեր մոտիկ ազգական իշխան Բ.-ի ողորմածությամբ ես գրված էի Սեմյոնովսկի գնդում որպես սերժանտ։ Մինչև ուսումս ավարտելը համարվում էի արձակուրդի մեջ։ Այն ժամանակ մենք այժմյան պես չէինք դաստիարակվում։ Հինգ տարեկան հասակից ինձ տվել էին ասպանդակապան Սա-

վելիչի ձեռքը, որին, շնորհիվ իր ողջախոհ վարք ու բարքի, նշանակել էին իմ դաստիարակը։ Նրա հսկողության տակ տասներկու տարեկան հասակում ռուսերեն գրել-կարդալ սովորեցի և կարող էի բավական առողջ դատել արագավազ քերծեի հատկությունների մասին։ Այդ ժամանակ հայրս ինձ համար վարձեց մի ֆրանսիացի՝ մսյե Բոպրեին, որին Մոսկվայից բերել տվին գինու և պրովանսի ձեթի մի տարվա պաշարով հանդերձ։ Նրա գալը բոլորովին դուր չեկավ Սավելիչին։ «Փա՛ռք աստծո,—փնթփնթում էր նա քթի տակ,—կարծես թե երեխայի երեսը մաքուր է, մազերը՝ սանրած, փորը՝ կուշտ։ Էլ ի՞նչ կարիք կա ավելորդ փող ծախսել և մսյե վարձել, ի՞նչ է, էստեղ մենք մեր մարդիկը չունեի՞նք»։

Բոպրեն իր հայրենիքում եղել էր պարիկմախեր, հետո՝ Պրուսիայում—զինվոր, ապա եկել էր Ռուսաստան pour étre outchitel[3], այնքան էլ լավ չհասկանալով այդ բառի իմաստը։ Նա բարի բնավորության տեր մարդ էր, սակայն՝ ծայրաստիճան թեթևամիտ և անառակ։ Նրա գլխավոր թուլությունը դեպի գեղեցիկ սեռն ունեցած մոլությունն էր. հաճախ, ի պատասխան իր քնքշությունների, նա ստանում էր այնպիսի հարվածներ, որոնցից ամբողջ օրերով հառաչում էր։ Բացի այդ, նա (ինչպես ինքն էր ասում) թշնամի չէր շշին, այսինքն, (ռուսերեն ասած)—սիրում էր չափից ավելի կոնծել։ Բայց, քանի որ մեր տանը գինին միայն ճաշին էին տալիս, այն էլ՝ մի փոքրիկ գավաթով (ռյումոչկայով), ըստ որում դաստիարակին սովորաբար աչքաթող էին անում, ուստի և իմ Բոպրեն շատ շուտով սովորեց ռուսական թրմօղուն և մինչև անգամ սկսեց գերադասել այն իր հայրենիքի գինիներից՝ որպես ստամոքսի համար չափազանց օգտակար։ Մենք իսկույն բարեկամացանք և թեև ըստ պայմանի նա պարտավոր էր ինձ սովորեցնել ֆրանսերեն, գերմաներեն և բոլոր գիտությունները, բայց նա գերադասեց կարճ միջոցում ինձնից մի կերպ ռուսերեն կոտրատել սովորել և ապա մեզնից յուրաքանչյուրն արդեն իր գործով էր զբաղվում։

Ապրում էինք մի սիրտ, մի հոգի։ Ուրիշ մենտոր[1] ես չէի էլ ուզում։ Սակայն շուտով բախտը մեզ բաժանեց և ահա թե ինչ դիպվածով։

Լվացարարուհի Պալաշկան՝ հաստլիկ ու չիչոտ մի աղջիկ և մի աչքը կույր կովապահ Ակուլ՛կան ինչպես եղավ, խոսք մեկ արած, մի օր եկան միասին մորս ոտներն ընկան, խոստովանեցին իրենց մեղքը և լաց ու կոծով գանգատվեցին մուսյեից, որը գայթակղել էր նրանց անփորձությունը։ Մայրս չէր սիրում նման բանը կատակի տալ, ուստի և գանգատվեց հորս։ Նրա դատաստանն էլ կարճ էր լինում։ Նա իսկույն և եթ իր մոտ պահանջեց սրիկա ֆրանսիացուն։ Ասացին, որ մուսյեն ինձ դաս է տալիս։ Հայրս եկավ իմ սենյակը։ Այդ պահին Բոպրեն անմեղության քնով քնած էր մահճակալի վրա։ Ես գործով էի զբաղված։ Հարկ է գիտենալ, որ Մոսկվայից ինձ համար աշխարհագրական քարտեզ էին բերել տվել։ Առանց որևէ գործածության այդ քարտեզը կախված էր պատից և վաղուց ինձ հրապուրել էր թղթի լայնությամբ ու լավորակությամբ։ Ես վճռեցի նրանից մի օդապարուկ շինել և, օգտվելով Բոպրեի քնից, գործի անցա։ Հայրս ներս մտավ հենց այն րոպեին, երբ ես ճիլոպից շինած պոչը հարմարեցնում էի Բարեհուսո հրվանդանին։ Տեսնելով իմ վարժությունները աշխարհագրության մեջ, հայրս քաշեց ականջս, ապա մոտ վազեց Բոպրեին, շատ անզգույշ արթնացրեց նրան և սկսեց նախատինք թափել գլխին։ Շփոթված Բոպրեն ուզեց վեր կենա, կանգնի և—չկարողացավ. դժբախտ ֆրանսիացին թունդ հարբած էր։ Յո՛թը ցավին՝ մի դարման։ Հայրս բռնեց նրա օձիքից, բարձրացրեց մահճակալի վրայից, դռներից դուրս հրեց և՝ ի մեծ ուրախություն Սավելիչի, նույն օրն և եթ արձակեց պաշտոնից։ Դրանով էլ ավարտվեց իմ կրթությունը։

Ես ապրում էի իբրև մի թերուս. աղավնիներ էի թռցնում և աթուրմա խաղում բակի երեխաների հետ։ Մինչ այս, մինչ այն՝ տասնվեց տարեկան դարձա։ Այդ ժամանակ իմ վիճակը փոխվեց։

Մի անգամ աշնանը մայրս մեղրով մուրաբա էր եփում հյուրասենյակում, իսկ ես բերանիս ջուրը կուլ տալով, նայում էի մուրաբայի եռացող փրփուրին։ Հայրս պատուհանի մոտ նստած կարդում էր Պալատական օրացույցը[5], որ ամեն տարի նա ստանում էր։ Այդ գիրքը նրա վրա միշտ մեծ ազդեցություն էր թողնում. նա միշտ առանձին հետաքրքրությամբ էր կարդում այն և ամեն անգամ ընթերցումը նրա մեջ առաջացնում էր մաղձի զարմանալի հուզումն։ Մայրս, որ անգիր գիտեր նրա բոլոր սովորությունները, միշտ աշխատում էր այդ դժբախտ գիրքը որքան կարելի է հեռու պահել և այդպիսով Պալատական օրացույցը հաճախ ամբողջ ամիսներ նրա աչքին չէր ընկնում։ Բայց, երբ նա պատահաբար գտնում էր, ապա երբեմն ամբողջ ժամերով այլևս ձեռքից բաց չէր թողնում։ Եվ այդպես, հայրս կարդում էր Պալատական օրացույցը, երբեմնակի ուսերը վեր քաշում և կիսաձայն կրկնում. «Գեներալ-պորուչի՞կ[6]... Իմ վաշտում նա սերժանտ էր... Ռուսական զույգ օրդենների կավալե՞ր[7]... Իսկ վաղո՞ւց է, որ մենք»... Վերջապես հայրս օրացույցը շպրտեց բազմոցի վրա և խորասուզվեց մտածմունքի մեջ, որ ոչինչ լավ բան չէր գուշակում։

Հանկարծ նա դարձավ մորս. «Ավդո՛տյա Վասիլևնա, Պետրուշան քա՞նի տարեկան է»։

— Դեհ, ահա տասնյոթի մեջն է,—պատասխանեց մայրս։—Պետրուշան ծնվեց հենց այն տարին, երբ մեր հորաքույր Նաստասյա Գերասիմովնայի մի աչքը կուրացավ և երբ դեռ...

«Բարի,—ընդհատեց հայրս,—ժամանակն է, որ նա զինվորական ծառայության գնա։ Հերիք է, ինչքան վազվզեց աղջիկների սենյակներով և մագլցեց աղավնատների պատերով»։

Ինձնից շուտով բաժանվելու միտքն այնպես շշմեցրեց մորս, որ նա գդալը ձեռքից բաց թողեց կաթսայի մեջ և արցունքները հոսեցին նրա երեսով։ Ընդհակառակը, դժվար

է նկարագրել իմ հիացմունքը։ Զինվորական ծառայության գնալու միտքն իմ մեջ խառնվում էր ազատության և Պետերբուրգի կյանքի վայելքների մասին ունեցած մտքերի հետ։ Ես ինձ երևակայում էի գվարդիայի սպա, որ, իմ կարծիքով՝ մարդկային ամենամեծ երջանկությունն էր։

Հայրս չէր սիրում ոչ փոխել իր մտադրությունները, ոչ էլ հետաձգել նրանց կատարումը։ Իմ մեկնելու օրն արդեն նշանակված էր։ Նախօրյակին հայրս հայտնեց, որ մտադիր է ինձ հետ նամակ ուղարկել իմ ապագա պետին և գրիչ ու թուղթ պահանջեց։

«Չմոռանաս, Անդրեյ Պետրովիչ,—ասաց մայրս,—իմ կողմից էլ ողջունել իշխան Բ.-ին. գրի, թե ես հուսով եմ, որ նա Պետրուշային չի թողնի առանց իր շնորհների»։

— Ա՛յ քեզ հիմար բան,—պատասխանեց հայրս հոնքերը կիտելով։—Ինչո՞ւ համար ես պետք է իշխան Բ.-ին նամակ գրեմ։

«Բայց դու ասացիր, որ կամենում ես գրել Պետրուշայի պետին»։

— Է՛, հետո ի՞նչ։

«Բայց չէ՞ որ Պետրուշայի պետն իշխան Բ.-ն է։ Չէ՞ որ Պետրուշան գրված է Սեմյոնովսկի գնդում»[8]։

— Գրվա՜ծ է։ Իմ ի՜նչ գործն է, թե գրված է։ Պետրուշան Պետերբուրգ չի գնա։ Ի՞նչ պիտի նա սովորի Պետերբուրգում ծառայելով։ Դրամ վատնել և անպիտանություննե՞ր անել։ Ո՛չ, թող նա բանակում ծառայի, թող նեղություններ քաշի, թող վառոդի հոտ առնի, թող զինվոր դառնա և ոչ թե շամատոն[9]։ Գրվա՜ծ է գվարդիայում... Ո՞րտեղ է նրա պաշպորտը։ Տո՛ւր ինձ։

Մայրս գտավ իմ պասպորտը, որ պահվում էր նրա փոքրիկ արկղի մեջ՝ իմ կնունքի շապիկի հետ և դողդոջուն ձեռքով տվեց հորս։ Հայրս ուշադրությամբ կարդաց այն, դրեց իր առջև՝ սեղանի վրա և սկսեց իր նամակը։

Հետաքրքրությունն ինձ տանջում էր։ Ապա ո՞ւր են ուղարկելու ինձ, եթե ոչ Պետերբուրգ։ Աչքս չէի հեռացնում

հորս գրչից, որ շարժվում էր բավական դանդաղ։ Վերջապես նա ավարտեց նամակը, պասպորտի հետ կնքեց մի ծրարում, ակնոցները հանեց և ինձ իր մոտ կանչելով, ասաց. «Ահա քեզ Անդրեյ Կարլովիչ Ռ.-ին՝ իմ վաղեմի ընկերոջն ու բարեկամին հանձնելու նամակը։ Դու գնում ես Օրենբուրգ՝ նրա հրամանատարության տակ ծառայելու»։

Եվ այսպես, իմ բոլոր փայլուն հույսերը խորտակվեցին։ Պետերբուրգի ուրախ կյանքի փոխարեն ինձ սպասում էր ձանձրույթը հեռավոր ու խուլ մի վայրում։ Զինվորական ծառայությունը, որի մասին մի բոպե առաջ մտածում էի այնպիսի հիացմունքով, ինձ թվաց որպես մի ծանր դժբախտություն։ Բայց հակաճառելն անմտություն էր։ Մյուս օրն առավոտ տան մուտքի պատշգամբիկին[10] մոտեցավ ճամփորդական կիբիտկան[11], մեջը դրին մի չեմոդան, մի արկղ՝ թեյի պարագաներով և կապոցներ՝ մեջը բլիթներ ու կարկանդակներ—տնային փայփայանքի վերջին նշանները։ Ծնողներս օրհնեցին ինձ։ Հայրս ասաց. «Գնաս բարով, Պյո՛տր։ Հավատարիմ ծառայի նրան, ում երդում կտաս. մեծերից լսիր, նրանց փաղաքշանքների հետևից չընկնես, ծառայության մեջ մի քծնի, ծառայությունից չխուսափես և հիշիր առածը՝ շորդ նորուց պահպանիր, իսկ պատիվդ՝ ջահելուց»։ Մայրս արտասուքն աչքերին ինձ խրատում էր պահպանել առողջությունս, իսկ Սավելիչին պատվիրեց հոգալ երեխայի մասին։ Նապաստակի մորթուց կարած մի մուշտակ հագցրին ինձ, իսկ վրայից՝ աղվեսենու քուրք։ Սավելիչի հետ նստեցի կիբիտկայի մեջ և ճանապարհ ընկա, հորդ արցունքներ թափելով։

Նույն գիշերն եկա հասա Սիմբիրսկ, ուր պիտի մնայի մի օր՝ անհրաժեշտ իրեր գնելու համար, որ հանձնարարված էր Սավելիչին։ Իջևանեցի պանդոկում։ Սավելիչն առավոտից գնաց խանութները։ Ձանձրանալով պատուհանից նայել ցեխոտ փողոցին, ես գնացի թափառելու պանդոկի բոլոր սենյակներում։ Բիլյարդանոց մտնելուս պես տեսա բարձրահասակ մի բարին[12]՝ երեսունհինգ տարեկան, երկար,

սև բեղերով, խալաթը հագին, կիյը[13] ձեռքին և ծխամորճը ատամներով բռնած։ Նա խաղում էր մարկյորի[14] հետ, որը խաղը տանելու դեպքում մի գավաթ օղի էր խմում, իսկ տարվելու դեպքում պետք է չորեքթաթ մտներ բիլյարդի տակը։ Սկսեցի դիտել նրանց խաղը։ Որքան երկար էր տեվում այն, այնքան չորեքթաթ արվող զբոսանքները հաճախակի էին դառնում, մինչև որ վերջապես մարկյորը պառկած մնաց բիլյարդի տակ։ Բարինը մի քանի թունդ խոսքեր ասաց նրա հասցեին՝ որպես դամբանական և ինձ առաջարկեց հետը մի պարտիա բիլյարդ խաղալ։ Ես հրաժարվեցի՝ խաղալ չիմանալու պատճառով։ Ըստ երևույթին այդ նրան տարօրինակ թվաց։ Ասես ցավակցությամբ նա ինձ նայեց, սակայն՝ խոսակցության բռնվեցինք։ Պարզվեց, որ նրան կոչում են Իվան Իվանովիչ Զուրին, որ նա ** հուսարական[15] գնդի ռոտմիստրն[16] է և Սիմբիրսկ է եկել ռեկրուտներ[17] ընդունելու գործով, իսկ իջևանել է պանդոկում։ Զուրինն ինձ հրավիրեց իր հետ ճաշել—աստված ինչ որ տվել է, զինվորավայել։ Ես հաճույքով համաձայնվեցի։ Սեղան նստեցինք։ Զուրինը շատ էր խմում և ինձ էլ հյուրասիրում էր, ասելով պետք է սովորել զինվորական ծառայությանը։ Նա ինձ պատմում էր բանակային այնպիսի անեկդոտներ, որ ծիծաղից թուլացած, քիչ էր մնում թե վայր ընկնեմ, և մենք սեղանից վեր կացանք որպես կատարյալ բարեկամներ։ Այն ժամանակ նա առաջարկեց ինձ բիլյարդ խաղալ սովորեցնել։ «Դա,—ասում էր նա,—անհրաժեշտ է մեզ պես ծառայող մարդկանց համար։ Արշավանքի ժամանակ, ասենք թե, հասար մի որևէ հետ ընկած տեղ. ասա խնդրեմ, ինչո՞վ պիտի զբաղվես։ Հո միշտ ջհուդներին չպիտի՞ ծեծես։ Ակամայից կգնաս պանդոկ և կսկսես բիլյարդ խաղալ, իսկ դրա համար պետք է խաղա՛լ իմանալ»։ Ես միանգամայն համոզվեցի և մեծ եռանդով սկսեցի սովորել։ Զուրինը բարձր ձայնով խրախուսում էր ինձ, զարմանում էր իմ արագ առաջադիմությունների վրա, և մի քանի դասերից հետո առաջարկեց փողով խաղալ, մի-մի գրոշ դնելով, ոչ

թե տանելու համար, այլ հենց այնպես, միայն, որպեսզի դատարկ տեղը չխաղանք, որ նրա ասելով, ամենավատ սովորությունն է։ Ես դրան էլ համաձայնվեցի, իսկ Զուրինը հրամայեց պունշ տալ մեզ և համոզում էր ինձ փորձել այն, կրկնելով, որ պետք է վարժվել զինվորական ծառայությանը, իսկ առանց պունշի ծառայելն ի՛նչ բան է որ։ Ես լսեցի նրան։ Խաղը շարունակվում էր։ Ինչքան հաճախ էի խմում իմ բաժակից, այնքան ավելի համարձակ էի դառնում։ Բիլյարդի գնդերն ամեն րոպե դուրս էին թռչում սեղանի եզրերից, ես տաքանում էի, հայհոյում էի մարկյորին, որը, աստված գիտե, թե ինչպես էր հաշվում, ժամ առ ժամ ավելացնում էի խաղագումարը,—մի խոսքով ինձ պահում էի որպես կապը կտրած մի տղա։ Ժամանակն անցավ աննկատելի։ Մեկ էլ Զուրինը ժամացույցին նայեց, կիյը ցած դրեց և հայտնեց ինձ, որ տարվել եմ հարյուր ռուբլի։ Դա մի փոքր շփոթեցրեց ինձ։ Իմ բոլոր դրամը Սավելիչի մոտ էր։ Սկսեցի ներողություն խնդրել։ Զուրինը ընդհատեց ինձ։ «Ի սե՜ր աստծո, բնավ մի անհանգստանա։ Ես կարող եմ սպասել, իսկ առայժմ՝ գնանք Արինուշկայի մոտ»։

Ի՞նչ կհրամայեք։ Այդ օրը վերջացրի նույնքան թեթևամիտ, որքան և սկսել էի։ Մենք ընթրեցինք Արինուշկայի մոտ։ Զուրինն ամեն րոպե լցնում էր իմ գավաթը, կրկնելով, որ պետք է վարժվել զինվորական ծառայությանը։ Սեղանից վեր կենալով ես հազիվ էի կանգնում ոտքի վրա. կես գիշերին Զուրինը կառքով ինձ տարավ պանդոկ։

Սավելիչը մեզ դիմավորեց տան մուտքի մոտ։ Տեսնելով դեպի ծառայությունն ունեցած իմ ջանասիրության աներկբա նշանները, նա ախ քաշեց։ «Էս ի՞նչ օրի ես, տեր իմ,—ասաց նա խղճալի ձայնով։—Էդ ո՞րտեղ ես էդպես տղկվել։ Ա՜խ, աստված իմ, երբեք էս տեսակ բան չէր եղել»։ Ձայնդ կտրի՛, քավթառ,—հազիվ կապելով բառերը պատասխանեցի նրան.—երևի դու հարբած ես, կորի՛ր գնա քնելու... ինձ էլ պառկեցրու։

Մյուս օրը ես զարթնեցի գլխացավով. աղոտ հիշում

էի երեկվա դեպքերը։ Իմ խորհրդածությունները ընդհատեց Սավելիչը, որը մի բաժակ թեյ ձեռքին մտավ սենյակս։ «Շո՜ւտ ես սկսում, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա՝ գլուխը ճոճելով,—շուտ ես սկսում քեֆ անել։ Ախր դու ո՞ւմ ես քաշել։ Կարծեմ թե ոչ հայրդ, ոչ էլ պապդ խմողներ չեն եղել. մորդ մասին խոսելն անգամ ավելորդ է. Նրանք իրենց օրում բացի կվասից ուրիշ խմիչք չեն բարեհաճել բերաններն առնել։ Իսկ ո՞վ է էս բոլորի մեղավորը։ Անիծյա՛լ մուսյեն։ Պատահում էր, որ, մեկ էլ տեսար վազեց Անտիպովնայի մոտ. «Մադամ, ժե վու պրի, արաղյու»[18]։ Ա՛յ քեզ ժե վու պրի։ Ի՞նչ եմ ասել, շնորհք էր սովորեցնում էդ շան որդին։ Ասա ինչների՞ս էր պետք բասուրմանին[19] վերակացու վարձել, կասես մեր բարինն իր մարդի՞կը չուներ»։

Ես ամաչեցի։ Երեսս շուռ տվի և ասացի. «Դուրս գնա, Սավելիչ, ես թեյ չեմ ուզում»։ Բայց դժվար էր Սավելիչին լռեցնել, երբ նա, պատահում էր, որ սկսում էր իր քարոզը. «Ա՛յ, տեսնում ես, Պյոտր Անդրեյիչ, ի՛նչ ասել է կոնծել։ Համ գլուխդ է ծանրացել, համ էլ ուտել չես ուզում։ Խմող մարդն ի՞նչացու է... Արի դու վարունգի թթվաջուր խմիր մեղրով, իսկ ամենից լավն է, խումարահան լինելու համար մի կես բաժակ թրմօղի... Չե՞ս հրամայի բերեմ»։

Այդ ժամանակ մի տղա ներս մտավ և ինձ տվեց Ի. Ի. Զուրինի տոմսը։ Թուղթը բացի և կարդացի հետևյալ տողերը.

«Սիրելի Պյոտր Անդրեյիչ, խնդրում եմ իմ տղայի հետ ուղարկես հարյուր ռուբլին, որ դու երեկ ինձ տանուլ տվիր։ Դրամի սաստիկ կարիք ունեմ։

Պատրաստ ծառայելու՝ Իվան Զուրին»։

Ճար չկար։ Անվրդով տեսք տալով դեմքիս և դառնալով Սավելիչին, որը և՛ դրամի, և՛ սպիտակեղենի, և՛ գործերի իմ խնամակալն էր, հրամայեցի հարյուր ռուբլի տալ այդ տղային։ «Ի՞նչպես, ինչո՞ւ համար»,—հարցրեց ապշած Սավելիչը։—Պարտք եմ նրան,—պատասխանեցի ես որքան

կարելի է սառն։ «Պա՛րտք եմ,— առարկեց Սավելիչը, որ քանի գնում այնքան ավելի էր ապշում.—բայց, տեր իմ, ախր էդ ե՞րբ դու կարողացար նրան պարտք մնալ։ Չէ՛, էստեղ մի ինչ որ օյին կա։ Կամքը քոնն է, տեր, համա՝ ես փող տվողը չեմ»։

Ես մտածեցի, որ եթե այդ վճռական րոպեին չկոտրեմ համառ ծերունուն, ապա հետագայում այլևս դժվար կլինի ինձ դուրս գալ նրա խնամակալությունից, ուստի և հպարտ նայելով նրան, ասացի. «Ես քո տերն եմ, իսկ դու՝ իմ ծառան։ Դրամը իմն է։ Ես տանուլ եմ տվել այդ գումարը, որովհետև քեֆս այդպես է ուզում, իսկ քեզ խորհուրդ եմ տալիս խելքիդ զոռ չտաս և անես այն, ինչ հրամայում են քեզ»։

Սավելիչն այնպես էր ապշել իմ խոսքերից, որ ձեռքերն իրար զարկեց և քարացավ։ «Դե՛հ, ի՞նչ ես կանգնել»,—ես գոռացի բարկացած։ Սավելիչը լացեց։ «Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ,—արտասանեց նա դողդոջուն ձայնով,—ինձ մի՛ մեռցնի վշտից։ Աչքիս լույսը, լսիր ինձ՝ ծերուկիս. գրիր էդ ավազակին, որ դու կատակ ես արել, որ մենք էդ տեսակ գումարներ իսկի՛ չունենք։ Հարյուր ռուբլի՞։ Ողորմա՛ծ աստված։ Ասա՛, որ ծնողներս շատ խիստ պատվիրել են ինձ՝ միայն ընկույզով խաղալ»...—Հե՛րիք է ստեր ասես,—ընդհատեցի ես խստությամբ.—դեսը տուր փողը, թե չէ վզակոթիդ տալով կվռնդեմ։

Սավելիչն ինձ նայեց խորին վշտով և գնաց պարտքս բերելու։ Ես մեղքացա խեղճ ծերունուն, սակայն ուզում էի ազատվել և ապացուցել, որ ես այլևս երեխա չեմ։ Դրամն ուղարկվեց Զուրինին։ Սավելիչը շտապեց ինձ դուրս բերել անիծյալ պանդոկից։ Նա եկավ հայտնելու, թե ձիերը պատրաստ են։ Անհանգիստ խղճով և լուռ զղջումով ես դուրս եկա Սիմբիրսկից, առանց հրաժեշտ տալու իմ ուսուցչին և չմտածելով, այլևս երբևէ տեսնել նրան։

ԱՌԱՋՆՈՐԴԸ

Երկի՜ր իմ. երկիրս,
Երկիր անծանոթ.
Ես չե՞մ. որ եկել եմ քո հողը ահա,
Ձին չէ՞, որ բերել է ինձ՝ ջահելիս,
Ճարպկությունը ջահել կտրիճի,
Արիությունը մեկ էլ գինետան
Գինարբուքն է բերել ջահելիս։

Հնավանդ երգ

Ճանապարհի խորհրդածություններս այնքան էլ հաճելի չէին։ Իմ տանուլ տված գումարն այն ժամանակվա գներով քիչ բան չէր։ Հոգուս խորքում ես չէի կարող չխոստովանել, որ Սիմբիրսկի պանդոկում իմ արածը հիմարություն էր և ինձ մեղավոր էի զգում Սավելիչի առաջ։ Այդ բոլորն ինձ տանջում էր։ Ծերունին մռայլ նստած էր կիբիտկայի առջևի մասում՝ երեսը ինձնից շուռ տված և լռում էր, երբեմն միայն հառաչելով։ Ես անպատճառ ուզում էի հաշտվել նրա հետ և չգիտեի ինչից սկսեմ։ Վերջապես ասացի նրան. «Դե՛, դե՛, Սավելիչ, հերիք է, հաշտվենք, ներողություն. ինքս եմ տեսնում, որ մեղավոր եմ։ Երեկ ես գժություն արի և քեզ էլ իզուր տեղը վիրավորեցի։ Խոստանում եմ սրանից հետո խելոք պահել ինձ և լսել քեզ։ Դե՛, մի բարկանա, հաշտվենք»։

— Է՛, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ,—պատասխանեց նա խոր հոգոց հանելով։—Բարկանալը որ ասում ես, ինքս ինձ վրա եմ բարկանում. բոլոր մեղքն իմն է։ Ասա թե ես ի՞նչպես քեզ մենակ թողի պանդոկում։ Ինչ պիտի անես, մեղքի մեջ ընկա. խելքս փչեց, ասի՝ գնամ տիրացվի կնոջը՝ սանամորս տեսնեմ։ Էդպես է, էլի, սանամորս մոտ մտա, ջուխտ ոտքով բանտ ընկա։ Փորձանք էր, ուրիշ ոչ մի բան.

էլ ի՞նչ երեսով երևամ իմ տերերի աչքին։ Ի՞նչ կասեն նրանք, երբ իմանան, որ երեխան խմում է և ղումար խաղում։

Խեղճ Սավելիչին մխիթարելու համար ես նրան խոսք տվի առաջիկայում առանց նրա համաձայնության ոչ մի կոպեկի ձեռք չտալ։ Քիչ-քիչ նա հանդարտվեց, թեև էլի մորից մեկ-մեկ ինքն իրեն փնթփնթում էր գլուխը ճոճելով. «Հարյուր ռուբլի՜, հե՞շտ բան է»։

Ես մոտենում էի իմ նշանակման վայրին։ Շուրջս տարածվում էին տխուր տափաստանները, տեղ-տեղ բլուրներով ու ձորերով կտրատված։ Ամեն ինչ ձյունով էր ծածկված։ Արևը մայր էր մտնում։ Կիբիտկան ընթանում էր մի նեղ ճանապարհով, կամ ավելի ճիշտ՝ գեղջկական սահնակների թողած հետքով։ Հանկարծ կառապանս սկսեց մի կողմ նայել. նայեց, նայեց և վերջապես գլխարկը հանելով դարձավ ինձ ու ասաց. «Բա՛րին, արդյոք չե՞ք հրամայի վերադառնալ»։

— Ինչո՞ւ որ։

«Ժամանակը ձախ է. քամին սկսում է կամաց-կամաց ուժեղանալ. տեսնո՞ւմ ես, թե ինչպես է սրբում ձյունափոշին»։

— Է՛, մեզ ինչ վնաս։

«Բա չե՞ս տեսնում, թե ինչ է էնտեղ» (կառապանը մտրակը դեպի արևելք ուղղեց)։

— Բացի ճերմակ տափաստանից և պարզ երկնքից ուրիշ ոչինչ չեմ տեսնում։

«Ա՛յ, հրեն — հրե՛ն. էն փոքր ամպը»։

Իսկապես, երկնքի եզրին մի փոքրիկ, սպիտակ ամպ տեսա, որն սկզբում ինձ թվաց որպես հեռավոր մի բլրակ։ Կառապանը բացատրեց, որ այդ ամպը բուք է նախագուշակում։

Ես լսել էի այդ կողմերի ձյունախառն բուք-բորանների մասին և գիտեի, որ դեպքեր են եղել, երբ ամբողջ սայլախմբեր թաղվել են ձյան տակ։ Սավելիչը, համաձայնելով կառապանի կարծիքին, խորհուրդ տվեց վերադառնալ։ Սա-

կայն քամին ինձ այնքան էլ ուժեղ չերևաց. ես հույս ունեի ժամ առաջ հասնել հետևյալ կայարան և հրամայեցի ավելի արագ քշել։

Կառապանը քշեց, բայց միշտ դեպի արևելք էր նայում։ Ձիերը վազում էին համընթաց։ Այնինչ, քամին ժամ առ ժամ սաստկանում էր։ Փոքրիկ ամպիկը դարձավ մի ահագին սպիտակ ամպ, որ դանդաղ բարձրանալով մեծացավ և աստիճանաբար բռնեց երկնքի երեսը։ Մանր ձյուն եկավ և հանկարծ՝ թափվեց առատ-առատ փաթիլներով։ Քամին ոռնաց. բուքն սկսվեց։ Մի ակնթարթում մութ երկինքը խառնվեց ձյան ծովի հետ։ Ամեն ինչ կորավ։ «Դե՛, բարին,— գոռաց կառապանը,— բանները բուրդ է, բուք-բորանն սկսվեց»...

Ես դուրս նայեցի կիբիտկայից—խավար էր և մրրիկ։ Քամին ոռնում էր այնպիսի կատաղի շվշվոցով, որ ասես շնչավոր էակ լիներ. ձյունը ծածկում էր ինձ ու Սավելիչին. ձիերը համրաքայլ առաջ էին գնում և շուտով կանգ առան։ «Ինչո՞ւ չես գնում»,—անհամբեր հարցրի ես կառապանին։—Ո՞նց գնամ,—պատասխանեց նա նստատեղից իջնելով.—առանց էն էլ հայտնի չէ, թե էս ուր եկանք. ճանապարհ չկա և չորս կողմը մութ մշուշ է։—Սկսեցի նախատել նրան։ Սավելիչը նրա կողմը բռնեց։ «Ասա ի՞նչ խելք էր՝ չլսեցիր նրան,—խոսում էր նա բարկացած.—կվերադառնայիր իջևանատուն, թեյ կխմեիր, առոք-փառոք կքնեիր մինչև լույս, բուքը կխաղաղվեր՝ կշարունակեինք ճանապարհը։ Էլ ո՞ւր ենք շտապում, էն էլի մի բան էր, թե հարսանիք գնայինք»։—Սավելիչն իրավացի էր։ Ճար չկար։ Ձյունը գալիս էր, հա՛ գալիս։ Կիբիտկայի մոտ արդեն ձյան ահագին կույտ էր գոյացել։ Ձիերը կանգնել էին գլուխները խոնարհած և երբեմն ցնցվում էին։ Կառապանը պտտվում էր շուրջը, պարապությունից լծասարքը կարգի բերելով։ Սավելիչը փնթփնթում էր. ես նայում էի ամեն կողմ՝ հուսալով բնակատեղի կամ ճանապարհի գոնե մի նշան տեսնել, սակայն՝ բացի բուքի խոլական պտույտներից, ոչինչ չկարողացա

զանազանել։ Հանկարծ ինչ-որ սև բան տեսա։ «Է՛յ, կառապան,— կանչեցի ես.— տես, ի՞նչ է այնտեղ սևին տալիս»։ Կառապանն սկսեց ուշի-ուշով դիտել։— «Աստված գիտի, բարին,— ասաց նա իր տեղը նստելով.— բեռ ասեմ՝ բեռ չէ, ծառ ասեմ՝ ծառ չէ. համա կասես շարժվում է։ Երևի—կամ գել է, կամ՝ մարդ»։

Ես հրամայեցի քշել դեպի անծանոթ առարկան, որ իսկույն ևեթ սկսեց դեպի մեզ շարժվել։ Երկու րոպեից հետո մենք հավասարվեցինք մի մարդու հետ։ «Հե՜յ, բարի մարդ,— ձայն տվեց նրան կառապանը։— Ասա՛, չգիտե՞ս ուր է ճանապարհը»։

— Ճանապարհը հենց էստեղ է. ես ամուր գետնի վրա եմ կանգնած,— պատասխանեց ճամփորդը,— բայց ի՞նչ օգուտ։

— Լսիր, շինակա՛ն,— ասացի ես նրան.— դու այս կողմերին ծանո՞թ ես։ Կհամաձայնե՞ս արդյոք ինձ մինչև օթևան հասցնելու։

— Էս տեղերն ինձ ծանոթ են,— պատասխանեց ճամփորդը.— փա՛ռք աստծո, էնքան ենք դես ու դեն գնացել որ։ Համա տեսնում ես, թե ի՛նչ եղանակ է. իսկույն կկորցնես ճանապարհը։ Լավ է էստեղ մնանք ու սպասենք։ Կարելի է թե բուքը հանդարտի և երկինքը պարզվի. էն ժամանակ ճանապարհը աստղերով կգտնենք

Նրա սառնարյունությունն ինձ սիրտ տվեց։ Ես արդեն որոշել էի ինձ աստծու կամքին հանձնելով գիշերել բաց տափաստանում, երբ հանկարծ ճամփորդն արագ շարժումով բարձրացավ, նստեց կիբիտկայի առջևի մասում և ասաց կառապանին. «Է՛յ փառք աստծու, բնակատեղը հեռու չի, ձիերի գլուխը աջ շուռ տուր ու քշիր»։— «Իսկ ինչի՞ աջ քշեմ,— հարցրեց կառապանը դժգոհությամբ։— Էդ որտեղ ես տեսնում ճանապարհը։ Թե, քեզանից ի՞նչ է գնում՝ ոչ ձին է քոնը, ոչ՝ ձիու սարքը.— քշի, հա՛ քշի»։— Ինձ թվաց, որ կառապանն իրավացի է. «Իսկապես,— ասացի ես.— ինչո՞ւ ես կարծում, որ բնակատեղը հեռու չի»։—

«Նրա համար, որ քամին էն կողմից փչեց,—պատասխանեց համփորդը,— և ես ծխի հոտ առա. ասել է թե գյուղը մոտիկ է»: Նրա ուշիմությունն ու նուրբ հոտառությունն ինձ ապշեցրեց: Կառապանին հրամայեցի քշել: Խոր ձյան միջով ձիերը դժվարությամբ էին քայլում: Կիբիտկան հանդարտ առաջ էր գնում մերթ բարձրանալով ձյունակույտերի վրա, մերթ՝ փոսերն ընկնելով և մեկ այս, մեկ այն կողմը շրջվելով: Դա նման էր ալեկոծ ծովում նավի լողալուն: Սավելիչը ախ ու վախ էր քաշում, ամեն րոպե իմ կողերին բախվելով: Ես իջեցրի կիբիտկայի խսիրը, փաթաթվեցի քուրքի մեջ և սկսեցի նիրհել՝ բուրանի երգի և դանդաղ երթի օրորով:

Մի երազ տեսա, որ հետո ես երբեք չկարողացա մոռանալ և որի մեջ մինչև հիմա էլ ինչ-որ մարգարեական բան եմ տեսնում, երբ նրա հետ համեմատում եմ իմ կյանքի տարօրինակ հանգամանքները: Ընթերցողն ինձ կների, քանի որ հավանորեն ինքն էլ փորձով գիտե, որ մարդ կարող է անձնատուր լինել սնահավատության, չնայած դեպի նախապաշարումները տածած ամեն տեսակ արհամարհանքը:

Ես գտնվում էի զգացմունքների և հոգու այն վիճակում, երբ իրականությունը տեղի տալով ցնորքներին, նրանց հետ ձուլվում է անուրջների աղոտ տեսիլների մեջ: Ինձ թվում էր, որ բուքը դեռ շարունակվում է և մենք դեռևս խարխափում ենք ձյունոտ անապատում... Հանկարծ՝ մի դարպաս տեսա և կիբիտկայով մտա մեր կալվածատիրական տան բակը: Առաջին միտքս այն երկյուղն էր, որ չլինի՞ թե հայրս բարկանա ինձ վրա՝ հայրենական հարկի տակ իմ ակամա վերադարձիս համար և չլինի՞ թե դա ընդունի որպես դիտավորյալ անհնազանդություն: Անհանգստությամբ դուրս ցատկեցի կիբիտկայից և տեսնեմ՝ տան մուտքի պատշգամբիկի մոտ ինձ դիմավորում է մայրս խորին վշտի արտահայտությամբ: «Սո՛ւս կաց,—ասում է նա ինձ,—հայրդ մահամերձ հիվանդ է և ցանկանում է հրաժեշտ տալ քեզ»:—Սարսափահար նրա հետևից քայլում եմ դեպի ննջարան: Տեսնեմ՝ սենյակը աղոտ լուսավորված է, անկողնի մոտ մարդիկ են

կանգնած տխուր դեմքերով։ Կամացուկ մոտենում եմ անկողնուն, մայրս փոքր ինչ բարձրացնում է ծածկոցը և ասում. «Անդրե՛յ Պետրովիչ, Պետրուշան եկավ. լսելով որ դու հիվանդ ես, նա վերադարձել է. օրհնի՛ր նրան»։ Ես ծունկ չոքեցի և աչքերս սևեռեցի դեպի հիվանդը. Եվ ի՜նչ... Հորս փոխարեն, տեսնեմ՝ անկողնում պառկած է մի սևամորուք մուժիկ[20] և ուրախ-ուրախ ինձ է նայում։ Տարակուսանքի մեջ դառնում եմ մորս, ասելով նրան.—«Այս ի՞նչ է նշանակում։ Սա հայրիկս չէ։ Եվ ինչո՞ւ պետք է ես մուժիկի օրհնությունը խնդրեմ»։—«Միևնույն է, Պետրուշա,—պատասխանում է մայրս,—նա քո հարսանեհայրն է, համբուրի նրա ձեռքը և նա թող օրհնի քեզ»... Ես չէի համաձայնում։ Այն ժամանակ մուժիկը վեր թռավ անկողնից, գոտկից դուրս քաշեց կացինը և սկսեց օդի մեջ այս ու այն կողմը թափահարել։ Ուզում էի փախչել... և՝ չկարողացա, սենյակը լցվեց մեռած մարմիններով. դրանց դիպչելիս ես սայթաքում էի և ոտքս սահում էր արյան լճակների մեջ... Սարսափելի մուժիկը սիրալիր ինձ իր մոտ էր կանչում, ասելով. «Մի՛ վախի, արի օրհնեմ քեզ»... Սոսկումն ու տարակուսանքը պատեցին ինձ... Եվ այդ րոպեին զարթնեցի. ձիերը կանգնել էին. Սավելիչը բռնել էր ձեռքս, ասելով. «Դուրս արի, տե՛ր իմ. տեղ հասանք»։

— «Ո՞ւր հասանք»,—հարցրի ես աչքերս տրորելով.— «Իջևանատուն. աստված օգնեց մեզ, եկանք, հե՛նց ցանկապատին դեմ առանք։ Դուրս արի, տեր իմ, շո՛ւտ, և տաքացիր»։

Ես դուրս եկա կիբիտկայից։ Բուքը դեռ շարունակվում էր, թեև՝ ավելի նվազ ուժով։ Այնպես մութն էր, որ աչք աչքին չէր տեսնի։ Իջևանատերը մեզ դիմավորեց դարբասի մոտ, լապտերը փեշի տակ բռնած և ինձ առաջնորդեց վերնատուն, ուր նեղվածք էր, սակայն՝ բավական մաքուր. մարխի մի ձողիկ լուսավորում էր այն։ Պատից կախված էր մի հրացան և կազակի բարձրագիր գլխարկը։

Իջևանատերը՝ ծագումով Յաիցկի կազակ[21], վաթսուն

տարեկան մի մուժիկ էր, դեռևս թարմ ու առույգ։ Ինձնից հետո ներս մտավ Սավելիչը, իր հետ բերելով մեր փոքր արկղը. Նա կրակ պահանջեց, որպեսզի թեյ պատրաստի, որ երբեք այնքան հարկավոր չթվաց ինձ, որքան այդ պահին։ Իջևանատերը գնաց պատրաստություն տեսնելու։

— Իսկ ո՞ւր մնաց մեր առաջնորդը,—հարցրի ես Սավելիչին։

«Էստեղ եմ, ձերդ բարեծննդություն»,—լսվեց նրա ձայնը վերևից։

Ես նայեցի վերևի թախտին ու տեսա մի սև մորուք և մի զույգ փայլուն աչքեր։—«Հը, ի՞նչ է մրսեցի՞ր»։—«Մարդ ի՞նչպես չմրսի էս մի մաշված արմյակի[22] մեջ։ Քուրք ունեի, համա մեղքս ինչ թաքցնեմ,—երեկ իրիկուն օղեվաճառի մոտ գրավ դրի՝ ասի ցուրտը էնքան էլ խիստ չի»։ Այդ րոպեին ներս մտավ իջևանատերը եռացող ինքնաեռը ձեռքին։ Մի բաժակ թեյ առաջարկեցի մեր առաջնորդին. մուժիկը ցած իջավ թախտից։ Նրա արտաքինն ուշագրավ երևաց ինձ։ Կլիներ քառասուն տարեկան, միջահասակ էր, նիհարավուն և լայնաթիկունք։ Նրա սև մորուքի մեջ տեղ-տեղ սպիտակ մազեր էին երևում։ Մեծ և ժիր աչքերն անընդհատ շարժման մեջ էին։ Դեմքը բավական հաճելի, սակայն խորամանկ արտահայտություն ուներ։ Մազերը խուզված էին բոլորակ. հագին մի պատառոտված արմյակ ուներ և թաթարական շալվար։ Մի բաժակ թեյ տվի նրան։ Նա համն առավ և դեմքը կնճռոտեց։ «Ձե՛րդ բարեծննդություն, շնորհ արեք՝ հրամայեք՝ մի բաժակ արաղ տան ինձ. թեյը կազակների սիրած խմիչքը չէ»։ Ես հաճույքով կատարեցի նրա ցանկությունը։ Իջևանատերը փոքրիկ պահարանից հանեց շտոֆը և բաժակը, մոտեցավ նրան և երեսին նայելով. «Էհե՜, — ասաց նա,—էլի դու երևացիր մեր կողմերում։ Ո՞րտեղից էգպես, աստուծով»։—Առաջնորդը խորհրդավոր կերպով աչքով արեց նրան և ասացվածքով պատասխանեց. «Բանջարանոցում թռչում, կանեփ էի կտցում, տատիկը քար նետեց, համա՝ չկպավ։ Է՛, ձերոնք ի՞նչ հալի են»։

—Մերոնց ի՞նչն ես հարցնում,—պատասխանեց իջևանատերը, շարունակելով այլաբանական խոսակցությունը։—Էն է, ուզում էին իրիկնաժամի զանգերը տան, համա իրիցկինը չի թողնում. տերտերը հյուր է գնացել, սատանաները գերեզմանոցում են»։—«Սո՛ւս կաց, քեռի՛,—առարկեց իմ շրջմոլիկը,—անձրև որ գա, սունկ էլ կլինի, իսկ որ սունկ եղավ՝ կլինի և կողովը։ Իսկ հիմա՝ (այստեղ նա նորից աչքով արեց) կացինդ գոտիկդ խրի—անտառապահը ման է գալիս։ Ձե՛րդ բարեծննդություն, ձեր կենացը»։—Այդ խոսքերն ասելով նա վերցրեց բաժակը, խաչակնքեց և մի շնչով խմեց։ Հետո ինձ գլուխ տվեց ու վերադարձավ իր տեղը։

Գողերի լեզվով արած այդ խոսակցությունից այն պահին ես ոչինչ չկարողացա հասկանալ, սակայն հետո արդեն գլխի ընկա, որ խոսքը Յաիցկի զորքի գործերի մասին էր, որը այդ ժամանակ նոր էր խաղաղացվել 1772 թվի բունտից[23] հետ։ Սավելիչը մեծ անբավականությամբ էր լսում նրանց։ Կասկածանքով նա մեկ իջևանատիրոջն էր նայում, մեկ՝ առաջնորդին։ Իջևանատունը, կամ այնտեղի լեզվով՝ ումետը, ճանապարհից դուրս էր, տափաստանում, ամեն գյուղից հեռու և շատ նման էր ավազականոցի։ Սակայն ճարներս ի՞նչ էր։ Ճանապարհը շարունակելու մասին մտածել անգամ չէր կարելի։ Սավելիչի անհանգստությունն ինձ մեծ զվարճություն էր պատճառում։ Մինչ այս, մինչ այն՝ ես պատրաստվեցի գիշերելու և պառկեցի երկար նստարանի վրա։ Սավելիչը որոշեց քաշվել վառարանի վրա, իջևանատերը պառկեց հատակին։ Շուտով ամբողջ խրճիթը խռմփաց և ես մեռածի պես քնեցի։

Առավոտյան բավական ուշ զարթնելով տեսա, որ բորանը հանդարտվել է։ Արևը փայլում էր։ Անծայրածիր տափաստանի վրա ձյունը փայլում էր շլացող շղարշով։ Ձիերը լծել էին։ Ես վճարեցի իջևանատիրոջը, որը մեզանից այնպիսի չափավոր վարձ վերցրեց, որ մինչև իսկ Սավելիչը չվիճեց նրա հետ և հակառակ իր սովորության չսկսեց սակարկել ու նրա երեկվա կասկածներն իսպառ փարատվե-

ցին։ Ես մոտ կանչեցի առաջնորդին, շնորհակալություն հայտնեցի նրա ցույց տված օգնության համար և Սավելիչին հրամայեցի կես-մանեթ տալ նրան՝ որպես արաղի փող։ Սավելիչը հոնքերը կիտեց։ «Կես-մանեթ արաղի համա՞ր,— ասաց նա, — էդ ի՞նչ խաբար է։ Նրա համար, որ դու բարեհաճեցիր նրան հետդ մինչև իջևանատո՞ւն հասցնել։ Կամքը քոնն է, տեր իմ, համա մենք ավելորդ կես-մանեթանոցներ չունենք։ Ամենքին որ արաղի փող տանք, էդպես ինքներս շուտով սոված կմնանք»։ Ես չէի կարող վիճել Սավելիչի հետ։ Համաձայն իմ խոստման, բոլոր դրամը լիովին գտնվում էր նրա տնօրինության տակ։ Սակայն ես դժգոհ էի, որ չեմ կարողանում երախտահատույց լինել մի մարդու, որը ինձ փրկեց եթե ոչ փորձանքից, համենայն դեպս մի շատ անհաճո դրությունից։ Լավ,—ասացի ես սառնարյուն.— եթե չես ուզում կես-մանեթ տալ, ապա հանիր նրա համար իմ շորերից մի որևէ բան։ Նա շատ թեթև է հագնված։ Տո՛ւր նրան իմ նապաստակի մուշտակը։

«Ողորմա՜ծ տեր, Պյոտր Անդրեյիչ,—ասաց Սավելիչը։— Նրա ինչի՞ն է պետք քո նապաստակի մուշտակը։ Այդ շունը առաջին պատահած կաբակում[24] արաղի կտա»։

— Ծերո՛ւկ, էդ մեկն արդեն քո ցավելու բանը չէ,— ասաց իմ շրջմոլիկը,—կխմեմ թե չէ։ Նորին բարեծննդությունն ինձ նվեր է տալիս իր հագի մուշտակը, նրա աղայական քեֆն էդպես է ուզում, իսկ քո ծառայական գործն է՝ չվիճել և լսել նրան։

«Դու աստծուց չես վախենում, ավազա՛կ,—պատասխանեց նրան Սավելիչը բարկացած ձայնով։—Տեսնո՞ւմ ես, որ երեխի խելքը բան չի կտրում, իսկ դու օգտվելով նրա միամտությունից, ուրախ ես նրան պլոկելու։ Քու ինչի՞ն է պետք աղայական մուշտակը։ Դու զոռով էլ չես կարա վրա քաշիլ քո էդ անիծյալ ուսերից»։

— Խնդրում եմ խելքիդ զոռ չտաս,—ասացի ես իմ խնամարկուին.—իսկույն ևեթ մուշտակը բեր էստեղ։

«Տե՜ր իմ աստված,—հառաչեց իմ Սավելիչը։—Նապաս-

տակի մուշտակը համարյա թե բոլորովին նոր է։ Գլուխը քարը, ո՞ւր էր, թե մի լավ մարդու էինք տվել և ոչ թե էս հարբեցող տկլորին»։

Այնուամենայնիվ նապաստակի մուշտակը հայտնվեց։ Գեղջուկը տեղնուտեղն սկսեց իր վրա չափել այն։ Եվ իսկապես. մուշտակը, որ ինձ արդեն փոքր էր գալիս, նրա համար մի քիչ նեղ էր։ Սակայն, նա մի կերպ հնար գտավ և հագավ այն, կարերը տրաքացնելով։ Քիչ մնաց, թե Սավելիչը լաց լիներ, լսելով թե թելերն ինչպես են ճայթում։ Շրջմոլիկը չափազանց գոհ էր իմ նվերից։ Նա ինձ մինչև կիբիտկա ճանապարհ դրեց և խոնարհ գլուխ տալով ասաց. «Շնորհակալ եմ, ձերդ բարեծննդություն։ Ձեր լավության համար աստված ձեզ հատուցի։ Հավիտյան չեմ մոռանա ձեր շնորհները»։ — Նա գնաց իր ճամփով, իսկ ես իմ ուղին շարունակեցի, ուշք չդարձնելով Սավելիչի զայրույթի վրա և շուտով մոռացա թե՛ նախորդ օրվա բուքը, թե՛ իմ առաջնորդին և թե՛ նապաստակի մորթուց կարած մուշտակը։

Օրենբուրգ հասնելով ուղղակի ներկայացա գեներալին։ Ես տեսա բարձրահասակ մի տղամարդ, որը սակայն ծերությունից կորացած էր։ Նրա երկար մազերը բոլորովին ճերմակ էին։ Հին ու խունացած համազգեստը հիշեցնում էր Աննա Իոաննովնայի[25] ժամանակի ռազմիկներին, իսկ նրա խոսակցական լեզվի մեջ որոշակի նկատելի էր գերմանական առոգանությունը։ Ես նրան հանձնեցի հորս նամակը։ Նրա անունը լսելով նա արագ ինձ նայեց. «Ասֆա՜ց իմ, — ասաց նա։ Կասես թե երեկ էր, որ Անդրեյ Պետրովիչը դեռ քո տարիքի մարդ էր, իսկ հիմա տես, թե ինչ մի կտրիճ տղա ունի։ Ա՜խ, շամանակ, շամանակ»։—Նա բացեց նամակը և սկսեց կիսաձայն կարդալ, իր նկատողություններն անելով. «Ողորմած տեր Անդրեյ Կարլովիչ, հուսով եմ, որ ձեր գերազանցությունը...» սա ի՛նչ ցեականություն է։ Թո՛ւ, չի էլ ամաչում։ Իհարկե, դիսցիպլինան առաջին բանն է, բայց մի՞թե այսպես են գրում հին կամռադին[26]... «Ձերդ գերազանցությունը չի մոռացել»... հմ... և... երբ... հանգուցյալ

ֆելդմարշալ Մին[27]... արշավանքի... ինչպես և... Կարոլինկային»... էհե՜, բրուդեր[28]. նա դեռ հիշում է մեր հին չարաճճիությունները: «Հիմա գանք գործին... Ձեզ մոտ իմ փոքր որդուն»... հմ... «պահել ոզնու ցեռնոցներում»[29]... Ի՞նչ ասել է ոզնու ցեռնոցներ: Դա երևի ռուսական ասացվածք է... Ի՞նչ ասել է «պահել ոզնու ցեռնոցներում»— կրկնեց նա ինձ դառնալով:

— Դա նշանակում է,—պատասխանեցի ես նրան որքան կարելի է անմեղ դեմքով.—հետս սիրալիր վարվել՝ ոչ այնքան խիստ, որքան կարելի է ազատ թողնել ինձ,—այդ է նշանակում պահել ոզնու ձեռնոցներում:

«Հ՛մ, հասկանում եմ... «և նրան ազատ չթողնել»... չէ՞, երևում է՝ ոզնու ցեռնոցները ուրիշ բան են նշանակում: «Սրա հետ և... նրա պասպորտը»... Հապա ո՞ւր է պասպորտը: Ահա, սա է... «տեղեկացնել Սեմյոնովսկի գնդին»... Լավ, լավ, ամեն ինչ կարվի... «Ինձ թույլ կտաս առանց աստիճանի զանազանության գրկել քեզ և... հին ընկերն ու բարեկամը»—աա՜, վերջապես գլխի ընկավ... և այլն, և այլն...—«Է, սիրելիս,—ասաց նա նամակը կարդալուց հետո և մի կողմ դնելով իմ պասպորտը,—ամեն ինչ կանենք. սպայի աստիճանով դու կտեղավորվես *** գունդը և որպեսզի ժամանակ չկորցնես, ապա վաղն ևեթ մեկնիր Բելոգորսկի բերդը, ուր դու կլինես կապիտան Միրոնովի՝ մի բարի և ազնիվ մարդու զորախմբում: Այնտեղ դու իսկական ծառայության մեջ կլինես, կվարժվես դիսցիպլինային: Օրենբուրգում դու գործ չունես անելու. թրև գալը վնաս է երիտասարդ մարդուն: Իսկ այսօր, համեցեք ինձ մոտ ճաշելու»:

«Քանի գնաց բանս ձախողվեց,—մտածում էի ես. ա՛յ թե ուր բերեց ինձ այն, որ ես համարյա թե մորս արգանդում արդեն գվարդիայի սերժանտ էի: Ո՞ւր հասցրեց դա ինձ: *** գունդը և Կիրգիզ-Կայսացկի[30] տափաստանների սահմանի վրա գտնվող մի խուլ բե՜րդ...» Ես ճաշեցի Անդրեյ Կարլովիչի մոտ. երեքով էինք նրա ծեր ադյուտանտի հետ: Գերմանական խիստ խնայողությունն էր իշխում նրա սեղանի

վրա և ես կարծում եմ, որ ինձ բերդապահ զորքի մեջ շտապ ուղարկելու պատճառը մասամբ և այն էր, որ նա վախենում էր Սրբեմնակի ավելորդ հյուր տեսնել իր՝ մենակյացի սեղանի շուրջը։ Մյուս օրը հրաժեշտ տվի գեներալին և մեկնեցի իմ նշանակման վայրը։

ԳԼՈՒԽ III

ԲԵՐԴԸ

Մենք ամրոցում ենք ապրում,
Հաց ենք ուտում, ջուր խմում,
Հենց որ դաժան թշնամին
Գա աչք գցի մեր հացին—
Հյուրին խնջույք կսարքենք՝
Կարտեչով [31] *թոփ կլցնենք։*

Զինվորների երգ

Հնավանդ մարդիկ էին, հայր իմ։

«Նեդորոսլ» [32]

Բելոգորսկի բերդը գտնվում էր Օրենբուրգից քառասուն վերստի վրա։ Ճանապարհն ընկած էր Յաիկի զառիվայր ափով։ Գետը դեռևս չէր սառել և նրա կապարագույն ալիքները տխուր սևին էին տալիս սպիտակ ձյունով պատած միապաղաղ ափերին։ Գետի այն կողմը տարածվում էին Կիրգիզյան տափաստանները։ Ես խորացա մտքերիս մեջ, մեծ մասամբ՝ տխրալի։ Կայազորային կյանքը քիչ գրավչություն ուներ ինձ համար։ Ես ջանում էի պատկերացնել կապիտան Միրոնովին, իմ ապագա պետին և տեսնում էի նրան որպես խիստ, ցասկոտ մի ծերունի, որը բացի իր ծառայությունից, ուրիշ բան չգիտե և պատրաստ է ամեն մի չնչին առիթով ինձ կալանքի ենթարկել, կապելով լոկ հաց ու ջրի։ Մինչ այս, մինչ այն՝ սկսեց մթնել։ Մենք բավական արագ էինք ընթանում։ «Բերդը հեռո՞ւ է,—հարցրի ես իմ

կառապանին։— «Մոտիկ է,—պատասխանեց նա։—Հրե՛ն, արդեն երևում է»։—Ես նայեցի ամեն կողմ, ակնկալելով տեսնել ահարկու բաստիոններ[33], աշտարակներն ու պարիսպը, բայց ոչինչ չտեսա, բացի մի փոքրիկ գյուղից, որ շրջապատված է ցանկապատով։ Գյուղի մի ծայրին երեք թե չորս խոտադեզեր կային, կիսով չափ ձյունով ծածկված, մյուս կողմը՝ մի ծռմռված քամաղաց, ծույլ կախված անշուք թևերով։ «Հապա բերդը ո՞ւր է»,—հարցրի ես զարմանքով։—«Հրե՛ն, էլի»,—պատասխանեց կառապանը, ցույց տալով գյուղակը, և այդ խոսքերի հետ մենք բերդը մտանք։ Բերդի դռների մոտ մի հին, թուջե թնդանոթ տեսա. փողոցները նեղ էին և ծուռումուռ, խրճիթները ցած և մեծ մասամբ հարդով ծածկված։ Ես հրամայեցի քշել դեպի բերդապետի տունը և մի րոպեից հետո մեր կիբիտկան կանգ առավ փայտե տնակի առաջ, որ շինված էր բարձր տեղում, իր նման փայտաշեն եկեղեցու մոտ։

Ինձ ոչ ոք չդիմավորեց։ Ես մտա հաշտը և բաց արի նախասենյակի դուռը։ Մի ծեր ինվալիդ, սեղանին նստած, կապույտ կտորից կարկատան էր ձգում իր կանաչ համազգեստի արմունկին։ Ես հրամայեցի նրան զեկուցել իմ մասին։ «Մտի՛ր, տեր իմ,—պատասխանեց ինվալիդը.—մերոնք տանն են»։ Ես մտա մի մաքուր սենյակ, կահավորված հին եղանակով։ Անկյունում ամանեղենի պահարանն էր. պատից կախված էր սպայական դիպլոմը՝ ապակու տակ և շրջանակի մեջ։ Նրա մոտ աչքի էին ընկնում էժանագին նկարներ, որ պատկերում էին Կիստրինի և Օչակովի առումը[34], ինչպես և հարսնացու ընտրելն ու կատվի թաղումը[35]։ Պատուհանի մոտ նստած էր մի պառավ կին՝ հագին քաթիպա, գլխին թաշկինակ կապած։ Նա կծկում էր թելի կծիկը, որ ձեռքերին օղակած պահում էր սպայական համազգեստ հագած մի աչքը կույր ծերունի։ «Ի՞նչ կկամենայիք, եղբայրս»[36], — հարցրեց պառավը շարունակելով իր գործը։ Ես պատասխանեցի, որ ծառայության եմ եկել և ըստ իմ պարտավորության ներկայանում եմ իմ պարոն կապիտանին և այդ խոսքերի հետ

այն է ուզում էի դիմել միաչքանի ծերուկին, կարծելով թե բերդապետը նա է, սակայն տանտիրուհին ընդհատեց իմ անգիր արած ճառը։ «Իվան Կուզմիչը տանը չէ,—պատասխանեց նա.— հյուր է գնացել հայր Գերասիմի մոտ. ասենք, միևնույն է, եղբայրս,—ես նրա տիրուհին եմ։ Խնդրեմ, բարով եկար, հազար բարի։ Նստիր, եղբայրս»։ Նա ձայն տվեց աղջկան և նրան հրամայեց կանչել ուրյադնիկին։ Ծերուկն իր միակ աչքով հետաքրքրությամբ դիտում էր ինձ։ «Համարձակվում եմ հարցնել,—ասաց նա,—դուք ո՞ր գնդումն եք հաճել ծառայել»։ Ես բավարարեցի նրա հետաքրքրությունը։ «Համարձակվում եմ հարցնել,—շարունակեց նա,— իսկ ինչո՞ւ հաճեցիք գվարդիայից դուրս գալ և մտնել բերդապահ զորքի մեջ»։ Ես պատասխանեցի, որ, այդպես էր իմ պետի կամքը։ «Երևի թե գվարդիայի սպային անվայել արարմունքների համա՞ր»,—շարունակեց անխոնջ հարց ու փորձ անողը։—«Հերի՛ք է դատարկ դուրս տաս,—ասաց նրան կապիտանի կինը.—դու տեսնում ես, որ երիտասարդը ճանապարհին հոգնել է, նա գլուխ չունի քեզ հետ խոսելու... (ձեռքերդ ուղի՛ղ բռնիր...)։ Իսկ դու, եղբայրս,—շարունակեց նա ինձ դառնալով,—մի տխրի, որ քեզ նետել են մեր այս խուլ տեղերը։ Դու ոչ առաջինն ես, ոչ՝ վերջինը։ Կհամբերես, կսիրես։ Շվաբրինը, Ալեքսեյ Իվանիչը ահա հինգ տարի է, որ տեղափոխված է մեզ մոտ—մարդասպանության համար։ Աստված է իմանում, թե ինչ մեղք է նրա միտքը պղտորել. արի տես, որ նա քաղաքից դուրս է գնում մի պորուչիկի հետ. հա՛, թրերն էլ հետներն են վերցնում ու մեկ էլ՝ սկսում են միմյանց ծակոտել, իսկ Ալեքսեյ Իվանիչը թրով սպանում է պորուչիկին, այն էլ՝ երկու վկաների ներկայությամբ։ Ինչ պիտի անես, մարդ մեկ էլ տեսնում է, որ մեղքի մեջ է ընկել»։

Այդ րոպեին ներս մտավ ուրյադնիկը՝ երիտասարդ ու բարեկազմ մի կազակ։ «Մակսի՛միչ,—ասաց նրան կապիտանի կինը։—Պարոն սպային տար բնակարան հատկացրու, միայն թե՝ մաքուրը»։—«Լսում եմ, Վասիլիսա Եգորովնա,—

պատասխանեց ուրյադնիկը։—Արդյոք լավ չի՞ լինի նորին բարեծննդությանը տեղավորել Իվան Պոլեժաևի մոտ»։—«Ստում ես, Մաքսիմիչ,—ասաց կապիտանի կինը.—Պոլեժաևի մոտ առանց այն էլ նեղվածք է, դե նա իմ կնքահայրն է և գիտե, որ մենք իր պետերն ենք։ Պարոն սպային տար.. Ի՞նչպես է ձեր անուն-հայրանունը, եղբայրս»։—«Պյոտր Անդրեյիչ»։—«Պյոտր Անդրեյիչին տար Սեմյոն Կուզովի մոտ։ Սրիկան իր ձին իմ բանջարանոցն էր թողել։ Հը, Մաքսիմիչ, ամեն ինչ բարեհաջո՞ղ է»։

— Ամեն ինչ, փառք աստծո, խաղաղ է,—պատասխանեց կազակը.—միայն թե կապրալ[37] Պրոխորովը բաղնիքում կռվել է Ուստինյա Նեգուլինայի հետ մի աման տաք ջրի համար։

«Իվան Իգնատիչ,—ասաց կապիտանի կինը մի աչքով կույր ծերուկին։—Քննիր Պրոխորովի և Ուստինյայի գործը՝ ո՛վ է արդար, ով՝ մեղավոր և երկուսին էլ պատժիր։ Դե՛հ, Մաքսիմիչ, գնա, աստված քեզ հետ։—Պյոտր Անդրեյիչ, Մաքսիմիչը ձեզ կտանի ձեր բնակարանը»։

Ես հրաժեշտ տվի։ Ուրյադնիկն ինձ տարավ գետի բարձր ափին կանգնած, բերդի հենց ծայրին գտնվող խրճիթը։ Խրճիթի կեսը բռնել էր Սեմյոն Կուզովի ընտանիքը, մյուս կեսն ինձ հատկացրին։ Դա մի բավական մաքուր սենյակ էր, միջնորմով կիսած։ Սավելիչը սկսեց կարգի բերել մեր իրերը, ես սկսեցի դուրս նայել նեղլիկ պատուհանից։ Իմ առջև ընկած էր տխուր տափաստանը։ Շեղակի կանգնած էին մի քանի խրճիթներ, փողոցում մի քանի հավեր էին ման գալիս։ Մի պառավ կին տան առաջ տաշտի մոտ կանգնած, կանչում էր խոզերին, որոնք նրան պատասխանում էին ուրախ խռնչյունով։ Ահա թե ի՜նչ տեղում էի ես դատապարտված անցկացնել իմ երիտասարդությունը։ Թախիծն ինձ պատեց. ես հեռացա պատուհանից և առանց ընթրիքի պառկեցի քնելու, ուշադրություն չդարձնելով Սավելիչի հորդորանքներին, որը սրտաբեկ ձայնով կրկնում էր. «Տե՜ր իմ աստված. ոչինչ չի ուզում ուտել... Հապա ի՞նչ կասի տիրուհին, եթե երեխան հիվանդանա»։

Մյուս օրը առավոտյան ես նոր էի սկսել շորերս հագնել, երբ իմ սենյակը մտավ մի երիտասարդ սպա, հասակով ոչ բարձր, թուխ և խիստ տգեղ, բայց՝ չափազանց կենդանի դեմքով։ «Ներեցեք ինձ,—ասաց նա ֆրանսերեն,—որ ես առանց ձևականության եկել եմ ձեզ հետ ծանոթանալու։ Երեկ իմացա ձեր գալը. մարդկային դեմք տեսնելու ցանկությունն ի վերջո այնպես գրավեց ինձ, որ ես չհամբերեցի։ Այս վիճակը դուք կհասկանաք, երբ մի առ ժամանակ կապրեք այստեղ»։ Ես գլխի ընկա, որ նա մենամարտի հետեվանքով գվարդիայից դուրս գրված սպան է։ Մենք իսկույն ևեթ ծանոթացանք։ Շվաբրինն այնքան էլ հիմար չէր։ Նրա խոսակցությունը սրամիտ էր և հետաքրքիր։ Մեծ աշխուժով նա ինձ նկարագրեց բերդապետի ընտանիքը, նրա շրջապատը և վայրը, ուր ինձ բերել, հասցրել էր իմ ճակատագիրը։ Ես անկեղծ սրտով ծիծաղում էի, երբ ներս մտավ այն ինվալիդը, որ բերդապետի նախասենյակում իր համազգեստն էր կարկատում, և Վասիլիսա Եգորովնայի անունից ինձ ճաշի հրավիրեց նրանց մոտ։ Շվաբրինը ցանկություն հայտնեց ինձ հետ միասին գնալու։

Բերդապետի տանը մոտենալիս փոքրիկ հրապարակի վրա մենք տեսանք քսանի չափ ծեր ինվալիդներ երկար ծամերով և եռանկյունի գլխարկներ ծածկած։ Նրանք ճակատ էին կազմել։ Առջևում կանգնած էր բերդապետը՝ մի առույգ և բարձրահասակ ծերունի, գլխին թասակ և հագին դեղնավուն խալաթ։ Մեզ տեսնելով նա մոտեցավ, մի քանի սիրալիր խոսքեր ասաց ինձ և նորից սկսեց հրամաններ տալ։ Մենք կանգ առանք, որ դիտենք վարժությունը, սակայն նա խնդրեց մեզ գնալ Վասիլիսա Եգորովնայի մոտ, խոստանալով մեր հետևից ինքն էլ գալ։ «Իսկ այստեղ,—ավելացրեց նա,—նայելու բան չունեք»։

Վասիլիսա Եգորովնան մեզ ընդունեց պարզ ու սրտաբաց և ինձ հետ վարվեց որպես վաղեմի ծանոթ։ Ինվալիդը և Պալաշկան սեղանն էին սարքում։ «Այս ի՞նչ է, Իվան Կուզ-

մինչև այսօր խելքը ուսումի է տվել,— ասաց բերդապետի կինը։— Պալա՛շկա, բարինին ճաշի կանչիր։ Իսկ Մաշան ու՞ր է»։— Այդ րոպեին ներս մտավ տասնութ տարեկան մի աղջիկ, կլոր, կարմիր երեսով, բաց-շիկահեր մազերով, որ կոկ սանրել էր ականջների հետևը, որոնք սաստիկ վառվելիս լինեին։ Առաջին հայացքից նա ինձ այնքան էլ դուր չեկավ։ Ես նրան նայում էի կանխակալ կարծիքով. Մաշային Շվաբրինն ինձ նկարագրել էր որպես մի կատարյալ հիմար աղջկա։ Մարիա Իվանովնան նստեց անկյունում և սկսեց կար անել։ Մինչ այս, մինչ այն՝ մեզ բշչի մատուցին։ Վասիլիսա Եգորովնան ամուսնուն չտեսնելով, Պալաշկային երկրորդ անգամ ուղարկեց նրա հետևից։ «Բարինին կասես, որ ախր հյուրերը սպասում են, կերակուրը կսառչի. փառք աստծո, ուսուցումը ձեռքից չի փախչի. դեռ այնքա՜ն գոռա որ»։— Կապիտանը շուտով հայտնվեց միաչքանի ծերուկի ուղեկցությամբ։ «Սա ի՞նչ բան է, հեր օրհնած,— ասաց նրան կինը։— Ճաշը վաղուց դրել ենք, համա քեզ կանչել չի լինում»։— «Լսո՞ւմ ես, Վասիլիսա Եգորովնա,— պատասխանեց Իվան Կուզմիչը ,— ծառայությունով էի զբաղված, զինվորիկներին էի վարժեցնում»։

«Է՛, հերիք եղավ,— առարկեց կապիտանի կինը։— Հենց մի գլուխ այն եմ լսում, որ զինվորներին վարժեցնում ես։ Ոչ նրանք ծառայություն սովորող են, ոչ էլ դու մի բան ես հասկանում դրանից։ Լավ էր, թե տանը նստեիր և աստծուն աղոթք անեիր, այդպես ավելի լավ կլիներ։ Թանկագին հյուրեր, համեցեք նստեք»։

Նստեցինք ճաշի։ Վասիլիսա Եգորովնան չէր լռում և ոչ մի րոպե ու հարցերի տարափ տեղաց գլխիս. ովքե՞ր են իմ ծնողները, կենդանի՞ են արդյոք, ո՞րտեղ են ապրում նրանք և ի՞նչ հարստության տեր են։ Լսելով, որ հայրս երեք հարյուր գյուղացիներ ունի՝ «միթե հե՞շտ է,— ասաց նա.— ա՜յ թե հարուստ մարդիկ կան աշխարհում։ Իսկ մենք, եղբայրս, ունենք-չունենք մի հոգի ունենք՝ աղջիկ Պալաշկան, բայց

գե փառք աստծու, քիչ-միչ ապրում ենք։ Ցավն այն է մենակ՝ Մաշան մարդու տալու է, իսկ ունեցած օժիտն ի՞նչ է՝ մի խիտ սանր, մի ավել[38] ու մեկ էլ մի շահի փող (մեղա՜ քեզ աստված)—բաղնիք գնալու համար։ Լավ է, թե գտնվի մի բարի մարդ, թե չէ՝ հավիտյանս տանը կմնա իբրև հարսնացու»։ Ես նայեցի Մարյա Իվանովնային. նա ամբողջովին կարմրեց և մինչև իսկ արցունքներ գլորվեցին նրա ափսեի մեջ։ Ես խղճացի նրան և շտապեցի խոսակցությունը փոխել։ «Լսել եմ,—ասացի ես բավական անտեղի,—որ բաշկիրները պատրաստվում են հարձակում գործել ձեր բերդի վրա»։—«Այդ ո՞ւմից ես լսել, հեր օրհնած»,—հարցրեց Իվան Կուզմիչը։—«Օրենբուրգում ինձ այդպես ասացին»,—պատասխանեցի ես։ «Դատարկ խոսքեր են,—ասաց բերդապետը։—Մեզանում վաղուց է, որ ոչինչ չի լսվում։ Բաշկիրները վախկոտ ժողովուրդ են, կիրգիզներին էլ լավ դաս ենք տվել։ Հազիվ թե մեզ վրա հարձակվեն։ Իսկ թե հարձակվեն, մի այնպես հարված տամ նրանց, որ տաս տարով խաղաղվեն»։—«Իսկ դուք չե՞ք վախենում,—շարունակեցի ես, դիմելով կապիտանի կնոջը,—մնալ այսպիսի վտանգների ենթակա բերդում»։—«Սովորություն է դարձել, եղբայրս,—պատասխանեց նա։—Քսան տարի կլինի, որ մեզ գնդից տեղափոխել են այստեղ և աստված գիտե, թե ինչպես էի վախենում այդ անիծյալ անհավատներից։ Պատահում էր, հենց որ տեսնում էի լուսանի մորթուց կարած նրանց գդակներն ու լսում էի նրանց ճղճղոցը, հավատում ես, եղբայր, սիրտս փորս էր ընկնում։ Բայց հիմա՜ այնպես եմ սովորել, որ տեղիցս էլ չեմ շարժվի, եթե գան մեզ ասեն, թե չարագործները վխտում են բերդի մոտերքում»։

«Վասիլիսա Եգորովնան քաջարի կին է,—ծանր ու լուրջ նկատեց Շվաբրինը։—Իվան Կուզմիչը կարող է հաստատել այդ»։

«Այո՛, գիտե՞ս,—ասաց Իվան Կուզմիչը.—իմ կինը վախկոտներից չէ»։

«Իսկ Մարյա Իվանովնա՞ն,—հարցրի ես.—նա է՞լ ձեզ նման արի է»։

«Մաշան արի՞,—պատասխանեց նրա մայրը։—Ո՛չ, Մաշան վախկոտ է, մինչև հիմա էլ նա չի կարողանում լսել հրացանի կրակոցը. հենց իսկույն կդողա։ Իսկ երբ երկու տարի առաջ իմ անվանակոչության օրը բա՛ն հնարեց Իվան Կուզմիչը՝ կրակել մեր թնդանոթից, իմ աղավնյակս քիչ էր մնում վախից այն աշխարհը գնար։ Այդ օրից էլ չենք կրակում անիծյալ թնդանոթը»։

Մենք վեր կացանք։ Կապիտանն ու նրա կինը գնացին քնելու, իսկ ես գնացի Շվաբրինի մոտ, որի հետ և անցկացրի ամբողջ երեկոն։

ԳԼՈՒԽ IV

ՄԵՆԱՄԱՐՏԸ

—Դե՛հ, խնդրեմ պա՛հիր քո պոլիտուրան[39]
Տես՝ ինչպես կծակեմ ես քո ֆիգուրան։
ԿՆՅԱԺՆԻՆ

Անցավ մի քանի շաբաթ և իմ կյանքը Բելոգորսկի բերդում դարձավ ոչ միայն տանելի, այլ նույնիսկ և հաճելի։ Բերդապետի տանն ինձ ընդունում էին որպես հարազատի։ Մարդ ու կին ամենահարգելի մարդիկն էին։ Իվան Կուզմիչը, որ հասարակ զինվորի որդի լինելով սպայության աստիճանին էր հասել, մի անուսում ու պարզ մարդ էր, սակայն՝ շատ ազնիվ և բարի։ Կինն էր կառավարում նրան, և դա հարմարվում էր նրա անհոգության հետ։ Վասիլիսա Եգորովնան ծառայության գործերին էլ այնպես էր նայում, ինչպես իր տնտեսության գործերին և բերդը կառավարում էր ճիշտ այնպես, ինչպես իր տնակը։ Շուտով Մարիա Իվանովնան դադարեց ինձնից քաշվել։ Մենք ծանոթացանք։ Նա ինձ երևաց որպես մի խոհեմ և դյուրազգաց աղջիկ։

Աննկատելի կերպով ես կապվեցի այդ բարի ընտանիքի հետ, մինչև իսկ Իվան Իգնատիչի՝ միաչքանի կայազորային պորուչիկի[40] հետ, որի մասին Շվաբրինը հնարել էր, թե իբր նա անթույլատրելի կապ է ունեցել Վասիլիսա Եգորովնայի հետ, որ ճշտության ստվեր անգամ չուներ. սակայն—դա Շվաբրինի հոգը չէր։

Ինձ տվին սպայի աստիճան։ Ծառայությունս ինձ չէր նեղում։ Աստծու պահպանած այս բերդում ոչ զորատեսեր կային, ոչ վարժություններ, ոչ էլ պահակային հսկողություն։ Բերդապետն իր անձնական ցանկությամբ երբեմն վարժեցնում էր զինվորներին, բայց չէր կարողացել սովորեցնել, որ նրանք բոլորն էլ իմանային, թե որն է աջ կողմը, որը ձախ։ Շվաբրինի մոտ մի քանի ֆրանսերեն գրքեր կային։ Ես սկսեցի կարդալ և իմ մեջ արթնացավ սեր դեպի գրականությունը։ Առավոտները ես կարդում էի, վարժվում թարգմանությունների, հաճախ և բանաստեղծություններ էի շարադրում։ Համարյա միշտ ճաշում էի բերդապետի մոտ, որտեղ և անց էի կացնում օրվա մնացորդը և ուր երեկոները երբեմն գալիս էր հայր Գերասիմը իր կնոջ՝ Ակուլինա Պամֆիլովնայի հետ, որը առաջին համբավաբեր կինն էր ամբողջ թաղում։ Հասկանալի է, որ Ալեքսեյ Իվանովիչ Շվաբրինի հետ ես տեսնվում էի ամեն օր, սակայն քանի գնում նրա զրույցն ինձ տհաճ էր դառնում։ Նրա ամենօրյա կատակները բերդապետի ընտանիքի հասցեին ինձ բոլորովին դուր չէին գալիս, մանավանդ նրա կծու նկատողությունները Մարիա Իվանովնայի մասին։ Բերդում ծանոթների այլ շրջան չկար, բայց ես ուրիշը չէի էլ ուզում։

Չնայած նախազգուշակումներին, բաշկիրները չէին հուզվում։ Խաղաղություն էր իշխում մեր բերդի շուրջը։ Սակայն այդ խաղաղությունը խզվեց հանկարծակի երկպառակությամբ։

Ես արդեն ասացի, որ պարապում էի գրականությամբ։ Իմ այս փորձերը այն ժամանակվա համար նշանակալից էին և Ալեքսանդր Պետրովիչ Սումարոկովը[41] մի քանի տարի

անց դրանք շատ գովեց։ Մի անգամ ինձ հաջողվեց մի փոքրիկ երգ գրել, որից գոհ էի։ Հայտնի է, որ գրողները հաճախ խորհուրդներ ունենալու պատրվակով բարեհաճ լսողներ են փնտրում։ Եվ այդպես, երգս արտագրելուց հետո ես այն տարա Շվաբրինի մոտ. ամբողջ բերդում միայն նա կարող էր գնահատել բանաստեղծի գործը։ Կարճ առաջաբանից հետո գրպանից ես հանեցի իմ տետրը և կարդացի նրան հետևյալ տողերը.

Սիրտ մըտքերս այրելով
Ջանում եմ քեզ օ՛, մոռանալ,
Բայց Մաշայից խուսափելով
Ազատություն չեմ ստանալ։

Աչքեր պայծառ զիս գերեցին,
Սիրտս են մաշում ամենայն ժամ,
Նրանք հոգիս խռովեցին,
Խորտակեցին հանգիստս անգամ։

Զախորդությունքս իմանալով,
Մաշա, խղճա դու ինձ հիմա,
Դառն վիճակս տեսնելով,
Որ քեզնով եմ գերված ահա։

— Հավանո՞ւմ ես,— հարցրի ես Շվաբրինին, նրանից գովասանք սպասելով, որպես մի տուրք, որն ինձ անպայման հասնում է։ Սակայն ի մեծ տհաճություն իմ, միշտ ներողամիտ Շվաբրինը վճռականապես հայտնեց, որ իմ երգը լավը չէ։

— Ինչո՞ւ համար,— հարցրի ես տհաճությունս թաքցնելով։

«Նրա համար,— պատասխանեց նա,— որ այդպիսի բանաստեղծությունները արժանի են իմ ուսուցիչ Վասիլի Կիրիլիչ Տրեդյակովսկուն[42] և ինձ շատ են հիշեցնում նրա սիրային կուպլետները»։

Այս ասելով նա ինձնից առավ տետրակը և սկսեց անողորմաբար վերլուծել ամեն մի տունը և ամեն մի բառը,

ամենակծու եղանակով ինձ ծաղրելով։ Ես չհամբերեցի, նրա ձեռքից խլեցի տետրակս և ասացի, որ այլևս երբեք նրան ցույց չեմ տա իմ բանաստեղծությունները։ Շվաբրինը ծաղրեց և՛ այդ սպառնալիքը։—«Տեսնենք,—ասաց նա,— խոսքդ կպահե՞ս թե չէ. բանաստեղծներին ունկնդիր է պետք, ինչպես Իվան Կուզմիչին օղու փոքրիկ գրաֆինը՝ ճաշից առաջ։ Իսկ ո՞վ է այդ Մաշան, որին դու քնքուշ կիրք և սիրային տանջանք ես բացատրում։ Չլինի՞ թե Մարիա Իվանովնան է»։

— Քո գործը չէ՛,—ասացի ես հոնքերս կիտելով,—թե ով է այդ Մաշան։ Ես ոչ քո կարծիքն եմ ուզում, ոչ էլ քո ենթադրությունները։

«Օհո՜։ Ինքնասեր բանաստեղծ և համեստ սիրեկան,— շարունակեց Շվաբրինը ինձ ավելի ու ավելի գրգռելով.— բայց լսիր բարեկամական խորհուրդս. եթե ուզում ես նպատակիդ հասնել, խորհուրդ եմ տալիս գործել ոչ թե երգերով»։

— Այդ ի՞նչ է նշանակում, պարո՛ն։ Խնդրեմ բացատրություն տաս։

«Հաճույքով։ Դա նշանակում է, որ եթե դու ուզում ես, որ Մաշա Միրոնովան մթնում քեզ մոտ գա, ապա քնքուշ ոտանավորների փոխարեն նրան մի զույգ գինդեր նվիրիր»։

Արյունս եռաց։ «Իսկ ինչո՞ւ համար դու նրա մասին այդպիսի կարծիք ունես»,—հարցրի ես, դժվարությամբ զսպելով իմ զայրույթը։

«Նրա համար,—պատասխանեց նա դժոխային քմծիծաղով,— որ փորձով գիտեմ նրա վարքն ու բարքը»։

— Ստո՛ւմ ես, գարշելի՛,—գոռացի ես կատաղած,—դու ստում ես ամենաանամոթ կերպով։

Շվաբրինի դեմքն այլայլվեց։ «Այս մեկը դու չես մարսի,—ասաց նա թևս սեղմելով։—Դուք ինձ սատիսֆակցիա[43] կտաք»։

— Խնդրեմ, երբ ուզում ես,—պատասխանեցի ես ուրախացած։ Այդ րոպեին ես պատրաստ էի հոշոտել նրան։

Ես իսկույն ևեթ գնացի Իվան Իգնատիչի մոտ և նրան տեսա թել-ասեղը ձեռքին. բերդապետի կնոջ հանձնարարությամբ նա սունկ էր շարում թելի վրա, ձմեռվա համար չորացնելու նպատակով։ «Ա՜, Պյոտր Անդրեյիչ,— ասաց նա ինձ տեսնելով.— բարով եկաք։ Բարի լինի գալներդ, համարձակվում եմ հարցնել՝ ի՞նչ գործով»։ Ես կարճառոտ պատմեցի նրան, որ ընդհարվել եմ Ալեքսեյ Իվանիչի հետ, իսկ նրան՝ Իվան Իգնատիչին խնդրում եմ, որ իմ սեկունդանտը[44] լինի։ Իվան Իգնատիչը ուշադրությամբ լսեց ինձ, երեսիս չռելով իր միակ աչքը։ «Դուք հաճեցիք ասել,— դարձավ նա ինձ,— որ ուզում եք Ալեքսեյ Իվանիչին սրախողխող անել և կամենում եք, որ ես դրան ներկա՞ լինեմ։ Այնպես չէ՞, համարձակվում եմ հարցնել»։

— Իսկ և իսկ։

«Ի սեր աստծո, Պյոտր Անդրեյիչ։ Այդ ի՞նչ եք հնարել։ Դուք և Ալեքսեյ Իվանիչը իրար մի թեթև հայհոյե՞լ եք։ Ի՞նչ մեծ բան է եղել որ, հո աշխարհը չքանդվեց։ Նա ձեզ հայհոյեց, դուք էլ նրան մի պինդ ուշունց տվեք. նա ձեր քիթ ու մռթին տվեց, դուք էլ նրա ականջին, մի ուրիշ տեղին տվեք և բաժանվեք, իսկ մենք արդեն ձեզ կհաշտեցնենք։ Թե չէ, ի՞նչ մի բարի գործ է իր մերձավորին սրախողխող անելը, համարձակվում եմ հարցնել։ Լավ է, եթե դուք նրան սրախողխող անեք, աստված նրա՝ Ալեքսեյ Իվանիչի հետ. ես էլ նրան այնքան չեմ սիրում։ Հապա եթե նա ինքը ձեզ շշատի՞։ Ինչի՞ նման կլինի դա։ Ո՞վ հիմար կմնա, համարձակվում եմ հարցնել»։

Խոհեմ պորուչիկի դատողությունները ինձ չխրատեցին։ Իմ դիտավորությունն անխախտ մնաց։ «Ինչպես կուզեք,— ասաց Իվան Իգնատիչը.— արեք այն, ինչ խելքներդ կկտրի։ Համա ես ինչո՞ւ համար պետք է այնտեղ լինեմ։ Ինչի՞ց դրդված։ Մարդիկ կռվում են. ի՞նչ մի չտեսնված բան է որ, համարձակվում եմ հարցնել։ Փա՛ռք աստծո, շվեդների դեմ էլ կռիվ եմ գնացել, թուրքերի էլ. այնքա՜ն բան եմ տեսել, որ կշտացել եմ նայելուց»։

Ես մի կերպ սկսեցի բացատրել նրան սեկունդանտի պարտականությունը, սակայն Իվան Իգնատիչը ամենևին չկարողացավ հասկանալ ինձ։ «Ձեր կամքն է,— ասաց նա։— Եթե ե՛ս պետք է միջամտեմ այդ գործին, ապա լավ կլինի գնամ Իվան Կուզմիչի մոտ և ըստ օրինաց ծառայության՝ տեղեկացնեմ նրան, որ ֆորտեցիայի մեջ չարագործություն է նյութվում ընդդեմ պետական շահերի. բերդապետն արդյոք չի՞ բարեհաճի պատշաճ միջոցներ ձեռք առնել»...

Ես վախեցա և սկսեցի Իվան Իգնատիչին խնդրել, որ նա ոչինչ չասի բերդապետին. զոռով համոզեցի նրան, նա ինձ խոսք տվեց և ես վճռեցի ձեռք քաշել նրանից։

Իմ սովորության համեմատ երեկոն ես անցկացրի բերդապետի մոտ։ Ես ջանում էի ուրախ և հանգիստ երևալ, որպեսզի ոչ մի կասկած չհարուցեմ և խուսափեմ ձանձրալի հարցերից, բայց խոստովանում եմ, որ չունեի այն սառնասրտությունը, որով միշտ հպարտանում են նրանք, ովքեր իմ վիճակումն են գտնվել։ Այդ երեկո ես տրամադրված էի քնքշանքով ու գորովանքով։ Մարյա Իվանովնան ինձ դուր էր գալիս սովորականից ավելի։ Այն միտքը, որ մի գուցե նրան վերջին անգամն եմ տեսնում,— նրան իմ աչքերում ինչ-որ հուզիչ պատկեր էր տալիս։ Շվաբրինն էլ եկավ այնտեղ։ Ես նրան մի կողմ տարա և տեղեկացրի Իվան Իգնատիչի հետ ունեցած իմ խոսակցության մասին։ «Մեր ինչի՞ն են պետք սեկունդանտները,— ասաց նա ինձ սառնությամբ.— առանց նրանց էլ կարող ենք»։ Մենք պայմանավորվեցինք մենամարտել բերդի մոտ գտնվող դեզերի այն կողմում և այնտեղ լինել հաջորդ օրը առավոտյան ժամը յոթին։ Ըստ երևույթին մենք այնքան սիրալիր էինք խոսում, որ Իվան Իգնատիչն ուրախությունից բերանից թռցրեց. «Ա՜յ, ապրե՛ք,— ասաց նա ինձ գոհունակ դեմքով,— վատ հաշտությունը լավ է բարի վեճից, թեպետ և անպատիվ է, բայց՝ ողջ-առողջ կմնաս»։

«Ի՞նչ, ի՞նչ, Իվան Իգնատիչ,— ասաց բերդապետի կինը,

որն անկյունում նստած խաղաթղթերով ֆալ էր բացում.— Ես լավ չլսեցի»։

Իվան Իգնատիչը նկատելով իմ անբավականության նշանները և հիշելով իր խոստումը, շփոթվեց և չգիտեր ինչ պատասխանի։ Շվաբրինը նրան օգնության հասավ։

«Իվան Իգնատիչը,—ասաց նա,—գովում է մեր հաշտվելը»։

— Իսկ այդ ո՞ւմ հետ ես կռվել, եղբայրս։

«Մենք՝ քիչ մնաց, որ բավական թունդ կռվեինք Պյոտր Անդրեյիչի հետ»։

— Ինչի համա՞ր որ։

«Մի դատարկ բանի պատճառով. մի երգի պատճառով. Վասիլիսա Եգորովնա»։

— Դուք էլ բա՜ն եք գտել իրար հետ կռվելու։ Մի երգի համա՜ր... Այո այդ ի՞նչպես պատահեց։

«Ահա թե ինչպես. Պյոտր Անդրեյիչը վերջերս մի երգ էր հնարել և այսօր երգեց ինձ, ես էլ իմ սիրած եղանակն սկսեցի.

Աղջիկ կարմրանի,
Կես գիշերին զբոսանք մի անի։

Գժտությունն սկսվեց։ Պյոտր Անդրեյիչը քիչ էր մնում բարկանար, բայց հետո միտք արեց, որ ամեն ոք ազատ է երգել այն, ինչ իր քեֆը տալիս է։ Դրանով էլ բանը վերջացավ»։

Քիչ մնաց, որ Շվաբրինի անամոթությունն ինձ կատաղեցներ, սակայն բացի ինձանից ոչ ոք չհասկացավ նրա կոպիտ ակնարկները, համենայն դեպս ոչ ոք դրանց վրա ուշադրություն չդարձրեց։ Երգերից էլ սրծնելով, խոսակցությունն անցավ բանաստեղծներին և բերդապետը նկատեց, որ նրանք բոլորն էլ անառակ ու թունդ հարբեցող մարդիկ են և բարեկամաբար ինձ խորհուրդ տվեց թողնել ոտանավորներ գրելը, որպես ծառայության գործին ընդդեմ և ոչ մի լավ բանի չհասցնող զբաղմունք։

Շվաբրինի ներկայությունն ինձ համար անտանելի էր։ Ես շտապով հրաժեշտ տվի բերդապետին և նրա ընտանիքին։ Տուն գալով ես զննեցի իմ սուսերը, փորձեցի նրա ծայրը և պառկեցի քնելու, Սավելիչին հրամայելով արթնացնել առավոտյան ժամը վեցն անց։

Մյուս օրը նշանակված ժամին ես արդեն կանգնել էի դեզերի այն կողմը, սպասելով իմ հակառակորդին։ Շուտով նա էլ երևաց։ «Կարող են մեզ տեսնել,—ասաց նա ինձ.—պետք է շտապել»։ Մենք հանեցինք համազգեստները, մնացինք միայն կամզոլներով[45] և մերկացրինք սուսերները։ Այդ րոպեին դեզերի հետևից հանկարծ հայտնվեց Իվան Իգնատիչը և հինգ հոգի ինվալիդներ։ Նա պահանջեց, որ գնանք բերդապետի մոտ։ Դժկամությամբ հնազանդվեցինք. զինվորները մեզ շրջապատեցին և մենք դեպի բերդն ուղղվեցինք Իվան Իգնատիչի հետևից, որը մեզ հանդիսավորությամբ տանում էր, քայլելով զարմանալի հպարտությամբ։

Մենք մտանք բերդապետի տունը։ Իվան Իգնատիչը դուռը բացեց, հանդիսավոր կերպով հայտարարելով. «Բերի՛»։ Մեզ դիմավորեց Վասիլիսա Եգորովնան։ «Ա՛խ, դուք հեր օրհնածներ։ Սա ինչի՞ նման է, ի՞նչպես, ի՞նչ— մեր բերդում մա՞րդ սպանել։ Իվա՛ն Կուզմիչ, իսկո՛ւյն ևեթ սրանց ձերբակալիր։ Պյոտր Անդրեյիչ, Ալեքսեյ Իվանիչ, դեսը տվեք ձեր սուսերները, տվե՛ք, տվե՛ք։ Պալա՛շկա, այս սուսերները տար նկուղ։ Պյոտր Անդրեյիչ, այդպիսի բան չէի սպասում քեզանից։ Ամոթ չէ՞ քեզ։ Լավ, ասենք թե Ալեքսեյ Իվանիչը մարդասպանության համար հա՛մ գվարդիայից է դուրս գրված, համ էլ նա աստծուն չի հավատում. համա դո՞ւ, դու է՞լ նույնն ես ուզում անել»։

Իվան Կուզմիչը միանգամայն համաձայն էր իր կնոջ հետ և մեջ ընդ մեջ խոսում էր, ավելացնելով. «Հա, լսո՞ւմ ես, Վասիլիսա Եգորովնան ճիշտ է ասում։ Մենամարտերը ձևականորեն արգելված են զինվորական արտիկուլով[46]»։ Այդ միջոցին Պալաշկան մեզնից առավ մեր սուսերները և տարավ նկուղ։ Ես անկարող եղա ծիծաղս զսպել։ Շվաբրինը

պահեց իր լռությունը։ «Դեպի ձեզ տածած իմ բոլոր հարգանքով հանդերձ,—սառնարյուն կերպով ասաց նա Վասիլիսա Եգորովնային,—չեմ կարող չնկատել, որ դուք իզուր եք կամենում անհանգստանալ՝ մեզ ձեր դատաստանին ենթարկելով։ Այդ դուք թողեք Իվան Կուզմիչին, դա նրա գործն է»։—Ախ, հեր օրհնած,—առարկեց բերդապետի կինը.—քա մի՞թե մարդ ու կին մի հոգի և մի մարմին չեն։ Իվան Կուզմիչ, ի՞նչ ես հորանջում։ Իսկույն ևեթ սրանց զատ-զատ բանտ նստեցրու միայն հաց ու ջուր տալով, որ խելքները գլուխները գա. մեկ էլ՝ թող հայր Գերասիմը նրանց վրա ապաշխարանք դնի, որ աստծուց թողություն խնդրեն և զղջան մարդկանց առաջ։

Իվան Կուզմիչը չգիտեր, ինչ վճռեր։ Մարիա Իվանովնան սաստիկ գունատ էր։ Փոթորիկը մի քիչ հանդարտվեց. բերդապետի կինը հանգստացավ և ստիպեց մեզ համբուրել միմյանց։ Պալաշկան բերեց մեր սուսերները։ Բերդապետի տնից մենք դուրս եկանք ըստ երևույթին հաշտված։ Իվան Իգնատիչն ուղեկցում էր մեզ։—Ամոթ չէ՞ր ձեզ,—ասացի ես նրան զայրացած,—մեր մասին տեղեկացնել բերդապետին այն բանից հետո, երբ դուք ինձ խոսք տվիք չանել այդ։—«Աստված վկա, որ այդ մեկը ե՛ս չեմ ասել Իվան Կուզմիչին,—պատասխանեց նա.—Վասիլիսա Եգորովնան ամեն ինչ դուրս քաշեց իմ բերանից։ Ամեն բան էլ նա կարգադրեց առանց բերդապետի գիտության։ Ասենք, փառք աստծո, որ ամեն ինչ այսպես վերջացավ»։ Այդ խոսքերն ասելով նա շրջվեց դեպի տուն, իսկ Շվաբրինը և ես մնացինք մենակ։—Մեր գործը սրանով վերջանալ չի կարող,—ասացի ես նրան։—«Իհարկե, պատասխանեց Շվաբրինը.—դուք ձեր արյունով ինձ պատասխան կտաք ձեր հանդգնության համար. բայց, հավանորեն մեզ կսկսեն հետևել։ Մի քանի օր մենք պետք է ցույց տանք, թե հաշտ ենք։ Ցտեսությո՛ւն»։—Եվ մենք բաժանվեցինք, կարծես թե ոչինչ չէր եղել։

Վերադառնալով բերդապետի տունը ես, ըստ իմ սովորության, նստեցի Մարիա Իվանովնայի մոտ։ Իվան Կուզմիչը

տանը չէր. Վասիլիսա Եգորովնան տնային գործերով էր զբաղված։ Մենք խոսում էինք կիսաձայն։ Մարիա Իվանովնան քնքշությամբ կշտամբում էր ինձ այն անհանգստության համար, որ պատճառել էր բոլորին իմ վեճը Շվաբրինի հետ։ «Իմ շունչը կտրվեց, երբ մեզ ասացին, որ դուք մտադիր եք սուսերներով կռվել։ Ի՛նչ զարմանալի են տղամարդիկ։ Մի խոսքի պատճառով, որ մի շաբաթ հետո անկասկած կմոռանային, նրանք պատրաստ են միմյանց սրախողխող անել և զոհել ոչ միայն իրենց կյանքը, այլև խիղճն ու բարօրությունը նրանց, ովքեր... բայց ես համոզված եմ, որ վեճը սկսողը դուք չեք։ Իրոք մեղավոր է Ալեքսեյ Իվանիչը»։

— Իսկ ինչո՞ւ եք դուք այդպես կարծում, Մարիա Իվանովնա։

«Հենց այնպես... Նա այն տեսակ խեղկատակն է։ Ես չեմ սիրում Ալեքսեյ Իվանիչին. անչափ զզվում եմ նրանից, բայց տարօրինակ է, և ոչ մի դեպքում, ես չէի կամենա, որ ես էլ նրան այդպես դուր չգայի։ Դա ինձ սաստիկ անհանգստություն կպատճառեր»։

— Իսկ ինչ եք կարծում, Մարիա Իվանովնա. դուք արդյոք դո՞ւր եք գալիս նրան, թե ոչ։

Մարիա Իվանովնան կարկամեց ու կարմրեց։ «Ինձ թվում է,— ասաց նա,— ես կարծում եմ, որ դուր եմ գալիս»։

— Իսկ ինչո՞ւ է ձեզ այդպես թվում։

«Որովհետև նա խնդրել էր իմ ձեռքը»։

— Խնդրե՞լ էր։ Նա խնդրել էր ձեր ձե՞ռքը։ Այդ ե՞րբ։

«Անցյալ տարի։ Ձեր գալուց երկու ամիս առաջ»։

— Եվ դուք մերժեցի՞ք նրան։

«Ինչպես տեսնում եք։ Ալեքսեյ Իվանիչն իհարկե, թե՛ խելոք մարդ է, թե՛ լավ ընտանիքից է և թե՛ հարուստ. բայց, երբ մտածում եմ, թե պետք է պսակի տակ բոլորի ներկայությամբ նրա հետ համբուրվել... Ո՛չ մի դեպքում և ո՛չ մի երջանկության համար»։

Մարիա Իվանովնայի խոսքերն աչքերս բաց արին և ինձ շատ բան պարզեցին։ Ես հասկացա այն համառ չա-

բախտությունը, որով Շվաբրինը հետապնդում էր նրան։ Հավանորեն նա նկատել էր մեր փոխադարձ մտերմությունը և աշխատում էր մեզ հեռու պահել միմյանցից։ Մեր վեճին առիթ տվող խոսքերը հիմա առավել ևս զազրելի թվացին ինձ, երբ կոպիտ և անվայել ծաղրանքի փոխարեն դրանց մեջ ես տեսա միտումնավոր բամբասանքը։ Հանդուգն չարախոսին պատժելու ցանկությունն իմ մեջ ավելի ուժեղացավ և ես անհամբեր սպասում էի հարմար առիթի։

Շատ չսպասեցի։ Մյուս օրը, երբ ես զբաղված էի էլեգիա[47] գրելով և հարմար հանգի սպասելով գրիչն էի կրծում, Շվաբրինը բախեց իմ պատուհանը։ Ես գրիչը վայր դրի, սուսերս վերցրի և դուրս եկա։ «Ինչո՞ւ հետաձգենք,— ասաց ինձ Շվաբրինը.— մեզ չեն հետևում։ Իջնենք դեպի գետը։ Այնտեղ ոչ ոք մեզ չի խանգարի»։ Մենք լուռ քայլեցինք։ Զառիվայր արահետով իջնելով, հենց գետեզրին կանգ առանք և մերկացրինք մեր սուսերները։ Շվաբրինը ինձնից վարպետ էր, սակայն ես՝ ավելի ուժեղ և համարձակ էի և monsieur[48] Բոպրեն, որը երբեմն զինվոր էր եղել, ինձ սուսերամարտի մի քանի դաս էր տվել, որոնցով և ես օգտվեցի։ Շվաբրինը չէր սպասում հանձինս ինձ գտնել այդքան վտանգավոր հակառակորդի։ Երկար ժամանակ մենք չէինք կարողանում միմյանց որևէ վնաս հասցնել. վերջապես, նկատելով, որ Շվաբրինը թուլանում է, ես սկսեցի եռանդուն կերպով հարձակվել նրա վրա և համարյա մինչև գետը քշեցի նրան։ Հանկարծ ես լսեցի իմ անունը՝ արտասանված բարձր ձայնով։ Ես շրջվեցի և տեսա Սավելիչին, որ լեռնային արահետով դեպի ինձ էր վազում... Հենց այդ ժամանակ աջ ուսից ներքև կրծքիս մեջ ուժեղ ծակոց զգացի. ես ընկա և կորցրի գիտակցությունս։

ՍԵՐԸ

Ա՜խ, դու աղջիկ, սիրուն աղջիկ,
Ջահել-ջահել մարդ մի առնի,
Հարցում արա հորից, մորից,
Հորից-մորից, ազգ ու տոհմից,
Խելքդ գլուխդ հավաքի,
Խելք հավաքի, նաև օժիտ։

Ժողովրդական երգ

Թե որ ինձնից լավին գտնես՝ կմոռնաս ինձ,
Եթե ինձնից վատը գտնես,—կհիշես ինձ։

Նույնպես

Ուշքի գալով ես մի առ ժամանակ չկարողացա սթափվել և չէի հասկանում, թե ինձ ինչ է պատահել։ Ինձ անծանոթ մի վերնատան մեջ ես պառկած էի թախտի վրա և սաստիկ թուլություն էի զգում։ Իմ առջև կանգնած էր Սավելիչը, մոմը ձեռքին։ Մի ինչ որ մարդ զգուշությամբ քանդում էր վիրակապերը, որոնցով փաթաթված էին իմ կուրծքն ու ուսը։ Քիչ-քիչ մտքերս պարզվեցին։ Ես հիշեցի իմ մենամարտը և գլխի ընկա, որ վիրավորվել եմ։ Այդ րոպեին դուռը ճռաց։ «Հը՞, ի՞նչպես է»,—շշուկով հարցրեց ձայնը, որից ես թպրտացի։—Միշտ նույն վիճակումն է,—պատասխանեց Սավելիչը հոգոց հանելով.—բոլոր ժամանակ ուշքը վրան չէ, արդեն հինգ օր է։ — Ես ուզում էի շրջվել, բայց չկարողացա։ «Ո՞րտեղ եմ ես, ո՞վ կա այստեղ», — ասացի ես դժվարությամբ։ Մարիա Իվանովնան մոտ եկավ իմ մահճակալին և կռացավ դեպի ինձ։ «Ի՞նչ է, ի՞նչպես եք ձեզ զգում»,—ասաց նա։—Փառք աստծո,—պատասխանեցի ես նվաղած ձայնով։—Այդ դո՞ւք եք, Մարիա Իվանովնա. ասացեք ինձ...—ես այլևս ուժ չունեցա շարունակելու և լռեցի։ Սավելիչն ախ քաշեց։ Նրա դեմքին ուրախություն երևաց։

«Ուշքի՜ եկավ, ուշքի՜ եկավ,—կրկնում էր նա։—Փա՜ռք քեզ տեր։ Հա՛մա թե վախեցրիր ինձ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ. հե՞շտ բան է, էսօր հինգ օր է...»։ Մարիա Իվանովնան ընդհատեց նրան։ «Շատ մի՛ խոսի նրա հետ, Սավելիչ,—ասաց։—Նա դեռ թույլ է»։ Մարիա Իվանովնան դուրս եկավ և կամացուկ ծածկեց դուռը։ Մտքերս ալեկոծվեցին։ Եվ այսպես, ես բերդապետի տանն էի, Մարիա Իվանովնան գնում-գալիս էր ինձ մոտ։ Ես ուզում էի Սավելիչին մի քանի հարցեր տալ, սակայն ծերուկը գլուխն օրորեց և ականջները խցկեց։ Դժկամելով ես աչքերս փակեցի և շուտով խոր քնի մեջ ընկղմվեցի։

Զարթնելով, ես մոտ կանչեցի Սավելիչին և նրա փոխարեն իմ առջև տեսա Մարիա Իվանովնային. ինձ ողջունեց նրա հրեշտակային ձայնը։ Չեմ կարող նկարագրել այն քաղցր զգացումը, որ պատեց ինձ այդ րոպեին։ Ես հափշտակեցի նրա ձեռքը, սեղմեցի շրթունքներիս ու խանդաղատանքի արցունքներով թրջեցի այն։ Մաշան ձեռքը չէր քաշում... և հանկարծ՝ նրա շրթունքները հպվեցին իմ այտին և ես զգացի նրանց ջերմ ու թարմ համբույրը։ Մարմնովս կրակ անցավ։ «Իմ սիրելի, բարի՛ իմ Մարիա Իվանովնա,—ասացի ես նրան,—եղիր իմ կինը, երջանկացրու ինձ»։—Նա սթափվեց։ «Ի սեր աստծո, հանգստացեք,—ասաց նա ձեռքը ինձնից խլելով։—Դուք դեռևս վտանգի մեջ եք, վերքը կարող է բացվել։ Պահպանեցեք ձեզ գոնե ինձ համար»։ Այս խոսքերի հետ նա գնաց, թողնելով ինձ հրճվանքի արբեցման մեջ։ Երջանկությունն ինձ հարություն տվեց։ Նա ի՛մը կլինի, նա ինձ սիրո՛ւմ է։ Այս միտքը համակեց իմ ողջ էությունը։

Այդ րոպեից ժամ առ ժամ դրությունս լավացավ։ Ինձ բժշկում էր գնդի վարսավիրը, քանի որ բերդում ուրիշ բժիշկ չկար և փառք աստծո՝ նա այնքան էլ խելքին չէր զոռում։ Երիտասարդությունս և ինքը բնությունը արագացրին իմ առողջանալը։ Բերդապետի ամբողջ ընտանիքը խնամում էր ինձ։ Մարիա Իվանովնան ինձանից չէր հեռանում։ Հասկանալի է, որ առաջին իսկ հարմար առիթով ես վերսկսեցի

ընդհատված բացատրությունը և Մարիա Իվանովնան ավելի համբերատար էր լսում ինձ։ Առանց որևէ սեթևեթության նա խոստովանեց իր ունեցած սրտի հակումը դեպի ինձ և ասաց, որ իր ծնողները, իհարկե՝ իր երջանկությանն ուրախ կլինեն։ «Բայց դու լավ մտածիր,—ավելացրեց նա.—քո ծնողների կողմից արդյոք չե՞ն լինի արգելքներ»։

Ես մի փոքր մտածեցի։ Իմ մոր քնքշության մասին ես կասկած չունեի, բայց իմանալով հորս բնավորությունն ու մտածելակերպը, ես զգացի, որ իմ սերը այնքան էլ չի հուզի նրան և նա այդ կհամարի որպես երիտասարդ մարդու քմահաճություն։ Ես այդ անկեղծորեն խոստովանեցի Մարիա Իվանովնային և սակայն որոշեցի՝ որքան կարելի է մի պերճախոս նամակ գրել հորս, խնդրելով նրա ծնողական օրհնությունը։ Նամակը ես ցույց տվի Մարիա Իվանովնային, որն այնքան համոզիչ և սրտաշարժ գտավ այն, որ չէր կասկածում նրա հաջողությանը և երիտասարդության ու սիրո ողջ դյուրահավատությամբ անձնատուր եղավ իր քնքույշ սրտի զգացմունքներին։

Շվաբրինի հետ ես հաշտվեցի առողջանալուս առաջին օրերը։ Իվան Կուզմիչը հանդիմանելով ինձ մենամարտի համար, ասաց. «Է՛հ, Պյոտր Անդրեյիչ, ա՛յ թե քեզ բանտարկել էի. ասենք դու առանց դրան էլ պատժված ես։ Իսկ Ալեքսեյ Իվանիչը հենց մի գլուխ նստած է հացատանը, պահակի հսկողության տակ, իսկ նրա սուսերը կողպեքի տակ է, Վասիլիսա Եգորովնայի մոտ։ Թող ինքն իրեն խելքի գա ու զղջա»։ Ես չափազանց երջանիկ էի, որպեսզի կարողանայի սրտիս մեջ թշնամական զգացմունք պահել։ Ես սկսեցի խնդրել Շվաբրինի մասին և բարի բերդապետը, իր ամուսնու համաձայնությամբ վճռեց ազատել նրան։ Շվաբրինը եկավ ինձ մոտ. նա խոր ափսոսանք հայտնեց այն մասին, ինչ պատահել էր մեր միջև և խոստովանեց, որ բոլոր մեղքը իրենն է և ինձ խնդրեց մոռանալ տեղի ունեցածը։ Բնությունից անհիշաչար լինելով, ես անկեղծությամբ ներեցի նրան թե՛ մեր վեճը և թե վերքը,

որ ես ստացել էի նրանից։ Նրա գրպարտության մեջ ես տեսնում էի վիրավորված ինքնասիրության և մերժված սիրո զայրույթը և մեծահոգաբար ներեցի իմ դժբախտ ախոյանին։

Շուտով ես առողջացա և կարողացա տեղափոխվել իմ բնակարանը։ Անհամբեր սպասում էի իմ ուղարկած նամակի պատասխանին, չհամարձակվելով հույս ունենալ և ջանալով իմ մեջ խլացնել տխուր նախազգացումը։ Վասիլիսա Եգորովնայի և նրա ամուսնու հետ դեռ չէի բացատրվել, սակայն իմ առաջարկությունը նրանց չպետք է զարմացներ։ Ոչ ես, ոչ էլ Մարիա Իվանովնան չէինք աշխատում նրանցից թաքցնել մեր զգացմունքները և մենք առաջուց արդեն հավատացած էինք, որ համաձայն են։

Վերջապես մի անգամ առավոտյան Սավելիչը մտավ իմ սենյակը, ձեռքին մի նամակ։ Դողդողալով խլեցի այն։ Հասցեն հորս ձեռքով էր գրված։ Այդ նախապատրաստեց ինձ մի ինչ որ կարևոր բանի, քանի որ սովորաբար մայրս էր ինձ նամակներ գրում, իսկ հայրս վերջում ավելացնում էր մի քանի տող։ Երկար ժամանակ ես չէի բացում ծրարը և նորից ու նորից կարդում էի հանդիսավոր մակագրությունը. «Իմ որդի Պյոտր Անդրեյիչ Գրինյովին, Օրենբուրգի նահանգում, Բելոգորսկի բերդում»։ Ես ջանք էի թափում ձեռագրից իմանալ այն հոգեկան տրամադրությունը, որով գրված էր նամակը։ Վերջապես վճռեցի բանալ այն և առաջին իսկ տողերից տեսա, որ ամեն ինչ խորտակվում է։ Նամակի բովանդակությունը հետևյալն էր.

«Որդի իմ Պյոտր.

Քո նամակը, որով դու խնդրում ես մեզ՝ տալ մեր ծնողական օրհնությունն ու համաձայնությունը՝ Միրոնովի աղջիկ Մարիա Իվանովնայի հետ ամուսնանալու համար, մենք ստացանք սույն ամսի 15-ին և ոչ միայն մտադիր չեմ քեզ տալ ոչ իմ օրհնությունը, ոչ էլ իմ համաձայնությունը, այլև դեռևս պատրաստվում եմ գալ այդտեղ և քո այդ արարքների համար քեզ մի լավ դաս տալ, ինչպես փոքրիկ տղային

են խրատում, չնայած քո սպայական աստիճանին, որովհետև դու ապացուցեցիր, որ դեռևս արժանի չես սուսեր կրելու, որը քեզ տրված է հայրենիքը պաշտպանելու և ոչ թե քեզ պես թոկից փախածների հետ մենամարտելու համար։ Անհապաղ պիտի գրեմ Անդրեյ Կարլովիչին, խնդրելով, որ նա քեզ Բելոգորսկի բերդից տեղափոխի որևէ այլ վայր, որպեսզի այնտեղ քո հիմարությունն անցնի։ Մայրդ, իմանալով քո մենամարտի մասին և այն, որ դու վիրավորված ես, վշտից տկարացավ և հիմա պառկած է։ Արդյոք վերջդ ի՞նչ է լինելու։ Աղոթում եմ աստծուն, որ դու ուղղվես, թեպետ և չեմ համարձակվում հուսալ նրա մեծ ողորմածությանը։

Հայրդ՝ Ա. Գ.»

Նամակի ընթերցումն իմ մեջ առաջացրեց զանազան զգացումներ։ Այն խիստ արտահայտությունները, որ հայրս չէր զլացել գործածել, խորապես վիրավորեցին ինձ։ Արհամարհանքը, որով նա հիշում էր Մարիա Իվանովնայի մասին, ինձ այնքան անվայել թվաց, որքան և անիրավացի։ Բելոգորսկի բերդից տեղափոխվելու միտքը ինձ սարսափեցրեց, բայց ամենից շատ ինձ վշտացնում էր մորս հիվանդության լուրը։ Ես չարացած էի Սավելիչի վրա, չկասկածելով, որ իմ մենամարտը ծնողներիս հայտնի է եղել նրա միջոցով։ Հետ ու առաջ քայլելով իմ նեղ սենյակում, ես կանգ առա նրա դիմաց և ասացի, խստությամբ նրան նայելով. «Երևում է՝ քեզ համար քիչ է, որ ես քո երեսից վիրավորվել եմ և մի ամբողջ ամիս ոտքս գերեզմանի դռանն էր. այժմ էլ մո՞րս ես ուզում մեռցնել»։ Սավելիչն ապուշ կտրեց, ասես շանթահարեցին նրան։ «Ողորմի՛ր, տեր իմ,— ասաց նա և քիչ մնաց հեկեկար,— այդ ի՞նչ հրամայեցիր ասել։ Ե՞ս եմ պատճառը, որ դու վիրավորվել ես։ Աստված գիտի, որ ես վազեցի իմ կրծքով քեզ պաշտպանելու Ալեքսեյ Իվանիչի սուսերից։ Անիծյալ ծերությունը խանգարեց։ Հապա մայրիկիդ ի՞նչ եմ արել»։— «Ի՞նչ ես

արե՞լ,— պատասխանեցի ես։—Ո՞վ էր քեզ խնդրում իմ մասին տեղեկություններ գրել, մի՞թե քեզ լրտեսելու համար են ուղարկել ինձ հետ»։—«Ես քո մասին տեղեկություններ եմ գրե՞լ,— պատասխանեց Սավելիչն արցունքն աչքերին։—Աստվա՜ծ, երկնային թագավոր։ Դե՛, հրամեցիր կարդալու, բարինն ի՛նչ է գրում ինձ. կտեսնես, թե ինչպես եմ լրտեսել քեզ»։ Այս ասելով նա գրպանից հանեց նամակը և ես կարդացի հետևյալը.

«Ամոթ քեզ, քաֆթառ շուն, որ դու, չնայած իմ խիստ հրամաններին, ինձ չես տեղեկացրել իմ որդի Պյոտր Անդրեյիչի մասին և որ կողմնակի մարդիկ են հարկադրված հայտնել ինձ նրա ստահակությունները։ Այդպե՞ս ես դու կատարում քո պաշտոնը և տիրոջական կամքը։ Ես քեզ, քաֆթառ շուն, խոզ արածացնելու կուղարկեմ, որ խկությունը թաքցրել ես ինձնից և երես ես տվել երիտասարդ տղային. նամակս ստանալուդ պես հրամայում եմ անմիջապես գրել ինձ, թե հիմա ի՛նչպես է նրա առողջությունը, որի մասին ինձ գրում են, թե լավացել է, նաև թե ո՛րտեղից է վիրավորվել և արդյոք լա՞վ են բուժել»։

Ակներև էր, որ Սավելիչն իմ հանդեպ իրավ էր և որ ես իզուր վիրավորեցի նրան հանդիմանությամբ և կասկածանքով։ Ես ներողություն խնդրեցի նրանից, սակայն ծերունին անմխիթար էր։ «Ա՛յ թե ինչ օրի հասա ես,— կրկնում էր նա.—ա՛յ թե ինչ ողորմածությունների արժանացա իմ տերերից։ Ես հա՛մ քաֆթառ շուն եմ, համ՝ խոզարած, համ էլ ե՞ս եմ քո վերքի պատճառը։ Չէ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, ոչ թե ես, այլ անիծյալ մուսյեն է մեղավորը. այդ նա՛ քեզ սովորեցրեց երկաթե շամփուրներով իրար ծակոտել ու ոտքերով դոփդոփել. կարծես՝ այդպիսով չար մարդուց պաշտպանված կմնաս։ Ինչնե՞րի՜ս էր պետք մուսյե վարձել և ավելորդ փող ծախսել»։

Բայց ո՞վ էր ձեռնություն կրել հորս տեղեկացնելու իմ վարքի մասին։ Գեներա՞լը։ Սակայն նա, թվում էր, թե իմ մասին այնքան էլ հոգ չի տանում. իսկ Իվան Կուզմիչը

կարևոր չէր համարել նրան տեղեկացնել մեր մենամարտի մասին։ Գլուխս կորցրել էի ենթադրություններից։ Կասկածներս ընկան Շվաբրինի վրա։ Միայն նա շահ ուներ տեղեկացնելուց, որի հետևանքը կարող էր լինել իմ հեռացումը բերդից և անջատումը բերդապետի ընտանիքից։ Ես գնացի այդ բոլորի մասին Մարյա Իվանովնային հայտնելու։ Նա ինձ դիմավորեց տան դռանը։ «Այդ ի՞նչ է պատահել,— ասաց նա ինձ տեսնելով։—Ի՜նչպես գունատ եք դուք»։— Ամեն ինչ վերջացած է,—պատասխանեցի ես և տվի հորս նամակը։ Իր հերթին նա էլ գունատվեց։ Նամակը կարդալուց հետո նա այն վերադարձրեց դողացող ձեռքով և ասաց դողդոջուն ձայնով. «Երևում է՝ ես բախտ չունեմ... Ձեր ծնողները չեն ուզում ինձ իրենց ընտանիքն ընդունել։ Թող ամեն բանում տիրոջ կամքը լինի. աստված մեզնից լավ գիտե, թե մեզ ինչ է պետք։ Ինչ անենք, Պյոտր Անդրեյիչ, գոնե դուք բախտավոր եղեք...»—«Այդ չի՛ լինի,—գոչեցի ես նրա ձեռքը բռնելով.—դու ինձ սիրում ես, ես պատրաստ եմ ամեն ինչի։ Գնանք, ընկնենք քո ծնողների ոտքերը, նրանք պարզ մարդիկ են և ոչ թե խստասիրտ գոռոզներ... Նրանք մեզ կօրհնեն, մենք կպսակվենք, իսկ հետո, կգա ժամանակ, ես հավատացած եմ, որ կհամոզենք իմ հորը։ Մայրս մեր կողմը կբռնի, նա կների ինձ...»։ «Ոչ, Պյոտր Անդրեյիչ,— պատասխանեց Մարյա Իվանովնան.—առանց քո ծնողների օրհնության ես չեմ ամուսնանա քեզ հետ։ Առանց նրանց օրհնության դու բախտ չես ունենա։ Հնազանդվենք աստծու կամքին։ Թե որ գտնես քեզ վիճակվածին, թե որ սիրես ուրիշին—աստված քեզ հետ, Պյոտր Անդրեյիչ. իսկ ես ձեր երկուսի համար...» Այս խոսքերի հետ նա լացեց և հեռացավ ինձնից. ես այն է, ուզում էի նրա հետևից սենյակ մտնել, սակայն զգացի, որ ի վիճակի չեմ ինքս ինձ պահել և վերադարձա տուն։

Խորին մտատանջության մեջ նստած էի, երբ հանկարծ Սավելիչն ընդհատեց իմ մտածմունքները։ «Ահա՛, տեր իմ,— ասաց նա, ինձ տալով լրիվ գրված մի թերթ թուղթ.—տե՛ս,

թե ես արդյոք լրանսությո՞ւն արե՞լ եմ և մի՞թե ես աշխատում եմ հայր ու որդի գժտեցնել միմյանց հետ»։ Նրա ձեռքից ես վերցրի թուղթը. դա Սավելիչի պատասխանն էր իր ստացած նամակին։ Ահա նա՝ բառ առ բառ։

«Տե՛ր իմ, Անդրեյ Պետրովիչ, մեր ողորմած հայր.

Ձեր ողորմած գրությունը ես ստացա, որի մեջ բարեհաճել եք բարկանալ ինձ՝ ձեր ճորտի վրա, որ իբր ամոթ է ինձ չկատարել տիրոջական հրամանները.—իսկ ես քաֆթառ շուն չեմ, այլ ձեր հավատարիմ ծառան, լսում եմ տիրոջական հրամանները և միշտ ձեզ պարտաճանաչ ծառայել և հասել եմ մինչև օր ծերության։ Դե ես Պյոտր Անդրեյիչի վերքի մասին ձեզ ոչինչ չգրեցի, որպեսզի իզուր չվախեցնեմ ձեզ և հիմա իմանում եմ, որ տիրուհին, մեր մայր Ավդոտյա Վասիլևնան առանց իմ գրելու էլ վախից հիվանդացել է և ես պետք է աղոթք անեմ նրա առողջության համար։ Իսկ Պյոտր Անդրեյիչը վիրավորված էր աջ ուսի տակ՝ կրծքից, ոսկորի հենց տակը, մեկ ու կես վերշոկ խորությամբ և նա պառկած էր բերդապետի տանը, ուր մենք նրան գետափից տարանք և նրան բժշկում էր այստեղի վարսավիր Ստեպան Պարամոնովը, և Պյոտր Անդրեյիչը հիմա, փառք աստծու, առողջ է և նրա մասին բացի լավից ուրիշ գրելու բան չկա։ Մեծավորները, ինչպես իմանում եմ, գոհ են նրանից, իսկ Վասիլիսա Եգորովնայի տանը նա կասես հարազատ որդի լինի։ Իսկ թե ինչպես եղավ, որ այդ տեսակ փորձանք պատահեց, ապա եղածն անցած է, մեր երիտասարդը մեղք չունի. ձին որ ձի է չորս ոտքով՝ էլի սայթաքում է։ Եվ բարեհաճել եք գրել, որ ինձ կուղարկեք խոզ արածացնելու. այդ էլ ձեր աղնվական կամքը գիտի։ Եվ ընդ այսմ ողջունում եմ խոնարհաբար։

Ձեր հավատարիմ ճորտ՝ Արխիպ Սավելևը»։

Բարի ծերունու գրությունը կարդալիս ես չէի կարող մի քանի անգամ չժպտալ։ Ես ի վիճակի չէի պատասխանել հորս, իսկ մորս հանգստացնելու համար Սավելիչի նամակն ինձ բավարար թվաց։

Այդ ժամանակից սկսած իմ դրությունը փոխվեց։ Մարիա Իվանովնան համարյա թե չէր խոսում ինձ հետ և ամեն կերպ աշխատում էր խուսափել ինձնից։ Բերդապետի տունը ինձ համար պաս դառավ։ Հետզհետե ես սովորեցի տանը մենակ նստել։ Սկզբում Վասիլիսա Եգորովնան այդ բանի համար հանդիմանում էր ինձ, սակայն տեսնելով իմ համառությունը, ինձ հանգիստ թողեց։ Իվան Կուզմիչի հետ հանդիպում էի միայն ըստ ծառայության պահանջի։ Շվաբրինին հազվադեպ էի հանդիպում և՝ ակամա, քանի որ նրա մեջ ես նկատում էի դեպի ինձ ուղղված թաքուն թշնամանք, որ և հաստատում էր իմ կասկածները։ Իմ կյանքն անտանելի դարձավ ինձ համար։ Ես ընկա մռայլ մտածմունքների մեջ, որ արդյունք էր մենակության և անգործության։ Սերս բորբոքվեց առանձնության մեջ և քանի գնաց դրությունս ծանրացավ։ Ես կորցրի ընթերցանության և գրականության սերը։ Հոգիս ընկճվեց։ Ես վախենում էի, թե կամ կխելագարվեմ, կամ կսկսեմ անառակ կյանք վարել։ Անակնկալ դեպքերը, որ կարևոր ազդեցություն ունեցան իմ ամբողջ կյանքի վրա, հանկարծ իմ հոգուն մի ուժեղ ու բարերար ցնցում տվին։

ԳԼՈՒԽ VI

ՊՈՒԳԱՉՈՎՇՉԻՆԱ[49]

Դուք, ջահել տղերք, լսեցեք մեզ,
Թե մենք՝ ծերերս հին ինչ կպատմենք ձեզ։
Երգ

Նախքան անցնեմ նկարագրելու արտասովոր դեպքերը, որոնց ինքս ականատես եղա, ես պետք է մի քանի խոսք

տսեմ այն դրության մասին, որի մեջ գտնվում էր Օրենբուրգի նահանգը 1773 թվի վերջին։

Սույն լայնարձակ և հարուստ նահանգում բնակվում էին բազմաթիվ կիսավայրենի ժողովուրդներ, որոնք միայն վերջերս էին ճանաչել ռուսական թագավորների գերիշխանությունը։ Նրանց մշտական խռովությունները, օրենքներին և քաղաքացիական կյանքին անսովոր լինելը, թեթևամտությունն ու դաժանությունը անընդհատ հսկողություն էին պահանջում կառավարության կողմից՝ նրանց հնազանդության մեջ պահելու համար։ Բերդերը շինված էին հարմար վայրերում և բնակեցված էին մեծ մասամբ կազակներով՝ Յաիկի ափերի վաղեմի տերերով։ Բայց Յաիկի կազակները, որոնք պետք է պահպանեին այս երկրի անդորրությունն ու անվտանգությունը, մի առ ժամանակ հետո իրենք դարձան կառավարության համար անհանգիստ ու վտանգավոր հպատակներ։ 1772 թվին խռովություն առաջացավ նրանց գլխավոր քաղաքում։ Դրա պատճառն այն խիստ միջոցներն էին, որ ձեռնարկել էր գեներալ-մայոր Տրաուբենբերգը, որպեսզի պատշաճ հնազանդության բերի զորքին։ Հետևանքն եղել էր Տրաուբենբերգի բարբարոսական սպանությունը, կառավարման ինքնակամ փոփոխությունը և վերջապես բունտի խաղաղացումը կարտեչով և դաժան պատիժներով։

Այս ամենը պատահել էր իմ՝ Բելոգորսկի բերդը գալուց մի քանի ժամանակ առաջ։ Ամեն ինչ արդեն հանդարտ էր կամ թվում էր թե այդպես է. իշխանությունը չափազանց հեշտ հավատաց նենգ խռովարարների կարծեցյալ զղջմանը, որոնք թաքուն դավեր էին նյութում և հարմար առիթի սպասում՝ անկարգությունները վերսկսելու համար։

Վերադառնում եմ իմ պատմությանը։

Մի անգամ երեկոյան (1773 թվի հոկտեմբերի սկզբին էր այդ) ես միայնակ նստած էի տանը, աշնանային քամու ոռնոցը լսելով և պատուհանից դիտելով լուսնի մոտով փախչող ամպերը։ Եկան և ինձ կանչեցին բերդապետի

անումից։ Ես իսկույն գնացի։ Բերդապետի մոտ ես տեսա Շվաբրինին, Իվան Իգնատիչին և կազակների ուրյադնիկին[50]։ Սենյակում չկային ո՛չ Վասիլիսա Եգորովնան, ոչ էլ Մարիա Իվանովնան։ Բերդապետն ինձ բարևեց մտահոգ դեմքով։ Նա դուռը փակեց, բոլորին նստեցրեց, բացի ուրյադնիկից, որը կանգնած էր դռների մոտ,—ապա գրպանից մի թուղթ հանեց և ասաց մեզ. «Պարոնայք սպաներ, կարևոր նորություն։ Լսեցեք, թե ինչ է գրում գեներալը»։ Այդ խոսքերի հետ նա ակնոցները դրեց և կարդաց հետևյալը.

«Բելոգորսկի բերդի պարոն բերդապետ կապիտան Միրոնովին.

Գաղտնի

Այսու հայտնում եմ, որ պահակային հսկողությունից փախած Դոնի կազակ և հերձվածող Եմելյան Պուգաչովը աններելի հանդգնությամբ իր վրա ընդունելով հանգուցյալ արքա Պյոտր III-ի[51] անունը, չարագործների խումբ է հավաքել իր շուրջը և խռովություն հարուցել Յաիկի գյուղերում և արդեն գրավել ու ավերել է մի քանի բերդեր, ամեն տեղ կողոպուտներ և սպանություններ կատարելով։ Վասն որո, սույն գրությունն ստանալով, պարոն կապիտան, անհապաղ պետք է պատշաճ միջոցներ ձեռք առնեք հիշյալ չարագործին և ինքնակոչին ետ մղելու, իսկ թե հնարավոր է՝ նրան իսպառ ոչնչացնելու, եթե նա կշարժվի դեպի ձեր հոգացության հանձնված բերդը»։

«Պատշաճ միջոցներ ձեռք առնել,—ասաց բերդապետը ակնոցները հանելով և թուղթը ծալելով։—Լսո՞ւմ ես, ասե՜լն է հեշտ։ Չարագործը, ինչպես երևում է՝ զորեղ է, իսկ մենք ունենք ընդամենը հարյուր երեսուն մարդ, չհաշված կազակներին, որոնց վրա հույս դնել չի կարելի, խաթրիդ չդիպչի, Մաքսիմիչ։ (Ուրյադնիկը քմծիծաղ տվեց)։ Բայց ճար չկա, պարոնա՛յք սպաներ։ Ճշտապահ եղեք, պահակներ ու գիշերադետներ նշանակեք. իսկ հարձակման դեպքում դարպասները ծածկեք և զինվորներին դուրս բերեք։ Դո՛ւ, Մաքսիմիչ,

ուշի-ուշով հետևիր քո կազակներին։ Թնդանոթը կարգի բերեք ու մի լավ մաքրեք։ Իսկ որ ամենից կարևորն է, այս բոլորը գաղտնի պահեք, որպեսզի բերդի մեջ ոչ ոք այդ մասին ժամանակից շուտ չիմանա»։

Այս հրամանները տալով Իվան Կուզմիչը մեզ արձակեց։ Ես դուրս եկա Շվաբրինի հետ միասին, խոսելով մեր լսածի մասին։—«Ի՞նչ ես կարծում, սա ինչո՞վ կվերջանա»,— հարցրի ես նրան։ «Աստված գիտե,—պատասխանեց նա.— տեսնենք։ Առայժմ առանձին կարևոր ոչ մի բան չեմ տեսնում։ Իսկ եթե...»։ Այդ ասելով նա մտածմունքի մեջ ընկավ և անփույթ կերպով սկսեց սուլել ֆրանսիական մի արիա[52]։

Չնայած մեր բոլոր նախազգուշություններին, Պուգաչովի երևան գալու լուրը տարածվեց բերդում։ Թեպետ և Իվան Կուզմիչը չափազանց հարգում էր իր ամուսնուն, սակայն ոչ մի դեպքում նրան չէր հաղորդի այն գաղտնիքը, որ իրեն հավատացել էին ըստ ծառայության։ Գեներալից նամակն ստանալուն պես նա բավական հմուտ ճանապարհ էր գտել Վասիլիսա Եգորովնային, ասելով նրան, թե իբր հայր Գերասիմը Օրենբուրգից ինչ որ խիստ զարմանալի տեղեկություններ է բերել, որ պահում է որպես մեծ գաղտնիք։ Վասիլիսա Եգորովնան իսկույն ևեթ ցանկացել էր հյուր գնալ երեցկնոջ մոտ և Իվան Կուզմիչի խորհրդով իր հետ վերցրել էր Մաշային, որպեսզի նա միայնակ մնալով չձանձրանա։

Իվան Կուզմիչը մնալով տան կատարյալ տերը, իսկույն ևեթ ուղարկել էր մեր հետևից, իսկ Պալաշկային փակել էր նկուղում, որպեսզի նա չկարողանա լսել մեր խոսածը։

Վասիլիսա Եգորովնան տուն է վերադառնում, չկարողանալով որևէ բան իմանալ երեցկնոջից և տեղեկանում է, որ իր բացակայության ժամանակ Իվան Կուզմիչի մոտ խորհրդակցություն է եղել և որ Պալաշկայի վրա դուռը կողպել են։ Նա գլխի է ընկնում, որ ամուսինն իրեն խաբել է և սկսում է նրան հարց ու փորձ անել։ Բայց Իվան Կուզմիչը պատրաստվել էր հարձակմանը։ Նա բնավ չի շփոթվում և եռանդուն կերպով պատասխանում է իր հետաքրքրասեր

կենակցին. «Լսում ես, ա՛յ կին, մեր կնանոց խելքին միշտ է վարուցանքները հարթով վարել և քանի որ դրանից կարող է դժբախտություն առաջանալ, ուստի ես խիստ հրաման տվի, որ սրանից հետո կնանիք վարուցանքները հարթով չվարեն, այլ վարեն ցախ ու խոփով»։—«Հապա դու ինչո՞ւ համար ես Պալաշկային փակել,—հարցնում է բերդապետի կինը։—Ինչո՞ւ համար է խեղճ աղջիկը նկուղում նստել մինչև մեր գալը»։—Իվան Կուզմիչն անպատրաստ է լինում այդ հարցին. նա կմկմում է և ինչ որ անկապ խոսքեր բրթմնջում։ Վասիլիսա Եգորովնան տեսնում է իր ամուսնու խարդավանքը, սակայն լավ իմանալով, որ նրանից ոչինչ չի իմանա, ընդհատում է հարց ու փորձը և խոսք ձգում աղած վարունգների մասին, որ Ակուլինա Պամֆիլովնան պատրաստել էր միանգամայն առանձնահատուկ եղանակով։ Ամբողջ գիշերը Վասիլիսա Եգորովնան չի կարողանում քնել և ոչ մի կերպ գլխի չի ընկնում, թե ամուսնու մտքում ի՛նչ կարող էր լինել, որ ինքը չպիտի իմանար։

Մյուս օրը, պատարագից վերադառնալիս նա տեսնում է Իվան Իգնատիչին, որը թնդանոթի միջից դուրս էր հանում փալասներ, մանրիկ քարեր, տաշեղներ, փայտի կտորներ և ամեն տեսակ աղբ, որ երեխաները խցկել էին թնդանոթի մեջ։ «Արդյոք ի՞նչ կարող են նշանակել այս ռազմական նախապատրաստությունները,—մտածում է բերդապետի կինը,—չլինի՞ հարձակում է սպասվում կիրգիզների կողմից։ Բայց մի՞թե Իվան Կուզմիչն ինձնից կթաքցներ այդ տեսակ չնչին բաները»։ Նա ձայն է տալիս Իվան Իգնատիչին, հաստատ դիտավորություն ունենալով նրանից դուրս կորզել այն գաղտնիքը, որ տանջում էր նրա կանացի հետաքրքրությունը։

Վասիլիսա Եգորովնան նրան մի քանի նկատողություն է անում տնտեսության վերաբերյալ, ինչպես մի դատավոր, որը քննությունն սկսում է կողմնակի հարցերով, որպեսզի նախ թմրեցնի պատասխանողի զգուշությունը։ Հետո, մի քանի րոպե լռելով, նա խոր հոգոց է հանում և ասում

գլուխն օրորելով. «Տեր իմ աստված. տես թե ի՞նչ նորություններ կան։ Սրա վերջն ի՞նչ կլինի»։

— Է՛, մերս, — պատասխանում է Իվան Իգնատիչը։ — Աստված ողորմած է. բավական զինվորներ ունենք, վառոդը՝ շատ, թնդանոթն էլ ես մաքրեցի։ Գուցե թե հաջող դիմադրություն ցույց տանք Պուգաչովին։ Աստծու պահած գառը գայլը չի ուտի։

«Իսկ ի՞նչ մարդ է այդ Պուգաչովը», — հարցնում է բերդապետի կինը։

Այստեղ Իվան Իգնատիչը նկատում է, որ բերանից խոսք է թռցրել և կծում է լեզուն։ Բայց արդեն ուշ էր։ Վասիլիսա Եգորովնան նրան հարկադրում է ամեն ինչ խոստովանել, խոսք տալով ոչ ոքի չպատմել այդ մասին։

Վասիլիսա Եգորովնան պահում է իր խոստումը և ոչ ոքի ոչ մի բառ չի ասում, բայց երեցկնոջից, այն էլ միայն այն պատճառով, որ նրա կովը տակավին տափաստան էր գնում արածելու և կարող էր ընկնել չարագործների ձեռքը։

Շուտով բոլորը խոսեցին Պուգաչովի մասին։ Տարբեր լուրեր էին լսվում։ Բերդապետը ուրյադնիկին հանձնարարությամբ ուղարկեց հարևան գյուղերն ու բերդերը՝ ամեն ինչի մասին մի լավ հետախուզելու։ Ուրյադնիկը վերադարձավ երկու օրից և հայտնեց, որ բերդից վաթսուն վերստի վրա բազմաթիվ կրակներ է տեսել և բաշկիրներից լսել է, որ անհայտ ուժ է գալիս։ Բայց դրական ոչինչ նա չկարողացավ հայտնել, որովհետև վախեցել էր ավելի հեռուն գնալ։

Բերդում, կազակների մեջ նկատելի էր մի անսովոր հուզում. բոլոր փողոցներում նրանք խումբ-խումբ հավաքվում էին, ցած ձայնով խոսում միմյանց հետ և ցրվում—որևէ դրագուն կամ կայազորային զինվոր տեսնելով։ Նրանց մոտ լրտեսներ ուղարկեցին։ Յուլայը՝ մկրտված կալմիկը բերդապետին մի կարևոր տեղեկություն հայտնեց։ Յուլայի ասելով ուրյադնիկի ցուցմունքները սուտ էին. հետախուզությունից վերադառնալուն պես նենգամիտ կազակը հայտարարել էր իր ընկերներին, որ նա եղել է խռովարարների

մոտ, ներկայացել է նրանց ամենագլխավոր առաջնորդին, որը նրան իր աջն է տվել և երկար խոսել է նրա հետ։ Բերդապետն անմիջապես պահակների հսկողության տակ դրեց ուրյադնիկին, իսկ Յուլային նշանակեց նրա տեղ։ Այս նորությունը կազակներն ընդունեցին ակնհայտ անբավականությամբ։ Նրանք բարձրաձայն տրտունջներ էին հայտնում և Իվան Իգնատիչը՝ բերդապետի կարգադրությունը կատարողը, իր ականջով լսել էր, թե ինչպես նրանք ասել էին. «Սպասիր, տես թե քեզ ի՞նչ կանենք, բերդի մուկ»։ Բերդապետն ուզում էր հենց նույն օրն ևեթ հարցաքննել կալանավորին, սակայն ուրյադնիկը փախել էր պահակների ձեռքից,—հավանորեն իր համախոհների օգնությամբ։

Մի նոր հանգամանք ուժեղացրեց բերդապետի անհանգստությունը. բռնվել էր մի բաշկիր, հետն էլ՝ վրդովեցուցիչ թռուցիկներ։ Այս առիթով բերդապետը մտադիր էր նորից հավաքել իր սպաներին և դրա համար ուզում էր մի որևէ բարետես պատրվակով նորից հեռացնել Վասիլիսա Եգորովնային։ Բայց քանի որ Իվան Կուզմիչը շատ պարզամիտ և ճշմարտախոս մի մարդ էր, ուստի այլ եղանակ չգտավ, քան մի անգամ արդեն գործադրածը։

«Լսո՞ւմ ես, Վասիլիսա Եգորովնա,—ասաց նա հազալով։— Ասում են հայր Գերասիմը քաղաքից ստացել է...»— «Հերի՛ք է սուտ խոսես, Իվան Կուզմիչ,—ընդհատեց բերդապետի կինը.—իմանում եմ, դու ուզում ես խորհրդակցություն գումարես և առանց ինձ խոսեք Եմելյան Պուգաչովի մասին, բայց ինձ չե՞ս խաբի»։ — Իվան Կուզմիչը աչքերը չռեց։ «Է՛հ, այ կնիկ,—ասաց նա,—եթե դու ամեն ինչ արդեն գիտես, ապա լավ է մնաս. մենք քո ներկայությամբ էլ կխոսենք»։—«Այդպես,—պատասխանեց կինը.—քո ի՞նչ գործն է խորամանկություն բանեցնել. դե՛հ, մարդ ուղարկիր սպաների հետևից»։

Մենք նորից հավաքվեցինք։ Իվան Կուզմիչը կնոջ ներկայությամբ կարդաց Պուգաչովի կոչը, գրված մի որևէ կիսագրագետ կազակի ձեռքով։ Ավազակը հայտարարում էր

իր մտադրության մասին՝ անհապաղ հարձակվել մեր բերդի վրա. կազակներին և զինվորներին հրավիրում էր իր հրոսակախմբի մեջ, իսկ հրամանատարներին հորդորում էր չդիմադրել, հակառակ դեպքում՝ մահապատիժ սպառնալով։ Կոչը գրված էր կոպիտ, սակայն խիստ արտահայտություններով և պետք է վտանգավոր տպավորություն թողներ հասարակ մարդկանց մտքերի վրա։

«Տե՛ս, ի՜նչ սրիկան է,—բացագանչեց բերդապետի կինը,—ինչեր է դեռ համարձակվում մեզ առաջարկել։ Նրան դիմավորելու դուրս գալ և նրա ոտքերի տակ դնել դրոշակնե՞րը։ Շո՛ւն շան որդի։ Ախր մի՞թե նա չգիտի, որ մենք ահա քառասուն տարի է ծառայության մեջ ենք և, փառք աստծո, ամեն ինչ տեսել ենք։ Մի՞թե գտնվել են այնպիսի հրամանատարներ, որոնք լսել են այդ սրիկային»։

— Կարծեմ՝ չպետք է լինեն,—պատասխանեց Իվան Կուզմիչը։—Բայց ասում են չարագործն արդեն շատ բերդեր է գրավել։

«Երևում է, որ նա իրոք ուժեղ է»,—նկատեց Շվաբրինը։

— Ա՛յ, հիմա կիմանանք նրա իսկական ուժը,—ասաց բերդապետը։—Վասիլի՛սա Եգորովնա, տուր ինձ ամբարի բանալին։ Իվա՛ն Իգնատիչ, հապա մի այստեղ բեր բաշկիրին, և Յուլային էլ հրամայի՝ մտրակներն առնի գա։

«Կա՛ց, Իվան Կուզմիչ,—ասաց բերդապետի կինը տեղից վեր կենալով։—Թող ես Մաշային տնից մի տեղ տանեմ. թե չէ կլսի աղաղակը և կվախենա։ Ասենք ես էլ, ճիշտն ասած, գլուխ չունեմ հարցաքննության։ Բարո՛վ մնաք»։

Տանջելով հարց ու փորձ անելը հնումն այնպես էր արմատացած դատավարության սովորություններում, որ այն ոչնչացնող բարերար հրովարտակը երկար ժամանակ մնում էր առանց որևէ ազդեցության։ Կարծում էին, որ հանցավորի անձնական խոստովանությունն անհրաժեշտ էր նրա մեղքը լիովին ապացուցելու համար,—մի միտք, որ ոչ միայն անհիմն է, այլև միանգամայն հակառակ իրավաբանա-

կան առողջ դատողության, քանի որ, եթե դատապարտյալի ժխտումը չի ընդունվում որպես ապացույց նրա անմեղության, ապա նրա խոստովանությունն առավել ևս չպետք է ապացույց լինի նրա մեղավորության։ Մինչև իսկ հիմա էլ ինձ առիթ է լինում լսել ծեր դատավորների, որոնք ափսոսում են բարբարոսական սովորության վերացումը։ Մեր ժամանակ սակայն, ոչ ոք չէր կասկածում տանջելով հարցաքննելու անհրաժեշտության մեջ, ոչ դատավորները, ոչ էլ դատապարտյալները։ Եվ այդպես, բերդապետի հրամանը մեզնից ոչ որի չզարմացրեց և չանհանգստացրեց։ Իվան Իգնատիչը գնաց բաշկիրի հետևից, որին ամբարում փակել էր բերդապետի կինը, և մի քանի րոպեից հետո կալանավորին բերին նախասենյակ։ Բերդապետը հրամայեց, որ նրան ներկայացնեն իրեն։

Բաշկիրը դժվարությամբ քայլեց շեմքից (նրա ոտքերը կոճղի մեջ էին) և հանելով իր երկար գլխարկը, կանգ առավ դռների մոտ։ Ես նայեցի նրան և ցնցվեցի։ Երբեք չեմ մոռանա այդ մարդուն։ Յոթանասունից անց կլիներ։ Ոչ քիթ ուներ, ոչ՝ ականջներ։ Գլուխը ածիլած էր. մորուքի փոխարեն ցցված էին մի քանի սպիտակ մազեր. կարճահասակ էր, վտիտ ու կորացած, սակայն նեղլիկ աչքերում դեռևս կրակ էր փայլում։ «Էհե՜,— ասաց բերդապետը, արտաքին սոսկալի նշաններից ճանաչելով 1741 թվին պատժված խռովարարներից մեկին[63]։—Բանից դուրս է գալիս, որ դու՝ հի՛ն գայլ, մեր թակարդներում եղել ես արդեն։ Ասել է, թե դու առաջին անգամը չէ, որ ապստամբում ես, քանի որ այդ տեսակ ռանդել են քո գլուխը։ Մի մոտ արի տեսնեմ. ասա, ո՞վ է քեզ ուղարկել այս կողմերը»։

Ծեր բաշկիրը լուռ էր և կատարյալ անմտությամբ նայում էր բերդապետին։ «Ի՞նչ ես լռել,—շարունակեց Իվան Կուզմիչը.— Չլինի՞ թե ռուսերեն ոչ մի խոսք չես հասկանում։ Յուլա՛յ, հապա մի ձեր լեզվով հարցրու նրան, թե ո՞վ է նրան ուղարկել մեր բերդը»։

Իվան Կուզմիչի հարցը Յուլայը կրկնեց թաթարների

չեզվով, բայց բաշկիրը նրան նայում էր նույն արտահայտությամբ և ոչ մի բառով չպատասխանեց։ «Յախշի, — ասաց բերդապետը. — ես քեզ կխոսացնեմ։ Տղե՛րք, հապա հանեք սրա զոլավոր խալաթը և մեջքը մի լավ շերտեցեք։ Քեզ տեսնեմ, Յուլա՛յ, նրան մի լա՛վ...»

Երկու ինվալիդներ սկսեցին հանել բաշկիրի շորերը։ Թշվառականի դեմքը անհանգստություն էր արտահայտում։ Երեխաների ձեռքն ընկած փոքրիկ գազանի պես նա իր շուրջն էր նայում։ Իսկ երբ ինվալիդներից մեկը բռնեց նրա ձեռքերից և մոտեցնելով իր վզին ծերունուն շալակն առավ, իսկ Յուլայը մտրակը տարավ-բերեց՝ այն ժամանակ բաշկիրն սկսեց թույլ ու աղերսու ձայնով հառաչել և գլուխը շարժելով բացեց բերանը, ուր լեզվի փոխարեն մսի մի կարճ կտոր էր շարժվում։

Երբ հիշում եմ, որ այս դեպքը պատահեց իմ կյանքում և որ այդ ես եկել հասել եմ Ալեքսանդր արքայի[54] հեզաբարո թագավորության օրերը, չեմ կարող չզարմանալ լուսավորության արագ նվաճումների և մարդասիրության կանոնների տարածման վրա։ Երիտասա՛րդ, եթե իմ այս գրությունները կընկնեն քո ձեռքը, հիշիր, որ լավագույն և ամենահաստատ փոփոխությունները միայն նրանք են, որոնք առաջ են գալիս բարքերի բարելավումից, առանց որևէ բռնի ցնցումների։

Բոլորը ապշած մնացին։ «Է՛հ, — ասաց բերդապետը. — երևում է, որ սրանից մենք բան չենք կարող իմանալ։ Յուլա՛յ, բաշկիրին տար ամբարը։ Իսկ մենք, պարոնայք, դեռ խոսելիք ունենք»։

Մենք սկսեցինք քննության առնել մեր դրությունը, երբ հանկարծ Վասիլիսա Եգորովնան սենյակ մտավ շնչասպառ և արտակարգ հուզված տեսքով։

«Էդ ի՞նչ է քեզ պատահել», — հարցրեց ապշած բերդապետը։

— Եղբայրներս, անբախտությո՜ւն... — պատասխանեց Վասիլիսա Եգորովնան։ — Նիժնեօզերնի բերդը վերցրել են այսօր առավոտ։ Հայր Գերասիմի գործավորը հենց հիմա

վերադարձավ այնտեղից: Նա տեսել է, թե բերդն ինչպես են վերցրել: Բերդապետին ու բոլոր սպաներին կախել են: Բոլոր զինվորներին գերի են վերցրել: Ուր է, ուր չէ չարագործներն այստեղ էլ կգան:

Անսպասելի լուրն ինձ սաստիկ ցնցեց: Նիժնեօզերնի բերդի պետը, մի խաղաղ ու համեստ երիտասարդ, ծանոթ էր ինձ, սրանից երկու ամիս առաջ նա իր ջահել կնոջ հետ եկավ Օրենբուրգից և իջևանեց Իվան Կուզմիչի տանը: Նիժնեօզերնի բերդը գտնվում էր մեզնից քսանհինգ վերստի վրա: Ժամ առ ժամ մենք պետք է սպասեինք Պուգաչովի գրոհին: Մարիա Իվանովնայի վիճակը վառ կերպով պատկերացավ ինձ և սիրտս այնպե՜ս ճմլվեց:

— Լսե՛ք, Իվան Կուզմիչ,—ասացի ես բերդապետին: Մեր պարտքն է պաշտպանել բերդը մինչև վերջին շունչը. այս մասին խոսելն անգամ ավելորդ է: Բայց պետք է մտածել կանանց անվտանգության մասին: Նրանց Օրենբուրգ ուղարկեցեք, եթե ճանապարհը դեռևս ազատ է, կամ մի հեռավոր, ավելի վստահելի բերդ, ուր չարագործները չկարողանային հասնել:

Իվան Կուզմիչը դարձավ իր կնոջն ու ասաց նրան.

«Լսո՞ւմ ես, ա՛յ կին. իսկապես որ, ձեզ հեռու չուղարկե՞նք՝ մինչև մենք խռովարարների հախիցը գանք»:

— Է՛հ, դատարկ բան է,—ասաց բերդապետի կինը:— Ո՞ւր է այն տեսակ բերդ, որտեղ գնդակները չեն հասնում: Բելոգորսկի բերդն ինչո՞վ է անհուսալի: Փա՛ռք աստծու, ահա քսաներկու տարի է, որ ապրում ենք այստեղ: Բաշկիրներին էլ ենք տեսել, կիրգիզներին էլ. երևի Պուգաչովից էլ կարողանանք պաշտպանվել:

«Լա՛վ,—առարկեց Իվան Կուզմիչը.—հոժար եմ, մնա, քանի որ վստահ ես մեր բերդի վրա: Բայց Մաշային ի՞նչ անենք: Լավ է, եթե ասենք դիմացանք կամ դրսից սիկուրս[55] հասավ. իսկ եթե չարագործները բերդը վերցնե՞ն»:

— Դեհ, այն ժամանակ...—Այդ խոսքերի հետ Վասիլիսա Եգորովնան կարմրեց և լռեց սաստիկ հուզմունքից:

«Ո՛չ, Վասիլիսա Եգորովնա,—շարունակեց բերդապետը, նկատելով, որ իր խոսքերը թերևս առաջին անգամ նրա կյանքում ազդեցություն ունեցան կնոջ վրա։—Միտք չունի Մաշային այստեղ թողնել։ Ե՛կ, նրան Օրենբուրգ ուղարկենք իր սանամոր մոտ. այնտեղ բավական զորք ու թնդանոթ կա, և՛ պարիսպներն էլ քարից են։ Քեզ էլ խորհուրդ կտայի նրա հետ այնտեղ գնայիր. շատ էլ թե դու պառավ ես, բայց կտեսնես ի՛նչ կլինի քու օրը, եթե ֆորտեցիան[56] հարձակմամբ վերցնեն»։

— Լավ,—ասաց բերդապետի կինը,— թող քո ասածը լինի, Մաշային ուղարկենք։ Իսկ ինձ՝ մտքովդ անգամ չանցկացնես խնդրելու. չե՛մ գնա։ Հարկ չկա այս հասակիս քեզնից բաժանվել և օտար վայրերում միայնակ գերեզման փնտրել. միասին ապրել ենք, միասին էլ կմեռնենք։

«Այդ էլ խելքի բան է,—ասաց բերդապետը։—Դե՛հ, կարիք չկա դանդաղելու։ Գնա Մաշային պատրաստիր ճանապարհի համար։ Վաղը առավոտ լուսանալուն պես նրան կուղարկենք. հետը ուղեկցորդ պահակներ կտանք, թեպետ և ավելորդ մարդիկ չունենք։ Իսկ ո՞ւր է Մաշան»։

— Ակուլինա Պամֆիլովնայի մոտ է ,—պատասխանեց բերդապետի կինը։ — Նա իրեն վատ զգաց, հենց որ իմացավ Նիժնեօզերնի բերդի առումը. վախենամ թե հիվանդանա։ Տեր իմ աստված, այս ի՛նչ օրի հասանք։

Վասիլիսա Եգորովնան գնաց հոգալու աղջկա մեկնումի մասին։ Բերդապետի մոտ խոսակցությունը շարունակվեց, բայց ես այլևս չէի մասնակցում և ոչինչ չլսեցի։ Մարիա Իվանովնան եկավ ընթրիքին՝ գունատ ու լացակումած դեմքով։ Մենք լուռ ընթրեցինք և սեղանից վեր կացանք սովորականից շուտ. հրաժեշտ տալով ամբողջ ընտանիքին, ամեն մարդ իր տունը գնաց։ Բայց ես դիտմամբ մոռացա սուսերս և ետ դարձա այն վերցնելու. ես նախազգում էի, որ Մարիա Իվանովնային մենակ կգտնեմ։ Իրոք, նա ինձ դիմավորեց դռների մոտ և տվեց սուսերս։ «Մնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ,— ասաց նա արցունքն աչքերին.—ինձ

Օրենբուրգ են ուղարկում։ Ողջ կենաք և բախտավոր լինեք. մի գուցե աստված հաջողի մեզ նորից տեսնել միմյանց, իսկ եթե ոչ...» Այս ասելով նա հեկեկաց։ Ես գրկեցի նրան։ — «Գնաս բարով, հրեշտակ, — ասացի ես, — գնաս բարով, իմ սիրելի, իմ ցանկալի։ Ինչ էլ որ ինձ պատահի, հավատա, որ իմ վերջին միտքը և վերջին աղոթքը քո մասին կլինի»։ Մաշան լաց եղավ փարվելով իմ կրծքին։ Ջերմ համբուրեցի նրան և շտապ դուրս եկա սենյակից։

ԳԼՈՒԽ VII

ՀՐՈՍՈՒՄԸ

Ա՛խ, գլուխ իմ, գլուխ իմ,
Ծառայողի գլուխ իմ.
Ծառայեց գլուխս ուղիղ
Երեսուն և երեք տարի։
Բայց, ախ, նա չը վաստակեց
Իրեն ոչ խինդ, ոչ էլ շա՜հ,
Ոչ էլ մասին խոսք բարի,
Ոչ էլ բարձր աստիճան։
Գլուխն իմ խեղճ վաստակեց
Երկու բարձր սյուներ լոկ,
Վրան՝ թխկի միջնափայտ,
Մեկ էլ՝ մետաքս մի օղակ։

Ժողովրդական երգ

Այդ գիշեր ես չքնեցի և չհանվեցի։ Ես մտադիր էի լուսաբացին գնալ բերդի դարբասների մոտ, որտեղից պետք է ճանապարհվեր Մարիա Իվանովնան, և այնտեղ վերջին անգամ հրաժեշտ տալ նրան։ Ես մեծ փոփոխություն էի զգում իմ մեջ. հոգուս տագնապն ինձ համար ավելի դյուրին էր, քան այն վհատությունը, որի մեջ ես վերջերս ընկղմված էի։ Բաժանման թախծի հետ իմ մեջ միախառնվում էին և անորոշ, սակայն քաղցր հույսերը, և՛ վտանգների անհամ-

բեր սպասումը, և՛ ազնիվ պատվասիրության զգացումը։ Գիշերն աննկատելի անցավ։ Ես այն է, ուզում էի դուրս գալ տնից, երբ իմ դուռը բացվեց և ինձ ներկայացավ կապրալը, տեղեկացնելով, որ մեր կազակները գիշերը դուրս են եկել բերդից, իրենց հետ զոռով տանելով Յուլային և որ բերդի մոտերքն անհայտ ձիավորներ են շրջում։ Այն միտքը, որ Մարիա Իվանովնան չի կարողանա ճանապարհվել, սարսափեցրեց ինձ. հապճեպ մի քանի կարգադրություններ արի կապրալին և իսկույն շտապեցի բերդապետի մոտ։

Արդեն լուսանում էր։ Ես սլանում էի փողոցով, երբ լսեցի, որ կանչում են ինձ։ Ես կանգ առա։ «Ո՞ւր եք գնում,— ասաց Իվան Իգնատիչը ինձ հասնելով։ — Իվան Կուզմիչը հողապատնեշի վրա է և ինձ ուղարկեց ձեզ կանչելու։ Պուգաչն եկավ»։—«Մարիա Իվանովնան գնա՞ց»,—հարցրի ես սրտատրոփ։ — Ո՛չ, — պատասխանեց Իվան Իգնատիչը. — Օրենբուրգի ճանապարհը կտրված է, բերդը պաշարված։ Բաներս վատ է, Պյոտր Անդրեյիչ»։

Մենք գնացինք դեպի հողապատնեշը, որ մի բնական բարձրություն էր, ցանկապատով ամրացված։ Այնտեղ արդեն խռնված էին բերդի բոլոր բնակիչները։ Բերդապահ զորքը կանգնած էր հրացաններով։ Թնդանոթը երեկվանից այդտեղ էին բերել։ Բերդապետը գնում գալիս էր իր սակավաթիվ զորքի առջև։ Վտանգի մոտիկությունը ծեր ռազմիկին ոգևորում էր արտասովոր արիությամբ։ Տափաստանի վրա, բերդից ոչ հեռու, քսանի չափ ձիավորներ էին շրջում։ Թվում էր, թե կազակներ են, սակայն նրանց մեջ կային և բաշկիրներ, որոնց հեշտ կարելի է ճանաչել իրենց լուսանի մորթու գդակներից և կապարճներից։ Բերդապետն իր զորքի առաջն անցավ, զինվորներին ասելով. «Դե՛հ, իմ տղաներ, այսօր պաշտպան կանգնենք մեր մայր թագուհուն և ցույց տանք ամբողջ աշխարհին, որ մենք տղամարդ ենք և մեր երդումին հաստատ»։ Զինվորները բարձր ձայնով պատրաստակամություն հայտնեցին։ Շվաբրինը կանգնել էր ինձ մոտ և

սևեռուն աչքերով նայում էր թշնամուն։ Տափաստանի վրա դես ու դեն ընթացող ձիավորները բերդի մեջ շարժում նկատելով, խմբվեցին մի տեղ և սկսեցին խորհրդակցել։ Բերդապետն Իվան Իգնատիչին հրամայեց թնդանոթն ուղղել այդ ամբոխի վրա և ինքը գրեց պատրույգը։ Ռումբը վզզալով թռավ նրանց վրայով, առանց մի վնաս պատճառելու։ Ձիավորները ցրվելով իսկույն ևեթ աչքից կորան ու տափաստանն ամայացավ։

Այդ միջոցին հողապատնեշ բարձրացավ Վասիլիսա Եգորովնան, նրա հետ և Մաշան, որը չէր ուզեցել ետ մնալ նրանից։ — «Հը՛, ո՞նց է, — ասաց բերդապետի կինը։ — Բատալիան[57] ի՞նչպես է գնում։ Հապա թշնամին ո՞ւր է»։ — «Թշնամին հեռու չէ, — պատասխանեց Իվան Կուզմիչը։ — Հույս աստված, ամեն ինչ լավ կլինի։ Ի՞նչ է, Մաշա, վախենո՞ւմ ես»։ — «Ո՛չ, հայրիկ, — պատասխանեց Մարիա Իվանովնան. — տանը մենակ ավելի եմ վախենում»։ Այդ խոսքերի հետ նա ինձ նայեց և ուժ գործ դնելով ժպտաց։ Ես ակամա սեղմեցի իմ սուսերի դաստապանը, հիշելով, որ նախօրյակին այն ստացել եմ նրա ձեռքից, կարծես թե իմ սիրելուն պաշտպանելու համար։ Սիրտս այրվում էր։ Ինքս ինձ պատկերացրի նրա ասպետը։ Ես ծարավի էի ապացուցելու, որ արժանի էի նրա վստահությանը և անհամբեր սկսեցի սպասել վճռական րոպեին։

Այդ ժամանակ բերդից կես վերստի վրա գտնվող բարձունքի հետևից ձիավոր նոր խմբեր երևացին և շուտով տափաստանը ծածկվեց նիզակներով ու նետ-աղեղներով զինված բազմաթիվ մարդկանցով։ Նրանց մեջ սպիտակ ձի նստած գալիս էր մի մարդ, կարմիր կաֆտանը հագին, մերկացրած թուրը ձեռքին. դա ինքը Պուգաչովն էր։ Նա կանգ առավ. նրան շրջապատեցին և ըստ երևույթին նրա հրամանով չորս ձիավորներ առանձնացան և ամբողջ թափով քշեցին մինչև բերդը։ Մենք ճանաչեցինք նրանց. մեր դավաճաններն էին։ Նրանցից մեկը գլխարկի վրա բռնած պահում էր մի թերթ թուղթ, մյուսի նիզակի ծայրին հագ-

ցված էր Յուլայի գլուխը, որ նա թափ ձգելով դեպի մեզ շպրտեց ցանկապատի վրայով։ Դժբախտ կալմիկի գլուխն ընկավ բերդապետի ոտքերի մոտ։ Դավաճանները գոռում էին. «Մի՛ կրակեք, դո՛ւրս եկեք թագավորի առաջ. թագավորն այստեղ է»։

«Հիմա ես ձեր...—գոռաց Իվան Կուզմիչը։— Տղե՛րք, կրակեցե՛ք»։ Մեր զինվորները համազարկ տվին։ Նամակը բռնող կազակը երերաց և ձիուց ընկավ. մյուսները ետ շրջեցին ձիերի գլուխը։ Ես նայեցի Մարյա Իվանովնային. Յուլայի արյունաթաթախ գլխի տեսքից ցնցված և համազարկից խլացած, նա, թվում էր թե ուշաթափ է։ Բերդապետը կապրալին մոտ կանչեց և հրամայեց սպանված կազակի ձեռքից վերցնել թուղթը։ Կապրալը դաշտ դուրս եկավ և վերադարձավ, իր հետևից քարշ տալով սպանվածի ձին։ Նա բերդապետին հանձնեց նամակը։ Իվան Կուզմիչը ինքն իրեն կարդաց այն և ապա պատառոտեց։ Այնինչ՝ խռովարարները, երևում է, հարձակման էին պատրաստվում։ Շուտով գնդակներն սկսեցին սվսվալ մեր ականջների տակ և մի քանի նետեր խրվեցին մեզ մոտ՝ գետնի ու ցանկապատի մեջ։ «Վասիլիսա Եգորովնա,—ասաց բերդապետը։— Այստեղ կնկա գործ չկա. Մաշային տար, տեսնում ես աղջիկը ոչ կենդանի է, ոչ՝ մեռած»։

Գնդակների տարափի տակ խեղճացած Վասիլիսա Եգորովնան աչք ձգեց տափաստանի վրա, ուր մեծ շարժում էր նկատվում, հետո դարձավ ամուսնուն և ասաց նրան. «Իվան Կուզմիչ, մեր կյանքն ու մահը աստծու ձեռքն է. օրհնիր Մաշային։ Մա՛շա, մոտեցիր հայրիկիդ»։

Գունատ ու դողդոջուն Մաշան մոտեցավ Իվան Կուզմիչին, ծունկ չոքեց և գետին խոնարհվեց նրա առաջ։ Ծեր բերդապետը երեք անգամ խաչակնքեց նրան, հետո բարձրացրեց և համբուրելով, ասաց նրան փոխված ձայնով. «Դե՛հ, Մաշա. բախտավոր եղիր. աղոթիր աստծուն, նա քեզ չի լքի։ Եթե մի լավ մարդ պատահի՝ աստված ձեզ սեր ու համաձայնություն տա։ Ապրեք այնպես ինչպես մենք ենք

ապրել Վասիլիսա Եգորովնայի հետ։ Դե՛հ, մնաս բարով, Մաշա։ Վասիլիսա Եգորովնա, շուտ արա, տար նրան»։ (Մաշան ընկավ նրա վզովը և բարձրաձայն լաց եղավ)։— «Ե՛կ, մենք էլ համբուրվենք,—ասաց բերդապետի կինը արտասվելով։ — Մնա՛ս բարով, ի՛մ Իվան Կուզմիչ. թողություն տուր ինձ, եթե ես որևէ բանով վշտացրել եմ քեզ»։ «Գնա՜ս բարով, գնա՜ս, բարով, մայր,— ասաց բերդապետը, գրկելով իր պառավ կնոջը։ — Դե՛հ, հերիք է, գնացեք, ասում եմ՝ տուն գնացեք։ Հա՛, եթե հասցնես, Մաշային սարաֆան[54] հագցրու»։ Բերդապետի կինը հեռացավ իր աղջկա հետ։ Ես նայում էի Մարիա Իվանովնայի հետևից. նա ետ նայեց և գլխով արեց ինձ։ Այդ րոպեին Իվան Կուզմիչը դեպի մեզ դարձավ և նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացավ թշնամու վրա։ Խռովարարները հավաքվեցին իրենց առաջնորդի մոտ և հանկարծ սկսեցին ձիերից իջնել։ «Հիմա պինդ կացեք, — ասաց բերդապետը, — հրոսում կլինի...»։ Այդ րոպեին սոսկալի ճիչ ու աղաղակ լսվեց, խռովարարները թափով վազեցին դեպի բերդը։ Մեր թնդանոթը լցված էր կարտեչով։ Բերդապետը սպասեց այնքան, մինչև նրանք բոլորովին մոտեցան և հանկարծ նորից կրակեց։ Կարտեչը զարկեց ամբոխի հենց մեջտեղը։ Խռովարարները երկու կողմի վրա շրջվեցին և ետ դարձան։ Նրանց առաջնորդը մենակ մնաց առջևում... Նա թափահարում էր իր թուրը և կարծես եռանդուն կերպով հորդորում էր նրանց... Մի րոպե դադարած ճիչն ու աղաղակն իսկույն նորոգվեց վերստին։ Դե՛հ, տղե՛րք, — ասաց բերդապետը, — հիմա դարպասները բացեք և թմբուկը զարկե՛ք։ Առա՜ջ, տղե՛րք, գրոհի՜, իմ հետևից»։

Բերդապետը, Իվան Իգնատիչը և ես մի ակնթարթում նետվեցինք ամրոցի պատնեշի այն կողմը, սակայն ահաբեկված կայազորը տեղից չշարժվեց։ «Տղերք, էլ ինչո՞ւ եք կանգնել,— բղավեց Իվան Կուզմիչը։ — Մեռնելու է՝ մեռնենք, ծառայության գործ է...»։ Այդ րոպեին խռովարարները վազեցին մեզ վրա և ներս խուժեցին բերդը։ Թմբուկը

լեց, բերդապահ զորքը հրացանները ձգեց. քիչ մնաց, որ ինձ վայր գլորեին, բայց ես վեր կացա և խռովարարների հետ միասին մտա բերդը։ Բերդապետը գլխից վիրավորված կանգնած էր մի խումբ չարագործների մեջ, որոնք նրանից պահանջում էին բանալիները։ Ես այն է ուզում էի նրան օգնության նետվել, երբ մի քանի ուժեղ կազակներ բռնեցին և գոտիներով կապկպեցին ինձ, ասելով. «Ա՛յ թե ձեզ հախ դատաստան կանենք, հա՜, թագավորին անլսող հպատակներ»։ Մեզ քարշ տվին փողոցներով. բնակիչները տներից դուրս էին գալիս աղ ու հացով։ Լսվեց զանգահարության ձայնը։ Հանկարծ ամբոխի մեջ գոռացին, որ թագավորը հրապարակի վրա սպասում է գերիներին և երդում է ընդունում։ Ժողովուրդը միանգամից շրջվեց դեպի հրապարակը։ Մեզ ևս այն կողմը քշեցին։

Պուգաչովը նստել էր բազկաթոռի վրա, բերդապետի տան մուտքի պատշգամբում։ Նա հագել էր կազակի գեղեցիկ կաֆտան, շուրջանակի երիզած։ Ոսկե փնջիկներով սամույրի բարձր գլխարկը թեքված էր նրա փայլատակող աչքերի վրա։ Նրա դեմքն ինձ ծանոթ թվաց։ Ավագանի կազակները շրջապատել էին նրան։ Հայր Գերասիմը, գունատ և դողդողուն, խաչը ձեռքին կանգնել էր տան դռանը և կարծես լուռ պաղատում էր նրան՝ առաջիկա զոհերի համար։ Հրապարակի վրա շտապով կախաղան էին սարքում։ Երբ մենք մոտեցանք, բաշկիրները ցրեցին ամբոխը և մեզ ներկայացրին Պուգաչովին։ Զանգակների ձայնը հանդարտեց. տիրեց խորին լռություն։ «Բերդապետը ո՞րն է»,—հարցրեց ինքնակոչը։ Մեր ուրյադնիկը դուրս եկավ ամբոխից և ցույց տվեց Իվան Կուզմիչին։ Պուգաչովն ահեղ նայեց ծերունուն և ասաց նրան. «Դու ի՞նչպես համարձակվեցիր ընդդիմանալ ինձ, քո թագավորին»։ Բերդապետը, տանջվելով վերքի ցավից, հավաքեց իր վերջին ուժերը և պատասխանեց հաստատուն ձայնով. «Դու իմ թագավորը չե՛ս, դու մի գո՛ղ ես և ինքնակոչ, լսո՞ւմ ես»։ Պուգաչովը մռայլ հոնքերը կիտեց և սպիտակ թաշկինակով նշան արեց։ Մի քանի կազակներ

բռնեցին ծերունի կապիտանին և քարշ տվին դեպի կախաղանը։ Նրա միջնափայտի վրա արդեն նստել էր խեղանդամ բաշկիրը, որին մենք նախօրյակին հարցաքննել էինք։ Ձեռքում նա բռնել էր պարանը և մի քանի րոպեից հետո խեղճ Իվան Կուզմիչին ես տեսա օդում վեր քաշած։ Այն ժամանակ Պուգաչովի մոտ բերին Իվան Իգնատիչին։ «Երդվի՛ր, — ասաց նրան Պուգաչովը, — թագավոր Պյոտր Ֆեոդորովիչին»։ — «Դու մեր թագավորը չե՛ս, — պատասխանեց Իվան Իգնատիչը, կրկնելով իր կապիտանի խոսքերը։ — Դու, քեռիս, գող ես և ինքնակոչ մեկը»։ Պուգաչովը նորից նշան արեց թաշկինակով և արիասիրտ պորուչիկը կախվեց իր ծերունի պետի կողքին։

Հերթը իմն էր։ Ես համարձակ նայում էի Պուգաչովին, պատրաստվելով կրկնել իմ վեհանձն ընկերների պատասխանը։ Այդ րոպեին աննկարագրելի զարմանքով խռովարար ավագների մեջ ես տեսա Շվաբրինին, մազերը բոլորակ խուզած, հագին կազակի կաֆտան։ Նա մոտեցավ Պուգաչովին և ականջին մի քանի բառ ասաց։ «Կախե՛լ դրան», — ասաց Պուգաչովն առանց ինձ նայելու։ Թոկի օղակը ձգեցին վզիս։ Ես սկսեցի ինքս ինձ աղոթք մրմնջալ, անկեղծ զղջում հայտնելով առ աստված՝ իմ բոլոր մեղքերի համար, աղաչելով նրան — փրկել իմ սրտի բոլոր մերձավորներին։ Ինձ քարշ տվին դեպի կախաղանը։ «Մի՛ վախենա, մի՛ վախենա», կրկնում էին ինձ կործանողները, երևի իսկապես կամենալով խրախուսել ինձ։ Հանկարծ ես մի աղաղակ լսեցի. «Կացե՛ք, անիծյալներ, սպասեցե՛ք...» Դահիճները կանգ առան։ Տեսնեմ՝ Սավելիչն ընկել է Պուգաչովի ոտները։ «Հարազատ հայր, — ասում էր խեղճ դաստիարակս, — ի՞նչ շահ ունես աղայիս երեխայի մահից։ Բա՛ց թող նրան. նրա համար քեզ գլխագին կտան, իսկ ուրիշներին օրինակ տալու և վախեցնելու նպատակով հրամայիր թեկուզ ինձ՝ ծերունուս կախեն»։ Պուգաչովը նշան արեց և ինձ իսկույն ևեթ արձակեցին պարանից ու

բաց թողին։ «Մեր տերը քեզ ներում է»,—ասացին ինձ։ Չեմ կարող ասել, թե այդ րոպեին ես ուրախացա իմ փըրկության համար, սակայն չեմ էլ ասի, որ այդ մասին ես ափսոսացի։ Իմ զգացմունքները անչափ խառն էին։ Ինձ նորից տարան ինքնակոչի մոտ և նրա առաջ ծունկ չոքեցրին։ Պուգաչովն ինձ երկարացրեց իր ջղուտ ձեռքը։ «Համբուրի՛ ձեռքը, համբուրի՛ ձեռքը»,—ասում էին ականջիս տակ։ Բայց ես ամենադաժան մահը կգերադասեի նման անարգ ստորացման։ «Տեր իմ Պյոտր Անդրեյիչ,—շշնջում էր Սավելիչն իմ հետև կանգնած և հրելով ինձ։—Մի համառի։ Ի՞նչ մի դժվար բան է որ. թքի՛ր ու համբուրի չարագոր... (թո՛ւ), համբուրի նրա ձեռքը»։ Ես չէի շարժվում։ Պուգաչովը ձեռքը թողեց, քմծիծաղով ասելով. «Երևի թե նորին մեծությունը շշմել է ուրախությունից։ Բարձրացրե՛ք սրան»։ Ինձ բարձրացրին և ազատ թողին։ Ես սկսեցի դիտել սոսկալի կատակերգության շարունակությունը։

Բնակիչներն սկսեցին երդում տալ։ Մեկը մյուսի հետևից նրանք մոտենում էին, համբուրում խաչելությունը և գլուխ տալիս ինքնակոչին։ Բերդապահ զինվորները կանգնած էին հենց այդտեղ։ Վաշտի դերձակը, զինված իր բութ մկրատով, կտրում էր նրանց ծամերը։ Նրանք մազերը թափ տալով մոտենում էին առնելու աջը Պուգաչովի, որը նրանց ներումն էր շնորհում և ընդունում իր հրոսակի մեջ։ Այս բոլորը շարունակվեց մոտ երեք ժամ։ Վերջապես Պուգաչովը վեր կացավ բազկաթոռից և իր ավագանիների հետ վայր իջավ տան մուտքի պատշգամբից։ Նրան մոտեցրին մի սպիտակ նժույգ, ճոխ սարքով զարդարված։ Երկու կազակ մտան նրա թևերը և նստեցրին թամբի վրա։ Նա հայտնեց հայր Գերասիմին, որ նրա մոտ է ճաշելու։ Այդ րոպեին կանացի մի ձայն լսվեց։ Մի քանի ավազակներ դեպի մուտքի պատշգամբը դուրս քարշ տվին գզգզված և բոլորովին մերկ Վասիլիսա Եգորովնային։ Նրանցից մեկն արդեն զուգվել էր նրա քաթիպայով։ Մյուսները դուրս էին կրում բմբուլե ներքնակները, սնդուկները, թեյի ամանեղենը, սպիտակեղենը և

ամեն տեսակ տնային իրեր։ «Ո՜հ, աստված իմ,— բղավում էր խեղճ պառավը։— Թողե՛ք, հոգիս ապաշխարեմ։ Ձեր ոտքին մեռնեմ, ինձ Իվան Կուզմիչի մոտ տարեք»։ Հանկարծ նա նայեց կախաղանին և ճանաչեց իր ամուսնուն։ «Չարագործնե՛ր,— կանչեց նա մոլեգին։— Այդ ի՞նչ եք արել նրան։ Իմ աչքի՜ լույս Իվան Կուզմիչ, դու կտրիճ զինվորի գլուխ, ո՛չ պրուսական սվինները ձեռք տվին քեզ, ո՛չ Թուրքական գնդակները. ազնիվ կռվում չէ՛, որ դու զոհեցիր կյանքդ, այլ ընկար փախստական տաժանակրի ձեռքից»։— «Կտրեցե՛ք էդ պառավ ջադուկի ձայնը»,— ասաց Պուգաչովը։ Մի երիտասարդ կազակ սրով խփեց նրա գլխին և նա ընկավ պատշգամբիկի աստիճանների վրա։ Պուգաչովը մեկնեց. ժողովուրդը հետևեց նրան։

ԳԼՈՒԽ VIII

ԱՆԿՈՉ ՀՅՈՒՐԸ

Անկոչ հյուրը թաթարից էլ վատթար է[10]։

Առած

Հրապարակը դատարկվեց։ Ես դեռ կանգնած էի մի տեղում և չէի կարողանում կարգի բերել մտքերս՝ շփոթված այդքան սարսափելի տպավորություններով։

Ամենից շատ ինձ տանջում էր Մարիա Իվանովնայի դրության անորոշությունը։ Ո՞ւր է նա, ի՞նչ վիճակի է, արդյոք կարողա՞ցավ թաքնվել, հուսալի՞ է նրա թաքստոցը... Տագնապալի մտքերով ես մտա բերդապետի տունը... Ամեն տեղ դատարկություն էր — աթոռները, սեղանները, սնդուկները ջարդ ու փշուր էին արված, ամանեղենը կոտրատված էր, ամեն ինչ կողոպտված։ Ես ներս վազեցի փոքրիկ սանդուխքով, որ դեպի վերնատունն էր տանում և իմ կյանքում առաջին անգամ մտա Մարիա Իվանովնայի սենյակը։ Ես տեսա նրա անկողինը, որ տակն

ու վրա էին արել ավազակները. պահարանը ջարդված էր և կողոպտված. կանթեղը դեռևս լույս էր տալիս դատարկ տապանակի առջև։ Չէր կոտրված փոքրիկ հայելին, որ կախված էր միջապատից։ Ո՞ւր էր այդ համեստ, կուսական խուցի տիրուհին։ Սոսկալի մի միտք անցավ իմ գլխով. ես նրան պատկերացրի ավազակների ձեռքին... Իմ սիրտը ճմլվեց... Ես դառն լաց եղա և բարձր ձայնով արտասանեցի իմ սիրելու անունը... Այդ րոպեին մի թեթև աղմուկ լսվեց և պահարանի հետևից դուրս եկավ Պալաշան՝ գունատ և դողդոջուն։

«Ա՜խ, Պյոտր Անդրեյիչ,— ասաց նա ձեռքերն իրար զարկելով։— Այս ի՜նչ օր է, ի՜նչ սարսափներ...»

— Իսկ Մարիա Իվանովնա՞ն,— հարցրի ես անհամբեր։— Ի՞նչ եղավ Մարիա Իվանովնան։

«Օրիորդը կենդանի է,— պատասխանեց Պալաշան։— Նա թաքնված է Ակուլինա Պամֆիլովնայի տանը»։

— Երեցկնո՞ջ մոտ,— բղավեցի ես սարսափով։— Աստվա՜ծ իմ, չէ՞ որ Պուգաչովն այնտեղ է...

Ես դուրս նետվեցի սենյակից, մի ակնթարթում ընկա փողոց և գլխապատառ վազեցի դեպի քահանայի տունը, ճանապարհին ոչինչ չտեսնելով և ոչինչ չզգալով։ Այնտեղից աղաղակներ էին լսվում, հռհռոց ու երգեր։ Պուգաչովը քեֆ էր անում իր ընկերների հետ։ Պալաշան իմ հետևից այնտեղ վազեց։ Ես նրան ուղարկեցի, որ կամացուկ կանչի Ակուլինա Պամֆիլովնային։ Մի րոպեից երեցկինը դուրս եկավ սրահը, դատարկ շտոֆը ձեռքին։

— Ի սեր աստծո, ո՞ւր է Մարիա Իվանովնան,— հարցրի ես աննկարագրելի հուզմունքով։

«Իմ աղավնյակը պառկած է մահճակալիս վրա, այնտեղ՝ միջնորմի հետևը,— պատասխանեց երեցկինը։— Ա՛խ, Պյոտր Անդրեյիչ, քիչ մնաց փորձանք պատահեր, բայց փառք աստծո, ամեն ինչ լավ անցավ։ Չարագործը նոր էր նստել ճաշի, երբ խեղճ աղջիկն ուշքի եկավ ու հառաչեց... Էն է՝ լեղիս ճաքեց։ Նա ձայնն առավ։— «Էն ո՞վ

է քո տանը հառաչում, ա՛յ պառավ»։ Ես մինչև գետին գլուխ եմ տալիս ավազակին. քրոջս աղջիկն է, տեր իմ. հիվանդացել է, երկրորդ շաբաթն է, ինչ ահա պառկած է։ — «Իսկ ջահե՞լ է»։— Ջահել է, տեր իմ։— «Հապա մի ցույց տուր ինձ, պառա՛վ, քրոջդ աղջկան»։ — Սիրտս մի դող ընկա՜վ որ, բայց թե ճարս ինչ։ — Համեցիր, տե՛ր իմ. միայն աղջիկը դեռ չի կարող վեր կենա և գա քո ողորմածության մոտ։ — «Ոչինչ, պառավ. ես ինքս կգամ, կտեսնեմ»։ Հապա՜, անիծյալը գնաց միջնորմի այն կողմը, ինչ ես կարծում, բա՜, վարագույրը ետ քաշեց, իր բազեի աչքերով նայեց և՝ ոչինչ... աստված պահեց։ Բայց կհավատա՞ս, ես ու տերտերս էն է, պատրաստվել էինք նահատակի մահով մեռնելու։ Բարեբախտաբար, նա՝ իմ աղավնյակը չճանաչեց նրան։ Տեր իմ աստված, երևի էս էլ պիտի տեսնեինք, ի՜նչ եմ ասում, հա՜ ։ Խեղճ Իվան Կուզմիչ, ո՞վ կարող էր մտածել... Հապա Վասիլիսա Եգորովնա՞ն, հապա Իվան Իգնատի՞չը։ Ախր նրան ինչո՞ւ համար... Այդ ի՞նչպես եղավ, որ ձեզ խնայեցին։ Տես, թե ի՜նչ պտուղն է Շվաբրինը, Ալեքսեյ Իվանիչը։ Հապա մի տեսնես, մազերը բոլորակ խուզել է և հիմա այստեղ՝ մեր տանը քեֆ է անում նրանց հետ։ Ճարպիկ է, ի՜նչ եմ ասում։ Իսկ երբ ես ասացի իմ հիվանդ քրոջ աղջկա մասին, հավատում ես, նա էնպես մի նայեց ինձ, որ ասես դանակով ծակեցին. բայց չմատնեց, շնորհակալ եմ գոնե դրա համար»։ — Այդ րոպեին լսվեցին հարբած հյուրերի աղաղակները և հայր Գերասիմի ձայնը։ Հյուրերը գինի էին պահանջում, տանտերը կանչում էր կողակցին։ Երեցկինը ձեռ-ոտի ընկավ։ «Գնացեք տուն, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա. — հիմա ձեզ հարցնողն ո՞վ է. չարագործները քեֆ են անում։ Վայ ձեզ, եթե ընկնեք հարբածների ձեռքը։ Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ։ Ինչ որ լինելու է՝ կլինի. գուցե աստված մեզ չկորցնի»։

Երեցկինը գնաց։ Փոքր ինչ հանգստացած, ես ուղղվեցի դեպի իմ բնակարանը։ Հրապարակի մոտով անցնելիս, ես տեսա մի քանի բաշկիրներ, որոնք խռնված էին կախաղա-

նի մոտ և կախվածների ոտքերից հանում էին կոշիկները. Ես դժվարությամբ զսպեցի զայրույթի բռնկումը, զգալով միջամտության անօգուտ լինելը։ Բերդում վխտում էին ավազակները, թալանելով սպաների տները։ Ամեն տեղ լսվում էին հարբած խռովարարների ձայները։ Եկա տուն։ Սավելիչը դիմավորեց ինձ տան շեմքին։ «Փա՛ռք աստծո, — կանչեց նա ինձ տեսնելով։ — Ասի՝ վայ թե քեզ նորից բռնեցին։ Է՜հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հավատո՞ւմ ես, սրիկաները մեր ամեն ինչը թալանեցին. շորերը, սպիտակեղենը, իրերը, ամանեղենը,—ոչինչ չթողին։ Համա ինչ արած... Աստծուն փառք, որ քեզ կենդանի բաց են թողել... Իսկ դու, տեր իմ, ճանաչեցի՞ր ատամանին»։

— Չէ, չճանաչեցի. իսկ նա ո՞վ է որ։

«Ի՞նչպես թե, տեր իմ։ Մի՞թե դու մոռացել ես էն հարբեցողին, որ գլուխդ յուղելով առավ քո մուշտակը իջևանատան բակում։ Նապաստակի մորթուց կարած մուշտակը բոլորովին նոր էր, իսկ նա՝ էն գազանն իր վրա քաշելիս պատառ-պատառ արեց»։

Ես ապշեցի։ Իսկապես, Պուգաչովի նմանությունն իմ առաջնորդի հետ ապշեցուցիչ էր։ Ես հավաստիացա, որ Պուգաչովը և նա միևնույն անձնավորությունն էին և նոր միայն հասկացա ինձ խնայելու պատճառը։ Ես չէի կարող չզարմանալ հանգամանքների տարօրինակ կապակցության վրա — շրջմոլիկին նվիրած մուշտակն ինձ փրկում է կախաղանի պարանից և իջևանատներում շրջող հարբեցողը բերդեր է պաշարում ու ցնցում պետությունը։

«Ուտել չե՞ս ուզում, — հարցրեց իր սովորությունների մեջ անփոփոխ Սավելիչը։ — Տանը ոչինչ չկա, գնամ, փնտրեմ, մի բան պատրաստեմ քեզ համար»։

Մենակ մնալով ես խորասուզվեցի խորհրդածությունների մեջ։ Ի՞նչ պիտի անեի ես։ Մնալ չարագործի իշխանության տակ գտնվող բերդում կամ հետևել նրա հրոսակին, — անվայել էր սպայի համար։ Պարտականությունս պահանջում էր, որ ես ներկայանայի այնտեղ, ուր իմ ծա-

տայությունը դեռ կարող էր օգտակար լինել ներկա դժվարին հանգամանքներում։ Սակայն իմ սիրտը սաստիկ դրդում էր ինձ մնալ Մարիա Իվանովնայի մոտ և լինել նրա պաշտպանն ու հովանավորը։ Թեպետև ես նախատեսնում էի հանգամանքների արագ և աներկբա փոփոխություն, բայց և այնպես չէի կարող չդողալ, պատկերացնելով նրա վտանգավորությունը։

Իմ խորհրդածությունները ընդհատվեցին կազակներից մեկի գալով, որը վազելով եկավ հայտարարելու, «որ ինքը՝ մեծ թագավորը քեզ իր մոտ է պահանջում»։ — «Իսկ ո՞րտեղ է նա», — հարցրի ես, պատրաստվելով հնազանդվել։

«Բերդապետի տանը, — պատասխանեց կազակը։ — Ճաշից հետո մեր տերը բաղնիք գնաց, իսկ հիմա հանգստանում է։ Հա՛, ձերդ բարեծննդություն, ամեն ինչից երևում է, որ երևելի մարդ է՝ ճաշին բարեհաճեց ուտել երկու տապակած խոզի ճուտ, իսկ բաղնիքում այնքան տաք բուղ է ընդունել[60], որ Տարաս Կուրոչկինը չէր դիմացել, ավելը տվել էր Ֆոմկա Բիկբաևին, իսկ ինքը հազիվ ուշքի եկել սառը ջրով։ Խոսք չկա, բոլոր շարժուկացը մեծանական է... Իսկ բաղնիքում, ասում են, ցույց է տվել իր թագավորական նշանները՝ կրծքի վրա. մի կողմը երկգլխանի արծիվն է հինգ կոպեկանոցի մեծությամբ, իսկ մյուսը՝ իր պատկերը»։

Ես հարկ չհամարեցի հերքել կազակի կարծիքը և նրա հետ միասին ուղղվեցի դեպի բերդապետի տունը, նախապես երևակայելով իմ տեսակցությունը Պուգաչովի հետ, ջանալով նախագուշակել, թե այն ինչով կվերջանա։ Ընթերցողը հեշտ կարող է պատկերացնել, որ ես բնավ սառնարյուն չէի։

Սկսում էր մթնել, երբ ես եկա բերդապետի տունը։ Կախաղանն իր զոհերով սևին էր տալիս։ Խեղճ բերդապետուհու մարմինը դեռևս ընկած մնացել էր տան դռների մոտ, ուր երկու կազակներ պահապան էին կանգնած։ Ինձ ուղեկցող կազակը գնաց իմ մասին զեկուցելու և իսկույն

ևեթ վերադառնալով, ինձ ներս տարավ այն սենյակը, ուր նախօրյակին ես այնպես քնքուշ հրաժեշտ տվի Մարիա Իվանովնային։

Իմ աչքի առաջ բացվեց արտասովոր մի պատկեր։ Սփռոցով ծածկված և վրան շտոֆներ ու բաժակներ դրած սեղանի շուրջը նստած էին Պուգաչովը և տասի չափ կազակ ավագներ, գդակները գլխներին և գունագեղ շապիկներ հագած, գինուց տաքացած, կարմրած քիթ ու մռութով և փայլատակող աչքերով։ Նրանց մեջ չկար ոչ Շվաբրինը, ոչ էլ մեր ուրյադնիկը՝ նորակոչ դավաճանները։ «Ա՜, ձերդ բարեծննդություն, — ասաց Պուգաչովն ինձ տեսնելով։ — Բարով եկաք, տեղ ու պատիվ ձեզ, համեցեք»։ Զրուցակիցներն ինձ տեղ տվին։ Ես լուռ նստեցի սեղանի ծայրին։ Կողքիս նստած երիտասարդ կազակը՝ բարեկազմ և գեղեցիկ, ինձ համար մի բաժակ հասարակ գինի լցրեց, որին ես ձեռք չտվի։ Հետաքրքրությամբ սկսեցի դիտել այդ հավաքույթը։ Պուգաչովը նստած էր ամենից վերև, հենված սեղանին, սև մորուքը պահած իր լայն բռունցքի վրա։ Նրա դիմագծերը՝ կանոնավոր և բավական դուրեկան, ոչ մի կատաղի արտահայտություն չունեին։ Նա ստեպ-ստեպ դիմում էր հիսուն տարեկան մի մարդու, մերթ գրաֆ անվանելով նրան, մերթ՝ Տիմոֆեյիչ, իսկ երբեմն էլ նրան մեծարելով որպես իր քեռու։ Բոլորը միմյանց հետ վարվում էին ինչպես ընկերներ և առանձնապես ոչ մի գերապատվություն չէին տալիս իրենց առաջնորդին։ Խոսակցությունը առավոտվա հարձակման, խռովության հաջողության և առաջիկա գործողությունների շուրջն էր։ Ամեն մեկը պարծենում էր, առաջարկում իր կարծիքները և համարձակ կերպով առարկում Պուգաչովին։ Եվ հենց այս արտասովոր ռազմական խորհրդում որոշվեց գնալ Օրենբուրգի վրա, հանդուգն մի շարժում, որ քիչ մնաց պսակվեր աղետալի հաջողությամբ։ Արշավանքը հայտարարված էր վաղը։ «Դե՛հ, եղբայրներ, — ասաց Պուգաչովը, — եկեք, քնից առաջ երգենք իմ սիրելի երգը։ Չումակո՛վ[61], սկսի՛ր»։

Իմ հարևանը բարակ ձայնով սկսեց բուռլակների[63] մելամաղձոտ երգը և բոլորը միասին ձայնակցեցին.

Մի՛ սոսափիր, կանաչ, մայր կաղնու անտառ,
Մի՛ խանգարիր քաջիս իր միտքն անելու,
Հարցման պիտ կանգնեմ վաղ առավոտյան,
Ահեղ արքայի դատաստանի դեմ։
Տիրակալ արքան ինձ հարցեր կտա—
Ասա՛, գեղջուկի տղա, ա՛յ չահել.
Ի՞նչպես, ո՞ւմ հետ ես գողություն արել,
Ելել թալանի. քեզ հետ շա՞տ մարդ կար։
Կասեմ քեզ մեր հույս, արքա ուղղափառ,
Ճշմարտությունը ահա կասեմ քեզ,
Որ ունեցել եմ լոկ չորս ընկեր ես.
Առաջին ընկերս էր գիշերը մութ,
Երկրորդը՝ դանակ պողպատից շինած,
Երրորդ ընկեր իմ՝ նժույգս էր հմուտ,
Չորրորդ ընկերըս՝ աղեղն էր ձգված,
Սուրհանդակներըս՝ նետերը շաչուն։
Խոսեց ապավեն արքան ուղղափառ՝
Պատիվ քեզ, տղա՛, գեղջուկի զավակ,
Որ իմացել ես գողանալու հետ և պատասխան տալ,
Հենց դրա համար նվեր քեզ, տղա՛,
Դաշտումը փայտակերտ բարձր մի դղյակ,
Որ ունի զույգ սյուն ու մի միջնափայտ։

Անհնար է նկարագրել, թե ինչ ազդեցություն թողեց ինձ վրա կախաղանի մասին հյուսած հասարակ ժողովրդական երգը, որ երգում էին կախաղանի դատապարտված մարդիկ։ Նրանց ահավոր դեմքերը, ներդաշնակ ձայները, թախծոտ արտահայտությունը, որ նրանք տալիս էին առանց այդ էլ արտահայտիչ բառերին — այդ բոլորն ինձ ցնցեցին մի ինչ որ պիիտիքական[63] սարսափով։

Հյուրերն էլի մի-մի բաժակ խմեցին, սեղանից վեր կացան և հրաժեշտ տվին Պուգաչովին։ Ես ուզում էի հետևել նրանց, սակայն Պուգաչովն ասաց ինձ. «Նստիր, ես ուզում եմ քեզ հետ մի քիչ խոսել»։ — Մենք մնացինք երես առ երես։

Մի քանի րոպե տևեց մեր՝ երկուստեք տիրող լռու-

թյունը։ Պուգաչովն անթարթ ինձ էր նայում, խաբեբայությամբ և ծաղրանքի զարմանալի արտահայտությամբ, երբեմն կկոցելով իր ձախ աչքը։ Վերջապես նա ծիծաղեց և այնպիսի մի սրտաբուխ խինդով, որ և ես նրան նայելով սկսեցի ծիծաղել, ինքս չիմանալով թե ինչու։

«Ի՞նչ է, ձերդ բարեծննդություն, — ասաց նա ինձ։ — Խոստովանիր, վախեցա՞ր, երբ իմ տղերքը թոկը վիզդ ձգեցին։ Երևի՝ վախից լեղիդ պատռվեց... Իսկ միջնափայտի վրա կճոճվեի՞ր, եթե չլիներ քո ծառան։ Ես իսկույն ևեթ ճանաչեցի ծեր քաֆթառին։ Հը, արդյոք մտքովդ կանցնե՞ր, ձերդ բարեծննդություն, որ քեզ ումեն բերող-հասցնող մարդն ինքը մեծ թագավորն էր։ (Այդ խոսքերի հետ նա վեհ և խորհրդավոր տեսք ընդունեց)։ Դու իմ առաջ շատ մեղավոր ես, — շարունակեց նա. — բայց ես քեզ ներումն շնորհեցի քո բարերարության համար, նրա համար, որ դու ինձ օգնություն ցույց տվիր, երբ ես հարկադրված էի թաքնվել իմ թշնամիներից։ Է՜, դեռ ինչե՞ր կտեսնես։ Դեռ այդպե՞ս կպարգևատրեմ քեզ, երբ ստանամ իմ թագավորությունը։ Խոստանո՞ւմ ես հոգով-սրտով ծառայել»։

Սրիկայի տված հարցը և նրա հանդգնությունն ինձ այնպես զվարճալի թվաց, որ ես չկարողացա քմծիծաղ չտալ։

«Ինչի՞ վրա ես ծիծաղում, — հարցրեց նա դեմքը խոժոռելով։ — Չլինի՞ թե չես հավատում, որ ես մեծն թագավորն եմ։ Ուղի՛ղն ասա»։

Ես շփոթվեցի։ Թագավոր ճանաչել շրջմոլիկին ես անկարող էի, դա ինձ թվաց աններելի փոքրոգություն։ Երես առ երես խաբեբա անվանել նրան — կնշանակեր ինձ կործանման ենթարկել. և այն, ինչին ես պատրաստ էի կախաղանի տակ բոլոր ժողովրդի ներկայությամբ և զայրույթի առաջին բռնկման միջոցին, հիմա ինձ թվում էր անօգուտ պարծենկոտություն։ Ես տատանվում էի։ Պուգաչովը մռայլ սպասում էր իմ պատասխանին։ Վերջապես (դեռ հիմա էլ ինքնագոհությամբ եմ հիշում այդ րոպեն) պարտքի զգա-

ցումն իմ մեջ գերազանցեց մարդկային թուլությունը։ Ես պատասխանեցի Պուգաչովին. «Լսիր. ասեմ քեզ ամբողջ ճշմարտությունը։ Դատիր ինքդ, արդյոք ես կարո՞ղ եմ քեզ թագավոր ճանաչել։ Դու բանիմաց մարդ ես. դու ինքդ կըտեսնեիր, որ ես խորամանկություն եմ բանեցնում»։

«Հապա ո՞վ եմ ես քո կարծիքով»։

— Աստված գիտե ո՞վ ես, բայց ո՛վ էլ որ լինես, դու վտանգավոր խաղ ես խաղում։

Պուգաչովը արագ ինձ նայեց։ «Ասել է, թե դու չե՞ս հավատում, — ասաց նա, — որ ես Պյոտր Ֆյոդորովիչ թագավորն եմ։ Դե, լավ։ Իսկ միթե կտրիճի համար հաջողություն չկա՞։ Մի՞թե հին ժամանակները Գրիշկա Օտրեպևը[64] չթագավորեց։ Ինչ ուզում ես մտածիր իմ մասին, բայց՝ ինձնից մի հեռանա։ Քո ի՞նչ գործն է, թե այսպես է, կամ՝ այնպես։ Երկուսն էլ մի հաշիվ է։ Հավատարիմ ու ճշմարտությամբ ծառայիր ինձ և ես քեզ ֆելդմարշալ է՛լ, իշխանի էլ աստիճան կտամ։ Խելքդ ի՞նչ է կտրում»։

— Ո՛չ, — պատասխանեցի ես հաստատ։ — Ես ծագումով ազնվական եմ. ես երդում եմ տվել թագուհի-կայսրուհուն. քեզ ծառայել չեմ կարող։ Թե որ դու իսկապես լավություն ես կամենում ինձ, ապա թող գնամ Օրենբուրգ։

Պուգաչովը միտք արեց։ «Իսկ թե որ թողնեմ, — ասաց նա, — խոսք կտա՞ս իմ դեմ դուրս չգալ»։

— Ի՞նչպես կարող եմ այդպես խոստում տալ, — պատասխանեցի ես։ — Ինքդ գիտես, որ իմ կամքով չէ՝ կհրամայեն քո դեմ դուրս գալ՝ կգամ, ճարս ի՛նչ։ Հիմա դու ինքդ ես մեծավոր, ինքդ ես հնազանդություն պահանջում քո մարդկանցից։ Ինչի՞ նման կլինի, եթե ես ծառայությունից հրաժարվեմ, երբ իմ ծառայությունը պետք գա։ Կյանքս քո ձեռքումն է. թե բաց կթողնես — շնորհակալ եմ, թե մահապատիժ կտաս — աստված քեզ դատավոր, իսկ ես քեզ ճշմարիտն ասացի։

Իմ անկեղծությունը ապշեցրեց Պուգաչովին։ «Թող այդպես լինի, — ասաց նա ուսիս խփելով։ — Մահապատիժն իր

տեղը, ներումն իր տեղը։ Գնա՝ ուր ուզում ես, արա՝ ինչ քեֆդ տա։ Վաղը եկ ինձ մնաս-բարովի, իսկ հիմա գնա քնելու, իմ քունն էլ է տանում»։

Ես թողի Պուգաչովին և փողոց դուրս եկա։ Խաղաղ և ցուրտ գիշեր էր։ Լուսինն ու աստղերը պայծառ փայլում էին, լուսավորելով հրապարակն ու կախաղանը։ Բերդում ամեն տեղ հանդիստ էր և մութ։ Միայն կաբակում կրակի լույս էր երևում և լսվում էին ուշացած զվարճացողների աղաղակները։ Ես հայացքս դարձրի քահանայի տան կողմը։ Պատուհանի փեղկերն ու դարբասը փակ էին։ Թվում էր, թե այնտեղ ամեն ինչ պապանձվել է։

Ես տուն եկա և Սավելիչին տեսա իմ բացակայությունը ողբալիս։ Նրան անասելի ուրախացրեց իմ ազատության լուրը։ «Փա՜ռք քեզ, տե՛ր,— ասաց նա երեսը խաչակնքելով։ — Լույսը բացվելուն պես դուրս կգանք բերդից և կգնանք ուր որ աստված հաջողի։ Քեզ համար բան-ման եմ պատրաստել, անուշ արա, տե՛ր իմ, և մինչև առավոտ քնիր հանգիստ, ոնց որ Քրիստոսի գոգում»։

Ես հետևեցի նրա խորհրդին և մեծ ախորժակով ընթրելով, քնեցի մերկ հատակի վրա, հոգեպես և ֆիզիկապես սաստիկ հոգնած։

ԳԼՈՒԽ IX

ՀՐԱԺԵՇՏԸ

Ծանոթանալը քաղցր էր շատ,
Գեղեցկուհի, օհ, այնպես,
Անջատումը՝ տխուր, վհատ,
Հոգուցս եմ պատռվում կարծես։
Խերասկով[56]

Վաղ առավոտյան թմբուկն ինձ արթնացրեց։ Գնացի հավաքավայրը։ Այնտեղ արդեն շարքի էին կանգնում Պուգաչովի հրոսակները կախաղանի մոտ, որից դեռևս կախված

էին երեկվա զոհերը։ Կազակները ձիավորված էին, զինվորները՝ հրացաններն ուսերին։ Դրոշակները փողփողում էին։ Մի քանի թնդանոթներ, որոնց մեջ ես ճանաչեցի և մերը, դրված էին ռազմական հրետասայլերի վրա։ Բնակիչները բոլորն էլ այդտեղ էին, սպասելով ինքնակոչին։ Բերդապետի տան մուտքի պատշգամբիկի առաջ մի կազակ բռնած պահում էր կիրգիզական գեղեցիկ, սպիտակ ձիու սանձը։ Ես աչքերով որոնում էի բերդապետի կնոջ դիակը։ Նա փոքր ինչ մի կողմ էր տարված և ծածկված էր ճիլոպով։ Վերջապես Պուգաչովը դուրս եկավ տան սրահից։ Ժողովուրդը գդակները հանեց։ Պուգաչովը կանգ առավ դռանը և ողջունեց բոլորին։ Ավագներից մեկը նրան տվեց մի պարկ՝ լի պղնձե դրամներով, և նա սկսեց բուռ շաղ տալ։ Ժողովուրդն աղաղակներով վրա ընկավ հավաքելու և շատերի կողն ու կուշտը ջարդվեց։ Պուգաչովին շրջապատեցին նրա համախոհներից ամենագլխավորները։ Նրանց մեջ կանգնել էր և Շվաբրինը։ Մեր հայացքները հանդիպեցին. իմ հայացքի մեջ նա կարող էր կարդալ արհամարհանք. նա երեսը շուռ տվեց անկեղծ զայրույթի և շինծու հեգնանքի արտահայտությամբ։ Ինձ ամբոխի մեջ տեսնելով Պուգաչովը գլխով արեց և մոտ կանչեց։ «Լսի՛ր, — ասաց նա ինձ։ — Հենց այս ժամին կգնաս Օրենբուրգ և իմ անունից նահանգապետին և բոլոր գեներալներին կհայտարարես, որ մի շաբաթից հետո ինձ սպասեն։ Դու նրանց խորհուրդ տուր մանկական սիրով ու հնազանդությամբ դիմավորել ինձ, թե չէ՝ ամենադաժան մահապատժից չեն պրծնի։ Բարի ճանապարհ, ձերդ բարեծննդություն»։ Հետո նա ժողովրդին դարձավ և ասաց, ցույց տալով Շվաբրինին. «Ահա՛ ձեզ, զավակներս, նոր բերդապետ։ Ամեն բանում լսեցեք նրան, իսկ նա իմ առջև պատասխանատու է ձեզ և բերդի համար»։ Այս խոսքերը ես սարսափով լսեցի. Շվաբրինը դարձավ բերդապե՛տ. Մարիա Իվանովնան մնում է նրա իշխանության տա՛կ։ Աստված իմ, ի՞նչ կլինի նրա վիճակը։ Պուգաչովը ցած իջավ պատշգամբիկից։ Ձին մոտեցրին նրան։ Նա ճարպկու-

թյամբ թռավ թամբի վրա, չսպասելով կազակներին, որոնք այն է ուզում էին նստեցնել նրան։

Այն ժամանակ ամբոխի միջից տեսնեմ դուրս եկավ իմ Սավելիչը, մոտեցավ Պուգաչովին և նրան տվեց մի թերթ թուղթ։ Խելքս բան չէր կտրում, թե ինչումն է բանը։ «Այս ի՞նչ է», գոռոզ հարցրեց Պուգաչովը։

— Կարդա և հրամանքդ կիմանաս, — պատասխանեց Սավելիչը։

Պուգաչովը թուղթը վերցրեց և երկար նայեց նշանակալից տեսքով։ «Ի՞նչ դժար ես գրում, — ասաց նա վերջապես։— Լուսեղ մեր պայծառ աչքերը ոչինչ չեն կարում ջոկել։ Ո՞ւր է իմ օբեր-քարտուղարը»[66]։

Երիտասարդի մեկը արագ մոտ վազեց Պուգաչովին։ «Բա՛րձր կարդա», — ասաց ինքնակոչը, թուղթը նրան տալով։ Ես անչափ հետաքրքրվում էի իմանալու, թե ինչի մասին կարող էր իմ դաստիարակի խելքին փչել Պուգաչովին թուղթ գրելու։ Օբեր-քարտուղարն սկսեց բարձրաձայն, վանկ առ վանկ կարդալ հետևյալը.

«Երկու խալաթ, միտկալի և մետաքսե՝ զոլավոր — վեց մանեթ»։

— Սա ի՞նչ է նշանակում, — ասաց Պուգաչովը հոնքերը կիտելով։

«Հրամայիր՝ մնացածը կարդան», — անվրդով պատասխանեց Սավելիչը։

Օբեր-քարտուղարը շարունակեց.

«Մի մունդիր բարակ, կանաչ մահուդից — յոթ մանեթ։

«Մի սպիտակ մահուդի շալվար — հինգ մանեթ։

«Տասներկու հոլանդական քաթանե շապիկներ, մանժետներով — տաս մանեթ։

«Ճանապարհի փոքրիկ մի սնդուկ, թեյամաններով — երկու մանեթ ու կես...»

— Այս ի՞նչ փչոց է, — ընդհատեց Պուգաչովը։— Ես ի՞նչ գործ ունեմ սնդուկների և մանժետներով շալվարների հետ։

Սավելիչը խեղդված հազաց և սկսեց բացատրություններ տալ։ «Էս որ գրած է, հրամանքդ կտեսնի, որ իմ տիրոջ գույքի ցուցակն է, չարագործներն են թալանել...»

— Ի՞նչ չարագործներ, — ահեղ հարցրեց Պուգաչովը։

«Ներողություն, բերանիցս թռավ, — պատասխանեց Սավելիչը։ — Չարագործները չարագործներ չեն, բայց քո տղերքը մեր տունը մի քիչ քրքրել են ու բան ման են տարել։ Մի զայրանա. ձին որ ձի է, չորս ոտքով, էլի սայթաքում է։ Հրամայի, թող կարդա սրճնի»։

— Կարդա՛, — ասաց Պուգաչովը։ Քարտուղարը շարունակեց.

«Մի չթե վերմակ, մյուսը տաֆտայից[67] բամբկում — չորս մանեթ։

«Մի քուրք աղվեսի մորթուց, վրան կարմիր ռատին[68] քաշած — 40 մանեթ։

«Մեկ էլ նապաստակի մուշտակը, որ իմ տերը ձեր ողորմածության բաշխեց իջևանատանը — 15 մանեթ»։

— Այդ ի՞նչ բան է, — գոռաց Պուգաչովը հրացայտ աչքերը փայլեցնելով։

Խոստովանում եմ, որ ես սաստիկ վախեցա իմ խեղճ դաստիարակի համար։ Նա այն է՝ ուզում էր նորից բացատրություններ տալ, սակայն Պուգաչովը նրան ընդհատեց. «Ի՞նչպես դու համարձակվեցիր էս տեսակ դատարկ բաներով երևալ իմ աչքին, — գոռաց նա թուղթը քարտուղարի ձեռքից խլելով և այն Սավելիչի երեսին շպրտելով։ — Հիմա՛ր ծերուկ։ Նրանց թալանե՞լ են — ի՛նչ մի մեծ դժբախտություն է եղել։ Լավ իմացիր, քավթառ, որ դու պետք է հավիտյանս աղոթք անես իմ և իմ տղաների համար, որ քեզ և քո բարինին այստեղ չեն կախել ինձ չհնազանդվողների հետ միասին... Նապաստակի մուշտա՞կը։ Ես քեզ նապաստակի մուշտա՛կ ցույց կտամ։ Իսկ դու գիտե՞ս, որ ես կհրամայեմ կենդանի-կենդանի քո կաշին քերթեն մուշտակի համար»։

— Ինչպես կհրամայես, — պատասխանեց Սավելիչը. —

համա ես ճորտ մարդ եմ և իմ տիրոջ գույքի համար պետք է պատասխան տամ։

Երևում էր, որ Պուգաչովը մեծահոգության էր եկել։ Նա շրջեց ձիու գլուխը և հեռացավ, այլևս ոչ մի խոսք չասելով։ Շվաբրինը և ավագանին հետևեցին նրան։ Հրոսակը բերդից դուրս եկավ շարք կանգնած։ Ժողովուրդը գնաց Պուգաչովին ճանապարհ դնելու։ Հրապարակի վրա ես մենակ մնացի Սավելիչի հետ։ Իմ դաստիարակը ձեռքին բռնել էր իր ցուցակը և խորին ափսոսանքով զննում էր այն։

Տեսնելով իմ բարի համաձայնությունը Պուգաչովի հետ, նա կարծել էր, թե կարելի է դա գործադրել հօգուտ մեզ, բայց այդ խելոք դիտավորությունը նրան չհաջողվեց։ Ես քիչ էր մնում՝ նախատեի նրան իր անտեղի եռանդի համար և չկարողացա ծիծաղս պահել։ «Ծիծաղիր, տեր իմ,— պատասխանեց Սավելիչը.— ծիծաղիր... իսկ երբ ստիպված կլինենք նորից-նոր ձեռք բերել մեր ամբողջ տնտեսությունը, էն ժամանակ կտեսնենք՝ ծիծաղելի՞ կլինի, թե ոչ»։

Ես շտապեցի քահանայի տունը՝ Մարյա Իվանովնայի հետ տեսնվելու համար։ Երեցկինը մեզ դիմավորեց տխուր տեղեկությամբ։ Գիշերը Մարյա Իվանովնան հիվանդացել էր սաստիկ ջերմախտով։ Նա պառկած էր գիտակցությունը կորցրած և զառանցանքների մեջ։ Երեցկինն ինձ տարավ նրա սենյակը։ Ես զգույշ մոտեցա նրա մահճակալին։ Նրա դեմքի փոփոխությունն ինձ ապշեցրեց։ Հիվանդն ինձ չճանաչեց։ Երկար ես կանգնած էի նրա առջև, չլսելով ո՛չ հայր Գերասիմին, ոչ էլ նրա բարի կնոջը, որոնք կարծես թե մխիթարում էին ինձ։ Մռայլ մտքերն ալեկոծում էին ինձ։ Զարանենգ խռովարարների մեջ մնացած խեղճ, անօգնական որբուհու վիճակը և իմ անձնական անզորությունը սարսափեցնում էին ինձ։ Շվա՛բրինը, ամենից շատ Շվաբրինն էր այրում իմ երևակայությունը։ Ինքնակոչից իշխանություն ստանալով և ղեկավար լինելով բերդի մեջ, ուր մնացել էր դժբախտ աղջիկը՝ նրա ատելության անմեղ առարկան,— նա ամեն ինչ կարող էր անել։ Ի՞նչ պիտի անեի ես։ Ի՞նչպես

օգնություն ցույց տալ նրան։ Ի՞նչպես ազատել չարագործի ձեռքից։ Մնում էր մի միջոց. վճռեցի հենց նույն ժամին մեկնել Օրենբուրգ, որպեսզի շտապեցնեմ Բելոգորսկի բերդն ազատելը և ըստ հնարավորության աջակցեմ այդ բանին։ Ես հրաժեշտ տվի քահանային և Ակուլինա Պամֆիլովնային, թախանձագին հանձնարարելով նրան այն աղջկան, որին ես արդեն իմ կինն էի համարում։ Ես բռնեցի խեղճ աղջկա ձեռքը և համբուրեցի այն, արցունքով ողողելով։ «Գնա՛ք բարով, — ասում է երեցկինը, ինձ ճանապարհելով. — գնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ։ Գուցե ավելի լավ ժամանակ հանդիպենք։ Մի մոռանաք մեզ և շուտ-շուտ նամակ գրեք։ Խեղճ Մարյա Իվանովնան հիմա ձեզանից բացի ոչ մխիթարող ունի, ոչ հովանավոր»։

Հրապարակ դուրս գալով ես մի րոպե կանգ առա, նայեցի կախաղանին, գլուխ խոնարհեցի նրան, բերդից դուրս եկա և Օրենբուրգի ճանապարհով քայլեցի Սավելիչի ուղեկցությամբ, որը ինձնից ետ չէր ընկնում։

Մտքերով տարված գնում էի, երբ հանկարծ իմ հետևից ձիու դոփյուն լսեցի։ Ետ նայեցի. տեսնեմ՝ բերդից մի կազակ է արշավում բաշկիրական ձին հետևից քարշ տալով և հեռվից ինձ նշաններ անելով։ Ես կանգ առա և շուտով ճանաչեցի մեր ուրյադնիկին։ Հասնելով մեզ, նա իջավ իր ձիուց և մյուսի սանձն ինձ տալով, ասաց. «Ձե՛րդ բարեծնընդություն. մեր տերը ձեզ մի ձի է ընծայում և իր վրայից հանած մուշտակը (թամբին կապած էր ոչխարի մորթուց կարած մի քուրք)։ Մեկ էլ, — կապ ընկնելով ասաց ուրյադնիկը, — նա ձեզ ընծայում է... կես մանեթ... բայց ես ճանապարհին կորցրի. վեհանձնաբար ներեք ինձ»։ Սավելիչը խեթ-խեթ նայեց նրան և մրթմրթաց «Ճանապարհին կորցրի՜։ Հապա էն ի՞նչ է ծոցիդ մեջ զնգզնգում, անխի՛ղճ»։—«Ի՞նչ է զնգզնգում իմ ծոցո՞ւմ,—առարկեց, ուրյադնիկը բնավ չշփոթվելով։—Աստված ունես, ծերո՛ւկ, էդ սանձն է զնգզնգում, ոչ թե կես-մանեթանոցը»։—Լավ, — ասացի ես վեճն ընդհատելով։—Իմ կողմից շնորհակա-

լությամբ արա նրան, ով քեզ ուղարկել է. իսկ կորցրած կես-մանեթանոցը ետ դառնալիս աշխատիր գտնել և վերցրու քեզ՝ արաղի փող։ «Շատ շնորհակալ եմ, ձերդ բարեծննդություն, — պատասխանեց նա, ձիու գլուխը շրջելով.— Հավիտյան պետք է աստծուն աղոթեմ ձեզ համար»։ Այս ասելով նա քշեց ձին, մի ձեռքով ծոցը բռնած, և մի րոպեից կորավ մեր աչքից։

Ես հագա քուրքը և հեծա ձին, իմ գավակին նստեցնելով Սավելիչին։ «Ա՛յ տեսնում ես, տեր իմ, — ասաց ծերունին,—իզուր չէր, որ ես էգ սրիկային խնդրագիր տվի. գողի խղճմտանքը բռնել է, բա՞ս. թեև բաշկիրական ցռկցռկ յաբուն ու ոչխարի քուրքը չարժեն կեսը է՛ն բոլորի, ինչ որ նրանք՝ սրիկաները մեզնից գողացել են և ինչ որ դու ինքդ բարեհաճեցիր նրան բաշխել, համա էլի պետք կգա. քոսոտ շնից մի մազ պոկելն էլ բան է»։

ԳԼՈՒԽ X

ՔԱՂԱՔԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Տիրելով մարգ ու լեռներ,
Նա քաղաքին, արծվի պես, բարձրից նետում էր հայացքներ,
Բանակատեղի հետև նա հրամայեց պատվար շինել,
Ու շանթարկները [9] պահելով, բերել նրանց քաղաքի վրա
Մի մութ գիշերով:
Խերասկով

Օրենբուրգին մոտենալիս մենք տեսանք կոճղավորների մի ամբոխ՝ ածելած գլուխներով, դահճի ունելիներով այլանդակված դեմքերով։ Նրանք աշխատում էին ամրությունների մոտ, կայազորի ինվալիդների հսկողության տակ։ Ոմանք փոքրիկ սայլակներով դուրս էին կրում խրամատը լցրած աղբը, մյուսները բահերով փորում էին հողը. պատնեշի վրա որմնադիրները աղյուս էին կրում և նորոգում քաղաքի պարիսպը։ Դարպասների մոտ ժամապահները մեզ

կանգնեցրին և պահանջեցին մեր անցագրերը։ Հենց որ սերժանտը լսեց, թե ես Բելոգորսկի բերդից եմ գալիս, իսկույն ևեթ ինձ տարավ ուղիղ գեներալի տունը։

Ես նրան տեսա այգում։ Նա զննում էր աշնան շնչից մերկացած խնձորենիները ու ծեր այգեպանի հետ բները խնամքով փաթաթում տաք ծղոտով։ Նրա դեմքը հանգստություն էր արտահայտում, առողջություն և բարեհոգություն։ Իմ գալուն նա ուրախացավ և սկսեց հարցուփորձ անել սարսափելի անցքերի մասին, որոնց ես ականատես էի եղել։ Ես ամեն ինչ պատմեցի նրան։ Ծերունին ուշադրությամբ լսում էր ինձ և մերթ ընդ մերթ կտրատում չորացած ճյուղերը։ «Խե՜ղճ Միրոնով, — ասաց նա, երբ ես վերջացրի իմ տխուր պատմությունը։ — Ափսոս, լավ սպա էր։ Տիկին Միրոնովան էլ լավ կին էր և ի՜նչպիսի վարպետն էր սնկերը թթու դնելու գործում։ Իսկ Մա՞շան ինչ եղավ, կապիտանի աղջիկը»։ Ես պատասխանեցի, որ նա մնացել է բերդում, երեցկնոջ ձեռքին։ «Ա՛յ, ա՛յ, ա՛յ, — նկատեց գեներալը։ — Դա վատ է, շա՛տ վատ։ Ավազակների դիսցիպլինայի վրա երբեք չի կարելի վստահել։ Ի՞նչ կլինի խեղճ աղջկա վիճակը»։ Ես պատասխանեցի, որ Բելոգորսկի բերդը հեռու չէ և որ հավանորեն նորին գերազանցությունը չի հապաղի զորք ուղարկել նրա դժբախտ բնակիչներին ազատելու համար։ Գեներալը գլուխը ճոճեց անվստահությամբ։ «Կտեսնենք, կտեսնենք, — ասաց նա։ — Այդ մասին մենք դեռ ժամանակ կունենանք խոսելու։ Խնդրեմ՝ ինձ մոտ համեցեք մի բաժակ թեյ խմելու. այսօր իմ տանը ռազմական խորհուրդ կլինի։ Դու կարող ես մեզ ճիշտ տեղեկություններ տալ այդ անպիտան Պուգաչովի և նրա զորքի մասին։ Հիմա, առայժմ գնա հանգստացի»։

Ես գնացի ինձ հատկացված բնակարանը, ուր Սավելիչն արդեն տնտեսություն էր անում, և անհամբեր սկսեցի սպասել նշանակված ժամանակին։ Ընթերցողը հեշտ կպատկերացնի, որ ես փութացի ներկայանալ այդ խորհրդակցությանը, որն այնպիսի ազդեցություն պիտի ունե-

ճար իմ ճակատագրի վրա։ Նշանակված ժամին ես արդեն գեներալի մոտ էի։

Նրա տանը ես տեսա քաղաքային չինովնիկներից մեկին, հիշում եմ՝ մաքսատան դիրեկտորին — մի հաստ ու կարմրերես ծերուկի, գլազետից[70] կարած կաֆտանը[71] հագին։ Նա սկսեց հարց ու փորձ անել Իվան Կուզմիչի մասին, որին սանահայր էր անվանում, և հաճախակի իմ խոսքը կտրում էր լրացուցիչ հարցերով և խրատական նկատողություններով, որոնք թեպետ և չէին վկայում, որ նա ռազմական արվեստին տեղյակ մարդ է, ապա համենայն դեպս երևան էին հանում նրա ուշիմությունն ու բնական խելքը։ Մինչ այս, մինչ այն՝ հավաքվեցին և մյուս հրավիրվածները։ Երբ ամենքը նստեցին և բոլորին մի-մի բաժակ թեյ տվին, գեներալը միանգամայն պարզ և մանրամասն բացատրեց բանի էությունը. «Հիմա, պարոնայք, — շարունակեց նա, — պետք է վճռել, թե մենք ի՛նչպես պետք է գործենք խռովարարների դեմ՝ հարձակողակա՞ն թե՝ պաշտպանողական: Սույն եղանակներից յուրաքանչյուրն ունի իր օգուտն ու վնասը։ Հարձակողական գործողությունն ավելի հուսալի է թշնամուն շուտափույթ ոչնչացնելու համար. պաշտպանողական գործողությունն ավելի հաստատ է և անվտանգ... Եվ այսպես, սկսենք ձայներ հավաքել օրինական կարգով, այսինքն՝ սկսած աստիճանով կրտսերներից։ Պ. պրապորշչիկ[72], — շարունակեց նա ինձ դառնալով։ — Հաճեցեք մեզ պարզել ձեր կարծիքը»։

Ես կանգնեցի և համառոտակի նկարագրելով նախ Պուգաչովին և նրա հրոսակը, հաստատապես ասացի, որ ինքնակոչը հնար չունի կանոնավոր զորքի դիմադրելու։

Իմ կարծիքը չինովնիկների կողմից ընդունվեց ակնհայտ անբարեհաճությամբ։ Դրանում նրանք տեսնում էին խուճապայնություն և երիտասարդի հանդգնություն։ Լսվեցին տրտունջի ձայներ և ես որոշակի լսեցի ծծկեր բառը, կիսաձայն արտասանված մեկի կողմից։ Գեներալը ինձ դարձավ և ժպիտով ասաց. «Պ. պրապորշչիկ, ռազմական

խորհրդակցությունների ժամանակ առաջին ձայները սովորաբար տրվում են հօգուտ հարձակողական շարժումների, օրինական կարգն այդ է։ Հիմա սկսենք շարունակել ձայներ հավաքելը։ Պ. կոլեժսկի խորհրդական[73], ասացե՛ք ձեր կարծիքը»։

Գլազետի կաֆտան հագած ծերունին շտապով խմեց երրորդ բաժակ թեյը, որի մեջ բավականաչափ ռոմ էր խառնած, և պատասխանեց գեներալին. «Ես կարծում եմ, ձերդ գերազանցություն, որ չպետք է գործենք ո՛չ հարձակողական, ոչ էլ պաշտպանողական»։

«Այդ ի՞նչպես թե, պարոն կոլեժսկի խորհրդական, — զարմացած առարկեց գեներալը։ — Տակտիկան[74] ուրիշ եղանակներ չունի. պաշտպանողական կամ հարձակողական...»։

— Ձե՛րդ գերազանցություն, շարժվեցեք կաշառողական։

«Էհե՜, ձեր կարծիքը հույժ ողջամիտ է։ Տակտիկան թույլ է տալիս կաշառողական շարժում անել և մենք կօգտվենք ձեր խորհրդից։ Կարելի կլինի անպիտանի գլխի համար խոստանալ... յոթանասուն կամ մինչև իսկ հարյուր ռուբլի... գաղտնի գումարից...»

— Եվ այն ժամանակ, — ընդհատեց մաքսատան վերատեսուչը, — թող ես կիրգիզական ոչխար լինեմ և ոչ թե կոլեժսկի խորհրդական, եթե այդ գողերը մեզ չհանձնեն իրենց ատամանին[75] ոտք ու ձեռքը շղթայած։

«Այդ մասին մենք դեռ կմտածենք ու կխոսենք, — պատասխանեց գեներալը։ — Սակայն համենայն դեպս պետք է ձեռնարկել նաև ռազմական միջոցներ։ Պարոնա՛յք, տվեք ձեր ձայներն ըստ օրինական կարգի»։

Բոլոր կարծիքները հակառակ էին իմին։ Չինովնիկներն ամենքն էլ խոսում էին զորքի անհուսալիության, հաջողության անվստահելիության, զգուշության և այլ նման բաների մասին։ Բոլորն էլ այն կարծիքին էին, որ ավելի խոհեմ կլինի մնալ թնդանոթների պաշտպանության տակ քարե հաստատուն պարիսպի ներսում, քան թե բաց դաշտում փորձել զենքի բախտը։ Վերջապես գեներալը բոլոր կարծիքները

լսելուց հետո իր ծխամորճից թափ տվեց մոխիրը և հետևյալ ճառն արտասանեց.

«Տյա՛րք իմ. ես պետք է ձեզ հայտարարեմ, որ ես իմ կողմից միանգամայն համամիտ եմ պարոն պրապորշչիկի կարծիքին, քանի որ սույն կարծիքը հիմնված է առողջ տակտիկայի բոլոր կանոնների վրա, որ համարյա միշտ գերադասում է հարձակողական շարժումները պաշտպանողականից»։

Այս խոսքերի վրա նա դադար առավ և սկսեց լցնել ծխամորճը։ Իմ ինքնասիրությունը ցնծում էր։ Ես հպարտությամբ նայեցի չինովնիկներին, որոնք միմյանց հետ փսփսում էին անբավական ու անհանգիստ տեսքով։

«Սակայն, տյա՛րք իմ, — շարունակեց նա խոր հոգոցի հետ ծխի մի թանձր քուլա թողնելով, — ես չեմ համարձակվում այդքան մեծ պատասխանատվություն վերցնել, երբ հարցը վերաբերում է նորին արքայական մեծության, իմ ամենաողորմած թագուհու՝ ինձ հավատացած գավառների ապահովությանը։ Եվ այսպես, ես համաձայնվում եմ ձայների մեծամասնության հետ, որը վճռեց, թե ավելի խոհեմ և անվտանգ կլինի քաղաքի ներսում սպասել պաշարման, իսկ թշնամու հարձակումները հրետանու ուժով և (եթե հնարավոր լինի) արտելքներով ետ մղել»։

Չինովնիկներն իրենց հերթին ծաղրանքով նայեցին ինձ։ Խորհրդակցությունը վերջացավ։ Ես չէի կարող չափսոսալ թուլությունը հարգելի զորականի, որը հակառակ սեփական համոզման, վճռեց հետևել անտեղյակ ու անփորձ մարդկանց կարծիքներին։

Այս նշանավոր խորհրդակցությունից մի քանի օր հետո մենք իմացանք, որ Պուգաչովը հավատարիմ իր խոստման, մոտենում է Օրենբուրգին։ Խռովարարների զորքը ես տեսա քաղաքի պարսպի գլխից։ Ինձ թվաց, որ նրանց թիվը տասնապատիկ ավելացել է վերջին հարձակումից հետո, որին ես ներկա էի։ Նրանք ունեին նաև հրետանի, որ Պուգաչովը գրավել էր իր՝ արդեն իսկ նվաճած փոքրիկ բերդում։ Հիշե-

ջով խորհրդակցության որոշումը, ես նախատեսում էի երկարատև արգելափակում Օրենբուրգի պարիսպների մեջ և սրտնեղումից քիչ մնաց, որ լաց լինեի։

Ես չեմ նկարագրի Օրենբուրգի պաշարումը, որ պատմությանն է պատկանում և ոչ թե ընտանեկան հուշագրություններին։ Կարճ կասեմ, որ սույն պաշարումը տեղական իշխանության անզգուշության պատճառով կործանարար եղավ բնակիչների համար, որոնք սով և ամեն տեսակ աղետներ կրեցին։ Հեշտ է պատկերացնել, որ կյանքը Օրենբուրգում ամենաանտանելին էր։ Ամենքը վհատությամբ էին սպասում իրենց բախտի որոշմանը, ամենքն ախ ու վախ էին քաշում թանկությունից, որ իրոք սոսկալի էր։ Բնակիչները սովորեցին թնդանոթի ռումբերին, որ ընկնում էին նրանց տան բակերը։ Մինչև իսկ Պուգաչովի հրոսումները այլևս չէին գրավում ընդհանուր հետաքրքրությունը։ Ես մեռնում էի ձանձրույթից։ Ժամանակն անցնում էր։ Բելոգորսկի բերդից նամակներ չէի ստանում։ Բոլոր ճանապարհները կտրված էին։ Մարիա Իվանովնայից հեռու լինելն անտանելի էր դառնում ինձ համար։ Նրա վիճակի անհայտությունն ինձ տանջում էր։ Իմ միակ բավականությունը ձի նստելն էր։ Պուգաչովի ողորմածությամբ ես մի լավ ձի ունեի, որի հետ բաժանում էի իմ աղքատիկ սնունդը և որին նստած, ամեն օր դուրս էի գալիս քաղաքից՝ Պուգաչովի ձիավորների հետ հրացանաձգության բռնվելու համար։ Այս հրացանաձգությունների մեջ գերակշռությունը սովորաբար չարագործների կողմն էր, որոնք կուշտ էին, քեֆները տեղը և լավ ձիեր նստած։ Քաղաքի վտիտ այրուձին չէր կարողանում հաղթել նրանց։ Երբեմն դաշտ էր դուրս գալիս և մեր սոված հետևակազորը, սակայն ձյան խորությունը նրան խանգարում էր հաջողակ գործել ցաք ու ցրիվ ձիավորների դեմ։ Հրետանին ապարդյուն դղրդում էր պատնեշի վրայից, իսկ դաշտում ձիերի ուժասպառության պատճառով խրվում էր ձյան մեջ ու չէր շարժվում։ Այս պատկերն ունեին մեր ռազմական

գործողությունները։ Ահա թե Օրենբուրգի չինովնիկներն ի՛նչ էին անվանում զգուշություն և ողջամտություն։

Մի անգամ, երբ ինչպես եղավ մեզ հաջողվեց ցրել ու քշել խռովարարների բավական մի ստվար ամբոխ, ես ձիս քշեցի մի կազակի վրա, որ ետ էր մնացել իր ընկերներից։ Ես արդեն պատրաստ էի իմ թուրքական թրով հարվածել նրան, երբ նա հանկարծ գլխարկը հանեց ու բղավեց. «Բարև՛ ձեզ, Պյոտր Անդրեյիչ։ Աստված ի՞նչ հալի եք»։

Ես նայեցի նրան և ճանաչեցի մեր ուրյադնիկին։ Անասելի ուրախացա նրան հանդիպելու համար։ «Բարև՛, Մաքսիմիչ, — ասացի նրան։ — Վաղո՞ւց է որ դուրս ես եկել Բելոգորսկից»։

«Վաղուց չի, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հենց երեկ եմ վերադարձել այնտեղից։ Նամակ ունեմ ձեզ տալու»։

— Ո՞ւր է, — կանչեցի ես, ամբողջովին կրակ կտրելով։

«Մոտս է, — պատասխանեց Մաքսիմիչը ձեռքը ծոցը դնելով։ — Ես խոստացա Պալաշային մի կերպ հնար գտնել նամակը ձեզ հանձնելու»։ Այս ասելով նա ինձ հանձնեց ծալծլած թղթի մի կտոր ու իսկույն ևեթ ձին քշեց հեռացավ։ Ես թուղթը բաց արի և սրտի թրթռումով կարդացի հետևյալ տողերը.

«Աստծուն հաճելի էր ինձ հանկարծ զրկել հորից ու մորից. աշխարհիս երեսին ոչ հարազատներ ունեմ, ոչ էլ հովանավորներ։ Դիմում եմ ձեզ, գիտենալով, որ դուք միշտ էլ իմ բարին եք կամեցել և որ դուք պատրաստ եք ամեն մեկին օգնելու։ Աղոթում եմ աստծուն, որ այս նամակը մի կերպ հասնի ձեր ձեռքը։ Մաքսիմիչն ինձ խոստացավ այն հասցնել ձեզ։ Պալաշան Մաքսիմիչից լսել էր նույնպես, որ նա հաճախ հեռվից ձեզ տեսնում է արտելքների ժամանակ և որ դուք բոլորովին չեք պահպանում ձեզ և չեք մտածում նրա՛նց մասին, որոնք արտասուքն աչքերին ձեզ համար աղոթք են անում աստծուն։ Երկար ժամանակ ես հիվանդ էի, իսկ երբ առողջացա, Ալեքսեյ Իվանովիչը, որը մեզանում իշխանավոր է դարձել հանգուցյալ հայրիկի փոխարեն,

հայր Գերասիմին հարկադրեց ինձ իրեն հանձնել, սպառնալով Պուգաչովի անունից։ Ապրում եմ մեր տանը, հսկողության տակ։ Ալեքսեյ Իվանովիչն ինձ հարկադրում է իր հետ ամուսնանալ։ Նա ասում է, որ փրկել է իմ կյանքը, որովհետև ծածկել է Ակուլինա Պամֆիլովնայի խաբեբայությունը, որը չարագործներին ասել է, թե իբր ես նրա քրոջ աղջիկն եմ։ Իսկ ինձ համար ավելի հեշտ է մեռնել, քան թե կին լինել այնպիսի մի մարդու, ինչպիսին Ալեքսեյ Իվանովիչն է։ Նա ինձ հետ շատ դաժան է վարվում և սպառնում է, որ եթե խելքս գլուխս չհավաքեմ և չհամաձայնվեմ, ապա ինձ կտանի բանակատեղ՝ չարագործի մոտ և որպես թե ինձ հետ էլ նույնը կլինի, ինչ եղավ Լիզավետա Խարլովայի[76] հետ։ Ես խնդրեցի Ալեքսեյ Իվանովիչին, որ ինձ ժամանակ տա մտածելու։ Նա համաձայնվեց սպասել նորից երեք օր, իսկ եթե երեք օրից հետո ես նրան չառնեմ, այն ժամանակ այլևս ոչ մի փրկություն չի լինի ինձ։ Սիրելի Պյոտր Անդրեյիչ. դո՛ւք եք իմ միակ հովանավորը, պաշտպանեցեք խեղճիս։ Խնդրեցեք գեներալին և բոլոր հրամանատարներին՝ շտապել սիկուրս ուղարկել մեզ, ինքներդ էլ եկեք, եթե կարող եք։ Մնամ խոնարհաբար ձեր խեղճ որբուհի՝

Մարիա Միրոնովա»։

Այս նամակը կարդալով քիչ մնաց խելքս թռցնեի։ Ես դեպի քաղաք սլացա, անողոքաբար խթանելով իմ խեղճ ձիուն։ Ճանապարհին էլ ի՛նչ ասես չէի ծրագրում դժբախտ աղջկան փրկելու համար և ոչ մի հնար չկարողացա մտածել։ Քաղաք հասնելով, ես ուղիղ գեներալի մոտ գնացի և շտապով ներս վազեցի։

Գեներալը ետ ու առաջ էր գնում իր սենյակում, ծխելով կոճղափայտից պատրաստած իր ծխամորճը։ Ինձ տեսնելով նա կանգ առավ։ Հավանորեն իմ տեսքը նրան ապշեցրեց. նա հոգատարությամբ հարց ու փորձ արեց իմ շտապ գալու պատճառի մասին։ «Ձե՛րդ գերազանցություն, — ասացի ես նրան, — դիմում եմ ձեզ ինչպես հարազատ հորս.

ի սեր աստծու, մի մերժեք իմ խնդրանքը. հարցն իմ ամբողջ կյանքի երջանկությանն է վերաբերում»։

«Ի՞նչ է պատահել, սիրելիս, — հարցրեց ապշած ծերունին։ — Ի՞նչ կարող եմ անել քեզ համար։ Ասա՛»։

— Ձերդ գերազանցություն, հրամայեցե՛ք, որ ինձ մի վաշտ զինվոր և մի հիսնյակ կազակներ տան և թույլ տվեք Բելոգորսկի բերդը մաքրեմ։

Գեներալը աչքերը սևեռեց վրաս, երևի կարծելով, որ ես գժվել եմ (որում նա համարյա թե չսխալվեց)։

«Այդ ի՞նչպես։ Մաքրել Բելոգորսկի բե՞րդը», — ասաց նա վերջապես։

— Հաջողության համար երաշխավորում եմ, — եռանդով պատասխանեցի ես։ — Միայն թե՝ ինձ թողեք։

«Ո՛չ, երիտասարդ, — ասաց նա գլուխը ճոճելով։ — Այդպիսի մեծ տարածության վրա թշնամին ձեզ հեշտությամբ կկտրի գլխավոր ռազմական կոմունիկացիայից[77] և կատարյալ հաղթություն կտանի ձեր դեմ։ Կտրված կոմունիկացիան...»

Ես վախեցա, տեսնելով որ նա տարվում է ռազմական դատողություններով և շտապեցի ընդհատել նրան. «Կապիտան Միրոնովի աղջիկը, — ասացի ես նրան, — ինձ նամակ է գրել. նա օգնություն է խնդրել. Շվաբրինը նրան հարկադրում է իր հետ ամուսնանալ»։

«Մի՞թե։ Օ՜, այդ Շվաբրինն ամենամեծ Schelm-ն[78] է և եթե ձեռքս ընկնի, ես կհրամայեմ 24 ժամվա ընթացքում դատել և մենք նրան կգնդակահարենք բերդի պարապետի[79] վրա։ Իսկ առայժմ պետք է համբերություն ունենալ...»

— Համբերությո՞ւն ունենա՜լ, — գոռացի ես ինձ կորցրած։ — Իսկ մինչ այդ կամուսնանա՜ Մարիա Իվանովնայի հետ...

«Օ՜, — առարկեց գեներալը։ — Դա դեռ դժբախտություն չէ. նրա համար ավելի լավ կլինի առայժմ լինել Շվաբրինի կինը. նա հիմա կարող է հովանավորել այդ աղջկան, իսկ երբ մենք նրան կգնդակահարենք, այն ժամանակ, աստված

ողորմած է, կգտնվեն և լավ փեսացուներ։ Գեղեցիկ և երիտասարդ այրիները տանը չեն մնում, այսինքն ես ուզում էի ասել, որ երիտասարդ այրին ավելի շուտ կգտնի իրեն ամուսին, քան թե աղջիկը»։

— Ավելի շուտ կհամաձայնվեմ մեռնե՛լ, — ասացի ես կատաղած, — քան թե նրան զիջել Շվաբրինին։

«Բա՜, բա՜, բա՜, բա՜, — ասաց ծերունին։ — Հիմա ես հասկանում եմ, որ դու սիրահարված ես Մարիա Իվանովնային։ Օ՜, դա ուրիշ բան է։ Խե՜ղճ տղա։ Բայց այնուամենայնիվ ես չեմ կարող քեզ մի վաշտ զինվոր և մի հիսնյակ կազակ տալ։ Այդ արշավանքն անմիտ բան կլիներ. ես չեմ կարող դա վերցնել իմ պատասխանատվության վրա»։

Ես մնացի գլխիկոր. հուսահատությունն ինձ պատեց։ Հանկարծ մի միտք անցավ իմ գլխով. թե ի՛նչ էր դա, ընթերցողն այն կտեսնի հետևյալ գլխում, ինչպես ասում են հնամենի վիպագիրները։

ԳԼՈՒԽ XI

ԽՌՈՎԱՐԱՐ ԱՎԱՆԸ

Կուշտ էր առյուծն այդ պահին, թեև ի ծնե կատաղի.
«Իմ քարանձավը, ասա, ինչու՞ շնորհ բերեցիր»—
Հարցրեց նա սիրալիր։

Ա. Սումարոկով

Ես թողի գեներալին և շտապեցի դեպի իմ բնակարանը։ Սավելիչն ինձ դիմավորեց իր սովորական հորդորանքով. «Դու էլ հավաս ունես, տեր իմ, գլուխ դնել հարբած ավազակների հետ։ Մի՞թե բոյարինին[80] վայել գործ է դա։ Ո՛վ գիտե՝ ինչ կգա գլխներիս — ժամանակը չար է. ոտքով-գլխով կկորչես։ Էն էլ մի բան էր, թե ասենք թուրքերի կամ շվեդների դեմ կռվի գնայիր. թե չէ, ասելն էլ ամոթ է՝ ախր ո՛ւմ վրա ես քշում»։

Ես նրա խոսքը կտրեցի հարցով. ընդամենն ինչքա՞ն փող ունեմ։ «Քեզ հերիք կանի,— պատասխանեց նա ինքնագոհ տեսքով։— Սրիկաներն ինչքան ուշադիր տնտղեցին ամեն քունջ ու պուճախ, ես էլի կարողացա թաքցնել»։ Այդ խոսքերի հետ նա գրպանից հանեց մի երկար, գործված քսակ՝ լի արծաթով։ «Սավե՛լիչ,— ասացի ես նրան,— տուր ինձ հիմա դրա կեսը, իսկ մնացածը վերցրու քեզ։ Ես գնում եմ Բելոգորսկի բերդը»։

«Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ,— ասաց բարի դաստիարակս դողդոջուն ձայնով։— Աստծո՛ւց վախեցիր. դու ի՞նչպես պիտի ճանապարհ ընկնես հիմա, երբ ավազակների ձեռքից ոչ մի տեղ գնալ չի կարելի։ Գոնե ծնողներիդ խղճա, թե որ ինքդ քեզ չես մեղքանում։ Ո՞ւր պիտի գնաս։ Ինչո՞ւ։ Մի քիչ սպասիր, զորքերը կգան, բոլոր ավազակներին կբռնոտեն, էն ժամանակ գնա ո՛ւր ուզում ես»։

Բայց իմ վճռականությունը հաստատ էր։ «Այլևս ուշ է խորհուրդներ տալ,— պատասխանեցի ես ծերունուն։— Ես պետք է գնամ, ես չեմ կարող չգնալ։ Հոգ մի անի, Սավե՛լիչ. աստված ողորմած է, երևի կտեսնվենք։ Բայց տես՝ չլինի ափսոսաս ու ժլատություն անես։ Քեզ համար ինչ որ պետք լինի, կգնես՝ թեկուզ թանկ գնով։ Այդ փողերը ես քեզ եմ նվիրում։ Եթե երեք օրից չվերադառնամ...»

«Էդ ի՞նչ ես ասում, տեր իմ,— ընդհատեց ինձ Սավելիչը։— Լինելու բա՞ն է, որ քեզ մենակ թողնեմ։ Էդ մեկը դու երազումդ էլ չես կարող ինձնից խնդրել։ Համա որ դու վճռել ես գնալ, էն ժամանակ ես թեկուզ ոտով կգամ քո հետևից և քեզ մենակ չեմ թողնի։ Լինելու բա՞ն է, որ ես առանց քեզ նստեմ պարսպի ներսում։ Ի՞նչ է, գժվել եմ, հա՞։ Քո կամքն է, տեր իմ, բայց քեզնից ձեռք չեմ քաշի»։

Ես գիտեի, որ իզուր է վիճել Սավելիչի հետ և թույլ տվի նրան ճանապարհի պատրաստություն տեսնել։ Կես ժամից ես նստեցի իմ լավ նժույգը, իսկ Սավելիչը՝ մի վտիտ ու կաղ ձի, որ նրան ձրի տվեց քաղաքի բնակիչներից մեկը, միջոցներ չունենալով կերակրելու նրան։ Մենք ուղղ-

վեցինք դեպի քաղաքի դարպասները. պահապանները մեզ բաց թողին. մենք դուրս եկանք Օրենբուրգից։

Սկսում էր մթնել։ Ճանապարհս գնում էր Բերդսկ կոչված ավանով, որը Պուգաչովի հանգրվանն էր։ Ուղիղ ճանապարհը ծածկված էր ձյունով, սակայն տափաստանի վրա ամենուր նկատելի էին ձիավորների ամեն օր նորոգվող հետքերը։ Ձիս ընթանում էր խոշոր վարգով։ Սավելիչը հազիվ էր կարողանում հեռվից հետևել և ամեն րոպե ձայն էր տալիս ինձ. «Կամա՛ց, տեր իմ, ի սե՛ր աստծո՝ կամա՛ց. իմ անիծյալ քոսոտը հազիվ է հասնում քո երկար-ոտանի դևի հետևից։ Ախր ո՞ւր ես շտապում։ Լավ էր, թե քեֆի էինք կանչվել, թե չէ, արի տես, որ կորստյան անդունդն ենք քշում... Պյոտր Անդրեյիչ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ... Մի՛ սպանի... Աստվա՛ծ իմ, տիրոջ երեխան ձեռից գնա՛ց»։

Շուտով առկայծեցին Բերդսկի կրակները։ Մենք մոտեցանք խրավանդներին՝ ավանի բնական ամրություններին։ Սավելիչն ինձնից ետ չէր մնում, չընդհատելով իր աղերսալից պաղատանքը։ Ես հույս ունեի ավանի կողքովն ապահով անցնել, երբ հանկարծ կիսախավարի մեջ, ուղիղ իմ առջև տեսա հինգ գեղջուկների, մահակներով զինված. դա Պուգաչովի հանգրվանի առաջավոր պահակախումբն էր։ Մեզ ձայն տվին։ Նշանաբանը չիմանալով, ես ուզում էի լռելյայն անցնել նրանց մոտով, բայց նրանք իսկույն ևեթ շրջապատեցին ինձ և նրանցից մեկը ճանկեց ձիուս սանձը։ Ես սուրս հանեցի և խփեցի գեղջուկի գլխին. գդակը փրկեց նրան, սակայն նա երերաց ու սանձը ձեռքից թողեց։ Մյուսները շփոթվեցին և փոքր ինչ հեռու փախան. ես օգտվեցի այդ րոպեից, խթանեցի ձիս ու սլացա։

Վերահաս գիշերվա մութը կարող էր ինձ փրկել ամեն տեսակ վտանգից, երբ հանկարծ, ետ նայելով տեսա, որ Սավելիչն ինձ հետ չէ։ Խեղճ ծերունին իր կաղ ձիով չէր կարողացել պրծնել ավազակների ձեռքից։ Ճարս ի՞նչ էր։ Մի քանի րոպե նրան սպասելուց հետո և հավաստիանալով,

որ նա բռնված է, ես շրջեցի ձիուս գլուխը և ետ դարձա նրան ազատելու։

Խրավանդին մոտենալով, հեռվից լսեցի աղմուկ, աղաղակներ և իմ Սավելիչի ձայնը։ Ես ավելի արագացրի ձիուս ընթացքը և շուտով նորից ընկա պահակող գեղջուկների մեջ, որոնք մի քանի րոպե առաջ ինձ կանգնեցրել էին։ Սավելիչը նրանց մեջն էր։ Նրանք ծերունուն իջեցրել էին ձիուց և պատրաստվում էին նրան կապոտել։ Իմ մոտենալը նրանց ուրախացրեց։ Աղաղակներով հարձակվեցին ինձ վրա և մի ակնթարթում քարշ տվին ձիուս վրայից։ Նրանցից մեկը, ըստ երևույթին գլխավորը, հայտնեց մեզ, որ նա իսկույն ևեթ մեզ կտանի թագավորի մոտ։ «Իսկ մեր տերը, — ավելացրեց նա, — իրավունք ունի հրամայելու՝ ձեզ հիմա՞ կախեն, թե — սպասենք առավոտ լուսին»։ Ես չընդդիմացա. Սավելիչը հետևեց իմ օրինակին և պահակները հանդիսավոր կերպով մեզ տարան։

Մենք կտրեցինք խրավանդը և մտանք ավանը։ Բոլոր խրճիթներում կրակներ էին վառվում։ Աղմուկն ու աղաղակները լսվում էին ամենուր։ Փողոցում ես բազմաթիվ մարդիկ տեսա, բայց մթության մեջ ոչ ոք մեզ չնկատեց և հանձինս ինձ չնկատեց Օրենբուրգի սպային։ Մեզ ուղիղ տարան երկու փողոցների խաչաձևման անկյունում գտնվող խրճիթը։ Դարբասի մոտ կային գինու մի քանի տակառներ և երկու թնդանոթ։ «Ահա և պալատը, — ասաց գեղջուկներից մեկը. — իսկույն կտեղեկացնենք ձեր մասին»։ Նա մտավ խրճիթ։ Ես նայեցի Սավելիչին. ծերունին խաչակնքում էր, քթի տակ աղոթք մրմնջալով։ Երկար սպասեցի ես. վերջապես գեղջուկը վերադարձավ և ասաց ինձ. «Գնա՛. մեր տերը հրամայեց ներս թողնել սպային»։

Ես մտա խրճիթը կամ պալատը, ինչպես անվանում էին գեղջուկները։ Ներսը լուսավորված էր երկու ճարպամոմով, իսկ պատերը պատատել էին ոսկեզօծ թղթով. սակայն, երկար նստարանները, սեղանը, թոկից կախված լվացարանը, մեխից քարշ երեսսրբիչը, անկյունում դրված

ունեյին և լայն Թարեքը՝ վրան կճուճներ,—ամեն ինչ այնպես էր, ինչպես սովորական խրճիթում։ Պուգաչովը նստած էր սրբերի պատկերների տակ, կարմիր կաֆտանը հագին, երկարավուն գդակը գլխին և ձեռքերը հանդիսավոր կերպով մեջքին դրած։ Շինծու քծնության տեսքով նրա մոտ կանգնած էին մի քանիսն իր գլխավոր ընկերներից։ Երևում էր, որ Օրենբուրգից սպա գալու լուրը խռովարարների մեջ մեծ հետաքրքրություն էր զարթեցրել և, որ նրանք պատրաստվել էին ինձ հանդիսավորությամբ դիմավորելու։ Պուգաչովն ինձ ճանաչեց առաջին իսկ հայացքից։ Նրա կեղծ հանդիսավորությունը հանկարծ չքացավ։ «Ա՜, ձերդ բարեծննդություն, — ասաց նա ինձ աշխուժությամբ։ — Ի՞նչպես եք։ Բարի՛ լինի. ինչի՞ եք եկել»։ Ես պատասխանեցի, որ գնում էի իմ գործով և որ նրա մարդիկ ինձ կանգնեցրին։ «Իսկ ի՞նչ գործով», — հարցրեց նա ինձ։ Ես չգիտեի՝ ի՛նչ պատասխանել։ Պուգաչովը ենթադրելով, որ ես չեմ ուզում բացատրություն տալ վկաների ներկայությամբ, դարձավ իր ընկերներին և նրանց հրամայեց դուրս գնալ։ Բոլորը հնազանդվեցին, բացի երկուսից, որոնք տեղերից չշարժվեցին։ «Խոսի՛ր համարձակ, — ասաց ինձ Պուգաչովը. — սրանցից ես ոչինչ չեմ թաքցնում»։ Ես նայեցի ինքնակոչի մտերիմներին։ Նրանցից մեկը՝ վտիտ ու կուզիկ մի ծերուկ — ճերմակ մորուքով, աչքի ընկնող ոչինչ չուներ, բացի կապտագույն ժապավենից, որ պատել էր ուսովը, գորշ արմյակի վրայից։ Բայց ես հավիտյանս չեմ մոռանա նրա ընկերոջը։ Նա բարձրահասակ էր, մարմնեղ ու լայնաթիկունք, և ինձ թվաց մոտ քառասունհինգ տարեկան։ Թավ, շեկ մորուքը, գորշ պսպղուն աչքերը, քիթը՝ առանց քթածակերի և ճակատի ու այտերի վրայի կարմրավուն բծերը անմեկնելի մի արտահայտություն էին տալիս նրա չեչոտ, լայն դեմքին։ Նա հագին ուներ կարմիր շապիկ, կիրգիզական խալաթ և կազակի շալվար։ Առաջինը (ինչպես հետո իմացա) փախստական կապրալ Բելոբորոդովն[81] էր. երկրորդ՝ Աֆանասիյ Սոկոլովը (Խլոպուշա[82] կոչեցյալ) աքսորական մի հանցա-

գործը որը երեք անգամ փախել էր Սիբիրի հանքահորերից։ Չնայած այն զգացումներին, որ սաստիկ հուզում էին ինձ, իմ երևակայությունը խիստ զբաղեցնում էին այս մարդիկ, որոնց մեջ այսպես անսպասելի ընկել էի ես։ Սակայն Պուգաչովն ինձ ուշքի բերեց իր հարցով. «Ասա, ի՞նչ գործով ես դու Օրենբուրգից դուրս եկել»։

Արտասովոր մի միտք ծագեց իմ գլխում։ Ինձ թվաց, թե նախախնամությունը, որ սրանով երկրորդ անգամն էր ինձ բերում Պուգաչովի մոտ, առիթ էր տալիս իմ դիտավորությունն իրագործելու։ Ես վճռեցի օգտվել դրանից և դեռևս անելիքս չմտածած, պատասխանեցի Պուգաչովի հարցին.

— Ես գնում էի Բելոգորսկի բերդը մի որբուհու փրկելու, որին այնտեղ նեղացնում են։

Պուգաչովի աչքերը փայլատակեցին։ «Իմ մարդկանցից ո՞վ է համարձակվում որբուհուն նեղացնել, — գոռաց նա։ — Յոթ գլուխ էլ որ նա ունենա, իմ դատաստանից չի ազատվի։ Ասա, ո՞վ է հանցավորը»։

— Շվաբրինն է հանցավորը, — պատասխանեցի ես։— Նա բանտարկված պահում է այն աղջկան, որին դու երեցկնոջ մոտ հիվանդ տեսար, և զոռով ուզում է հետն ամուսնանալ։

«Ես Շվաբրինին խելքի՛ կբերեմ, — ահավոր ձայնով ասաց Պուգաչովը։ — Նա կիմանա, թե իմ օրոք ի՛նչպես կարելի է բռնություն բանեցնել և ժողովրդին նեղացնել։ Ես կկախեմ նրան»։

«Հրամայիր մի խոսք ասեմ,— ասաց Խլոպուշան խռպոտ ձայնով։ — Դու շտապեցիր Շվաբրինին բերդապետ նշանակել, իսկ հիմա էլ շտապում ես նրան կախել։ Դու կազակներին արդեն վիրավորել ես, ազնվականին նրանց պետ նշանակելով. դեհ, էլ մի՛ վախեցնի ազնվականներին — առաջին չարախոսության հիման վրա նրանց կախաղան հանելով»։

«Չպետք է նրանց ո՛չ խղճալ, որ էլ շնորհ անել, — ասաց

կապույտ ժապավենավոր ծերուկը։ — Շվաբրինին կախելը ցավ չէ, համա թե վատ չի լինի և՛ պարոն սպային մի լավ հարցաքննել, թե ինչո՞ւ է բարեհաճել շնորհ բերել մեզ մոտ։ Եթե նա քեզ թագավոր չի ճանաչում, ապա հարկավոր չի քեզ մոտ դատաստան փնտրել․ իսկ թե ճանաչում է, ինչո՞ւ մինչև այսօր նստել է Օրենբուրգում քո թշնամիների հետ միասին։ Արդյոք չե՞ս հրամայի դրան դատաստանատուն տանել և այնտեղ կրակը մի լա՛վ թեժացնել․ ինձ այնպես է երևում, որ նորին ողորմածությունը մեզ մոտ ուղարկված է Օրենբուրգի հրամանատարների կողմից»։

Ծեր չարագործի տրամաբանությունն ինձ բավական համոզիչ թվաց։ Իմ ամբողջ մարմնով մի դող անցավ այն մտքից, թե ես ո՛ւմ ձեռքումն եմ։ Պուգաչովը նկատեց իմ հուզմունքը։ «Հը՞, ձերդ բարեծննդություն, — ասաց նա ինձ աչքով անելով։ — Իմ ֆելդմարշալը, կասեննաս՝ խելոք բան է ասում։ Քո խելքն ի՞նչ է կտրում»։

Պուգաչովի ծաղրանքը վերադարձրեց իմ աշխուժությունը։ Ես հանգիստ պատասխանեցի, որ գտնվում եմ նրա իշխանության տակ և որ նա ազատ է ինձ հետ վարվելու, ինչպես ինքը կկամենա։

«Բարի՛, — ասաց Պուգաչովը։ — Հիմա ինձ ասա, թե ի՞նչ դրության մեջ է ձեր քաղաքը»։

— Փառք աստծո, — պատասխանեցի ես. — ամեն ինչ լավ է։

«Լա՞վ է, — կրկնեց Պուգաչովը։ — Իսկ ժողովուրդը սովից կոտորվո՞ւմ է»։

Ինքնակոչը ճիշտ էր ասում, բայց ես ըստ երդման պարտականության սկսեցի հավատացնել, որ այդ բոլորը դատարկ լուրեր են և որ Օրենբուրգում ամեն տեսակի բավականաչափ պաշար կա։

«Տեսնո՞ւմ ես, — մեջ ընկավ ծերուկը, — որ նա քեզ երես առ երես խաբում է։ Բոլոր փախստականները միաբերան պատմում են, որ Օրենբուրգում սով ու համաճա-

թակ է, որ այնտեղ լեշ են ուտում, այն էլ փառք՝ եթե ճարում են, իսկ նորին ողորմածությունը հավատացնում է մեզ, որ ամեն ինչ առատ է այնտեղ։ Եթե դու ուզում ես Շվարրինին կախել, ապա լավ կանես նույն այդ կախաղանից կախես և այս կարիճին, որպեսզի ոչ ոք չնախանձի»։

Անիծյալ ծերունու խոսքերը կարծես թե տատանեցին Պուգաչովին։ Բարեբախտաբար Խլոպուշան սկսեց հակառակել իր ընկերոջը։ «Հերի՛ք, Նաումիչ, — ասաց նա։ — Քեզ որ մնա՝ ամեն ինչ կխեղդես ու կմորթես։ Ի՞նչ մի ածղահան ես։ Տեսնում եմ, հրեն հոգին տալիս ես։ Մի ոտքդ գերեզմանումն է, բայց ուրիշների տունն ես քանդում։ Քի՞չ արյուն կա խղճիդ վրա»։

— Ի՞նչ է, դու սուրբ ես, էլի, — առարկեց Բելոբորոդովը։ — Էդ որտեղի՞ց դու խղճմտանք ձեռք բերիր։

«Իհարկե, — պատասխանեց Խլոպուշան, — ես էլ եմ մեղապարտ և այս ձեռքը (այդ խոսքերի հետ նա սեղմեց իր ոսկրոտ բռունցքը և թևքերը ետ ծալելով մերկացրեց մազոտ թևը), այս ձեռքն էլ է մեղավոր թափած քրիստոնեական արյան համար։ Բայց ես հակառակորդիս եմ սպանել, և ոչ թե հյուրիս. բաց ճանապարհի վրա և մութ անտառում և ոչ թե տանը, վառարանի վրա վեր ընկած. լախտով ու կոթակով, և ոչ թե կնկա չարախոսությամբ»։

Ծերունին երեսը շուռ տվեց և քթի տակ մրթմրթաց. «Ճոթռած քթածակե՛ր»...

— Ի՞նչ ես քչփչում, պառա՛վ, — գոռաց Խլոպուշան։ — Ես քեզ ցույց կտամ ճոթռած քթածակեր. սպասիր, քո ժամանակն էլ կգա, աստծով դու էլ կառնես քալփաթինների հոտը... Իսկ առայժմ ուշքդ վրադ պահի, քանի չեմ պոկել ցանցառ մորուքդ։

«Պարոն ենեբալնե՛ր, — հանդիսավոր ձայնով խոսեց Պուգաչովը։ — Հերի՛ք է վիճեք։ Ցավ չէ, եթե Օրենբուրգի բոլոր շները մի միջնափայտից կախվեին ու ոտքերը ձգե-

ին. ցավն այն կլինի, երբ մեր շներն իրար գզգզեն։ Դե՛, հաշտվեցեք»։

Խլոպուշան և Բելոբորոդովը ոչ մի բառ չասացին և մռայլ նայեցին իրար։ Ես անհրաժեշտ համարեցի խոսակցությունը փոխել, որ ինձ համար շատ վատ կարող էր վերջանալ, և դառնալով Պուգաչովին, ասացի ուրախ դեմքով. «Ա՜խ, քիչ մնաց մոռանայի քեզ շնորհակալություն հայտնել ձիու և քուրքի համար։ Առանց քեզ ես քաղաք չէի հասնի և կսառչեի ճանապարհին»։

Խորամանկությունս անցավ։ Պուգաչովի դեմքը բացվեց։ «Պարտքը տալով մեղքը լալով, — ասաց նա աչքով անելով և կոպերը կկոցելով։ — Ապա մի պատմի ինձ հիմա, թե դու ի՞նչ գործ ունես այն աղջկա հետ, որին Շվաբրինը նեղացնում է։ Չլինի՝ ջահել սրտիդ սիրեկանն է, հը՞»։

— Նա իմ հարսնացուն է, — պատասխանեցի ես Պուգաչովին, տեսնելով, որ տրամադրությունը դեպի լավը գնաց և կարիք չկա իսկույն թաքցնելու։

«Քո հարսնացո՞ւն, — գոռաց Պուգաչովը։ — Ինչո՞ւ դու առաջուց չասացիր։ Դե մենք քեզ կնշանենք և քո հարսանիքին էլ քեֆ կանենք»։ Հետո դառնալով Բելոբորոդովին. «Լսի՛ր, ֆելդմարշալ։ Մենք նորին բարեծննդության հետ հին բարեկամներ ենք. նստենք ընթրիք անենք. առավոտվա շարն իրիկվա բարուց լավ է։ Վաղը կտեսնենք, թե ինչ կանենք սրա հետ»։

Ես ուրախությամբ կհրաժարվեի նրա առաջարկած պատվից, բայց ճարս ի՞նչ էր։ Երկու երիտասարդ կազակուհիներ՝ խրճիթի տիրոջ աղջիկները, սեղանը ծածկեցին սպիտակ սփռոցով, հաց բերին, ուխա[83] և մի քանի շտոֆ գինի ու գարեջուր, և ես երկրորդ անգամ սեղան նստեցի Պուգաչովի և նրա սարսափելի ընկերների հետ։

Խրախճանքը, որին ես ակամա ականատես եղա, տևեց մինչև խոր գիշեր։ Վերջապես գինովությունն սկսեց պատել զրուցակիցներիս։ Պուգաչովը նիրհեց իր տեղում նստած. նրա ընկերները վեր կացան և ինձ նշան արին՝ մենակ թողնել

նրան։ Ես դուրս եկա նրանց հետ միասին։ Խլոպուշայի կարգադրությամբ պահակն ինձ տարավ դատական խըրճիթը, ուր ես գտա և Սավելիչին՝ այնտեղ էլ ինձ նրա հետ թողին, դուռը դրսից կողպելով։ Դաստիարակս այնպիսի ապշության մեջ էր՝ տեսնելով այս բոլորը, որ ինձ ոչ մի հարց չտվեց։ Նա պառկեց մթան մեջ և երկար ա՜խ ու վա՜խ էր անում. վերջապես նա խռմփաց և ես ընկա խորհրդածությունների մեջ, որ ամբողջ գիշեր ոչ մի րոպե ինձ թույլ չտվին նիրհելու։

Առավոտյան եկան, Պուգաչովի անունից կանչեցին ինձ։ Ես գնացի նրա մոտ։ Նրա տան դռների առաջ մի կիբիտկա էր կանգնած, թաթարական երեք ձի լծած։ Ժողովուրդը խռնվել էր փողոցում։ Սրահում ես հանդիպեցի Պուգաչովին. նա ճանապարհի շորեր էր հագել, մուշտակը վրան, կիրգիզական գդակը գլխին։ Երեկվա խոսակիցները շրջապատեցին նրան, դեմքերին ստորաքարշության արտահայտություն տալով, որ անչափ հակասում էր այն ամենին, ինչին ես ականատես եղա նախօրյակին։ Պուգաչովը ուրախ-ուրախ բարևեց ինձ, և հրամայեց, որ նրա հետ նստեմ կիբիտկայի մեջ։

Մենք տեղավորվեցինք։ «Բելոգորսկի բե՛րդը», — ասաց Պուգաչովը լայնաթիկունք թաթարին, որը կանգնած կառավարում էր եռաձի կիբիտկան։ Սիրտս սաստիկ խփեց։ Ձիերը շարժվեցին, զանգակը կարկաչեց, կիբիտկան սլացավ...

«Կա՜ց, կա՜ց,», — լսվեց ինձ շատ ծանոթ մի ձայն և ես տեսա Սավելիչին, որը մեզ դեմ էր վազում։ Պուգաչովը հրամայեց կանգ առնել։ «Տե՛ր իմ Պյոտր Անդրեյիչ, — բղավեց դաստիարակս։ — Ես ծեր հասակիս մի՛ ձգիր ինձ սրիկաների...» — Ա՜, քավթառ, — ասաց նրան Պուգաչովը։ — Աստված տվեց նորից տեսնվեցինք։ Արի՛, նստիր այստեղ՝ առջևում։

«Շնորհակալ եմ, տեր իմ, շնորհակալ եմ, հարազատ հայրս, — ասաց Սավելիչը իր տեղը նստելով։ — Աստված

քեզ հարյուր տարի կյանք տա, որ ինձ՝ ծերունուս մեղքացար և հանգստացրիր։ Հավիտյան քեզ համար աղոթք պիտի անեմ աստծուն, իսկ նապաստակի մորթուց կարած մուշտակի մասին էլ ձայն չեմ հանի»։

Այդ նապաստակի մուշտակը վերջապես կարող էր սաստիկ զայրացնել Պուգաչովին։ Բարեբախտաբար ինքնակոչը կամ լավ չլսեց, կամ ուշք չդարձրեց այդ անտեղի ակնարկին։ Ձիերը վազեցին. փողոցում ժողովուրդը կանգ էր առնում և մարդիկ մինչև գետին խոնարհվելով, ողջունում էին։ Պուգաչովը գլխով էր անում աջ ու ձախ։ Մի րոպեից մենք դուրս եկանք ավանից և սլացանք հարթ ճանապարհով։

Հեշտ է պատկերացնել, թե ես ի՛նչ զգացի այդ րոպեին։ Մի քանի ժամից ես պետք է տեսնեի նրան, որին այլևս կորած էի համարում ինձ համար։ Ես երևակայում էի իմ հանդիպման րոպեն... Նմանապես մտածում էի և այն մարդու մասին, որի ձեռքումն էր իմ բախտը, և որը հանգամանքների տարօրինակ դասավորությամբ խորհրդավոր կերպով կապված էր ինձ հետ։ Ես հիշեցի փութկոտ դաժանությունն ու արյունռուշտ սովորությունները ա՛յն մարդու, որը պատրաստակամություն հայտնեց իմ սիրելիի փրկարարը լինելու։ Պուգաչովը չգիտեր, որ նա կապիտան Միրոնովի աղջիկն է. կատաղած Շվաբրինը կարող էր նրան պարզել ամեն ինչ. Պուգաչովը կարող էր ճշմարտությունն իմանալ և՛ այլ կերպ... Ի՞նչ կլիներ այն ժամանակ Մարիա Իվանովնայի վիճակը։ Մարմնովս դող էր անցնում և մազերս բիզ-բիզ էին կանգնում...

Հանկարծ Պուգաչովն ընդհատեց իմ խորհրդածությունները, դառնալով ինձ այսպիսի հարցով.

«Ձերդ բարեծննդություն ինչի՞ մասին է հաճում մտածել»։

— Ի՞նչպես չմտածես, — պատասխանեցի ես նրան։ — Ես սպա եմ և ազնվական. դեռևս երեկ ես կռվում էի քո դեմ, իսկ այսօր քեզ հետ եմ գնում միևնույն կիբիտկայով և իմ ամբողջ կյանքի երջանկությունը քեզնից է կախված։

«Ի՞նչ է, — հարցրեց Պուգաչովը։ — Չլինի՞ վախենում ես»։

Ես պատասխանեցի, որ արդեն մի անգամ նրանից ներում ստանալով, ես հույս ունեի, որ նա ոչ միայն կխնայի ինձ, այլ մինչև իսկ կօգնի։

«Եվ դու իրավացի ես, աստվա՛ծ վկա՝ իրավացի ես, — ասաց ինքնակոչը։ — Դու տեսա՞ր, որ իմ տղաները քեզ խեթ-խեթ էին նայում, իսկ ծերունին դեռ այսօր էլ պնդում էր, որ դու լրտես ես և որ պետք է քեզ տանջել ու կախել, բայց ես չհամաձայնեցի, — ավելացրեց նա ձայնն իջեցնելով, որպեսզի Սավելիչը և Թաթարը չկարողանան իրեն լսել, — հիշելով քո մի բաժակ օղին ու նապաստակի մուշտակը։ Դու տեսնո՞ւմ ես, որ ես դեռ այնպիսի արնախումը չեմ, ինչպես իմ մասին պատմում են ձեր մարդիկ»։

Ես հիշեցի Բելոգորսկի բերդի առումը, բայց հարկ չհամարեցի առարկել նրան և ոչ մի բառով չպատասխանեցի։

«Օրենբուրգում ի՞նչ են ասում իմ մասին», — հարցրեց Պուգաչովը քիչ լռելուց հետո։

— Դե ասում են, որ քեզ հետ դժվար է գլուխ դնել. խոսք չկա. դու քեզ ցույց տվիր։

Պուգաչովի դեմքին գոհ ինքնասիրություն երևաց։ «Հա, — ասաց նա ուրախ տեսքով. — Թուրս կտրուկ է, բա՜։ Ձեր Օրենբուրգում գիտե՞ն արդյոք Յուզեևոյի[84] կռվի մասին։ Քառասո՛ւն եներալ է սպանված, չո՛րս բանակ է գերի վերցված։ Ի՞նչ ես կարծում, պրուսական թագավորը կարո՞ղ է ինձ հետ չափվել»։

Ավազակի սնապարծությունն ինձ զվարճալի թվաց։ — Ինքդ ի՞նչպես ես կարծում, — ասացի ես նրան. — կարո՞ղ ես Ֆրիդերիկի[85] հախից գալ։

«Ֆյոդոր Ֆյոդորովիչի՞։ Ի՞նչպես չէ։ Ձեր եներալների հախից հո գալիս եմ, իսկ սրանք քա՞նի անգամ են նրան ջարդել։ Մինչև հիմա թուրս կտրուկ է եղել։ Ժամանակ տուր, դեռ ինչե՞ր կլինի, երբ կշարժվեմ Մոսկվայի վրա»։

— Իսկ դու մի՞տք ունես Մոսկվայի վրա գնալու։

Ինքնակոչը մի քիչ մտածեց ու կիսաձայն ասաց. «Աստված գիտե։ Տեղս նեղվածք է. ձեռքս՝ կարճ։ Իմ տղերքը խելքներին շատ են զոռ տալիս։ Նրանք գողեր են։ Ես պետք է ականջս կախ պահեմ. առաջին անհաջողության դեպքում նրանք իրենց շլինքը կպրծացնեն իմ գլխի գնով»։

— Ա՛յ, տեսնում ես, — ասացի ես Պուգաչովին։ — Լավ չի՞ լինի, որ ինքդ օր առաջ ձեռք քաշես նրանցից ու դիմես թագուհու ողորմածությանը։

Պուգաչովը դառնորեն քմծիծաղ տվեց։ «Ո՛չ, — պատասխանեց նա, — այլևս ուշ է ինձ մեղա գալ։ Ինձ համար ներում չի լինի։ Կշարունակեմ, ինչպես սկսել եմ։ Ի՞նչ իմանաս։ Մի գուցե և կհաջողվի։ Գրիշկա Օտրեպյևը հո թագավորե՞ց Մոսկվայում»։

— Իսկ դու գիտե՞ս, թե նա ինչով վերջացրեց։ Նրան դուրս նետեցին պատուհանից, մորթեցին, այրեցին, նրա մոխիրը լցրին թնդանոթի բերանը և արձակեցին։

«Լսիր, — ասաց Պուգաչովը մի ինչ որ վայրագ ոգևորությամբ։ — Քեզ մի հեքիաթ կասեմ, որ տղա ժամանակս ինձ պատմել է մի ծեր կալմիկուհի։ Մի անգամ արծիվը հարցնում է ագռավին. ասա՛, ագռավ-թռչուն, այդ ինչի՞ց է, որ դու աշխարհքում ապրում ես երեք հարյուր տարի, իսկ ես՝ ընդամենը երեսուն ու երեք տարի։ — Այդ նրանից է, տեր իմ, պատասխանում է ագռավը, որ դու տաք արյուն ես խմում, իսկ ես՝ լեշով եմ սնվում։ Արծիվը մտածեց. ե՛կ փորձենք, մենք էլ դրանով սնվենք։ Լա՛վ։ Թռան միասին արծիվն ու ագռավը։ Ահա նրանք տեսան մի սատկած ձի։ Ագռավը սկսեց կտցել ու գովել։ Արծիվը կտցեց մի անգամ, կտցեց մեկ էլ, թևին զարկեց և ասաց ագռավին. ո՛չ, ագռավ եղբայր. քան թե երեք հարյուր տարի լեշով սնվել, ավելի լավ է մի անգամ տաք արյուն խմել, հետո՝ աստված ողորմած է։ — Ո՞նց է կալմիկների հեքիաթը»։

— Սրամիտ է, — պատասխանեցի ես նրան։ — Բայց սպանությամբ ու կողոպուտով ապրել, իմ խելքով, ասել է թե՝ լեշ կտցել։

Պուգաչովը նայեց ինձ զարմանքով և ոչինչ չպատասխանեց։ Մենք երկուսս էլ լռեցինք, յուրաքանչյուրս իր մտքերի մեջ ընկղմած։ Թաթարը մի տխուր երգ սկսեց։ Սավելիչը, նիրհելով ճոճվում էր իր տեղում։ Կիբիտկան սլանում էր ձմեռային հարթ ճանապարհով... Հանկարծ Յաիկ գետի զառափին ես տեսա մի փոքրիկ գյուղ՝ ցանկապատով և զանգակատնով — և քառորդ ժամից մենք մտանք Բելոգորսկի բերդը։

ԳԼՈՒԽ XII

ՈՐԲԸ

Ինչպես մեր տան խնձորենին,
Որ ոչ ճյուղեր ունի, ոչ՝ գագաթ,
Ընպես էլ մեր իշխանուհիկը—
Ոչ հայր ունի, ոչ մայր գթառատ:
Ո՛վ կզուքի արդյոք նրան,
Ո՛վ օրհնություն կտա նրան:

Հարսանեկան երգ

Կիբիտկան մոտեցավ բերդապետի տան պատշգամբիկին։ Ժողովուրդը ճանաչեց Պուգաչովի զանգակի ձայնը և խռնված վազեց նրա հետևից։ Շվաբրինն ինքնակոչին դիմավորեց պատշգամբիկի առաջ։ Նա կազակի զգեստ էր հագել և մորուք թողել։ Դավաճանը Պուգաչովին օգնեց կիբիտկայից դուրս գալ, ստորաքարշ խոսքերով իր ուրախությունն ու ջանասիրությունն արտահայտելով։ Ինձ տեսնելով նա շփոթվեց, բայց շուտով հավաքեց իրեն, ձեռքը պարզեց, ասելով. «Դու է՞լ մերն ես։ Վաղո՛ւց պետք է այդպես անեիր»։ — Ես երեսս շուռ տվի նրանից և ոչինչ չպատասխանեցի։

Սիրտս կսկծաց, երբ մենք մտանք վաղուց ծանոթ սենյակը, ուր պատից դեռ կախված էր հանգուցյալ բերդապետի դիպլոմը, որպես անցած ժամանակի տխուր տապա-

նագիր։ Պուգաչովը նստեց այն բազկաթոռի վրա, ուր երբեմն նիրհում էր Իվան Կուզմիչը, իր ամուսնու քրթմնջոցի տակ քուն մտած։ Շվաբրինն իր ձեռքով նրան օղի մատուցեց։ Պուգաչովը խմեց մի գավաթ և ինձ ցույց տալով, ասաց նրան. «Նորին բարեծննդությանն էլ հյուրասիրիր»։ Շվաբրինը մոտեցավ ինձ իր մատուցարանով, բայց ես երկրորդ անգամ երեսս շուռ տվի նրանից։ Երևում էր, որ նա գլուխը կորցել է։ Իր սովորական զգաստությամբ նա, իհարկե գլխի ընկավ, որ Պուգաչովն անբավական է իրենից։ Շվաբրինը վախենում էր նրանից, իսկ ինձ անվստահությամբ էր նայում։ Պուգաչովը տեղեկացավ բերդի դրության, թշնամու զորքերի վերաբերյալ պտտվող լուրերի և նման բաների մասին, և հանկարծ անսպասելի հարցրեց նրան. «Ասա՛, եղբայր, այդ ի՞նչ աղջիկ է, որին քեզ մոտ պահում ես հսկողության տակ։ Հապա մի ցույց տուր ինձ»։

Շվաբրինը մեռելի պես գունատվեց։ — Տեր իմ, — ասաց նա դողդոջուն ձայնով... — Տեր իմ, նա հսկողության տակ չէ... նա հիվանդ է... նա վերևի սենյակումն է պառկած։

«Դե տար ինձ նրա մոտ», — ասաց ինքնակոչը տեղից վեր կենալով։ Հրաժարվել անհնար էր։ Շվաբրինը Պուգաչովին տարավ Մարիա Իվանովնայի սենյակը։ Ես հետևեցի նրանց։

Շվաբրինը կանգ առավ սանդուխքի վրա։ «Տե՛ր իմ, — ասաց նա։ — Դուք իրավազոր եք ինձնից պահանջելու ամեն բան, ինչ որ կամենաք, բայց մի հրամայեք կողմնակի մարդուն մտնել ննջարանը, իմ կնոջ մոտ»։

Ես ցնցվեցի։ «Ուրեմն դու ամուսնացա՞ծ ես», — ասացի ես Շվաբրինին, պատրաստվելով պատառոտել նրան։

«Հանգի՛ստ, — ընդհատեց ինձ Պուգաչովը։ — Դա իմ գործն է։ Իսկ դու, — շարունակեց նա, Շվաբրինին դառնալով, — խելքիդ զոռ մի տա և մի կոտրատվիր. նա քո կինն է, թե կինդ չէ, ես նրա մոտ տանում եմ ում կամենամ։ Ձե՛րդ բարեծննդություն, եկ իմ հետևից»։

Սենյակի դռների մոտ Շվաբրինը նորից կանգ առավ և ասաց ընդհատվող ձայնով. «Տեր իմ, նախազգուշացնում եմ ձեզ, որ նա սաստիկ ջերմի մեջ է և երկրորդ օրն է, որ անդադար զառանցում է»։

— Բա՛ց, — ասաց Պուգաչովը։

Շվաբրինն սկսեց տնտղել իր գրպանները և ասաց, որ բանալին հետը չի վերցրել։ Պուգաչովը ոտքով խփեց դռանը, կողպեքը թռավ. դուռը բացվեց և մենք ներս մտանք

Ես նայեցի և քարացա։ Հատակին, գեղջկական պատառոտված զգեստով նստած էր Մարյա Իվանովնան—գունատ, նիհար, գզգզված մազերով։ Նրա առաջ դրված էր մի կուժ ջուր, վրան հացի պատառ։ Ինձ տեսնելով նա ցնցվեց ու աղաղակեց։ Թե ինձ հետ ի՛նչ եղավ այն ժամանակ՝ չեմ հիշում։

Պուգաչովը նայեց Շվաբրինին և ասաց դառն քմծիծաղով. «Լա՞վ հիվանդանոց ես ունեցել»։ Հետո, մոտենալով Մարյա Իվանովնային. «Ասա՛ ինձ, աղավնյակս, ինչո՞ւ համար է քո ամուսինը քեզ պատժում։ Ի՞նչով ես դու մեղավոր նրա առաջ»։

— Իմ ամուսի՞նը, — կրկնեց նա։ — Իմ ամուսինը չէ՛ նա։ Ես երբե՛ք նրա կինը չեմ դառնա։ Ես վճռել եմ՝ լավ է մեռնել և կմեռնեմ, եթե ինձ չազատեն։

Պուգաչովն ահեղ նայեց Շվաբրինին. «Եվ դու համարձակվեցիր ինձ խաբե՞լ, — ասաց նա։ — Իսկ դու գիտե՞ս, անպիտան, թե ինչի՛ ես արժանի»։

Շվաբրինը ծունկի եկավ... Այդ րոպեին արհամարհանքն իմ մեջ խեղդեց ատելության և զայրույթի ամեն մի զգացում։ Ես նողկանքով էի նայում ազնվականին, որ ընկել էր փախստական կազակի ոտքերը։ Պուգաչովը մեղմացավ։ «Այս անգամ ներում եմ քեզ, — ասաց նա Շվաբրինին. — բայց իմացած լինես, որ առաջին իսկ հանցանքիդ հետ այս էլ կհիշվի»։ Հետո նա դիմեց Մարյա Իվանովնային և սիրալիր ասաց նրան. «Դուրս եկ, սիրուն աղջիկ. ազատություն եմ պարգևում քեզ։ Ես թագավորն եմ»։

Մարիա Իվանովնան արագ նայեց նրան և գլխի ընկավ, որ առջևը կանգնած է իր ծնողների սպանողը։ Նա դեմքը ծածկեց զույգ ձեռքերով և ընկավ ուշագնաց։ Ես վրա հասա. բայց այդ րոպեին շատ համարձակ սենյակ սողոսկեց իմ վաղեմի ծանոթ Պալաշան և սկսեց հոգ տանել իր օրիորդի համար։ Պուգաչովը դուրս եկավ սենյակից, և մենք երեքս իջանք հյուրասենյակ։

«Հը՞, ձերդ բարեծննդություն,— ծիծաղելով ասաց Պուգաչովը։ — Գեղեցկուհուն փրկեցի՞նք։ Ի՞նչ ես կարծում, մարդ չուղարկե՞մ տերտերի հետևից և չստիպե՞մ, որ նա պսակի իր բարեկամուհուն։ — Ես էլ կդառնամ հարսանեհայրը, Շվաբրինը՝ խաչեղբայրը։ Տուն-դուռ ծածկենք, խմենք ու մի լա՜վ քեֆ անենք»։

Ինչից երկյուղ էի կրում, այն էլ կատարվեց։ Շվաբրինը, լսելով Պուգաչովի առաջարկությունը, ինքն իրեն կորցրեց։ «Տե՛ր իմ, — կանչեց նա կատաղած։ — Ես մեղավոր եմ, ես խաբեցի ձեզ, բայց Գրինյովն էլ է ձեզ խաբում։ Այս աղջիկը երեցկնոջ քրոջ աղջիկը չէ. նա Իվան Միրոնովի աղջիկն է, բերդապետի, որին կախեցինք այս բերդը վերցնելիս»։

Պուգաչովը ինձ հառեց իր կրակոտ աչքերը։ «Ա՛յս ինչ բան է» — հարցրեց նա ինձ տարակուսանքով։

— Շվաբրինը քեզ ճիշտն ասաց, — պատասխանեցի ես հաստատ։

«Դու ինձ այդ բանը չես ասել», — նկատեց Պուգաչովը, որի դեմքը մռայլվեց։

— Ինքդ դատիր, — պատասխանեցի ես նրան, — արդյոք կարելի՞ էր քո մարդկանց մոտ հայտնել, որ Միրոնովի աղջիկը կենդանի է։ Չէ՞ որ նրանք կբզկտեին աղջկան։ Ոչի՜նչ չէր փրկի նրան։

«Այդ էլ ճիշտ է, — ծիծաղելով ասաց Պուգաչովը։ — Իմ հարբեցողները չէին խնայի խեղճ աղջկան։ Լավ է արել սանամեր-երեցկինը, որ խաբել է նրանց»։

— Լսիր, — շարունակեցի ես, տեսնելով նրա բարյացակամ վերաբերմունքը։ — Ի՞նչ անունով կանչեմ քեզ՝ չգիտեմ

ու չեմ էլ ուզում իմանալ... Բայց տեսնում է աստված, որ ես ուրախ կլինեի իմ կյանքով երախտահատույց լինել քեզ այն ամենի համար, ինչ դու արեցիր ինձ համար։ Միայն՝ մի՛ պահանջիր այն, ինչ հակառակ է իմ պատվին ու քրիստոնեական խղճին։ Դու իմ բարերարն ես։ Ավարտիր ինչպես որ սկսել ես. թո՛ղ ինձ խեղճ որբուհու հետ՝ գնանք, ուր որ աստված մեզ ճանապարհ ցույց կտա։ Իսկ մենք, ո՛ւր էլ որ դու լինես, ի՛նչ էլ որ քեզ հետ պատահելու լինի, ամեն օր աստծուն աղոթք կանենք քո մեղապարտ հոգու համար...

Կարծես թե Պուգաչովի դաժան սիրտը զգացվեց։ «Է՛հ, թող քո ասածը լինի, — ասաց նա։ — Մահապատիժ՝ մահապատիժ է, շնորհ՝ շնորհ։ Այդպես է իմ սովորությունը։ Ա՛ռ քո գեղեցկուհուն, տար, ուր որ կուզես և թող աստված ձեզ սեր ու համաձայնություն շնորհի»։

Այդ խոսքերի հետ նա դարձավ Շվաբրինին և հրամայեց, որ նա անցաթուղթ տա ինձ, իր իշխանության տակ գտնվող բոլոր ուղեփակերով ու բերդերով անցնելու համար։ Շվաբրինը միանգամայն խորտակված, կանգնել էր ինչպես քարացած։ Պուգաչովը գնաց բերդը դիտելու։ Շվաբրինը նրան ուղեկցում էր, իսկ ես մնացի ճանապարհի պատրաստությունները տեսնելու պատրվակով։

Ես վազեցի դեպի սենյակը։ Դռները փակված էին։ Ես բախեցի։ «Ո՞վ է», — հարցրեց Պալաշան։ Ես ասացի անունս։ Դռների այն կողմից լսվեց Մարիա Իվանովնայի անուշ ձայնը։ «Քիչ սպասեցեք, Պյոտր Անդրեյիչ։ Ես շորերս եմ փոխում։ Գնացեք Ակուլինա Պամֆիլովնայի մոտ. ես իսկույն այնտեղ կգամ»։

Ես հնազանդվեցի և գնացի հայր Գերասիմի տունը։ Նա էլ, երեցկինն էլ դուրս վազեցին ինձ դիմավորելու։ Սավելիչն արդեն նախազգուշացրել էր նրանց։ «Բարև՜ ձեզ, Պյոտր Անդրեևիչ, — ասեց երեցկինը։ — Աստված էլի արժանացրեց միմյանց տեսության։ Ի՞նչպես եք։ Իսկ մենք, դե էն է, ամեն օր հիշում ենք ձեզ։ Բայց Մարիա Իվանովնան՝

իմ աղունակս, էլ ի՞նչ ասեմ, որ չքաշեց առանց ձեզ... Մի ասացեք տեսնեմ, սիրելիս. դուք ի՞նչպես սարքեցիք գործը Պուգաչովի հետ։ Ի՞նչպես եղավ, որ նա ձեր գլուխն էլ չկերավ։ Բարի, շնորհակալ ենք չարագործից գոնե դրա համար»։ — Հերիք խոսես, պառա՛վ, — ընդհատեց հայր Գերասիմը։ — Ինչ որ գիտես՝ դուրս մի տա։ Ձի՛ք փրկություն ի բազում բարբառելն։ Տե՛ր իմ, Պյոտր Անդրեևիչ, համեցեք ներս, խնդրում ենք։ Վաղո՜ւց, շա՜տ վաղուց է չենք տեսնվել։

Երեցկինն սկսեց ինձ հյուրասիրել — աստված ինչ որ տվել էր և միաժամանակ անդադար խոսում էր։ Նա ինձ պատմեց, թե Շվաբրինն ինչպես է իրենց հարկադրել նրան հանձնել Մարիա Իվանովնային. ինչպես Մարիա Իվանովնան լաց է եղել և չի կամեցել նրանցից բաժանվել. ինչպես Մարիա Իվանովնան իր հետ մշտական կապ էր ունեցել Պալաշկայի միջոցով (ժիր աղջիկ է, որը ուրյադնիկին էլ հարկադրում է իր խոսքով շարժվել). ինչպես նա խորհուրդ է տվել Մարիա Իվանովնային ինձ նամակ գրել և այլն։ Իմ հերթին ես համառոտ պատմեցի իմ պատմությունը։ Տերտերն ու երեցկինը երեսներին խաչ էին հանում, լսելով, որ Պուգաչովին հայտնի է նրանց խաբեությունը։ «Մեզ հետ է խաչի զորությո՜ւնը, — ասում էր Ակուլինա Պամֆիլովնան։ — Տեր աստված, դո՛ւ փրկես փորձանքից։ Ի՞նչ եմ ասել, Ալեքսեյ Իվանիչը, խոսք չկա, պտուղ է, հա՞»։ — Հենց այդ րոպեին դուռը բացվեց և ներս մտավ Մարիա Իվանովնան՝ ժպիտը գունատ դեմքին։ Նա հանել էր իր գեղջկական զգեստը և հագնված էր առաջվա նման՝ պարզ ու գուրեկան։

Ես արագ բռնեցի նրա ձեռքը և երկար ժամանակ ոչ մի բառ չկարողացա արտասանել։ Մենք երկուսս էլ լուռ էինք բուռն հուզմունքից։ Մեր հյուրընկալներն զգացին, որ իրենք ավելորդ են և դուրս գնացին։ Մնացինք մենակ։ Ամեն ինչ մոռացված էր։ Մենք զրուցում էինք և չէինք հագենում խոսելուց։ Մարիա Իվանովնան ինձ պատմեց ամեն ինչ, որ նրան պատահել էր բերդի գրավման օրից։ Նա նկարագրեց

իր վիճակի ամբողջ սարսափը, բոլոր այն տանջանքները, որ ինքը կրել էր գարշելի Շվաբրինի կողմից։ Մենք հիշեցինք և նախկին երջանիկ ժամանակը... Երկուսս էլ լաց եղանք... Վերջապես ես սկսեցի բացատրել նրան իմ դիտավորությունները։ Նրա համար այլևս անհնար էր մնալ մի բերդում, որ գտնվում էր Պուգաչովի իշխանության տակ և կառավարվում Շվաբրինի ձեռքով։ Չէր կարելի մտածել նույնպես և Օրենբուրգի մասին, որ կրում էր պաշարման բոլոր աղետները։ Աշխարհում նա չուներ և ոչ մի հարազատ մարդ։ Ես նրան առաջարկեցի գնալ գյուղ՝ ծնողներիս մոտ։ Սկզբում նա տատանվեց. նրան հայտնի էր հորս անբարյացակամությունը և դա վախեցնում էր։ Ես հանգստացրի նրան։ Ես գիտեի, որ հայրս իր համար երջանկություն կհամարի և իր պարտականությունը կհաշվի ընդունել հայրենիքի համար ընկած վաստակավոր ռազմիկի աղջկանը։

— Սիրելի Մարիա Իվանովնա, — ասացի ես վերջապես։ — Ես քեզ իմ կինն եմ համարում։ Զարմանալի հանգամանքները անխզելի կերպով կապել են մեզ. աշխարհում ոչ մի բան չի կարող մեզ անջատել։ — Մարիա Իվանովնան ինձ լսում էր պարզ, առանց շինծու ամոթխածության, առանց հնարամիտ առարկումների։ Նա զգում էր, որ իր բախտը կապված է իմի հետ։ Սակայն նա կրկնեց, որ այլ կերպ, քան իմ ծնողների համաձայնությամբ, նա չի լինի իմ կինը։ Ես բնավ չառարկեցի նրան։ Մենք համբուրվեցինք ջերմ, անկեղծ — և այսպիսով ամեն ինչ մեր մեջ վճռված էր։

Մի ժամից հետո ուրյադնիկն ինձ մի անցաթուղթ բերեց, ստորագրված Պուգաչովի խզբզագրով և նրա անունից ինձ նրա մոտ կանչեց։ Ես Պուգաչովին տեսա ճանապարհ ընկնելու պատրաստ։ Չեմ կարող ասել, թե ես ինչ զգացի, երբ հրաժեշտ տվի այդ սոսկալի մարդուն, որը հրեշ էր ու չարագործ բոլորի համար, բացի միայն ինձնից։ Ի՞նչու ճիշտը չասել։ Այդ րոպեին մի ուժգին կարեկցություն ինձ քարշում էր դեպի նա։ Ես բուռն կերպով ցանկանում էի նրան դուրս կորզել չարագործների շրջանից, որոնց նա առաջնորդում էր, և փրկել նրա գլուխը՝ քանի դեռ ժամանակ կար։ Շվաբրինը և

ժողովուրդը, որոնք խռնված էին մեզ մոտ, խանգարեցին ինձ արտահայտել այն ամենը, ինչով լի էր իմ սիրտը։

Մենք բարեկամաբար բաժանվեցինք։ Պուգաչովը ամբոխի մեջ տեսնելով Ակուլինա Պամֆիլովնային, մատով սպառնաց նրան և խորիմաստ կերպով աչքով արեց. հետո նստեց կիբիտկան, հրամայեց քշել դեպի Բերդա և երբ ձիերը շարժվեցին, այն ժամանակ նա մեկ էլ դուրս շրջվեց կիբիտկայից և կանչեց ինձ. «Մնա՛ս բարով, ձերդ բարեծնընդություն. գուցե՝ երբևիցե տեսնվենք»։ — Իրոք մենք տեսնվեցինք, սակայն ի՞նչ պարագաներում...

Պուգաչովը մեկնեց։ Երկա՛ր ես նայեցի սպիտակ տափաստանին, որով ընթանում էր նրա եռաձի կառքը։ Ժողովուրդը ցրվեց։ Շվաբրինը ծլկվեց։ Ես վերադարձա քահանայի տունը։ Ամեն ինչ պատրաստ էր մեր ուղևորման համար. ես չէի ուզում այլևս դանդաղել։ Մեր բոլոր ունեցածչունեցածը տեղավորված էր բերդապետի հին սայլակի վրա։ Կառապանները մի ակնթարթում լծեցին ձիերը։ Մարիա Իվանովնան գնաց իր ծնողների գերեզմաններին հրաժեշտ տալու. նրանք թաղված էին եկեղեցու հետևը։ Ես ուզում էի ուղեկցել նրան, բայց նա խնդրեց ինձ իրեն մենակ թողնել։ Մի քանի րոպեից նա վերադարձավ, լուռ ու խաղաղ արտասվելով։ Սայլակը պատրաստ էր։ Հայր Գերասիմը և նրա կինը դուրս ելան տան պատշգամբիկը։ Մենք երեքով նստեցինք կիբիտկան. Մարիա Իվանովնան Պալաշայի հետ և ես։ Սավելիչը բարձրացավ, նստեց կառապանի կողքին։ «Գնա՛ք բարով, Մարիա Իվանովնա, աղունակս. գնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ, մեր աչքի լույս, — ասում էր բարի երեցկինը։ — Բարի ճանապա՛րհ, աստված ձեզ երկուսիդ էլ երջանկություն տա»։ Մենք շարժվեցինք։ Բերդապետի տան պատուհանի մոտ տեսա կանգնած Շվաբրինին։ Նրա դեմքը մռայլ չարություն էր արտահայտում։ Ես չէի կամենում ցնծալ ջախջախված թշնամու հանդեպ և աչքերս ուրիշ կողմ դարձրի։ Վերջապես մենք դուրս եկանք բերդի դարպասներից և հավիտյան թողինք Բելոգորսկի բերդը։

ԳԼՈՒԽ XIII

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մի՛ զայրանաք, տեր իմ, պարտքս է պահանջում
Ուղարկել ձեզ բանտը. հիմա անմիջապես:
—Խնդրեմ, ես պատրաստ եմ. սակայն հույս ունեմ,
Նախ թույլ կտաք ինձ գործը պարզաբանեմ:

ԿՆՅԱԺՆԻՆ

Այդպես անակնկալ կապվելով սիրածս աղջկա հետ,— որի մասին դեռևս առավոտյան այնպես ցավագին անհանգիստ էի, — ես չէի հավատում ինքս ինձ և կարծում էի, թե ինձ հետ պատահած ամեն ինչ դատարկ երազ էր։ Մարիա Իվանովնան մտազբաղ նայում էր մերթ ինձ, մերթ՝ ճանապարհին և թվում էր, թե դեռ ուշքի չի եկել ու չի հավաքել իրեն։ Մենք լուռ էինք։ Մեր սրտերը չափից դուրս հոգնատանջ էին։ Աննկատելի կերպով երկու ժամից մենք հասանք մերձակա մի բերդ, որ նույնպես Պուգաչովի իշխանության տակ էր։ Այստեղ մենք փոխեցինք ձիերը։ Տեսնելով, թե ինչ արագությամբ են լծում ձիեր, թե ինչ փութկոտ պատրաստակամություն է ցույց տալիս մորուքավոր կազակը, որին Պուգաչովը պարետ էր կարգել, — ես հասկացա, որ շնորհիվ մեզ բերող կառապանի շատախոսության, ինձ ընդունում են որպես բախտի բերմամբ արքունիքում շնորհ գտած մի բարձր աստիճանավորի։

Շարունակեցինք մեր ճանապարհը։ Սկսեց մթնել։ Մենք մոտենում էինք մի փոքրիկ քաղաքի, ուր, մորուքավոր պարետի ասելով մի ուժեղ զորախումբ էր գտնվում, որը գնում էր ինքնակոչին միանալու։ Պահակները մեզ կանգնեցրին։ Այն հարցին, թե ո՞վ է գալիս, կառապանը բարձրաձայն պատասխանեց.—«Թագավորի խնամին իր տանտիկնոջ հետ»։ Հանկարծ, հուսարների բազմությունը մեզ շրջապատեց սարսափելի հայհոյանքով։ «Դո՛ւրս արի, դևի

խնամի,— ասաց ինձ ընդավոր վախմիստրը[86]։ — Ա՛յ թե քուրդդ բարերարը կհանե՛նք — քոնն էլ, քո տիկնոջն էլ»։

Ես դուրս եկա կիբիտկայից և պահանջեցի, որ ինձ տանեն իրենց պետի մոտ։ Տեսնելով, որ ես սպա եմ, զինվորները դադարեցրին հայհոյանքը։ Վախմիստրն ինձ տարավ մայորի մոտ։ Սավելիչն ինձնից ետ չէր մնում, քթի տակ քրթմնջալով. «Է՛ս էլ քու թագավորի խնամին։ Մրից ելանք՝ մրջուրն ընկանք... Տե՛ր աստված, արդյոք ինչո՞վ կվերջանա էս բոլորը»։ Կիբիտկան դանդաղ հետևում էր մեզ։

Հինգ րոպեից մենք մոտեցանք պայծառ լուսավորված մի տնակի։ Վախմիստրն ինձ թողեց պահակի հետ և գնաց իմ մասին հայտնելու։ Նա իսկույն ետ վերադարձավ, հայտարարելով ինձ, որ նորին բարձր բարեծննդությունը ժամանակ չունի ինձ ընդունելու և, որ նա հրամայել է բանտ տանել ինձ, իսկ տիկնոջն իր մոտ բերել։

— Դա ի՞նչ է նշանակում,— բղավեցի ես կատաղած։— Մի՞թե նա գժվել է, ի՞նչ է։

«Չեմ կարող իմանալ, ձե՛րդ բարեծննդություն,— պատասխանեց վախմիստրը։— Միայն թե նորին բարձր բարեծննդությունը հրամայեց ձերդ բարեծննդության բանտ տանել, իսկ նորին բարեծննդության տիկնոջը հրամայված է նորին բարձր բարեծննդության մոտ տանել, ձե՛րդ բարեծննդություն»։

Ես նետվեցի դեպի մուտքը։ Պահակները չփորձեցին ինձ բռնել և ես ուղղակի ներս ընկա մի սենյակ, ուր հինգ-վեց հոգի հուսարական սպաներ բանկ էին խաղում։ Թուղթ բաժանողը մայորն էր։ Մեծ էր իմ զարմանքը, երբ նրան նայելուն պես ճանաչեցի Իվան Իվանիչ Զուրինին, որը, ժամանակով թղթախաղի մեջ տարավ ինձ Սիմբիրսկի պանդոկում։

— Մի՞թե կարելի բան է,— կանչեցի ես,— Իվան Իվանովիչ, արդյոք դո՞ւ ես։

«Բա՜, բա՜, բա՜, Պյոտր Անդրեյիչ։ Այս ո՞ր քամին բե-

րեց քեզ։ Ո՞րտեղից ես գալիս։ Բարև, եղբայր, բարև։ Չե՞ս ուզում արդյոք թուղթ գնել»։

— Շնորհակալ եմ։ Ավելի լավ է հրամայիր, որ ինձ բնակարան տան։

«Ինչի՞դ է պետք բնակարանը։ Մնա ինձ մոտ»։

— Չեմ կարող. ես մենակ չեմ։

«Դե ընկերոջդ էլ այստեղ բեր»։

— Ես ընկերոջ հետ չեմ. ես... մի տիկնոջ հետ եմ։

«Տիկի՜ն։ Այդ ո՞րտեղից ես դու նրան ճանկել։ Էհե՜, եղբայր»։ (Այս խոսքերի հետ Զուրինն այնպես նշանակալից սուլեց, որ ամենքը հռհռացին, իսկ ես բոլորովին շփոթվեցի)։

«Դե՛, — շարունակեց Զուրինը, — թող այդպես լինի։ Բնակարան կստանաս։ Բայց ափսո՜ս... Մենք մի լավ քեֆ կանեինք, ինչպես անցյալ անգամ... Հե՛յ, տղա։ Հապա ինչո՞ւ այստեղ չես բերում Պուգաչովի պատվական սանամորը. չինի՝ համառո՞ւմ է։ Ասեք նրան, որ չվախենա, բարինը շատ լավ մարդ է, ոչնչով չի վիրավորի նրան։ Ու մի լա՛վ զարկեք շլնքին»։

— Ի՞նչ ես անում, — ասացի ես Զուրինին։ — Ի՞նչ Պուգաչովի սանամայր, ի՞նչ բան։ Նա հանգուցյալ կապիտան Միրոնովի աղջիկն է։ Ես նրան դուրս եմ բերել գերությունից և հիմա ուղեկցում եմ մինչև հորս գյուղը, ուր և կթողնեմ նրան։

«Ի՞նչպես։ Ասել է թե հիմա քո մասի՞ն էր, որ ինձ զեկուցեցին։ Աստվա՜ծ սիրես, այս ի՞նչ է նշանակում»։

— Հետո կպատմեմ ամեն ինչ։ Իսկ հիմա, ի սեր աստծո, հանգստացրու խեղճ աղջկան, որին քո հուսարները սրտաճաք արին։

Զուրինը իսկույն կարգադրություն արեց։ Նա ինքը դուրս եկավ փողոց ներողություն խնդրելու Մարիա Իվանովնայից՝ ակամա թյուրիմացության համար և վախմիստրին հրամայեց քաղաքում ամենալավ բնակարանը նրան հատկացնել։ Ես մնացի Զուրինի մոտ գիշերելու։

Մենք ընթրեցինք և, երբ երկուսով մնացինք, ես նրան պատմեցի իմ արկածները։ Զուրինն ինձ լսում էր մեծ հետաքրքրությամբ։ Երբ ես վերջացրի, նա գլուխը շարժեց և ասաց. «Եղբայր, այս բոլորը՝ լավ. մի բան է վատը. ո՞ր սատանան է դրդում քեզ ամուսնանալու։ Ես, որպես ազնիվ մարդ, չեմ ուզում քեզ խաբել. ուրեմն հավատա ինձ, որ ամուսնությունը խելառություն է։ Ասա՛, մի՞թե կարող ես դու կնոջ դարդ քաշել և երեխաներ խնամել։ Է՛հ, թքիր էդ բանի վրա։ Ինձ լսիր. ձեռք քաշի կապիտանի աղջկանից։ Սիմբիրսկի ճանապարհը ես մաքրել եմ և անվտանգ է։ Վաղն եթե նրան մենակ ուղարկիր ծնողներիդ մոտ, իսկ ինքդ մնա իմ ջոկատում։ Կարիք չկա, որ դու վերադառնաս Օրենբուրգ։ Նորից կընկնես խռովարարների ձեռքը և այլևս դժվար թե մեկ էլ գլուխդ պրծցնես։ Այսպիսով, սիրային հիմարությունն էլ ինքն իրեն կանցնի և ամեն ինչ լավ կլինի»։

Թեպետ ես լիովին համաձայն չէի նրա հետ, սակայն զգացի, որ պատվո պարտքս պահանջում է իմ ներկայությունը թագուհու զորքի մեջ։ Ես վճռեցի հետևել Զուրինի խորհրդին՝ Մարիա Իվանովնային ուղարկել գյուղ և մնալ նրա ջոկատում։

Սավելիչն եկավ շորերս հանելու։ Ես հայտնեցի նրան, որ մյուս օրն եթե պատրաստ լինի ճանապարհ ընկնելու Մարիա Իվանովնայի հետ։ Նա ուզում էր համառել։

«Ի՞նչ ես ասում, տեր իմ։ Ես ինչպես թողնեմ քեզ։ Ո՞վ պիտի հոգ տանի քո մասին։ Ի՞նչ կասեն քո ծնողները»։

Գիտենալով իմ վերակացուի համառությունը, ես մտքումս դրի փաղաքշանքով ու անկեղծությամբ համոզել նրան. — Իմ բարեկամ, Արխիպ Սավելիչ, — ասացի ես։ — Մի՛ մերժիր, եղիր իմ բարերարը. այստեղ ես ծառայի պետք չեմ ունենա, մինչդեռ հանգիստ չեմ լինի, եթե Մարիա Իվանովնան ճանապարհ ընկնի առանց քեզ։ Ծառայելով նրան, դու և՛ ինձ ես ծառայում, որովհետև հաստատ որոշել եմ

երբ շուտով հանգամանքներն ինձ թույլ տան, ամուսնանալ նրա հետ։

Այստեղ Սավելիչը ձեռքերն իրար տվեց աննկարագրելի զարմանքով։ «Ամուսնանա՞լ,— կրկնեց նա։— Երեխան ամուսնանա՞լ է ուզում։ Հապա ի՞նչ կասի հայրիկդ, իսկ մայրիկդ ի՞նչ կմտածի»։

— Կհամաձայնվեն։ Ճիշտ, կհամաձայնվեն,— պատասխանեցի ես,— երբ կճանաչեն Մարյա Իվանովնային։ Քեզ վրա էլ ես հույս ունեմ։ Հայրիկս ու մայրիկս քեզ կհավատան. դու մեր միջնորդը կլինես, այնպես չէ՞։

Ծերունին զգացված էր։ «Օ՜հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ,— պատասխանեց նա։— Թեև վաղ ես մտածել ամուսնանալ, բայց դե Մարյա Իվանովնան էնպես լավ աղջիկ է, որ մեղք է էս պատահմունքը ձեռքից բաց թողնել։ Թո՛ղ քո ասածը լինի։ Աստծու հրեշտակի հետ ճանապարհ կընկնեմ և խոնարհաբար կասեմ քո ծնողներին, որ էդ տեսակ հարսնացուն օժիտի պետք էլ չունի»։

Ես շնորհակալություն հայտնեցի Սավելիչին և պառկեցի քնելու միևնույն սենյակում Զուրինի հետ։ Տաքացած և հուզված լինելով, ես ամեն ինչ պատմեցի նրան։ Զուրինն սկզբում հաճույքով էր զրուցում, բայց կամաց-կամաց նրա բառերը սակավ և անկապ դարձան։ Վերջապես, ի պատասխան մի ինչ որ իմ հարցին, նա խռմփացրեց ու քթով սուլեց։ Ես լռեցի և շուտով հետևեցի նրա օրինակին։

Հետևյալ օրն առավոտյան ես գնացի Մարյա Իվանովնայի մոտ։ Ես նրան հաղորդեցի իմ մտադրությունները։ Նա խելացի գտավ այդ ամենը և իսկույն համաձայնվեց ինձ հետ։ Զուրինի ջոկատը քաղաքից դուրս պիտի գար հենց նույն օրը։ Չպետք էր դանդաղել։ Ես հենց այդտեղ բաժանվեցի Մարյա Իվանովնայից, նրան Սավելիչին հանձնարարարելով և հետը մի նամակ տալով՝ ուղղված ծնողներիս։ Մարյա Իվանովնան լաց եղավ։ «Մնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ,— ասաց նա կամացուկ։— Կտեսնվենք ար-

դյո՞ք թե ոչ՝ միայն աստված գիտե. բայց ես հավիտյան չեմ մոռանա ձեզ. մինչև գերեզման իմ սրտում միայն դու կմնաս։ Ես ոչինչ չկարողացա պատասխանել։ Մարդիկ շրջապատեցին մեզ։ Ես չէի ուզում նրանց մոտ անձնատուր լինել ինձ հուզող զգացմունքներին։ Վերջապես նա մեկնեց։ Ես վերադարձա Զուրինի մոտ՝ տխուր ու լուռ։ Նա կամեցավ ինձ ուրախացնել։ Ես ուզեցի ցրել մտքերս. այդ օրը մենք անցկացրինք աղմուկով ու մոլեգին և երեկոյան ռազմերթի ելանք։

Փետրվարի վերջն էր։ Ռազմական կարգադրությունները դժվարացնող ձմեռն անցնում էր և մեր գեներալները պատրաստվում էին միահամուռ գործակցության։ Պուգաչովը դեռևս կանգնած էր Օրենբուրգի մոտ։ Այնինչ, հետզհետե ջոկատները միանում էին նրա շուրջը և բոլոր կողմերից մոտենում էին չարագործների բույնին։ Ապստամբող գյուղերը մեր զորքերը տեսնելուն պես հնազանդություն էին հայտնում. ավազակախմբերն ամենուրեք փախչում էին մեր առջևից և ամեն ինչ նախագուշակում էր արագ և բարեհաջող վախճան։

Շուտով իշխան Գոլիցինը Տատիշչևա բերդի մոտ ջարդեց Պուգաչովին, ցրեց նրա խառնիճաղանճ զորքերը, ազատեց Օրենբուրգը ու թվում էր թե խռովությանը հասցրեց վերջին և վճռական հարվածը։ Այդ ժամանակ Զուրինին ուղարկեցին խռովարար բաշկիրների մի հրոսախմբի դեմ, որոնք ցրվում էին ավելի շուտ, քան մենք տեսնում էինք նրանց։ Գարունը մեզ կաշկանդեց թաթարական մի գյուղում։ Գետակները վարարել էին և ճանապարհներն անանցնելի դարձել. մեր անգործության մեջ մենք մեզ մխիթարում էինք ավազակների ու վայրենիների դեմ մղվող ձանձրալի ու չնչին պատերազմի շուտափույթ ավարտման մտքով։

Սակայն Պուգաչովը չէր բռնված։ Նա հայտնվեց սիբիրյան գործարաններում, այնտեղ նորանոր խմբեր հավաքեց և վերստին սկսեց չարագործություններ անել։ Նրա

հաջողությունների լուրը նորից տարածվեց։ Մենք իմացանք սիբիրյան բերդերի ավերման մասին։ Շուտով Կազանի գրավման և ինքնակոչի դեպի Մոսկվա արշավելու լուրն անհանգստացրեց զորապետներին, որոնք անհոգ քնած էին, հույսները դրած արհամարհելի խռովարարի անզորության վրա։ Զուրինը հրաման ստացավ անցնել Վոլգան։

Չեմ պատմի մեր արշավանքներն ու պատերազմի վախճանը։ Կարճ կասեմ, որ աղետը ծայրահեղության էր հասնում։ Ամենուրեք խափանվել էր վարչությունը. կալվածատերերն անտառներում էին թաքնվում։ Ավազակախմբերը չարագործություններ էին անում ամեն տեղ։ Առանձին զորամասերի պետերն ինքնակամ կերպով պատժում էին և ներումն շնորհում։ Լայնարձակ երկրի վիճակը, ուր հրդեհն էր մոլեգնում, սարսափելի էր։ Աստված մի՛ արասցե տեսնել ռուսական բունտը՝ անմիտ ու անողոք։

Պուգաչովը փախչում էր Իվան Իվանովիչ Միխելսոնի[37] զորքերից հետամուտ։ Շուտով մենք լսեցինք նրա կատարյալ ջախջախման մասին։ Վերջապես Զուրինը տեղեկություն ստացավ, որ ինքնակոչը բռնված է, դրա հետ միասին և հրաման՝ որ կանգ առնենք։ Պատերազմն ավարտվեց։ Վերջապես ես կարող էի ճանապարհվել ծնողներիս մոտ։ Այն միտքը, որ նրանց կգրկեմ, կտեսնեմ Մարիա Իվանովնային, որից ես ոչ մի լուր չունեի — ոգևորում էր ինձ ցնծությամբ։ Զուրինը ծիծաղում էր և ուսերը թոթափում։ «Չէ՛, քո բանը պրծած է։ Կամուսնանաս — իզո՛ւր տեղը կկորչես»։

Բայց և այնպես, տարօրինակ մի զգացում թունավորում էր իմ ուրախությունը. ակամա միտք էի անում այնքան անմեղ զոհերի արցունքով թաթախված չարագործի, նրան սպասող մահապատժի մասին և անհանգստանում էի. Եմե՛լյա, Եմե՛լյա — մտածում էի ես սրտնեղված. — ինչո՞ւ դու սվինի չհանդիպեցիր, կարտեչի տակ չընկար։ Դրանից լավ ի՞նչ կարող էր լինել քեզ համար։ Ի՞նչ կհրամայեք անել՝ նրա մասին ունեցած մտածմունքն իմ մեջ

անբաժան էր փրկության՝ որ նա տվեց ինձ իր կյանքի ամենասոսկալի րոպեներից մեկում և իմ հարսնացուն զազրելի Շվաբրինի ձեռքից ազատելու մտքի հետ։

Զուրինն ինձ արձակուրդ տվեց։ Մի քանի օրից ես վերստին պետք է գտնվեի իմ ընտանիքում, նորից տեսնեի Մարիա Իվանովնային... Հանկարծ անսպասելի մի փոթորիկ ինձ հարվածեց։

Մեկնումիս օրը, հենց այն րոպեին, երբ ես պատրաստվում էի ճանապարհ ընկնելու, Զուրինը խրճիթ մտավ՝ ձեռքին մի թուղթ բռնած, արտակարգ մտահոգ դեմքով։ Ասես մի բան սիրտս խայթեց։ Ես վախեցա, ինքս էլ չիմանալով թե ինչից։ Նա դուրս արեց իմ սպասյակ զինվորին և հայտնեց որ հետս գործ ունի։ «Ի՞նչ կա»,— հարցրի ես անհանգստությամբ։ —«Մի փոքրիկ անախորժություն, — պատասխանեց նա թուղթը ինձ տալով։ — Կարդա թե հիմա ես ի՛նչ ստացա»։ Ես սկսեցի կարդալ թուղթը, որ մի գաղտնի հրաման էր, ուղղված բոլոր առանձին զորապետերին՝ ձերբակալել ինձ, ո՛ւր էլ որ նրանց ձեռքն ընկնեմ, և պահակների հսկողությամբ անհապաղ ուղարկել Կազան — քննիչ հանձնաժողովին, որ հիմնված էր Պուգաչովի գործով։

Քիչ մնաց, որ թուղթը ձեռքիցս ընկներ։ «Ճար չկա, — ասաց Զուրինը։ — Իմ պարտքն է հնազանդվել հրամանին։ Հավանական է, որ Պուգաչովի հետ ունեցած քո բարեկամական հարաբերությունների լուրը մի որևէ կերպ հասել է կառավարությանը։ Հուսով եմ, որ գործը ոչ մի հետևանք չի ունենա և որ դու կարդարանաս հանձնաժողովի առաջ։ Մի ընկճվիր և ուղևորվիր»։ Խիղճս հանգիստ էր, դատաստանից ես չէի վախենում, բայց քաղցր տեսակցության րոպեն թերևս նորից մի քանի ամսով հետաձգելու միտքը սարսափեցնում էր ինձ։ Սայլակը պատրաստ էր։ Զուրինը մտերմաբար ինձ հրաժեշտ տվեց։ Ինձ նստեցրին սայլակը։ Հետո նստեցրին երկու սուսերամերկ հուսարներ և ես ուղևորվեցի մեծ ճանապարհով։

ԳԼՈՒԽ XIV

Դ Ա Տ Ը

Աշխարհի լուր. տանկդ—
Ծովի բազմաշան ալիք:
Առած

Ես հավատացած էի, որ ամեն ինչի պատճառը իմ ինքնակամ բացակայությունն էր Օրենբուրգից։ Ես հեշտությամբ կարող էի արդարանալ. ասպատակությունը ոչ միայն երբեք չէր արգելված, այլ մինչև իսկ ամեն կերպ խրախուսվում էր։ Ես կարող էի մեղադրվել ավելորդ տաքարյունության և ոչ թե անհնազանդության մեջ։ Սակայն բազմաթիվ վկաներ կարող էին ապացուցել Պուգաչովի հետ ունեցած իմ բարեկամական հարաբերությունները, որոնք համենայն դեպս պետք է թվային խիստ կասկածելի։ Ամբողջ ճանապարհին ես մտածում էի ինձ սպասող հարցաքննությունների մասին, կշռում էի իմ պատասխանները և վճռեցի դատարանի առաջ հայտնել զուտ ճշմարտությունը, արդարացման այս եղանակը կարծելով որպես ամենապարզը, միաժամանակ և ամենահուսալին։

Հասա Կազան. քաղաքն ամայի էր և հրաճարակ։ Փողոցներում, տների տեղ ածուխի շեղջեր էին մնացել և մրոտած պատերը ցցված էին առանց կտուրի ու պատուհանների։ Այդպես էր Պուգաչովի թողած հետքը։ Ինձ տարան բերդը, որ անվթար մնացել էր այրված քաղաքի մեջտեղում։ Հուսարներն ինձ հանձնեցին պահակապետին։ Նա հրամայեց, որ դարբնին կանչեն։ Ոտքերիս շղթա հագցրին և պինդ ամրացրին։ Հետո ինձ բանտ տարան և մենակ թողին նեղլիկ ու մութ սենյակում, որի պատերը բոլորովին մերկ էին և մի փոքրիկ պատուհան ուներ երկաթե վանդակով։

Այսպիսի սկիզբը ոչինչ լավ բան չէր գուշակում ինձ համար։ Սակայն ես չէի կորցնում ոչ արիությունս, ոչ էլ

հույսս։ Ես դիմեցի բոլոր վշտացողների մխիթարության և առաջին անգամ ճաշակելով համակ, սակայն խոցոտված սրտից զեղված աղոթքի քաղցրությունը, խաղաղ ննջեցի, էլ չմտածելով, թե ի՛նչ է սպասում ինձ։

Մյուս օրը բանտային պահապանն արթնացրեց ինձ, հայտնելով, որ հանձնաժողովն ինձ պահանջում է։ Երկու զինվորներ բակի միջով ինձ տարան բերդապետի տունը, նախասենյակում իրենք կանգ առան և ինձ մենակ ներս թողին ներքին սենյակները։

Ես մտա բավական ընդարձակ մի դահլիճ։ Թղթերով ծածկված սեղանի շուրջը նստած էին երկու մարդ՝ հասակավոր գեներալը, տեսքով խիստ ու սառն, և երիտասարդ գվարդիական կապիտանը՝ քսանութ տարեկան, շատ հաճելի արտաքինով, շարժումների մեջ ճարպիկ ու ազատ։ Պատուհանի մոտ, հատուկ մի սեղանի առջև նստած էր քարտուղարը գրիչն ականջի հետևը, թղթի վրա թեքված, պատրաստ՝ իմ ցուցմունքները գրելու։ Հարցաքննությունն սկսվեց։ Հարցրին անունս և կոչումս։ Գեներալը տեղեկացավ, թե Անդրեյ Պետրովիչ Գրինյովի որդին չե՞մ արդյոք։ Եվ իմ պատասխանին առարկեց խստությամբ. «Ափսոս, որ այդպիսի պատվավոր մարդն այս տեսակ անարժան որդի ունի»։ Ես հանգիստ պատասխանեցի, թե ինչպիսին էլ որ լինի ինձ վրա ծանրացած մեղադրանքը, ես հույս ունեմ այդ ամենը ցրել, առանց կեղծելու բացատրելով ճշմարտությունը։ Իմ ինքնավստահությունը նրան դուր չեկավ։ «Սուր լեզու ունես, մեր տղա, — ասաց նա դեմքը խոժոռելով. — բայց մենք քեզպեսների՞ն ենք տեսել»։

Այն ժամանակ երիտասարդը հարցրեց ինձ, թե ի՞նչ առիթով և ի՞նչ ժամանակ եմ ես ծառայության մտել Պուգաչովի մոտ և ի՞նչ հանձնարարություններով է նա օգտագործել ինձ։

Ես վրդովմունքով պատասխանեցի, թե ես որպես սպա և ազնվական, Պուգաչովի մոտ ոչ մի ծառայության մտնել չէի կարող և ոչ մի հանձնարարություն նրանից ընդունել չէի կարող։

«Հապա այդ ի՞նչպես է,— առարկեց ինձ հարցաքննողը,— որ մենակ ազնվականին ու սպան է խնայված ինքնակոչի կողմից, մինչդեռ նրա բոլոր ընկերները չարաչար մահացված են։ Ի՞նչպես է, որ այդ սպան ու ազնվականը մտերմաբար խնջույք է անում խռովարարների հետ, գլխավոր չարագործից նվերներ է ընդունում՝ մուշտակ, ձի և կես մանեթ փող։ Ինչի՞ց է առաջացել այդ տեսակ տարօրինակ բարեկամությունը և ինչի՞ վրա է այն հիմնված, եթե ոչ դավաճանության, կամ առնվազն՝ զազրելի և հանցավոր փոքրոգության վրա»։

Ես խորապես վիրավորված էի գվարդիական սպայի խոսքերից և եռանդով սկսեցի ինձ արդարացնել։ Ես պատմեցի, թե ինչպես սկսվեց իմ ծանոթությունը Պուգաչովի հետ տափաստանում, բքի ժամանակ. ինչպես Բելոգորսկի բերդի առման ժամանակ նա ինձ ճանաչեց և խնայեց։ Ասացի, որ մուշտակը և ձին, ճիշտ է, չեմ ամաչել ընդունել ինքնակոչից, բայց թե՝ մինչև վերջին հնարավորություն պաշտպանել եմ Բելոգորսկի բերդը չարագործից։ Վերջապես ես մատնացույց արի նաև իմ գեներալին, որը կարող էր վկայել իմ ջանքն ու ճիգը Օրենբուրգի աղետալի պաշարման միջոցին։

Խոժոռ ծերունին սեղանի վրայից վերցրեց բացած մի նամակ և սկսեց բարձր ձայնով կարդալ այն.

«Ձերդ գերազանցության հարցմունքին՝ պրապորշչիկ Գրինյովի վերաբերյալ, որը իբրև թե խառն է ներկա խռովության և հարաբերության մեջ է մտել չարագործի հետ, որպիսի քայլ հակառակ է ծառայության և երդման պարտավորության,— պատիվ ունեմ հայտնելու, որ հիշյալ պրապորշչիկ Գրինյովը Օրենբուրգում ծառայության մեջ գտնվել է անցյալ 1773 թվի հոկտեմբերի սկզբից մինչև սույն տարվա փետրվարի 24-ը, երբ նա քաղաքից բացակայեց և այն ժամանակվանից այլևս չի ներկայացել իմ զորախումբը։ Մինչդեռ, մեր կողմն անցած զորականներից լսել ենք, որ նա եղել է Պուգաչովի մոտ՝ ավանում և նրա

հետ միասին գնացել է Բելոգորսկի բերդը, որտեղ նա առաջ եղել է ծառայության մեջ. ինչ վերաբերում է նրա վարք ու բարքին, ապա ես կարող եմ...» Այստեղ նա իր ընթերցումն ընդհատեց և խստությամբ ասաց ինձ. «Հիմա ի՞նչ կասես քո արդարացման համար»։

Ես այն է, ուզում էի շարունակել, ինչպես սկսել էի և բացատրել իմ կապը Մարիա Իվանովնայի հետ նույնքան անկեղծ, ինչպես և մնացած բոլորը, սակայն հանկարծ զգացի մի անհաղթելի նողկանք։ Մի միտք անցավ իմ գլխով, որ եթե ես նրա անունը տամ, ապա հանձնաժողովը նրան ևս հարցաքննության կկանչի. և այն միտքը, թե նրա անունը կհյուսեն չարագործների զազրելի զրպարտությունների և նրա՛ն երես առ երես կհանեն սրանց դեմ — այդ սոսկալի միտքն այնպես հարվածեց ինձ, որ լեզուս բռնվեց և ես շփոթվեցի։

Դատավորներս, որոնք, թվում էր թե սկսել էին որոշ բարյացակամությամբ լսել իմ պատասխանները, վերստին լարվեցին իմ դեմ՝ տեսնելով իմ շփոթմունքը։ Գվարդիական սպան պահանջեց, որ ինձ երես առ երես կանգնեցնեն գլխավոր տեղեկատուի հետ։ Գեներալը հրամայեց կանչել Երեկվա չարագործին: Ես արագ շրջվեցի դեպի դռները, սպասելով ինձ մեղադրողի երևալուն։ Մի քանի րոպեից շղթաներն աղմկեցին, դռները բացվեցին և մտավ — Շվաբրինը։ Ես զարմացա, տեսնելով, թե ո՛րքան փոխվել է։ Նա սաստիկ նիհար էր և գունատ։ Նրա մազերը, որ դեռ վերջերս կուպրի նման սև էին, բոլորովին սպիտակել էին. երկար մորուքը խճճված էր։ Նա կրկնեց իր մեղադրանքը թույլ, սակայն համարձակ ձայնով։ Նրա ասելով ես՝ որպես լրտես, Պուգաչովի կողմից ուղարկված եմ եղել Օրենբուրգ. ամեն օր հրացանաձգության եմ դուրս եկել, որպեսզի գրավոր տեղեկություններ տամ այն բոլորի մասին, ինչ կատարվում էր քաղաքում. որ, վերջապես, ակնհայտնի կերպով հանձնվել եմ ինքնակոչին, նրա հետ միասին բերդից բերդ եմ անցել, աշխատելով ամեն կերպ կործանել իմ

դավաճան ընկերներին, որպեսզի գրավեմ նրանց տեղերը և օգտվեմ ինքնակոչի բաշխած պարգևներից։— Ես լուռ լսեցի նրան և գոհ էի մի բանով. զազրելի չարագործը չարտասանեց Մարիա Իվանովնայի անունը, արդյոք ա՞յն պատճառով, որ նրա ինքնասիրությունը խոցվում էր՝ միտք անելով այն աղջկա մասին, որին իրեն արհամարհանքով մերժեց, թե՞— այն պատճառով, որ նրա սրտում մի կայծ էր թաքնված նույն այն զգացմունքից, որ և ինձ հարկադրեց լռելու,— ինչպես էլ որ լիներ, հանձնաժողովի ներկայությամբ չարտասանվեց Բելոգորսկի բերդապետի դստեր անունը։ Ես է՛լ ավելի հաստատ մնացի իմ դիտավորության մեջ և երբ դատավորները հարցրին, թե ինչով կարող եմ հերքել Շվաբրինի ցուցմունքները, ես պատասխանեցի, որ պնդում եմ իմ առաջին բացատրությունը և ուրիշ ոչինչ չեմ կարող ասել իմ արդարացման համար։ Գեներալը հրամայեց, որ մեզ տանեն։ Մենք միասին դուրս եկանք։ Ես հանգիստ նայեցի Շվաբրինին, սակայն ոչ մի խոսք չասացի նրան։ Նա չարախինդ քմծիծաղ տվեց և իր շղթաները փոքր ինչ բարձրացնելով առաջ ընկավ ու քայլերն արագացրեց։ Ինձ նորից բանտ տարան և այդ ժամանակից այլևս հարցաքննության չպահանջեցին։

Ես ներկա չեմ եղել այն ամենին, որոնց մասին մնում է ինձ տեղեկացնել ընթերցողին. սակայն այնքան հաճախ եմ դրանց մասին պատմություններ լսել, որ ամենափոքր մանրամասնություններն անգամ մխրվել են իմ հիշողության մեջ, և ինձ թվում է, թե ես անտեսանելի կերպով տեղնուտեղը ներկա եմ եղել։

Մարիա Իվանովնային իմ ծնողներն ընդունում են այն անկեղծ սիրալիրությամբ, որով այնպես հայտնի էին հին դարի մարդիկ։ Նրանք աստծո շնորհ են համարել, որ առիթ են ունեցել պատսպարելու և փայփայելու խեղճ որբուհուն։ Շուտով նրանք սրտանց մտերմանում են նրան, որովհետև չէր կարելի նրան ճանաչել ու չսիրել։ Հորս այլևս դատարկ քմահաճություն չէր թվում իմ սերը, իսկ մայրիկիս ուզածն

էլ հենց այն էր, որ իր Պետրուշան ամուսնանա կապիտանի գողտրիկ աղջկա հետ։

Իմ ձերբակալման լուրը շշմեցնում է մեր ամբողջ ընտանիքին։ Մարիա Իվանովնան իմ ծնողներին այնպիսի պարզությամբ է պատմում Պուգաչովի հետ ունեցած իմ ծանոթության մասին, որ դա ոչ միայն նրանց չի անհանգըստացնում, այլև հարկադրում է հաճախ անկեղծ սրտով ծիծաղել։ Հայրս չի ուզում հավատալ, որ ես կարող եմ խառն լինել զզվելի բունտին, որի նպատակն էր գահի տապալումը և ազնվական տոհմի ոչնչացումը։ Նա խիստ հարցաքննության է ենթարկում Սավելիչին։ Դաստիարակս չի թաքցնում, որ բարինը քանիցս հյուր է եղել Յեմել՛կա Պուգաչովին և որ չարագործը որպես թե նրան շնորհներ է արել. բայց նա երդվում է, որ ոչ մի դավաճանության մասին խոսք չի էլ լսել։ Ծերերը հանգստանում են և անհամբեր սպասում բարեհաջող լուրերի։ Մարիա Իվանովնան սաստիկ տագնապ է ապրում, սակայն՝ լռում է, քանի որ վերին աստիճանի օժտված էր համեստությամբ ու զգուշությամբ։

Անցնում է մի քանի շաբաթ... Հանկարծ հայրս մի նամակ է ստանում Պետերբուրգից, մեր ազգական իշխան Բ.-ից։ Իշխանն իմ մասին է գրում նրան։ Սովորական նախաբանից հետո նա հայտնում է հորս, որ խռովարարների դիտավորությունների մեջ իմ ունեցած մասնակցության մասին եղած կասկածները դժբախտաբար չափից դուրս հիմնավոր են եղել, որ ուրիշներին օրինակ հանդիսացող մահապատիժը պետք է իջներ իմ գլխին, սակայն թագուհին հարգելով հորս արժանիքներն ու տարիքը, վճռել է ներում շնորհել հանցավոր որդուն և նրան խայտառակ մահապատժից ազատելով, հրամայել է միայն աքսորել Սիբիրի մի հեռավոր վայր՝ ցմահ բնակության։

Այս անսպասելի հարվածը քիչ է մնում հորս սպանի։ Նա կորցնում է իր սովորական արիությունը և նրա վիշտը (սովորաբար՝ համր) թափվում է դառն տրտունջներով. «Ի՞նչպես, — կրկնում է նա զայրացած։ — Որդիս մաս-

նակցել է Պուգաչովի դիտավորություննե՞րին։ Աստվա՛ծ ճշմարիտ, այս ի՞նչ խայտառակության հասա ես։ Թագուհին նրան ազատում է մահապատժի՞ց։ Մի՞թե դա ավելի հեշտ է ինձ համար։ Սարսափելին մահապատի՛ժը չէ՝ իմ մեծ պապի հայրը կառափնատեղում[88] է մեռել, պաշտպանելով այն, ինչ իր սրտի սրբության սրբոցն է համարել․ հայրս տուժել է Վոլինսկու և Խրուշչովի[89] հետ միասին։ Բայց ազնվականը դրժի իր երդո՞ւմը, միանա ավազակների, մարդասպանների, փախստական ճորտերի հե՞տ... Ամո՛թ և խայտառակություն մեր տոհմին...» Անհաբեկված նրա հուսահատությունից, մայրս սիրտ չի անում նրա մոտ լաց լինել և աշխատում է վերադարձնել նրա նախկին եռանդը, ասելով, որ լուրը սխալ կլինի, մարդկանց կարծիքը՝ խախուտ։ Հորս մխիթարել չի լինում։

Ամենից շատ տանջվում է Մարիա Իվանովնան։ Հավատացած լինելով, որ ես՝ ե՛րբ ասես կարող էի արդարանալ, եթե միայն կամենայի, նա գլխի է ընկնում, թե ինչումն է ճշմարտությունը և իրեն համարում է իմ դժբախտության պատճառը։ Նա ամենքից թաքցնում է իր արցունքները և տանջանքները, մինչդեռ անդադար մտածում է միջոցների մասին, թե ի՛նչ կերպ ինձ փրկի։

Մի անգամ հայրս բազկաթոռի վրա նստած թերթում է Պալատական օրացույցը, բայց նրա մտքերը հեռուն էին և ընթերցումը նրա վրա չի թողնում իր սովորական ազդեցությունը։ Նա սկսում է սուլել մի հին մարշ։ Մայրս լուռ գործում է բրդե ֆուֆայկան և արտասուքները մեկ-մեկ կաթում են նրա ձեռագործի վրա։ Հանկարծ Մարիա Իվանովնան, որ այդտեղ նստած աշխատելիս է լինում, հայտնում է, որ անհրաժեշտությունը նրան հարկադրում է գնալ Պետերբուրգ և որ նա խնդրում է իրեն մի միջոց տալ մեկնելու։ Մայրս սաստիկ տրտմում է։ «Քո ինչի՞ն է պետք Պետերբուրգը, — ասում է նա։ — Մի՞թե, Մարիա Իվանովնա, դու էլ ես ուզում մեզ թողնել»։ Մարիա Իվանովնան պատասխանում է, որ ապագա նրա ամբողջ բախտը կախված է այդ ճանա-

պարհորդությունից, որ նա գնում է փնտրելու հզոր մարդկանց հովանավորությունը, որպես դուստրը մի մարդու, որը տուժել է իր հավատարմության համար։

Հայրս գլուխը կախում է. իր որդու կարծեցյալ հանցանքը հիշեցնող ամեն մի խոսք ծանր էր նրա համար և թվում է սուր կշտամբանք։ «Գնա՛, սիրելիս,— ասում է նա հառաչելով։— Մենք չենք ուզում արգելք լինել քո բախտին։ Աստված տա, որ քո փեսացուն լինի մի լավ մարդ և ոչ թե անարգված դավաճանը»։ Նա վեր է կենում և դուրս գալիս սենյակից։

Մորս հետ մենակ մնալով, Մարիա Իվանովնան մասամբ պարզում է նրան իր դիտավորությունները։ Մայրս արտասուքն աչքերին գրկում է նրան և աստծուն աղոթում, որ մտադրված գործը բարեհաջող վերջանա։ Մարիա Իվանովնայի համար ճանապարհի պատրաստություն են տեսնում և մի քանի օրից նա մեկնում է հավատարիմ Պալաշայի և հավատարիմ Սավելիչի հետ, որը բռնությամբ ինձնից բաժանված լինելով, մխիթարվելիս է եղել գոնե այն մտքով, որ ծառայում է իմ հարսնացուին։

Մարիա Իվանովնան բարեհաջող հասնում է Սոֆիա[90] և տեղեկանալով, որ այդ ժամանակ արքունիքը Ցարսկոյե Սելոյումն է, վճռում է իջևանել այդտեղ։ Նրան մի անկյուն են հատկացնում միջնորմի մյուս կողմը։ Վերակացուի կինն իսկույն ևեթ խոսքի է բռնվում նրա հետ, հաղորդում է, որ ինքը պալատական հնոցապանի բարեկամուհին է և հայտնում է նրան պալատական կյանքի բոլոր գաղտնիքները։ Նա պատմում է, թե թագուհին սովորաբար ո՛ր ժամին է արթնանում, ե՛րբ է սուրճ խմում, զբոսնում, ինչպիսի ազնվատոհմ իշխաններ են եղել նրա մոտ այդ ժամանակ, ի՞նչ է հաճել նա խոսել երեկ ճաշին, ո՞ւմն է ընդունել երեկոյան,— մի խոսքով Աննա Վլասևնայի խոսակցությունն արժեր պատմական հիշատակարանների մի քանի էջը, և թանկարժեք կարող էր լինել հետագա սերնդի համար։ Մարիա Իվանովնան ուշադրությամբ լսում է նրան։ Գնում են այգի։ Աննա Վլասևնան պատմում է ամեն մի ծառուղու և ամեն մի կամրր-

չակի պատմությունը և մի լավ զբոսնելուց հետո նրանք վերադառնում են կայան, անչափ գոհ միմյանցից։

Մյուս օրը վաղ առավոտյան Մարիա Իվանովնան արթնանում է, հագնվում և կամացուկ դուրս գալիս այգի։ Գեղեցիկ առավոտ էր, արևը լուսավորում էր լորենիների գագաթները, որ արդեն դեղնել էին աշնան զով շնչից։ Լայն փռված լիճն անշարժ փայլում էր։ Արթնացած կարապները հանդիսավոր դուրս էին լողում ափն ստվերող թփերի տակից։ Մարիա Իվանովնան քայլում է գեղատեսիլ մարգագետնի մոտով, ուր հենց մոտերս մի հուշարձան էր դրված ի պատիվ գրաֆ Պյոտր Ալեքսանդրովիչ Ռումյանցևի[31] վերջերս տարած հաղթությունների։ Հանկարծ՝ անգլիական մի ցեղի մի փոքրիկ շնիկ հաչում է և վազում նրա դեմ։ Մարիա Իվանովնան վախենում է և կանգ առնում։ Հենց այդ րոպեին լսվում է կանացի հաճելի մի ձայն. «Մի՛ վախեք, նա չի կծի»։ Եվ Մարիա Իվանովնան տեսնում է մի տիկնոջ, որ նստած էր նստարանի վրա՝ հուշարձանի դիմաց։ Մարիա Իվանովնան տեղավորվում է նստարանի մյուս ծայրին։ Տիկինը շեշտակի նայում է նրան, իսկ Մարիա Իվանովնան իր կողմից ձգելով մի քանի շեղակի հայացքներ, կարողանում է նրան դիտել ոտքից գլուխ։ Տիկինն առավոտյան ճերմակ շորերով էր, գիշերային գլխանոց դրած, հագին՝ քաթիպա։ Կլիներ մոտ քառասուն տարեկան։ Նրա լիքը և վարդագույն դեմքը վեհություն և խաղաղություն էր արտահայտում, իսկ կապույտ աչքերն ու թեթև ժպիտը անասելի հրապույր ունեին։ Տիկինը առաջինն է խզում լռությունը։

«Դուք անշուշտ այստեղացի չեք», — ասում է նա։

— Ճիշտ այդպես։ Ես հենց երեկ եմ եկել գավառից։

«Դուք ձեր ծնողների հե՞տ եք եկել»։

— Ամենևին ոչ։ Ես մենակ եմ եկել։

«Մենա՞կ։ Բայց դուք դեռ այնքան երիտասարդ եք»։

— Ես ոչ հայր ունեմ, ոչ՝ մայր։

«Դուք, իհարկե, որևէ գործով եք այստեղ»։

— Ճիշտ այդպես։ Ես եկել եմ թագուհուն խնդիրք տա-

լու։

«Դուք որբ եք. հավանորեն գանգատվում եք անարդարությունից և վիրավորանքի՞ց»։

— Ամենևին ոչ։ Ես եկել եմ ողորմածություն խնդրելու, և ոչ թե արդարադատություն։

«Թույլ տվեք հարցնելու՝ ո՞վ եք դուք»։

— Ես կապիտան Միրոնովի աղջիկն եմ։

«Կապիտան Միրո՞նովի. նրա, որը օրենբուրգյան բերդերից մեկի պե՞տն էր»։

— Ճիշտ այդպես։

Թվում էր, թե տիկինն զգացված է։ «Ներեցեք ինձ, — ասում է նա ավելի փաղաքշական ձայնով, — եթե ես խառնվում եմ ձեր գործերին. բայց ես լինում եմ արքունիքում. պարզեցեք ինձ, թե ինչումն է ձեր խնդիրը և մի գուցե ինձ կհաջողվի օգնել ձեզ»։

Մարիա Իվանովնան վեր է կենում տեղից և հարգանքով շնորհակալություն հայտնում։ Անհայտ տիկնոջ ամեն ինչը սաստիկ գրավում է աղջկա սիրտը և հավատ ներշնչում նրան։ Մարիա Իվանովնան գրպանից հանում է ծալած թուղթը և տալիս իր անծանոթ պաշտպանին, որն սկսում է ինքն իրեն կարդալ։

Սկզբում նա կարդում է ուշադիր և բարյացկամ տեսքով, բայց հանկարծ նրա դեմքն այլայլվում է, — և Մարիա Իվանովնան, որն աչքերով հետևում էր նրա բոլոր շարժումներին, վախենում է այդ դեմքի խիստ արտահայտությունից՝ մի րոպե առաջ այնքան հաճելի ու խաղաղ։

«Դուք խնդրում եք Գրինյովի համար, — ասում է տիկինը սառը դեմքով։ — Թագուհին չի կարող նրան ներել։ Նա միացել էր ինքնակոչին ոչ թե անգիտությամբ և դյուրահավատությամբ, այլ որպես անբարոյական ու վնասակար մի անպիտան»։

— Ա՜խ, սո՛ւտ է — բացականչում է Մարիա Իվանովնան։

«Ի՞նչպես թե սուտ է», — առարկում է տիկինը զայրույթից կրակ կտրած։

— Սուտ է, աստված վկա, սուտ է։ Ես ամեն ինչ գիտեմ, ես ամեն ինչ կպատմեմ ձեզ։ Միմիայն իմ պատճառով է նա ենթարկվել այն բոլորին, ինչ եկավ նրա գլխին։ Եվ երբ նա չարդարացավ դատարանի առաջ, ապա միայն նրա համար, որ չի ուզեցել ինձ ևս խառնել գործին։ — Այդ ասելով նա հուզված պատմում է այն բոլորը, ինչ արդեն հայտնի է իմ ընթերցողին։

Տիկինը նրան լսում է ուշադրությամբ։ — «Դուք ո՞ւր եք իջևանել, — հարցնում է նա հետո և լսելով, որ՝ Աննա Վլասևնայի մոտ, ասում է ժպիտով.— Ա՜, գիտեմ։ Մնաք բարով. ոչ ոքի չասեք մեր հանդիպման մասին։ Ես հույս ունեմ, որ դուք երկար չեք սպասի ձեր նամակի պատասխանին»։

Այդ խոսքից հետո նա վեր է կենում և դուրս գալիս փակ ծառուղին, իսկ Մարիա Իվանովնան՝ ուրախ հույսերով լի, վերադառնում է Աննա Վլասևնայի մոտ։

Տանտիրուհին հանդիմանում է նրան՝ վաղ աշնանային զբոսանքի համար, որ, նրա ասելով, վնասակար է երիտասարդ աղջկա առողջությանը։ Նա ներս է բերում ինքնաեռը և մի գավաթ թեյի շուրջը հազիվ ինչ սկսում է անվերջ պատմություններ անել արքունիքի մասին, երբ հանկարծ պալատական մի կառք կանգ է առնում տան մուտքի առաջ և կամեր-լակեյը [92] ներս է մտնում հայտարարելով, որ թագուհին բարեհաճում է իր մոտ հրավիրել օրիորդ Միրոնովային։

Աննա Վլասևնան զարմանում է և իրար անցնում։ «Տեր իմ աստվա՜ծ, — կանչում է նա։ — Թագուհին ձեզ արքունի՞ք է պահանջում։ Այդ ի՞նչպես նա իմացավ ձեր մասին։ Հապա, դուք, սիրելիս, ի՞նչպես պիտի ներկայանաք թագուհուն։ Դուք, ես կարծում եմ, որ չեք էլ իմանում պալատում շարժվելու կերպը... Ի՞նչ եք ասում. հետներդ չգա՞մ, հը՞։ Ինչ էլ որ լինի, գոնե մի որևէ բանով ես կարող եմ զգուշացնել ձեզ։ Եվ դուք ի՞նչպես պիտի գնաք ճանապարհի շորերով։ Մարդ չուղարկե՞մ արդյոք տատմոր մոտ, որ բերի նրա դեղին ռոբրոնը» [93]։ — Կամեր-լակեյը հայտարարում է, թե թագուհուն հաճելի է, որ Մարիա Իվանովնան մենակ գնա

և այն չորերով, ինչ որ հագին է։ Ճար չկար։ Մարիա Իվանովնան նստում է կառքը և գնում պալատ, հետը տանելով Աննա Վլասևնայի խորհուրդներն ու օրհնությունները։

Մարիա Իվանովնան նախազգում է, որ մոտ է մեր բախտի լուծումը. սաստիկ բաբախում է նրա սիրտը և նվաղում։ Մի քանի րոպեից կառքը կանգ է առնում պալատի առջև։ Մարիա Իվանովնան սրտի տրոփյունով բարձրանում է սանդուղքը։ Դռները լայն բացվում են նրա առջև։ Նա անցնում է մի շարք դատարկ և հոյակապ սենյակների միջով. կամերլակեյը ցույց է տալիս ճանապարհը։ Վերջապես, մոտենալով փակ դռներին, նա հայտարարում է, որ հիմա կզեկուցի նրա մասին, և նրան մենակ է թողնում։

Թագուհուն երես առ երես տեսնելու միտքն այնպես է սարսափեցնում նրան, որ նա դժվարությամբ է կարողանում պահվել ոտի վրա։ Մի րոպեից դռները բացվում են, և նա մտնում է թագուհու զգեստարանը։

Թագուհին զբաղված էր իրեն հարդարելով։ Մի քանի պալատականներ շրջապատել էին նրան և հարգանքով ճանապարհ են տալիս Մարիա Իվանովնային։ Թագուհին սիրալիր նայում է նրան և — Մարիա Իվանովնան ճանաչում է այն տիկնոջը, որի հետ այնպես անկեղծ նա խոսել էր մի քանի րոպե առաջ։ Թագուհին մոտ է կանչում նրան և ժպտալով ասում. «Ես ուրախ եմ, որ կարողացա ձեզ տված խոսքս պահել և կատարել ձեր խնդիրքը. ձեր գործն ավարտված է։ Ես համոզված եմ, որ ձեր փեսացուն անմեղ է։ Ահա մի նամակ, որ ինքներդ նեղություն կրեք հանձնելու ձեր ապագա սկեսրայրին»։

Դողդոջուն ձեռքով Մարիա Իվանովնան ընդունում է նամակը և արտասվելով ընկնում թագուհու ոտները, որը նրան բարձրացնում է և համբուրում։ Ապա թագուհին զրուցում է նրա հետ. «Գիտեմ, որ դուք հարուստ չեք, — ասում է նա. — սակայն ես պարտական եմ կապիտան Միրոնովի աղջկան։ Ապագայի համար մի անհանգստանաք։ Ինձ վրա եմ վերցնում կարգավորել ձեր վիճակը»։

Փայփայելով խեղճ որբուհուն, թագուհին նրան արձակում է։ Մարիա Իվանովնան վերադառնում է պալատական նույն կառքով։ Աննա Վլասևնան, որն անհամբեր սպասում էր նրա վերադարձին, հարցեր է, որ տեղում է նրա գլխին, որոնց մի կերպ պատասխանում է Մարիա Իվանովնան։ Թեպետ և Աննա Վլասևնան անբավական է մնում նրա մոռացկոտությունից, սակայն դա վերագրում է նրա գավառական ամոթխածությանը և մեծահոգաբար ներում։ Նույն օրն ևեթ Մարիա Իվանովնան, չհետաքրքրվելով աչք ձգել Պետերբուրգի վրա, ճանապարհ է ընկնում ետ՝ դեպի գյուղ...

———

Այստեղ ընդհատվում են Պյոտր Անդրեևիչ Գրինյովի հուշերը։ Ընտանեկան ավանդություններից հայտնի է, որ նա բանտից ազատվել է 1774 թվի վերջին, բարձրագույն հրամանով, որ նա ներկա է եղել Պուգաչովի մահապատժին. վերջինս ճանաչել է նրան ամբոխի մեջ և գլխով արել, որը մի րոպեից հետո՝ մեռած և արյունաթաթախ, ցույց էին տվել ժողովրդին։ Ապա շուտով Պյոտր Անդրեևիչն ամուսնանում է Մարիա Իվանովնայի հետ։ Նրանց սերունդը երջանիկ ապրում է Սիմբիրսկի նահանգում։ —***-ից երեսուն վերստի վրա գտնվում է մի գյուղ, որ պատկանում է տասը կալվածատերերի։ Աղայական տան ֆլիգելներից[94] մեկում կարելի է տեսնել Յեկատերինա II-ի ինքնաձեռագիր նամակը՝ շրջանակի մեջ, ապակու տակ։ Նամակն ուղղված է Պյոտր Անդրեևիչի հորը և բովանդակում է նրա որդու արդարացումը և գովեստներ կապիտան Միրոնովի աղջկա խելքին ու սրտին։ Պյոտր Անդրեևիչ Գրինյովի ձեռագիրը մեզ հասցրեց նրա թոռներից մեկը, որը լսել էր, թե մենք զբաղված ենք նրա պապի նկարագրած ժամանակի վերաբերյալ աշխատանքով։ Մենք վճռեցինք, ազգակիցների թույլտվությամբ, այդ ձեռագիրը հրատարակել առանձին, յուրաքանչյուր գլխի համար որոնելով վայելուչ էպիգրաֆ և մեզ թույլ տալով փոփոխել որոշ հատուկ անուններ։

Հրատարակիչ

19 հոկտ. 1836

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՍԼԱՆ ԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ

1 Տավղանման նվագարան։

2 Ըստ սլավոնական միֆոլոգիայի՝ սիրո և ամուսնության աստվածը։

3 Շեհերզադե — «Հազար ու մի գիշեր» արաբական հեքիաթների համբահայտնի ժողովածուի գլխավոր գործող անձը։

4 Արմիդ — կախարդուհի, Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմը» պոեմի հերոսուհին։

5 «Ղրիմի իշխան» կամ «Տավրիդայի իշխան» — իշխան Պոտյոմկինը, Եկատերինա II ֆավորիտը։

6 Հույն հանճարեղ քանդակագործ (IV դար մ. թ. ա.)։

7 Աթենաս Պալլաս — իմաստության և արվեստի աստվածուհի։

8 Ֆեբ — Ապոլլոն։

9 Ա. Օ. Օռլովսկի — ռուս նկարիչ (1772 — 1832)։ Նկարում էր պատերազմական տեսարաններ։

10 Ջոիլ—հույն գրաքննադատ։ Այստեղ՝ չարամիտ, աչառու քննադատ։

11 Կլիմենա — պայմանական անուն։

12 Հիմենեյ — ըստ հունական միֆոլոգիայի, ամուսնության աստվածը։

13 Ամուր — սիրո հռոմեական աստված։

14 Մելպոմենա — ողբերգության հունական աստվածուհին. «Մելպոմենի որդի» — դերասան։

15 Օրփեոս — ըստ հունական միֆոլոգիայի՝ բանաստեղծ և երաժիշտ։ Հյուսիսային Օրփեոս ասելով ի նկատի ունի իր բարեկամին՝ ռոմանտիկ բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկուն (1783 — 1852)։ Այդ տողերում Պուշկինը բնութագրում է Ժուկովսկու պոեզիան և պատմում է նրա «Տասներկու քնած կույսեր» պոեմի բովանդակությունը։

16 Վադիմ — Ժուկովսկու «Տասներկու քնած կույսեր» պոեմի հերոսը։

17 Պարնի — ֆրանսիացի բանաստեղծ (1753 — 1814)։

18 Ըստ հունական միֆոլոգիայի՝ լուսնի աստվածուհին, նրա սիրածն էր հովիվ Էնդիմիոնը։

19 *Լեմնոսյան դարբին — Հեփեստոսը, կրակի և մետաղի աստվածը (հուն. միֆ.), որին հայրը (Զևսը) վայր է նետում երկնքից։ Նա ընկնում է Լեմնոս կղզին, կաղանում է, դառնում դարբին։*

20 *Ցիտերեա — Կիպրիդա — Վեներա — Աֆրոդիտե — սիրո և գեղեցկության աստվածուհին (հուն. միֆ.)։*

21 *Պայմանական անուն։*

22 *Պայմանական անուն։*

ՊՈԼՏԱՎԱ

(ԾԱՆ. ՀԵՂԻՆԱԿԻ)

1 *Վասիլի Լեոնտևիչ Կոչուբեյ, գլխավոր դատավոր, այժմյան կոմսերի նախնիքներից մեկը։*

2 Хутор *(ագարակ) — քաղաքամերձ տուն։*

3 *Կոչուբեյն ուներ մի քանի աղջիկ. նրանցից մեկն ամուսնացած էր Մազեպայի քեռորդի Օբիդովսկու հետ։ Նա, որի մասին այստեղ հիշատակվում է, կոչվում էր Մատրյոնա։*

4 *Մազեպան իրոք ուզել էր իր սանուհուն, բայց մերժում էր ստացել։*

5 *Ավանդությունը Մազեպային է վերագրում մի քանի երգեր, որոնք մինչև այժմ մնացել են ժողովրդի հիշողության մեջ։ Կոչուբեյն իր ամբաստանագրի մեջ նույնպես հիշատակում է հայրենական մի տաղերգություն (դումա), որ իբր թե հորինել էր Մազեպան։ Այդ տաղը նշանավոր է ոչ միայն պատմական տեսակետից։*

6 *Բունչուկ և բուլավա (դրոշակ և գուրզ) — հետմանական աստիճանի նշաններ են։*

7 *Տես Բայրոնի* Մազեպան:

8 *Դորոշենկո, հին Մալոռոսիայի հերոսներից մեկը. ռուսական տիրապետության անհաշտ թշնամին էր։*

9 *Գրիգորի Սամոյլովիչ, Պետրոս I-ի թագավորության սկզբում Սիբիր աքսորված հետմանի որդին։*

10 *Սիմյոն Պալեյ, խվաստովյան գնդապետ, քաջ ձիավոր. ինքնագլուխ ապստամբությունների համար աքսորված էր Ենիսեյսկ՝ Մազեպայի դանգատով։ Երբ վերջինս դավաճան դուրս եկավ, ապա Պալեյը նույնպես, իբրև նրա վաղուցվա թշնամին, ետ կանչվեց աքսորից և ներկա գտնվեց Պոլտավայի ճակատամարտում։*

11 *Կոստյա Գորդեյենկո, զապորոժյան կազակների բանակապետ (*кошевой*) ատաման։ Հետագայում անձնատուր եղավ Կարլ XII-ին։ Գերի վերցվեց և գլխատվեց 1708 թ.։*

12 *20,000 կազակներ ուղարկվել էին Լիֆլյանդիա։*

13 Մազեպան մի նամակում կշտամբում է Կոչուբեյին այն բանի համար, որ նրան կառավարում է իր կինը, ճպարտ և բարձրամիտ:

14 Իսկրա, պոլտավյան գնդապետ, Կոչուբեյի ընկերը, նրա համախոհը և բախտակիցը։

15 Եզուիտ (ճիզվիտ) Զալենսկի, իշխանուհի Դոլ'սկայա և ինչ որ բուլղարացի արքեպիսկոպոս, իր հայրենիքից աքսորված, Մազեպայի դավաճանության գլխավոր գործակալներն էին։ Վերջինս մուրացկանի կերպարանքով երթևեկում էր Լեհաստանից Ուկրաինա։

16 Այսպես էին կոչվում հետմանների հրովարտակները։

17 Ֆիլիպ Օռլիկ, գլխավոր գրագիր, Մազեպայի մտերիմ խորհրդականը, վերջինիս մահից հետո (1710) Կարլ XII-ից ստացավ մալոռոսական հետմանի դատարկ տիտղոսը։ Հետագայում ընդունեց մահմեդական հավատը և մնաց Բենդերում մոտ 1736 թվին։

18 Բուլավին, Դոնի կազակ, որն ըմբոստացել էր մոտավորապես այդ ժամանակ։

19 Գաղտնի քարտուղար Շաֆիրով և կոմս Գոլովկին, Մազեպայի բարեկամներն ու հովանավորները. նրանց վրա պետք է ընկնի, ըստ արդարության, ամբաստանողների դատի և մահապատժի սարսափը:

20 1705 թվին։ Տես. Բ. Կամենսկու Մալոռոսիայի պատմության ծանոթությունները։

21 Ղրիմի վրա կատարված անհաջող արշավանքի ժամանակ Կազի-Գիրեյը առաջարկեց նրան միանալ իրեն և միասին հարձակվել ռուսական զորքի վրա։

22 Իր նամակներում նա գանգատվում էր, թե ամբաստանողներին խիստ թեթև են տանջել և անդադար պահանջում էր նրանց մահապատիժը, համեմատում էր իրեն Սուսաննայի հետ, որին անմեղ տեղ զրպարտել էին անօրեն ծերունիները, իսկ կոմս Գոլովկինին՝ Դանիել մարգարեի հետ։

23 Կոչուբեյի գյուղը։

24 Արդեն մահվան դատապարտված Կոչուբեյը տանջանքի էր ենթարկվել հետմանի զորամասում։ Թշվառի պատասխաններից երևում է, որ նրան հարցաքննել են իր թաքցրած գանձի մասին։

25 Հետմանական զորքը (сердюки) պահվում էր հետմանների սեփական ծախքով։

26 Իր սովորական արագությամբ և եռանդով Պետրոսի ձեռք առած ուժեղ միջոցները Ուկրաինային պահեցին հնազանդության մեջ։

«1708 թ. նոյեմբերի 7-ին, թագավորի հրովարտակով, կազակներն իրենց սովորության համաձայն ազատ ձայներով հետման ընտրեցին գնդապետ Իվ. Սկորոպադսկուն։

«Ամսի 8-ին Գլուխով եկան Կիևի, Չերնիգովի և Պերեյասլավի արքեպիսկոպոսները։

«Իսկ 9-ին նույն ավագերեցները հրապարակով նզովեցին Մազեպա-

չին, միևնույն օրը այդ դավաճան Մազեպայի պերսոնը (խրտվիլակը) դուրս բերին և հանեցին ասպետական նշանը (որը հագցրած էր այդ խրտվիլակի վրա ժապավենով)։ Հիշյալ պերսոնը նետեցին դահճի ձեռքը, դահիճը վերցնելով այն և կապելով պարանից, քաշ տվեց փողոցով և հրապարակով՝ նույնիսկ մինչև կախաղանը և հետո կախեցին։

«Գլխատվում, իսկ ամսի 10-ին մահապատժի ենթարկեցին Չեչելին և մյուս դավաճաններին...» (Պետրոս Մեծի օրագիրը)։

27 Մալոռոսական բառ (кат) — դահիճ։

28 Չեչելը կատաղի կերպով պաշտպանեց Բատուրինը իշխան Մենշիկովի զորքերի դեմ։

29 Դրեզդեն՝ Ավգուստ Թագավորի մոտ։ Տես Voltaire, Hist. de Charles XII.

30 — Ահ, ձերդ մեծություն, ռո՛ւմբ... — «Ի՞նչ ընդհանուր բան կա ռումբի և նամակի միջև, որ քեզ թելադրում եմ, գրի՛ր»։ Այդ պատահել է շատ ավելի հետո։

31 Գիշերով Կարլը անձամբ մեր բանակատեղը գնալիս, հանկարծակի հանդիպեց կրակի շուրջը նստած կազակներին։ Նա ձին քշեց ուղիղ նրանց մոտ և կրակելով նրանցից մեկին սեփական ձեռքով սպանեց։ Կազակները երեք անգամ կրակ բաց արին նրա վրա և ոտքից խիստ վիրավորեցին։

32 Իշխ. Մենշիկովի հիանալի կարգադրությունների և գործողությունների շնորհիվ ճակատամարտի բախտը որոշվում էր նախապես։ Կռիվը տևեց հազիվ երկու ժամ։ Որովհետև (ասված է Պետրոս Մեծի օրագրում) անպարտելի պարոն շվեդները շուտով իրենց կռնակը ցույց տվին, և մեր զորքերից թշնամու ողջ բանակը ջախջախվեց։ Պետրոսը հետագայում շատ բան ներեց Դանիլիչին[1] այն ծառայությունների համար, որ մատուցել էր այդ օրը գեներալ իշխ. Մենշիկովը։

33 «Մոսկովյան կայսրը, լցված մի ուրախությամբ, որ նա չէր ջանում թաքցնել, ռազմադաշտի վրա ընդունում էր գերիներին, որոնց խմբովին բերում էին նրա մոտ, և ամեն րոպե հարցնում էր. «Իսկ ո՞ւր է իմ եղբայր Կարլը»։

...Այն ժամանակ բարձրացնելով գինու բաժակը, նա ասաց. «Ռազմական արվեստի մեջ իմ ուսուցիչների կենա՛ցը»։ Ռենշիլդը հարցրեց նրան, այդ գեղեցիկ տիտղոսով ո՞ւմն է նա մեծարում։ «Ձե՛զ, պարոն շվեդացի գեներալներ» — պատասխանեց ցարը։ — Ուրեմն, ասաց կոմսը, ձերդ մեծությունը շատ երախտամոռ է իր ուսուցիչների հետ այդքան վատ վարվելու համար։

34 Իսկրայի և Կոչուբեյի գլխատված մարմինները հանձնվեցին ազգականներին և թաղվեցին Կիևի վանքում. նրանց գերեզմանի վրա քանդակված է հետևյալ տապանագիրը.

---

[1] Մենշիկովի հայրանունը։

«Ո՜վ անցորդ, որ չգիտես, թե ում աճյունն է այստեղ թաղված. քանի որ տանջանքն ու մահը հարկադրել են մեզ լուռ մնալ, այս քարը լեզու կառնի և կհայտնի քեզ. և հանուն ճշմարտության և հավատարմության առ մեր միապետը ըմպեցինք չարչարանաց և մահու բաժակը, Մազեպայի չարագործությամբ, մենք հավետ արդար, կացնով գլխատված, հանգչում ենք սույն այս վայրում Տիրամոր, որը պարգևում է իր ծառաներին կյանք հավիտենական։

1708 թվականի հուլիս ամսի 15-ին զորաց բանակատեղում, Բելայա Ցերկովից այն կողմ՝ Բորշչագովկայում, և Կովչեկայում, գլխատվեցին՝ ազնվածին Վասիլի Կոչուբեյը, գլխավոր դատավոր. Իոանն Իսկրան, Պոլտավյան գնդապետ։ Իսկ նրանց մարմինները հուլիսի 17-ին բերվեցին Կիև և նույն օրը սրբուհի Պեչյորսկայայի մենաստանում թաղվեցին սույն այս վայրում»։

«Պոլտավա» պոեմը գրված է 1828 թ. հոկտեմբերին կարճ ժամանակում։ Պոեմի առաջին հրատարակությունն (1829 թ.) ուներ հետևյալ առաջաբանը.

«Պոլտավայի ճակատամարտը Պետրոս Մեծի թագավորության ամենից կարևոր և ամենից բարեբախտ իրադարձություններից մեկն է։ Նա ազատեց նրան ամենավտանգավոր թշնամուց. ամրապնդեց ռուսական տիրապետությունը հարավում. ապահովեց նոր հիմնարկությունները հյուսիսում, և պետությանն ապացուցեց ցարի կատարած բարեփոխության հաջողությունն ու անհրաժեշտությունը»։

«Շվեդական թագավորի սխալն առածի կարգ է անցել։ Նրան մեղադրում են անզգուշության համար, Ուկրաինայի վրա նրա կատարած արշավանքը համարում են անխելքություն։ Քննադատներին չես գոհացնի, մանավանդ ձախողությունից հետո։ Սակայն և այնպես Կարլը այդ արշավանքով խուսափեց Նապոլեոնի փառավոր սխալից. նա չշտապեց Մոսկվայի վրա։ Եվ կարո՞ղ էր արդյոք նա սպասել, որ միշտ անհանգիստ Մազեպան չի ոգևորվի իր հեռմանի օրինակով և չի ըմբոստանա Պետրոսի քիչ առաջվա տիրապետության դեմ, որ Լևեն-Հաուպտը երեք օր իրար վրա կջախջախվի, որ վերջապես 25 000 շվեդներ, իրենց թագավորի առաջնորդությամբ, կփախչեն Նարվայի փախստականների առաջ։ Պետրոսն ինքն երկար տատանվում էր, խուսափելով գլխավոր մարտից՝ որպես չափազանց վտանգավոր գործից: Այս արշավանքում Կարլ XII-ը ավելի պակաս քան երբեք վստահում էր իր բախտին. նա տեղի տվեց Պետրոսի հանճարին։

Մազեպան այդ դարաշրջանի ամենանշանավոր դեմքերից մեկն է։ Գրողներից ոմանք ուզեցին դարձնել նրան ազատության հերոս, նոր Բոգդան Խմելնիցկի։ Պատմությունը նրան ներկայացնում է նենգությունների և չարագործությունների մեջ եփված փառասեր, իր բարերար Սամոյլովիչի

զրպարտիչը, իր անբախտ սիրուհու հոր կործանման պատճառը, Պետրոսի դավաճանը նրա հաղթանակից առաջ, Կարլի դավաճանը նրա պարտությունից հետո. եկեղեցու կողմից նզովված նրա հիշատակը չէր կարող խուսափել և մարդկության անեծքից։

Մեկը ռոմանտիկական վեպիկում Մազեպային պատկերել է որպես վախկոտ ծերունի, որը դողդողում է զինված կնոջ դիմաց, հնարում է նրբացրած արհավիրքներ, որոնք պիտանի են ֆրանսիական մելոդրամայում և այլն։ Ավելի լավ կլիներ զարգացնել և բացատրել խռովարար հեթմանի իսկական խարակտերը, առանց քմահաճորեն աղավաղելու պատմական դեմքը։

1829 թ. հունվարի 31»

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ

1 Գվարդիա — *սկզբներում նեղ մտքով՝ զորամաս, որի պարտականությունն էր պահպանել զորահրամանատարի անձը — թիկնապահ զորք։ Հետագայում գվարդիան ստացավ զորքի ընտիր մասի նշանակություն։*

2 Յա. Բ. Կնյաժնին *(1742 — 1791) — XVIII դարի ռուս դրամատուրգ։*

3 *Ուսուցիչ լինելու համար* (outchitel — *ռուս.* учитель *բառն է)։*

4 *Փոխաբ. դաստիարակ՝ Ոդիսևսի որդի Տելեմաքի դաստիարակի անունով։*

5 *Այս օրացույցի մեջ զետեղվում էին ռազմ. և քաղաքացիական բարձր աստիճանավորների ցուցակները, պալատական ընդունելությունների տեղեկատուները և զանազան ուրիշ նման նյութեր ազնվականների և արքունի ազնվատոհմիկների համար։*

6 *Ռազմական բարձրագույն աստիճաններից մեկը ռուսական հին բանակում, սկսած XVII դարից։*

7 Կավալեր *(ֆր. — ձիավոր) — առաջ այսպես կոչվում էին ասպետները, հետագայում՝ շքանշան ունեցողները։ Այստեղ նշանակում է — պարգևատրված երկու բարձրագույն շքանշաններով՝ «Անդրեյ Պերվոզվաննու» և «Ալ. Նևսկու»։*

8 *Պուշկինի նկարագրած ժամանակաշրջանում ազնվականների որդիներին դեռևս մանուկ հասակից գրում էին ռազմական ծառայության մեջ — որպես հասարակ զինվորներ։ Այս եղանակով նրանք ձևականորեն պահպանում էին 1762 թվի կայսերական հրովարտակի կանոնները, որոնց համաձայն սպայական աստիճան ստանալու համար պետք էր 12 տարի շար-*

քային զինվոր լինել։ Փաստորեն, ազնվականների որդիները ոչ մի ռազմական ծառայության մեջ չլինելով հանդերձ, տանը նստած նորանոր բարձր աստիճաններ էին ստանում և չափահաս տարիքում արդեն համարվում էին սպա։

9 Անգործ մարդ, դատարկապորտ, թեթևսոլիկ։

10 Տան մուտքի պատշգամբիկ։

11 Վերևից քաթանով կամ թաղիքով ծածկված սայլակ։

12 Տեր, պարոն, աղա։

13 Կիյ — բիլյարդի երկարավուն ձողը։

14 Մարկյոր — բիլյարդին սպասարկող, խաղի ժամանակ հաշիվը պահող։

15 Հուսարներ — թեթև հեծելազորի մի տեսակը։

16 Ռոտմիստր — հեծելասպա։

17 Ռեկրուտներ — նորակոչիկներ։

18 Տիկին, խնդրում եմ, արագ։

19 Բասուրման — այլակրոն՝ ոչ ուղղափառ։

20 Мужик — գեղջուկ, շինական։

21 Յաիցկի կազակները — Յաիկ գետի ափերին ապրող կազակներն էին, որոնք իրենց հատուկ զորական կազմակերպությունն ունեին, այսպես կոչված Յաիկյան զորքը։ Պուգաչովի ապստամբությունից հետո Յաիկը վերանվանվեց Ուրալ գետի։

22 Լայն փեշերով գեղջկական շալե վերնազգեստ։

23 Խոսքը չքավոր կազակների ապստամբության մասին է, որի ժամանակ գեն. Տրաուբենբերգի գլխավորած կառավարչական զորամասը իսպառ բնաջնջվեց ապստամբների ձեռքով։ Շարժումը ճնշվեց ամենադաժան կերպով և կազակներից խլվեցին նրանց բոլոր զորական արտոնությունները։

24 Խմիչքների խանութ ցարական Ռուսաստանում, «միկիտան»։

25 Ռուս թագուհի, գահակալել է 1730—1740 թ.։

26 Կամրադ (գերմ.) — ընկեր։

27 Մինիխ, Բուրխարդ-Քրիստոֆոր (1683 — 1767) — պետական գործիչ և զորահրամանատար, որ մեծ ազդեցություն ուներ Աննա Իոաննովնայի օրով։ Մասնակցել է մի շարք պալատական հեղաշրջումների։ 1741 թվին աքսորված է եղել Պելիմ, որտեղից նրան վերադարձրել է Պյոտր III-ը։ Վերջինիս գահընկեցությունից հետո ծառայել է Եկատերինա II-ի արքունիքում։

28 Բրուդեր (գերմ.) — եղբայր։

29 Թարգմանված է բնագրի դարձվածքը՝ «держать в ежевых рукавицах», որ նշանակում է — մեկի նկատմամբ խիստ հսկողություն ունենալ, մեկին իր բռում պահել։

30 Կիրգիզ-Կայսացկի տափաստաններ — *այսպես էին կոչվում Ուրալ գետից արևելք ընկած հարթությունները (այժմյան Կազախստանի սահմաններում)։*

31 *Հրետանու ռումբ, մեջը կլոր գնդակներով լցված, որոնք նույնպես կարտեչ են կոչվում։*

32 *«Նեդորոսլ» — կատակերգություն XVIII դարի նշանավոր ռուս գրող Դ. Ի. Ֆոնվիզինի (1745—1792)։*

33 *Բերդի, ամրոցի բուրգ։*

34 Կիստրին — *Կյուստրին, իր ժամանակ հայտնի բերդ էր Պրուսիայում։* Օչակովը *տաճկական բերդ էր Սև ծովի ափին. ֆելդմարշալ Մինիխը այն գրավել էր 1737 թ.։*

35 *«Մկները թաղում են կատվին» — քաղաքական բովանդակություն ունեցող ամենատարածված նկարներից մեկը. ուղղված էր Պյոտր I-ի դեմ։*

36 *«Եղբայրս» բառով մենք մի շարք տեղերում թարգմանում ենք ռուսական «բատյուշկա»* (батюшка) *բառը, որը թեև նշանակում է «հայր», բայց գործածվում է որպես դիմում ամեն մի խոսակցի հետ և ունի մոտավորապես «եղբայրս», «ախպեր» բառերի նշանակությունը։*

37 *Կրտսեր ենթասպա։*

38 *Ռուսները հիմա էլ բաղնիքներում օգտվում են ցարասենու (կեչու) բարակ ճյուղերից կապած տերևախիտ ավելով. բաղնասենյակի տախտակամածը բարձրացած, նրանք այդ ավելով հարվածներ են տեղում շոգեպատ մարմիններին։*

39 *Մարմնի դիրքը սուսերամարտի ժամանակ։*

40 *Սպայական կրտսեր աստիճան։*

41 Ա. Պ. Սումարոկով *(1718—1777) — բանաստեղծ, առաջին ռուս դրամատուրգը և արիստոկրատիկ պոեզիայի այսպես կոչված կլասիցիզմի ամենափայլուն ներկայացուցիչը, որի ստեղծագործությունները մեծ համբավ են ունեցել մասնավորապես ժամանակի արտոնյալ դասերի մեջ։*

42 Վ. Կ. Տրեդյակովսկի *(1703—1769) — պոետ, բանասեր և թարգմանիչ, որը Լոմոնոսովի հետ միասին համարվում է XVIII դարի ռուս գրականության հիմնադիրներից մեկը։ Նրա բանաստեղծությունները աչքի էին ընկնում ծայրահեղ ծանր ու ճոռոմ ոճով, որ և Տրեդյակովսկուն դարձրել է ժամանակակիցների և հետնորդների մշտական ծաղրանքի առարկան։*

43 Սատիսֆակցիա *(լատ.) — բավարարում. սատիսֆակցիա պահանջել — ներողություն խնդրել տալ հասցրած վիրավորանքի համար կամ պահանջել, որ հակառակորդը մենամարտի դուրս գա։*

44 *Մենամարտողներից մեկի միջնորդը և վկան։*

45 *Տղամարդու շոր առանց թևերի (հնում)։*

46 *Ռազմական օրենքների ժողովածու, որով 18-րդ դարի սկզբից*

մինչև 19-րդ դարի կեսերը կառավարվում էր ռուս միապետական բանակը։ Կիրառվում էր և՛ քաղաքացիական արդարադատության մեջ։ «Զինվորական արտիկուլ»-ով «խստագույնս արգելված էին» մենամարտերը. մասնակցողներին մահապատիժ (կախաղան) էր սպառնում։ Այս օրենքը ձևականորեն պահել էր իր ուժը մինչև Պուշկինի ժամանակները, սակայն անհամեմատ մեղմ պատիժներով։

47 էլեգիա *(հուն.)* — *եղերերգ՝ տխուր, թախծալի երգ։*

48 Monsieur *(ֆր.)* — *պարոն։*

49 *Ցարական միապետությունը Պուգաչովի անունից կազմած այս արգահատելի բառով է որակել 1773—75 թ.թ. գյուղացիական մեծածավալ ռևոլյուցիոն ապստամբությունները Ռուսաստանի մի շարք նահանգներում։*

50 *Ենթասպա՝ կազակներից կազմված զորամասերում։*

51 *Պյոտր III (1728 — 1762) — ռուսաց կայսր, որին, մոտ մի տարի թագավորելուց հետո — 1762 թ. գահընկեց արեց իր կինը՝ հետագայում Եկատերինա II-ը և կարճ ժամանակից հետո սպանեցին վերջինիս համախոհները։*

52 Արիա — *մեղեդի։*

53 *Հեղինակը նկատի ունի բաշկիրների ապստամբությունը, որ տևեց 1735 թ. մինչև 1741 թ.։ Բաշկիրները IX դարից բնակություն էին հաստատել Մերձուրալյան երկրամասում և դիմադրելով ռուսական գաղութացմանը, մի շարք ապստամբություններ բարձրացրին, որոնք միշտ էլ ճնշվում էին ամենադաժան եղանակներով։ Մասնավորապես 1740 — 1741 թ.թ. ապստամբությունը ճնշելու միջոցով հրաճարակ եղավ 696 գյուղ, մոտ 30 հազար բաշկիրներ մահապատժի ենթարկվեցին և կամ բռնությամբ ստրուկներ դարձան։ Սարսափ տարածելու նպատակով ռուս կառավարությունը կտրել տվեց շարժման ակտիվ մասնակիցների (301 հոգու) քթերն ու ականջները։*

54 *Ալեքսանդր I-ը թագավորել է 1801 — 1825 թ.։*

55 Սիկուրս *(18-րդ դարի ռազմական տերմին) — օգնության ուղարկվող զորք։ Ֆրանսերեն* secours — *սեկուրս բառի աղճատված ձևն է։*

56 Ֆորտեցիա — *ամրոց, ամրություն։*

57 *Աղճատված՝ ֆրանսերեն* bataille *բառից — կռիվ, ճակատամարտ։*

58 Սառաֆան — *ռուսական կանացի երկար զգեստ։*

59 *Հավանաբար թաթարական գերիշխանության ժամանակից մնացած ասած, որ հետագայում արտացոլել է ցարիզմի վարած ազգահալած քաղաքականությունը մասնավորապես թաթար ժողովրդի նկատմամբ։*

60 *Ռուսական բաղնիքներում ընդունված է լողանալուց առաջ առանձին բաժանմունքում շոգի ընդունել և հատուկ ավելներով ծեծկել մարմինը։*

61 **Զումակով, Ֆեոդոր** — *Յաիցկի կազակներից, Պուգաչովի բանակի հրետանապետը. Հետագայում դավաճանեց Պուգաչովին և նրան հանձնեց կառավարության ձեռքը։ Վերջինս խոստացված պարգևների փոխարեն Զումակովին զրկեց կազակի կոչումից և աքսորեց Ռիգայի նահանգապետի հսկողության տակ։*

62 *Այսպես էին կոչվում Վոլգա գետի և նրա նավակայաններում աշխատող բանվորները, որոնք ընդհանուր մի պարանից կամ փոկից լծված, ափով՝ հոսանքն ի վեր քաշում էին բեռնատար նավերը։*

63 **Պիիտ, պիիտիմական** — *հունարեն «պոետ» բառի հնացած ձևն է։*

64 *Մոսկովյան Ռուս'ի (Русь) թագավոր 1605—1606 թ.։ Հին պատմագրության մեջ այսպես կոչված «խառնակ տարիների ժամանակաշրջանում» («Смута») Գրիշկա Օտրեպևը հանդես եկավ որպես Իվան Ահեղի կրտսեր որդի Դմիտրի, որը մինչև այդ իրոք մահացած էր կամ սպանված գահակալ Բորիս Գոդունովի մարդկանց ձեռքով։ Խոշոր ազնվականությունը և քաղաքային բուրժուազիան «ինքնակոչ» մականունն են տվել նրան։ Պատմական աշխատություններում նա կոչվում է նաև Կեղծ-Դմիտրի և նույնացվում փաստական վանական ոմն Գրիշկա Օտրեպևի հետ։ Իրականում թե՛ Կեղծ-Դմիտրի I-ը և թե՛ II-ը գործիք են եղել լեհ ազնվականության ձեռքին և տիրող կարգերից դժգոհ գյուղացիության ապստամբությունները փորձել են օգտագործել հօգուտ իրենց ռեակցիոն նպատակների։*

65 **Մ. Մ. Խերասկով** *(1733 — 1807) — XVIII դարի հայտնի պոետ։*

66 *Գլխավոր քարտուղար։*

67 **Տաֆտա** — *պարսկական մետաքսե գործվածք, որ լայն գործածություն ուներ հին Ռուսաստանում՝ արտոնյալ դասերի մեջ։*

68 **Ռատին** — *երեսը խավապավոր բրդե գործվածք։*

69 **Շանքարկներ** *(պատկ.) — թնդանոթներ։*

70 **Գլազետ** — *գործվածք, որի հենքը մետաքս է, իսկ շարը՝ ոսկե կամ արծաթե թելեր — մեծ մասամբ կեղծ։*

71 **Կաֆտան** — *տղամարդու վերնաշոր լայն փեշերով։*

72 **Պրապորշչիկ** — *ցարական բանակի կրտսեր սպայական աստիճան։*

73 **Կոլեժսկի խորհրդական** — *քաղաքացիական աստիճաններից մեկը, որ ցարական Ռուսաստանում կրում էին պետական բոլոր ծառայողները՝ չինովնիկները (աստիճանավորները)։*

74 **Տակտիկա** *(հուն.) — գիտություն, որ ուսումնասիրում է մարտավարության հիմունքները, զորաշարժերի կազմակերպումը և զորամասերը դասավորելու եղանակները։*

75 **Ատաման** — *այս տիտղոսն էին կրում կազակների զորապետները. փոխաբերաբար առաջնորդ, հրոսակապետ։*

76 *Տատիշչևսկայա բերդի պարետի աղջիկը, որը Նիժնե-Օզերնայա*

կոչված ամրության պետի կինն էր։ Այս բերդերը գրավելուց հետո Պուգաչովը մահապատժի էր ենթարկել Խարլովայի հորը, մորը և ամուսնուն, իսկ նրան, որպես գեղատեսիլ կնոջ, դարձրել էր իր հարճը։ Մի որոշ ժամանակ անց այս կինը ևս սպանվեց։

77 Կոմունիկացիա *(լատ.) — կոմունիկացիոն ուղիները հաղորդակցության այն ճանապարհներն են, որոնք կապում են բանակի գրաված վայրը իր մատակարարման հենակետի հետ։*

78 Schelm — *շելմ (գերմ.) — խարդախ, ստահակ մարդ։*

79 Պարապետ *(ֆր.) — պարիսպ, պատնեշ, պատվար (մեծ մասամբ բերդի, ամրոցի), հողաթումբ։*

80 Боярин — *խոշոր ազնվական հին Ռուսաստանում։*

81 Ի. Ն. Բելոբորոդով — *նախկին հրետավոր՝ շարքային հասարակ զինվոր է եղել ցարական բանակում, պուգաչովյան շարժման աչքի ընկնող մասնակիցներից, որ ապստամբեցրեց Պերմի շրջանի գործարաններում աշխատող ճորտ-բանվորներին։*

82 Խլոպուշա — *գյուղացի, ապստամբության ամենաականավոր ղեկավարներից մեկը, որ Ուրալի գործարաններում ճորտ-բանվոր էր։ Գործարանից քանիցս կատարած փախուստների համար կառավարությունը խեղանդամ էր դարձրել նրան։ Առաջնորդել է Ուրալի ապստամբ բանվորների զորախմբերը։ Գլխատված է 1775 թ.։*

83 Ուխա — *ձկնապուր։*

84 Յուզեևո — *գյուղ, որի մոտ 1773 թվի նոյեմբերի 9-ին Պուգաչովը գլխովին ջախջախեց կառավարական մի ստվար զորամաս, որ գեներալ Կառի հրամանատարությամբ ուղարկված էր Օրենբուրգի պաշարումը վերացնելու նպատակով։*

85 Ֆրիդերիկ — *Ֆյոդոր Ֆյոդորովիչ, ինչպես նրան անվանում է Պուգաչովը — պրուսական թագավոր Ֆրիդրիխ Մեծն է (1712 — 1786), որ նշանավոր զորապետի համբավ ուներ XVIII դարում։*

86 Վախմիստր — *հեծյալ զորախմբի ավագ։*

87 Ի. Ի. Միխելսոն *(1740 — 1807) — գեներալ, որը վճռական պարտություն հասցրեց Պուգաչովին։*

88 Կառափնատեղ — «лобное место» — *կլոր և հարթ մի բարձրություն Մոսկվայի Կարմիր հրապարակի վրա, որ, ըստ ավանդության, շինված է 16-րդ դարում։ Այստեղից էին հայտարարվում թագավորական ամենակարևոր հրամանները, հաճախ և մահապատիժները. դրանից ոչ հեռու կատարվում էին նշանավոր քաղաքական հանցավորների մահապատիժները։*

89 Վոլինսկի — *ռուս ազնվատոհմ իշխան 18-րդ դարի կեսերին, որ մահապատժի ենթարկվեց թագուհի Աննա Իոաննովնայի դեմ դուրս գալու և նրա տեղ Պետրոս I-ի աղջկան՝ Ելիզավետային գահ նստեցնելու փորձի համար։*

Խրուշչով — Վոլինսկու համախոհներից մեկը։

90 **Սոֆիա** — *նախկին* Царское село-*յի (Ցարական գյուղի) արվարձաններից մեկը։*

91 **Պ. Ա. Ռումյանցև** *(1725 — 1796) — աչքի ընկնող ռուս ազնվատոհմիկ, վարչական և ռազմական գործիչ, որը Եկատերինա II-ի ժամանակ ջատագով էր ճորտատեր ազնվականների դասային քաղաքականության։ 1769 — 1774 թ.թ. ռուս-տաճկական պատերազմին Ռ. նշանակվում է բանակի գերագույն հրամանատար. նրա ղեկավարությամբ ռուս զորքը տարավ մի շարք հաղթություններ և կնքեց Քյուչուկ-Կայնարջիի հաշտությունը, որով Սև ծովի ափերը միացան Ռուսաստանին։*

92 **Կամեր-լակեյ** — *պալատական սենյակի սպասավոր։*

93 **Ռոբա, ռոբռոնդա** *(ֆր.) — հին ձևի կանացի վերնազգեստ։*

94 **Ֆլիգել** *(գերմ.) — (բառացի՝ թև) — տան կից կամ մեծ շենքի բակում առանձնակի կանգնած փոքրիկ տուն։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հրատարակչության կողմից 7

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշնան առավոտ — թարգմ. Ա. Ծատուրյան . . . 9
Ազատություն — թարգմ. Ն. Զարյան . . . 11
Չաադաևին — թարգմ. Ն. Զարյան . . . 15
Ջրահարսը — թարգմ. Ն. Զարյան . . . 16
Գյուղ — թարգմ. Հ. Մազմանյան . . . 19
Դաշույն — թարգմ. Ն. Զարյան . . . 22
Օլեգի երգը — թարգմ. Հ. Թումանյան . . . 24
Կալանավորը — թարգմ. Գ. Սարյան . . . 28
Ձմեռվա իրիկունը — թարգմ. Հ. Թումանյան . . . 29
Մարգարե — թարգմ. Ա. Ծատուրյան . . . 31
Ձմեռվա ճամփան 33
Աքսորյալ դեկաբրիստներին. — թարգմ. Դ. Դեմիրճյան . 35
Պոետ — թարգմ. Ա. Ծատուրյան . . . 36
Անչար — թարգմ. Ն. Զարյան . . . 37
*** *— թարգմ.* Ս. Տարոնցի . . . 39
Կովկաս — թարգմ. Ա. Ծատուրյան . . . 41
Դոն — թարգմ. Վեսպեր 43
Թե շրջում եմ... — թարգմ. Ա. Ծատուրյան . . 44
Պոետին — թարգմ. Հ. Հովհաննիսյան . . . 46
Հուշարձան — թարգմ. Ն. Զարյան . . . 47

ՊՈԵՄՆԵՐ

Ռուսլան և Լյուդմիլա — թարգմ. Պ. Միքայելյան . . . 51
Պոլտավա — թարգմ. Ն. Զարյան 141
Բախչիսարայի շատրվանը — թարգմ. Ս. Վահունի . . 195

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ— *թարգմ.* Ս. Սուքիասյան . . 215

Ծանոթագրություններ 353

Խմբագիրներ Ն. ԶԱՐՅԱՆ,
ՍՏ. ԶՈՐՅԱՆ,
Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նկարիչ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎՖ 01882 պատվեր 160, տիրաժ 7000
Տպագրական 23 մամուլ:
Հանձնված է արտադր. 25/IV 1949 թ.
Ստորագրված է տպագր. 10/V 1949 թ.

Հայպոլիգրաֆտրեստ. Վարչության
№ 3 տպարան, Ալավերդյան № 65,
Երևան, 1949 թ.:

ЦЕНА